

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
2(2)

Երևան 2014

Ցեղասպանագիտական հանդես

Journal of Genocide Studies
Журнал исследований геноцида

Լույս է տեսնում 2013 թվականից

2(2), 2014

Խմբագրական խորհուրդ

Հայկ Դեմոյան, պ. գ. դ. (գլխ. խմբագիր)
Սուրեն Մանուկյան, պ. գ. թ. (գլխ. խմբագրի տեղակալ)
Լևոն Աբրահամյան, պ. գ. թ.
Մելինե Անույան, պ. գ. թ.
Արսեն Ավագյան, պ. գ. դ.
Ռոբերտ Թաթոյան

Վալերի Թունյան, պ. գ. դ.
Անահիտ Խոսրոնա, պ. գ. թ.
Նարինե Մարգարյան, պ. գ. թ.
Հարություն Մարության, պ. գ. դ.
Վարուժան Պողոսյան, պ. գ. դ.
Ռուբեն Սաֆրաստյան, պ. գ. դ.
Գևորգ Վարդանյան, պ. գ. թ.

Ցեղասպանագիտական հանդես, Երևան:
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2014.- 180 էջ

Հանդեսը լույս է տեսնում տարին երկու անգամ
Հրատարակիչ՝ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ
Հասցեն՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, Երևան, 0028
Հեռ.՝ (+374 10) 39 09 81), էլ. հասցեն՝ handes@genocide-museum.am

© Ցեղասպանագիտական հանդես, 2014

Պատմություն

Հայկ Դեմոյան

Սպորտը, սկստորական շարժումը և ազգայնական մրցակցությունն Օսմանյան կայսրությունում XX դարի սկզբին 9

Նարինե Հակոբյան

Արևմտյան Հայաստանում մարդասիրական օգնության կազմակերպման հարցի շուրջ (XIX դարի վերջ և XX դարի սկիզբ)..... 24

Արփինե Բաբումյան

Խարբերդի նահանգի հայ ազգաբնակչությունը համիդյան կոտորածների փարիներին32

Վալերի Թունյան

Օսմանյան Թուրքիայի հայերի բռնագաղթը. թուրքական պարմագրության առասպելաբանությունը 39

Նարինե Մարգարյան

Հայոց ցեղասպանության իրականացման գործընթացում իսլամի գործոնի հարցի շուրջ 55

Գևորգ Վարդանյան

Կարսի մարզը Առաջին աշխարհամարտից հետո. երիտթուրքական մի նախագծի պարմություն 67

Ռեզինա Գալուստյան

Մուսուլման Զեմալի 1927 թ. ճառը՝ որպես թուրքական պարմագրության կառուցման հիմնաքար 76

Ռոբերտ Թաթոյան

Արևմտահայության թվաքանակի և Հայոց ցեղասպանության զոհերի թվի հարցերի նկարմամբ թուրքական պարմագրության որոշ նոր մոտեցումների մասին 90

Սոցիոլոգիա և հոգեբանություն

Սուրեն Մանուկյան

Հայոց ցեղասպանության ոճրագործների հիերարխիայի հարցի շուրջ100

Քրիստինե Նաչարյան

Հայոց ցեղասպանության թեմայի դասավանդման հարցի շուրջ 127

Կրոնագիտություն

Շուշան Խաչատրյան

Հայոց ցեղասպանությունը կրոնագիտության և աստվածաբանության համարեքստում 133

Իրավունք

Էդիտա Գոռյան

Հայոց ցեղասպանության ժխտումը՝ որպես հայերի հանդեպ ոստիզմի դրսևորում. Թուրքիայի պատասխանատվության հարցը միջազգային իրավունքում 144

Նարեկ Պողոսյան

Հայոց ցեղասպանության թեման Ռաֆայել Լեմկինի գործունեության սկզբնական շրջանում 156

Սեդա Պարսամյան

Մշակութային ցեղասպանությունը միջազգային իրավունքի համարեքստում. տեսական հիմնադրույթներ 164

Հեղինակների մասին 177

CONTENT

History

Hayk Demoyan

Sport, Scout Movement and the Nationalist Competition in the Ottoman Empire at the Beginning of the XX Century 9

Narine Hakobyan

On the Issue of Organizing Relief Works for Western Armenians (late XIX - early XX cc.) 24

Arpine Bablumyan

The Armenian Population of Kharberd Province during the Hamidian Massacres 32

Valery Tunyan

Deportation of the Armenians of the Ottoman Turkey: Myths of the Turkish Historiography 39

Narine Margaryan

On the Factor of Islam in the Perpetration of the Armenian Genocide 55

Gevorg Vardanyan

Kars Province after World War I: History of a Young Turk Project 67

Regina Galustyan

Mustafa Kemal's Speech of 1927 as a Cornerstone in Constructing the Turkish Historiography 76

Robert Tatoyan

Analysis of Some New Approaches in the Turkish Historiography Concerning the Questions of Numbers of Western Armenian Population and the Armenian Genocide Victims 90

Sociology and Psychology

Suren Manukyan

On the Hierarchy of Perpetrators during the Armenian Genocide 100

Kristine Najaryan

On the Issue of the Armenian Genocide Education 127

Religious Studies

Shushan Khachatryan

The Armenian Genocide in the Context of Religious Studies and Theology 133

Law

Edita Gzoyan

The Armenian Genocide Denial as a Form of Racism towards the Armenians: the Issue of the Turkish Responsibility under Public International Law144

Narek Poghosyan

The Armenian Genocide Theme in the Early Period of Raphael Lemkin's Activity156

Seda Parsamyan

The Cultural Genocide in the Context of International Law: Theoretical Considerations ...164

About authors 177

СОДЕРЖАНИЕ

История

Гайк Демоян

Спорт, скаутское движение и националистическое соперничество в Османской империи в начале XX века 9

Нарине Акопян

К вопросу об организации гуманитарной помощи западным армянам (конец XIX - начало XX вв). 24

Аршине Баблумян

Армянское население Харбердского вилайета в годы гамидовской резни32

Валерий Тунян

Депортация армян Османской Турции: мифы турецкой историографии 39

Нарине Маргарян

К вопросу о факторе ислама в деле осуществления Геноцида армян 55

Геворг Варданян

Карсская область после Первой Мировой войны: к истории одного младотурецкого проекта 67

Регина Галустян

Речь Мустафы Кемаля 1927 г. как основа для конструирования турецкой историографии 76

Роберт Татоян

О некоторых новых подходах турецкой историографии к вопросам численности западноармянского населения и числа жертв Геноцида армян 90

Социология и психология

Сурен Манукян

К вопросу об иерархии исполнителей Геноцида армян100

Кристине Наджарян

К вопросу о преподавании темы Геноцида армян 127

Религиоведение

Шушан Хачатрян

Геноцид армян в контексте религиозных и теологических исследований133

Право

Эдита Гзоян

Отрицание Геноцида армян как форма расизма по отношению к армянам: вопрос турецкой ответственности согласно международному публичному праву144

Нарек Погосян

Тема Геноцида армян на начальном этапе деятельности Рафаэля Лемкина156

Седа Парсамян

Культурный геноцид в контексте международного права: теоретические вопросы164

Об авторах

..... 177

ՄՊՈՐՏԸ, ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՄԻՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ XX ԴԱՐԻ ՄԿՋԲԻՆ

Հայկ Դեմիրյան

Սպորտը, ազգային և հասարակական մյուս ինստիտուտների հետ մեկտեղ, բազմազգ պետություններում ազգային և էթնիկ ինքնության ուրույն հատկանիշներ ձևավորող և ներկայացնող հասարակական գործունեության ոլորտներից է, որը կարևոր խթան է ազգայնականության ձևավորման, ազգամիջյան մրցակցության և այդ նույն ինքնության առանձնահատկության դրսևորման ու շեշտադրման գործընթացներում: Տարբեր երկրներում սպորտը և մարմնակրթությունն ազգային ինքնատիպությունը ձևավորող, հայրենասիրական դաստիարակության և նույնիսկ երիտասարդ սերնդին ռազմամոլ տրամադրություններով վարակելու և այս կերպ տարբեր ուժերի և առաջին հերթին իշխող քաղաքական վերնախավի կողմից օգտագործվող գործիքներ են: Ավելին, որոշ սպորտաձևեր նույնիսկ դարձել են այս կամ այն երկրի ազգային ինքնության բաղկացուցիչն ու բնորոշիչը, ինչպես օրինակ՝ բրազիլական ֆուտբոլ, կանադական հոկեյ և այլն:

Մեր օրերում սպորտը, մարզական մրցաշարերն ու օլիմպիական խաղերը, դասնալով ազդեցիկ խորհրդանշական գործոններ, որոշիչ ու կարևոր դերակատարություն ունեն տեղական և համաշխարհային գործընթացներում՝ որոշակիորեն ներազդելով քաղաքական, տնտեսական, մշակութային հարաբերությունների վրա: Սպորտը դարձել է համաշխարհային քաղաքական գործընթացների բաղկացուցիչը, իսկ սպորտային մրցակցությունը, հատկապես ֆուտբոլում, վերածվել է լուրջ գործոնի ազգային ու պետական ինքնությանն առանձնահատուկ շեշտադրում և հեղինակություն սպահովելու առումով:

Այսպիսով, կարող ենք ասել, որ սպորտը՝ որպես հասարակական գործունեության ոլորտ, վերածվել է ազգային ինքնության և հավաքականության ձևավորման և այն արտաքին աշխարհին ներկայացնելու կարևոր մի այցեքարտի: Ավելին, այն դիտվում է նաև որպես կարևոր գործոն պետությունների տրոհման կամ վերամիավորման գործընթացներում¹:

Անժխտելի է, որ մեր օրերում սպորտային մրցակցությունը դարձել է նաև միջպետական և ազգամիջյան հարաբերություններում լրացուցիչ առավելություններ ձեռք բերելու կարևոր միջոց:

Օսմանյան կայսրությունում հայկական սպորտային ու մարմնակրթական ակումբների ու միությունների զարգացման պատմությունը սկսվում է XX դարի սկզբներից, երբ ձևավորվեցին առաջին մարմնամարզական խմբակները, և ի հայտ եկան առաջին հայ

¹ St’u Houlihan Barrie , Sport, National identity and Public Policy, “Nations and Nationalism”, 3, (1), (1997), էջ 113:

մարզիկները: Ավելի վաղ հայկական վարժարաններ էին ներմուծվել մարմնամարզության դասընթացներ՝ առողջ ու կենսախիստ սերունդ դաստիարակելու հրամայականով: Կայսրությունում մարմնակրթական շարժման զարգացումը, չնայած քրիստոնյա հայատակների դեմ կիրառվող խտրականությանը և բռնություններին, հետևանք էր առաջին հերթին հայ և հույն ազգաբնակչության շրջանում տեղի ունեցող արդիականացման գործընթացների և թելադրված էր որոշակի ներհամայնքային պահանջմունքներով:

XX դարի սկզբներին Պոլսում և Զմյուռնիայում ձևավորվեցին առաջին հայկական սպորտային ակումբները: Այս ընթացքում ասպարեզ իջան նաև մասնագիտական կրթություն ստացած մարզիկներ Գրիգոր Հակոբյանը, Շավարշ Քրիսյանը, Վահան Չերազը, Մկրտիչ Մկրյանը և այլք, ովքեր կարևոր դերակատարություն ունեցան օսմանահայատակ հայերի շրջանում սպորտի զարգացման ու նրա նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու գործում:

Օսմանյան կայսրության անդրանիկ սպորտային պարբերականի՝ «Մարմնամարզի» հրատարակումը (1911-1914 թթ.) նշանավոր մարզիկ Շավարշ Քրիսյանի ջանքերով լրացուցիչ ազդակ էր Պոլսի, Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և այլ վայրերում բնակվող հայ երիտասարդության շրջանում սպորտի և մարմնակրթության հանդեպ հետաքրքրության ավելացման համար:

Կայսրության մարզական տարեգրության մեջ յուրահատուկ դրվագ էր 1912 թ. Մտոկիոլմի հինգերորդ միջազգային օլիմպիական խաղերին երկու հայ մարզիկների՝ Վահրամ Փափագյանի և Մկրտիչ Մկրյանի մասնակցությունը: Այն, խորհրդանշական լինելուց զատ, նոր մեկնակետ դարձավ մարզական կյանքի հանդեպ լուրջ հետաքրքրություն ձևավորելու և մասնակցություն ապահովելու տեսանկյունից: Դրա դրսևորումներից էին Պոլսի և գավառի հայկական ակումբների ներկայացուցիչների մասնակցությամբ և նույնիսկ Պոլսո Հայոց պատրիարքի հովանավորությամբ կազմակերպված Հայկական օլիմպիական խաղերը:

Օսմանյան կայսրությունում սպորտի և մարմնակրթության տարածմանն ու զարգացմանը զուգընթաց խորանում էր նաև թուրքական ազգայնամոլությունը կայսրության հասարակական գործունեության համարյա բոլոր ոլորտներում՝ հիմնական նպատակ ունենալով ազգային փոքրամասնությունների տնտեսական, մշակութային և կրթական առաջատար դիրքերի դեմ պայքարը և նրանց դուրսնորմում այդ ոլորտներից: Երիտթուրք ազգայնամոլ կառավարողների այս քաղաքականության հիմնական նպատակը թուրքական տարրի գերակայության ապահովումն էր Օսմանյան կայսրությունում²:

Այդ քաղաքականությունն իր արտահայտությունն ստացավ նաև սպորտի և մարմնակրթության ոլորտում: Նման մրցակցող ազգայնականության համատեքստում պետք է դիտարկել հայ և թուրք սպորտային և մարզական կյանքի զարգացման ընթացքում երևան եկած անհանդուրժողականության երևույթները, ինքնաքննադատությունն ու նույնիսկ մրցումների ժամանակ տեղի ունեցած բախումները:

Մարմնակրթական ու մարզական կյանքի աշխուժացումն Օսմանյան կայսրությունում չէր կարող չհարուցել երիտթուրքական ծայրահեղ ազգայնամոլ կառավարիչների անհանգստությունն ու դժգոհությունը, քանզի հայ մարզիկների հաջողություններն ու հայկական մարզական կյանքի զարգացումը հակադրվում էին թուրք ազգին բոլորից բարձր դասելուն ուղղված պաշտոնական քաղաքականությանը: Առաջին աշխարհամարտի նախօրեին երիտթուրքերը թուրքական մարզական կյանքը լիովին վերաձևեցին իթթիհատական ոգով՝ այդ կերպ ձգտելով առավելության հասնել քրիստոնյա փոքրամասնությունների առավել զարգացած մարզական կառույցների ու ցուցանիշների նկատմամբ:

Երիտթուրքերի քաղաքականության հետևանքով ազգայնամոլական տրամադրությունների սրացմանը համընթաց սպորտը և ֆիզիկական կրթությունը դիտվեցին որպես թուրքական ազգային ինքնության ձևավորման և ձևակերպման կարևոր ատաղձ և համախմբող միջոց:

Հատկանշական է, որ ակումբների ու մարզական միությունների ձևավորումը՝ որպես հասարակական կյանքի ինքնուրույն հաստատություններ, որոշակիորեն սահմանափակելով պետության վերահսկողության մենաշնորհը, ստեղծում էր անհատներից ու խմբերից բաղկացած մարմիններ, որտեղ պետությունը պահանջների ու շահերի միանձնյա արտահայտողը չէր: Երիտթուրքերի պարագայում, սակայն, այդ վերահսկողության մեխանիզմը դրսևորվեց իթթիհատականների կողմից նոր ակումբների ստեղծման կամ արդեն իսկ գործող ակումբները գլխավորելով՝ դրանց նկատմամբ վերահսկողություն հաստատելու տեսքով: Անկասկած, թուրքական գաղտնի ոստիկանությունն ուշիուշով հետևել է նաև հայկական, հունական և այլ ազգերի ներկայացուցիչների կողմից կազմված ակումբների գործունեությանը՝ դրանց գոյությունը դիտելով որպես լուրջ մարտահրավեր:

XX դարի սկզբին տեղի ունեցած պատերազմներում կրած պարտությունները և տարածքային կորուստները հոգեբանական ծանր ազդեցություն գործեցին Օսմանյան կայսրությունում սպորտ մահմեդական մեծամասնության վրա՝ մանրակրկիտ քննարկման առարկա դարձնելով դրանց պատճառների ու հետևանքների վերացման համար գործուն քայլեր ու միջոցներ ձեռնարկելու հարցը: Այս համապատկերում մարմնակրթությունը և սպորտային կյանքի զարգացումը թուրքերի շրջանում դիտվեցին կարևոր ու որոշիչ միջոց՝ մրցակցող ու հաղթական «նոր թուրքի» կերպարը ձևավորելու համար:

Այս զարգացումների համատեքստում հստակորեն նշմարելի են երկու տարբեր՝ հայկական և թուրքական տեսլականները սպորտի և մարմնակրթության զարգացման ու սկաուտական շարժման տարածման միջոցով նոր սերունդ կրթելու և պետականության հզորացման գործին նպաստելու առումներով: Դրանք, համարյա չհատվելով, զուգահեռ զարգացող շարժումներ էին, որոնք, գործելով ու հիմնավորվելով լիովին բևեռացած պայմաններում, այդ կերպ ուրվագծում էին այս ոլորտներում գոյություն ունեցող առանձին՝ հայկական և թուրքական օրակարգերի գոյությունը:

² St' u Bryce James, *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916*, London, Joseph Causton & Sons, 1916, էջ 3:

Պետք է նշել, որ 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո հայկական դիսկորում բավական հաճախ օգտագործվող «հայրենիք» կամ «ժառանգություն հայրենիքին» եզրույթներն ուղղակի վերաբերում էին Օսմանյան կայսրությանը, սակայն ավելի ուշ «հայրենիք» հասկացությունը կրեց վերացական և անհասցե բնույթ՝ վերածվելով երևակայական ու չորոշակիացված մի հասկացության:

1911 թ. Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակներն իրավունք ստացան ծառայելու թուրքական բանակում, և հայազգի սպաների առաջին շրջանավարտներն արդեն իսկ իրենց մասնակցությունը բերեցին ու ասքի ընկան 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմներում: Հայկական մարզական շրջաններին ևս խորթ էր այն մոտեցումը, որ սպորտի և մարմնամարզության միջոցով առողջ քաղաքացիներ պատրաստելու ձգտումը չպետք է ինքնանպատակ լինի, այլ նպատակն էր հետագա զինվորական ծառայությանը նախապատրաստելուն: Այս առումով «Մարմնամարզ» հանդեսի խմբագիր Շավարշ Քրիսյանը պարբերականի երկրորդ համարում գրում է. «...Վարժարաններու մէջ պէտք է պարտաւորիչ դարձնել մարմնամարզի և զինուորական տարրական շարժումներուն վարժութիւնները: Զինուորութեան արեւն նորակոչ զինուորի մը ամէնէն անելի նեղութիւն պարճառող ինդիքը կարգապահութեան ոգին է, միւս մեքենական շարժումները շար դիւրութեամբ կ'ըմբռնուին»:

Վարժարաններուն մէջ պէտք է դպրոցական գումարակներ (bataillions scolaires) կազմակերպել ու այսպէս պարտաւարել սպազայ զինուորացուներ, որոնք ժպրերես պիտի պարտաւարանեն զօրակոչին, և որոնք անուղղակի կերպով պարճառ պիտի ըլլան զինուորական ծառայութեան փետողութեան նուագման»³:

Մեկ այլ տեղ, անդրադառնալով սկաուտական երդմանը, Շ. Քրիսյանը գրում է. «Մեր երդումը շար կարճ պիտի ըլլայ, այդ երդումը կարտադրէ՝ պարտույ վրայ երդնուլ ազգին ու հայրենիքին որեւէ կերպով օգտակար ըլլալու, ես այժմ այս երդումը զիտակցօրէն կ'ընեմ, այս երդումիս փակ կը ստորագրեմ...»⁴:

Որպէս այս գործընթացի շարունակություն՝ օսմանյան կառավարությունը ֆիզիկական դաստիարակության դասընթացները դարձրեց պարտադիր թուրքական բոլոր վարժարաններում: Ավելին, պատերազմից առաջ երիտթուրքական կառավարությունը Լոնդոնից հատուկ մասնագետներ հրավիրեց՝ սկաուտական շարժումը մահմեդական վարժարաններում տարածելու համար՝ մինչ այդ պատվիրակներ ուղարկելով արտասահման՝ տեղում այդ շարժման բուն էությանն ու նպատակներին ծանոթանալու համար: Կարևորելով սկաուտական շարժումն ապագա զինվորներ և սպաներ պատրաստելու գործում՝ Էնվեր փաշան դարձավ թուրք բոյսկաուտական կազմակերպության ղեկավարը:

Երիտթուրքերի ջանքերով ստեղծված առաջին զուտ թուրքական սպորտային կազմակերպությունները կիսառազմականացված կառույցներ էին, որոնց հիմնականում անդամակցում էին Բալկանյան և թուրք-իտալական պատերազմ-

³ «Մարմնամարզ», Ա տարի, թիվ 2, մարտ, 1911:
⁴ «Մարմնամարզ», Գ տարի, թիվ 1, հունվար, 1913:

ներին մասնակցած զինվորականները: Այդպիսի կազմակերպություններից էր «Թուրքական ուժի միությունը» (Türk Gücü Cemiyeti), որն ստեղծվեց 1913 թ. ամռանը, և որը նպատակ ուներ զարգացնելու ֆիզիկական կրթությունը և սպորտային մարզաձևերը թուրք երիտասարդության շրջանում: Այս կազմակերպության մասնաճյուղերը բացվեցին ոչ միայն Ստամբուլում, այլև կայսրության մյուս քաղաքներում: Դրանց գործունեությունը հիմնականում նպատակաուղղված էր «բարեխափելու թուրքերի առողջական վիճակը, թարմացնելու նրանց ֆիզիկական զորությունը և աճեցնելու ակտիվ սերունդներ, ովքեր դիմացկուն կլինեն դժվար ժամանակների համար»⁵:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին երիտթուրք ազգայնամուլներ Զիա Գյոքալփի և ռազմական նախարար Էնվեր փաշայի ջանքերով ստեղծվեց մեկ այլ մարմնամարզական կազմակերպություն՝ «Օսմանական ուժի ընկերակցությունը» (Osmanli Güc Dernekleri), որն իր առջև գրեթե նույն նպատակներն էր դրել, ինչ նախորդը: Մարմնակրթության և սպորտի զարգացումն առավել արդյունավետ դարձնելու համար ռազմական նախարար Էնվեր փաշան Գերմանիայից մասնագետներ հրավիրեց Պոլիս՝ սպորտային և մարմնակրթության ոլորտում աշխատանքներ տանելու համար: Այդպիսի հրավիրված մասնագետներից էր Ֆոն Հոֆֆեր, ով 1916 թ. ապրիլին ստեղծեց «Երիտասարդական ընկերակցություններ» կազմակերպությունը, որի փոխնախագահը, ի դեպ, դարձավ Սելիմ Սըրրը Թարջանը⁶:

Այս ընկերակցությունը գործում էր երկու առանձին կազմակերպությունների միջոցով, որոնցում ընդգրկված էին տարիքային տարբեր խմբերի երիտասարդներ՝ «Ուժեղների ընկերակցության» (Gürbüz Derneği) մեջ՝ 12-ից 17 տարեկան պատանիներ և «Առողջների ընկերակցության» (Dinc Derneği) մեջ՝ 17-ից բարձր տարիք ունեցող երիտասարդներ: Այս կազմակերպությունները կոչված էին թուրք երիտասարդներին, մինչև նրանց զինվորական ծառայությունը, տալ անհրաժեշտ գիտելիքներ մարմնակրթական ունակությունների վերաբերյալ: «Երիտասարդական ընկերակցությունների» ցանցը շատ արագ տարածվեց կայսրության տարածքով մեկ՝ կարճ ժամանակում ստեղծելով 706 մասնաճյուղ, որից 351-ը՝ քաղաքներում, իսկ 355-ը՝ նահանգներում: Երիտթուրքական կուսակցության առաջնորդներն իրենց ակտիվ մասնակցությունն էին բերում թուրքական մարզական ակումբների կազմակերպման գործում՝ աջակցություն ցուցաբերելով դրանց գործունեությանն ու թուրք մարզիկների մասնակցությանը տարբեր միջազգային ու տեղական մրցումներին ու առաջնություններին: Ի դեպ, Էնվեր փաշան անձամբ հանդես էր գալիս քարոզչի դերում՝ երիտասարդական այս կազմակերպությունների անդամներին «Միություն և առաջադիմություն» կուսակցությանն անդամակցելու կոչելով⁷:

⁵ Cüneyd Okay, Sport and Nation-Building: Gymnastics and Sport in the Ottoman State and the Committee of Union and Progress, 1908-18, “The International Journal of the History of Sport”, 20, (1) (2003), p. 153:
⁶ Նույն տեղում, էջ 154:
⁷ Նույն տեղում:

Սպորտը, մարմնակրթությունն ու սկաուտական շարժման գաղափարախոսության ներմուծումը և հարմարեցումը օսմանյան իրականությանը երիտթուրքերի կողմից գործի դրվեցին այլազգիներից զատվելու և թուրք ազգի ինքնության ձևակերպմանն ու հավաքականության ամրապնդման համար: Այս հանգամանքը շատ կարևոր մի դրվագ է հետագա մի քանի տարիների ընթացքում քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ ցեղասպանության քաղաքականության մշակման և իրագործման համար, քանի որ բուն ցեղասպանական գործընթացը ենթադրում է նաև թիրախ խմբի առանձնացում և օտարում՝ որպես կարևոր պայման հետագա գործողությունների կիրառման համար:

Հայկական և թուրքական ակումբների և թիմերի անունները ևս ցուցիչ են ազգայնամոլական տրամադրությունների զարթոնքի առումով և ակնհայտորեն ազդարարեցին անցյալի հերոսների և «պատմության մուտքը» սպորտի ասպարեզ: Այսպես, հայկական ֆուտբոլային թիմերն ու ակումբներն անվանակոչվում էին հայ թագավորների կամ հին հայկական դիցարանի աստվածների անուններով: Պակաս կարևոր չէր նաև աշխարհագրական անունների կիրառումը, որը ժամանակի ընթացքում սրանալու էր մրցակցության պայմաններում՝ լրացուցիչ խթանելով «մենք»-ի ու «նրանք»-ի հակադրությունը:

Սկաուտական շարժման՝ որպես մարմնակրթական և սպորտային կյանքի բաղկացուցիչ, ի հայտ գալը տարբեր ընկալումներ և մեկնաբանություններ առաջացրեց հայկական և թուրքական իրականության մեջ: Թուրքական դիսկուրսին բնորոշ էր այս շարժումը դիտել որպես ռազմականացված մի ինստիտուտ, որի նպատակն ապագայի զինվորներ պատրաստելն է՝ նվաստացած հայրենիքի համար նոր հերոսներ ծնելու և հաղթանակներ ապահովելու համար: Ի հակադրություն դրա՝ հայկական մոտեցմանը բնորոշ էր այս շարժումը դիտել որպես առողջ սերունդ դաստիարակելու և հայրենիքի համար արժանապատիվ քաղաքացի կրթելուն նպաստող միջոց:

Հայրենասիրական, քաղաքացիական և ռազմականացված մոտեցումների համակցությունն առավել բնորոշ էր Առաջին աշխարհամարտի նախօրեին եվրոպական երկրներում տարածում ստացած այս շարժմանը: Ռազմականացված հասարակության ստեղծման գործում մարմնակրթությունն ու սպորտը կոչված էին ապահովելու վրեժի, ինքնագոհության և նոր հերոսականության պատմության կերտումը:

Թուրքական «Իդման» մարզական պարբերաթերթի առաջին համարում դրա արտոնատեր Ջամի բեյը նման թերթ հրատարակելու նպատակին անդրադառնալիս ուղղակիորեն նշում է. «... աջակցել երիտասարդությանը, ովքեր հետաքրքրված են ֆիզիկական կրթությամբ... որը կարևոր նպատակ է մեր երկիրը փրկելու համար»⁸: Մեկ այլ թուրք հեղինակ՝ Բուրհանեդին բեյը, իր «Թույլ ցեղը» վերնագրով հոդվածում, դատափետելով օսմանցիներին՝ որպես լավագույն օրինակ թույլ ցեղի,

գրում է. «Թույլ ցեղ, թույլ մարմին և որպես հետևանք թույլ հասկացողության, մտավոր ուժի պակաս, անբարոյականություն, կամքի բացակայություն և այլն...»⁹:

Մեկ այլ հեղինակ, «Իդման» թերթի «Միայն ֆուտբոլը» հոդվածում քննադատելով թուրք մարզիկներին Պոլսում կայացած մարզական մրցումներում անհաջող ելույթի համար, որտեղ զիջել էին հայերին, գրում է. «Ավելի քան հիասթափեցուցիչ է, որ վազքի մրցույթում առաջինը եղավ հայը, երկրորդը՝ հունը, երրորդը՝ սերբը, և միայն չորրորդը եղավ թուրքը»: Նույն հոդվածում, մեկնաբանելով հեծանավազքի մրցույթը, որին մասնակցել էր միայն մեկ թուրք մարզիկ, և հատկապես էր ազգությամբ հայ հեծանավորը, հոդվածագիրը շարունակում է. «Եվ հեղինակը եղավ այն, որ մրցույթում հաղթեց հայ երիտասարդը, ով հեղինակում ավելին արեց. նա իր լուսանկարը «Թուրքիայի հեծանավազքի չեմպիոն» վերնագրով փայտեց Ֆրանսիայի ամենահեղինակավոր սպորտային պարբերականում: Եվ նա դրա իրավունքը ուներ անելու»¹⁰:

Այլազգիների առկայությունը մեծ մասամբ թուրքերից բաղկացած թիմերում ժամանակի թուրքական սպորտի տեսաբանների կարծիքով լուրջ խոչընդոտ էր՝ իսկական ազգային դեմք ունեցող թիմ ձևավորելու համար: Այդ պատճառով քննադատության թիրախ էին դարձել «Ֆեներբահչեն» և «Գալաթասարայ»-ը՝ «ազգային նպատակ չունենալու» և իրենց կազմ այլազգիներ ընդգրկելու համար: Բուրհանեդին բեյը, անդրադառնալով այս հարցին, գրում է. «...այլազգիների մասնակցությունը կարող է կործանարար լինել, քանի որ նման թիմը չի կարող կոչվել իր ամբողջությամբ որպես թուրքական թիմ: Եթե անհրաժեշտ է սրեղծել թուրքերից բաղկացած թիմ՝ Թուրքիան ներկայացնելու համար, ապա գերմանացիներն ու մյուս ազգերի ներկայացուցիչները չպետք է մասնակցեն այդ խաղերին»¹¹:

Մեկ այլ հետաքրքիր դրվագ էր այս հրապարակումից մեկ տարի առաջ՝ 1912 թ. ամռանը, Ստոկհոլմի միջազգային օլիմպիական խաղերին հայերի մասնակցությունը, որն առանձնահատուկ արձագանք ունեցավ հատկապես մարզիկների ազգային պատկանելության առումով: Այս ուղղությամբ թուրք մարզիկ Մելիմ Սըրըրը Թարջանի ջանքերն ազգությամբ թուրք մարզիկ Ստոկհոլմ ուղարկելու ուղղությամբ տապալվեցին: Թարջանը մարզական մրցակցությունը տեսնում էր նաև որպես ռազմական մրցակցության ասպարեզ, որտեղ մասնակից երկրները սպորտային հաջողություններով պետք է ի ցույց դնեին իրենց առավելությունները մրցակիցների նկատմամբ: Իր հրատարակած մարզական հանդեսում, նկարագրելով տարբեր պետություններ ու ազգեր ներկայացնող մարզիկների հանդիսավոր երթը և նրանց ազգային դրոշների առկայությունը մարզադաշտում, նա անթաքույց նախանձով գրում է. «...Զասնը վեց զանազան ազգերու ամենէն ընտրեալ զաւակները հոն էին, միայն մենէ հեւրը չկար: Ցաւէս աչքերս լեցունեցան: Ժամանակին «Թուրքերուն պէս քաջ» խօսքը Եւրոպացիներուն առածի տեղ ընդունել տրուած խոշոր Օսմանեան կայսրութիւնը այսօր ուժի անունով եղած մրցումի

⁸ Yasar Tolga Cora, *Constructing and Mobilizing the “Nation” through Sports: State, Physical Education and Nationalism under the Young Turk Rule (1908-19018)*, Central European University: Budapest, 2007, p. 36.

⁹ Նույն տեղում, էջ 36-37:

¹⁰ Նույն տեղում, էջ 41-42:

¹¹ Նույն տեղում, էջ 41:

մը մէջ իր գոյութեան հետքը անգամ չունէր: Բ՛նջ ցասալի անկում. մենք տարիներէ ի վեր ամէն բան կառավարութենէն սպասելու վարժուած ըլլալով, այս խոշոր հասարակութեան քանի մը Թուրք մարմնամարզիկներ տանելու համար բնականաբար կառավարութեան դիմացի, սակայն վիշտու մէկուն հասկնալու կարելի չէր. իսկ ամենէն ցասալին պարտազանակնան նախարարութեան պարտասխանն էր: Թէ՛ մասնատոր և թէ՛ պաշտօնական դիմումիս իբր պարտասխան պարտազանակնան նախարարութեան խորհրդական Տուսար Փաշա ըսաւ. «Ջինտորական տեսակէտէն կարեւորութենէ գորկ ըլլալով, ուրիկան դրկելու պէտք չկայ»: Մարդ այս պարտասխանին առջև ինչպէ՛ս չի յուսահարի: Մակայն, Ողիմբիական Խաղերուն ամենէն առաջին կարեւորութիւնը զինտորականութեան տեսակէտէն էր, և սահկա հասկնալու համար՝ Գերմանիա մէկ զորաւար և վեց ուրիկան, Ֆրանսա մէկ հազարապէտ և հինգ ուրիկան, Ռուսիա մէկ զորաւար և երեսուն ուրիկան, Բուլղարիա, Տանիմարգա, Պէլճիգա, Յունաստան, Սերպիա զանազան սարիճաններով շար մը ուրիկաններ դրկած ըլլալին ըսել կը բաւէ: Ապագայ պարտազանները պարզապէս սրտի մրցումէ մը տարբեր բան մը չըլլալը ենթադրող ազգերուն համար Ողիմբիական խաղերու էութիւնը հասկնալ դժուար չէ»¹²:

Հայկական կողմի պատասխանը չուշացավ, և այս տողերին «Մարմնամարզում» պատասխանեց հանդեսի խմբագիր Շավարշ Բրիսյանը: Նրա «Մեր պատասխանը» վերնագրով հոդվածը փաստորեն սպորտային թեմայի շուրջ ազգայնական մրցակցության բանավեճ ծնեց, որն, անկասկած, չէր կարող անհետանալ մնալ և որոշակիորեն նպաստեց երկու կողմերի միջև հարաբերությունների խզմանը և բևեռացմանը: Այսպիսով, մարմնամարզության և սպորտային մրցակցության օրինակով ակնհայտ է դառնում Օսմանյան կայսրությունում թուրքական ազգայնամոլության սրացումը հատկապես կայսրությունը միջազգային առաջնություններում ներկայացնող մարզիկների էթնիկ պատկանելության և նրանց ունեցած հաջողությունների հարցի շուրջ:

Կայսրության տարբեր հատվածներում կազմակերպված սպորտային կյանքի զարգացումն ու մրցությունների անցկացումը որոշակիորեն նպաստեցին հասարակության ներսում որոշակի բևեռացման համար՝ դառնալով քաղաքական նշանակություն ունեցող խնդիրներ, թեև կային նաև բացառություններ, երբ հայ մարզիչը հրավիրվում էր՝ թուրքական վարժարաններում մարմնամարզի դասընթաց կազմակերպելու համար, կամ թուրք կառավարիչները ներկա էին լինում հայ աշակերտների և մարզիկների դաշտահանդեսներին:

Հայկական կողմից սպորտային մրցակցության շուրջ բանավեճը ևս կրում էր ազգայնական բնույթ՝ մասնավորապես թուրքական, հունական և մյուս համանման ակումբների նկատմամբ հայ մարզիկների ու ակումբների հաղթանակը ներկայացնելով որպես բնական՝ վեր դասելով հայկական մարզիկների ու նրանց ռեկորդների նշանակությունը:

Այսպես, Զմյուռնիայում կայացած ֆուտբոլային մրցումներում «Հայ որսորդաց ակումբի» ֆուտբոլային թիմը հաղթում է հունական «Պելոպս» թիմին, ինչը հայ-

¹² «Մարմնամարզ», Բ տարի, թիվ 18, սեպտեմբեր 15, 1912:

կական կողմից մեկնաբանվում է հետևյալ կերպ. «...Մենք այսօր մեր շնորհաւորութիւնները կողողենք Բզմիրի հայութեան և մանասանդ կը մաղթենք որ ամէն տեղ ուր որ հայեր կը գտնուին, անպակաս ըլլան նաեւ օժանդակողներ, ու մենք հիմակուց վարահ ենք թէ Հայ ցեղին ողնաշարը եղող երիտասարդութիւնը, ինչպէս ուրիշ ամէն բանի մէջ, սրբոդական մրցումներու մէջ ալ յաղթանակը պիտի խլէ, ու այդ օրէն պիտի սկսի հայութեան համար տարբեր ապրելակերպ մը, տարբեր կացութիւն մը, տարբեր վերաբերմունք մը օտարներէ, և հարկ կա՛յ աւելցնելու, նաեւ տարբեր ապագայ մը»¹³:

1912 թ. սեպտեմբերի 2-ին Գատրեցյուղի «Յունիոն» ակումբի դաշտում տեղի ունեցան «Ֆեներբահչե» ակումբի կողմից կազմակերպված միջազգային մրցումներ՝ հայկական, թուրքական և հունական ակումբների ու մարզիկների մասնակցությամբ: Այս մրցումներին ներկա էին մայրաքաղաքի թուրքական հասարակության տարբեր խավերը և հատկապես զինվորականությունը, որոնք, օգտվելով Բայրամի տոներից. «...փութացած էին գալ և քաջալերել հանդես մը՝ որուն մէջ այնպէս կը կարծուէր որ թուրք մարզիկները առաջին պիտի ելնէին, ի յայտ բերելով իրենց չորս տարուան աշխատութեան պրոտիւրը»: Այնուհետև «Մարմնամարզն» ավելացնում է. «...Թուրք մարզիկներուն վրայ դրուած ակնկալութիւնները ի դերեւ ելան, որովհետեւ գրեթէ բոլոր մրցումներուն մէջ ալ Հայերը առաջնութիւնը խլեցին ներկաներուն բայց մանասանդ ներկայ Հայերուն բուն ծափահարութեանց մէջ...»

Ինչպէս արդէն արդիւնքներէն կը տեսնուի, Հայերը գերազանցապէս առաջին հանդիսացած են. իրաւ է թէ իրենց ռէքօրները բաղդաւմամբ Հայ Ողիմբիական Խաղերու ռէքօրներուն, այնքան լաւ չեն, բայց շար ցայտուն կերպով ցոյց կուրան թէ Թուրքերը որքա՛ն ետ են մարզական խաղերուն մէջ: Անոնք պէտք ունին աշխատելու գոնէ իրենց սարքած հանդէսներուն մէջ լաւ դիրք մը գրաւելու համար»¹⁴:

Մեկ այլ հետաքրքիր դրված է նկարագրված «Մարմնամարզի» էջերում, թե ինչպիսի արձագանք են ստանում հայերի հաղթանակները թուրք մարզասերների շրջանում և առավել ուշագրավ է դիտարկել այս առանձին դրվագն օսմանականության գաղափարախոսության շուրջ գոյություն ունեցող տարակարծությունների համատեքստում: Մրցություններում հայ մարզիկների հաղթանակներին թուրք երկրպագուների արձագանքը ներկայացնում է «Մարմնամարզը». «Երբ հոն գտնուող հանդիսատես Հայերը իրենց ազգակիցները սկսած են բուն ծափերով ողջունել, Թուրքերը վշտացած երևոյթ մը առնելով, առարկած են թէ ինչո՞ւ այդ խարութիւնը, չէ՞ մի որ ամենքն ալ Օսմանցիներ են, և այլն: Շար բանատր առարկութիւն մը, որ միայն մեզի խորհիլ կուրայ թէ ինչո՞ւ սակայն Հայուն առաւելութիւններէն օգտուելու համար անոր Օսմանցիական յարկութիւնները, իրաւունքները նկատի կ՛առնուին, իսկ ջարդերու, կողոպուտներու արեւն իբր Հայ և ոչ թէ իբր Օսմանցի կը նկատուին. մենք ալ այդ ինչո՞ւն կ՛ողողենք իրենց»¹⁵:

¹³ «Մարմնամարզ», Բ տարի, թիվ 7, ապրիլ 1, 1912:

¹⁴ «Մարմնամարզ», Բ տարի, թիվ 18, սեպտեմբեր 15, 1912:

¹⁵ Նույն տեղում:

«Մարմնամարզը» քննադատաբար է տրամադրված նաև հայկական կողմի հանդեպ՝ հատկապես դատապարտելով հատվածային, անջատողական հակումները մեկ միասնական հայկական մարմնակրթական կազմակերպություն ստեղծելու հարցում: Ահավասիկ Շավարշ Քրիսյանն այս առիթով իր «Մարզական եղբայրակցություն» հոդվածում գրում է. «...Եւ ֆիզիքական մարզանքները, որոնք անարարակոյս թէ շարքարձը իրէալներու կարող են առաջնորդել հայ երիտասարդութիւնը և անոր միջոցաւ հայ ցեղը, չպիտի կարողանան գնդերներու պարզ շարժումներէ, մկանային կծկումներէ զար որևէ փրկարար, սրեղծագործ դեր կարարել հայ կեանքի ներկայ և ապագայ իրականութեան մէջ, եթէ այդ վերածնունդը յառաջ բերելու կոչումը, պարտականութիւնը ունենող երիտասարդ սերունդը չէ կրցած եղբայրակցիլ, համերաշխիլ, գործակցիլ:

Հայոցս մէջ անհարապաշտութիւնը իր ծայրագոյն աստիճանին հասած է, իսկ հասարակականութեան զգացումը գրեթէ բնաւ գոյութիւն չունի. փարակոյս չի կայ թէ անցեալին մէջ միջալայրի աննպաստ պայմանները, դաստիարակութիւնը այնպէս են փոխուել որ այսօր գիրար անելի հաճոյքով արենք, քան թէ սիրենք:

...Եւ եղբայրակցութիւնը այժմ մեզի համար պարտականութիւն մ'է. եթէ կոյր չենք ու կ'ուզենք փրենել, առանց արհամարհանքի, առանց չար նախանձի, պարտարար ենք նկատի ունենալ մարզական այն շարժումը՝ որ ծայր փուլած է Յունաց մէջ, Հրէից մէջ, Թուրքերուն մէջ, առաջին անգամ մենք՝ Հայերս էինք որ սօրի, ֆութպոլի նման արեւմտեան գաղափար մը Թուրքիա ներմուծեցինք, բայց ազգային մարմնները չի կարողացան անոր շուրջ բոլորուիլ և անով զօրանալ, մեր գործունէութիւնը մնաց շար սահմանափակ»¹⁶:

Հայ մարմնամարզական շրջանակների հիմնական մտահոգությունը դարձել էր հայ երիտասարդներին մեկ դրոշի տակ համախմբելու գաղափարը, «... որպէսզի հնարատր ըլլայ պարտարարելու ապագա հայր»: Այս առումով թե՛ մարմնամարզական շարժումը և թե՛ սկստակները տարբեր նպատակներ չունենին և նպատակաւորված էին «հայ ցեղին բարոյական և ֆիզիքական ազնուացման» փոխարացնող աշխատանք տանելուն:

Սկստակները կազմակերպությունների ձևավորումը Պոլսի և գավառի հայ երիտասարդության շրջանում էլ ավելի սաստկացրեց հակասությունները՝ երիտօրրքերի մեջ ծնելով որոշակի կասկածամտություն: Սկստակների կիսառազմական բնույթը և հայկական խմբերի հաճախակի դարձած բանակումներն ու արշավները պետք է որ անհանգստացնեին երիտօրրքական իշխանություններին, որոնց համար նման համարձակ ելույթները թուրքական ազգայնամոլության խորացման պարագայում անհանդուրժելի էին:

Ստեղծելով թուրքական նոր ակումբներ՝ երիտօրրք կառավարիչները միաժամանակ հատուկ հրամաններով փակում էին հայկական մարզական ակումբները: Դրա առիթը հանդիսացավ Առաջին աշխարհամարտի սկիզբը: Թուրքական արխիվային մի փաստաթուղթ, որտեղ ներքին գործերի նախարարությունը, անդրադառ-

¹⁶ «Մարմնամարզ», Դ տարի, թիվ 1, մայիս, 1914:

նալով Կադրքոյուն գործող հայկական սկստակական խմբի գործունեությանը, «որի անդամները կրում էին հայերեն գրություններով գլխարկներ և դրոշներ», 1914 թ. հունիսի 29-ին դիմում է ռազմական նախարարությանը՝ խնդրելով արգելել ակումբի գործունեությունը և օսմանյան հասարակության տարրերի կողմից «հատուկ» նպատակներով իրականացված ամեն մի նախապատրաստություն: Այս դիմումը հիմնավորում էր նրանով, որ հենց Պատերազմական նախարարությունն է պատասխանատու պայքարելու «հայրենիքը պաշտպանելու դեմ իրագործվող բոլոր վտանգավոր փորձերի դեմ»¹⁷:

Այս ընթացքում հայկական «Արտավազդ» մարմնամարզական ակումբի դեմ դատավարություն սկսվեց այն մեղադրանքով, որ ակումբում հավաքագրվում են միայն հայազգի մարզիկները: Զգուշության համար ակումբն ազգությամբ թուրք անդամներ ընդունեց իր կազմի մեջ¹⁸:

Երիտօրրքերը հատուկ ուշադրություն էին դարձնում թուրքական մարմնամարզական ակումբների ստեղծմանը, իսկ որոշ դեպքերում անմիջապես ղեկավարում էին դրանք: 1913 թ. վերջին Զմյուռնիա ժամանած երիտօրրքական կուսակցության պատասխանատու քարտուղար Զելալ Բայարը միջոցներ տրամադրեց՝ տեղի թուրք երիտասարդության մասնակցությամբ մարմնակրթական ակումբ ստեղծելու համար: 1914 թ. հունվարի 16-ին հիմնադրվեց «Ալթայ» ակումբը, իսկ ակումբի անդամները դարձան «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամներ: Ակումբի ստեղծման նախաձեռնողները հիմնական նպատակ էին հռչակել «գյավուր Իզմիրում», ինչպես թուրքերն էին հորջորջում Զմյուռնիան, «պայքարել հույների և մյուս փոքրամասնությունների առաջնության դեմ»¹⁹: Պատահական չէր նաև, որ երիտօրրք ծայրահեղ ազգայնամոլ գործիչներից դոկտոր Նազըմ բեյը, ով հայերի ցեղասպանության հիմնական կազմակերպիչներից մեկն էր, 1916 թ. ղեկավարեց «Ֆեներբահչե» մարզական ակումբը:

Կասկած չկա, որ հայկական ու հունական ակումբների հաջողությունները, մեղմ ասած, տհաճության պահեր են պատճառել շովինիզմի և ազգայնամոլության դրոշի տակ գործող երիտօրրք պարագլուխներին: Նախանձի գործոնի մասին է ակնարկում Շ. Քրիսյանը, երբ գրում է. «... ուզեցինք մէկ թափով ընթանալ և Թուրքիոյ յառաջադէմ ազգը ըլլայ. սիսպեցանք ու չարաչար փուծեցինք, վկայ՝ Արանան, որ մեր կործանի վրայ գիրակցորէն բացուած վերք մ'է մեզի յիշեցնելու համար թէ մեր յառաջադիմութեանը նախանձողներ կան...»²⁰:

Ռազմական նախարար Էնվեր փաշան, գլխավորելով թուրքական սկստակական կազմակերպությունները, որոնք շատ արագ ռազմականացված կառույցի տեսք էին ստանում, Առաջին աշխարհամարտի բռնկումից մի քանի շաբաթ առաջ հանդես եկավ զինվորական ու պարտադիր մարմնամարզության վերաբերյալ կոչով, որտեղ

¹⁷ Yasar Tolga Cora, *նշվ. աշխ.*, էջ 79:
¹⁸ Վահրամ Փափազյան, *Մեր, սեր, սեր, Բարձրագիտ Բարձրացուր, Բեյրութ, 1962*, էջ 26:
¹⁹ Տե՛ս <http://www.altay.org.tr/sabit.asp?!=16>
²⁰ «Մարմնամարզ», Բ տարի, թիվ 17, օգոստոսի 31, 1912:

մասնավորապես նշում էր. «...Մեր պարտքն է ժամանակին պեղքերուն համաձայն վերակենդանացնել մեր նախնիքներուն կողմէ հարիրաւոր փարհներ առաջ օգրակար դարուած ձի հեծնելու և մարմնամարզի զանազան ձեւերը՝ որ մինչեւ հիմն լքուած էին: Այս րեասկ բաներ, որոնց նիւթական ու բարոյական օգուրները թուելով չեն հարնիր, ո՛չ միայն զինուորներուն, այլ երիտասարդ ու ծեր՝ մեր ազգին բոլոր անհարներուն պեղք են, վասն զի առողջ մարմնի և ուղեղի րեր ըլլալու և կեանքի պայքարներուն րոկալու համար մարմնամարզը անհրաժեշտ է: Օսմանցիի անունը պարծանքով կրելու համար ոչ թէ րճարանին անկիւնները ժամանակ անցնելու է, այլ այրելու վայելող արիւթեան ձիրքեր ձեռք բերելու աշխարելու է»²¹:

Չնայած այն բանին, որ Շավարշ Քրիստիանը «Մարմնամարզի» էջերում նկատում է, որ «նախարարական կոչը ամէնէն առաջ Հայ ժողովրդին մէջ է որ պեղք է գրնէ իր արժանի արձագանքը», այդուհանդերձ պարզ էր, որ այդ կոչն ուղղակիորեն հասցեագրված էր թուրք երիտասարդությանը: Դրա ապացույցն է նաև վերոնշյալ կոչից ճիշտ երկու տարի հետո՝ 1916 թ. ապրիլի 4-ին, հրապարակված Էսվերի մեկ այլ՝ «Կոչ երիտասարդությանը» խորագրով ճառը, որտեղ ասվում էր. «Միքեղէք ձեր Հայրենիքն ու թուրք ազգը: Այսօր Ձեր խիզախ հայրերն ու եղբայրներն իրենց կյանքով ու արյունով են պաշտպանում Հայրենիքը: Պեղք է ձգուել, որպեսզի սպազայում անհրաժեշտության դեպքում, ձեր հայրերի ու եղբայրների նման լինեք մարտական ու բոլոր րեասկի դժվարություններին րոկացող: Եթե այսօր երիտասարդական միություններում մեծ մղումով աշխարեք, վաղը բանակում հեշտությամբ կճանայեք: Միքեղէք՝ երիտասարդներ, այս պարճատով ձեր մարմինները պեղք է լինեն առողջ ու ճկուն, իսկ ձեր աչքերը սուր րեսողությամբ: Օն առաջ, սպազան ձեզ է սպասում...»²²:

Մարզական մրցակցությունը հաճախ հանգեցնում էր ազգայնական հողի վրա տեղի ունեցող բախումների: Այսպես, պատերազմից հետո Մարզվանի «Անատոլիա» քոլեջի հայկական և հունական թիմերի մրցապայքարի ժամանակ տեղի ունեցավ ծեծկոտուք, որին միացան նաև հանդիսատեսները, ականատեսի վկայությամբ՝ «Ֆութպօլի դաշտը վերածելով ճակարամարտի դաշտի մը»²³:

Նման միջադեպ տեղի ունեցավ նաև Գատրգյուղի լիգայի «Ֆեներբահչե» թուրքական ակումբի և հայկական ՀՄԸՄ ֆուտբոլային թիմի մրցախաղի ժամանակ, երբ երկրպագուները, դժգոհ լինելով մրցավարի որոշումներից կամ խաղի արդյունքներից, հաճախ ներխուժում էին մարզադաշտ:

1915 թ. Օսմանյան կայսրության տարածքում հայկական բոլոր մարզական ակումբներն ու միությունները դադարեցրին իրենց գործունեությունը:

Քենալականների շարժման ծավալմանը զուգընթաց կայսրության տարածքում ազգայնամոլական տրամադրություններն շարունակեցին ուժգնանալ, ինչը չէր կարող իր արտացոլումը չունենալ թուրքական սպորտի և պատերազմից հետո

թուրք և այլազգի մարզիկների մասնակցությամբ տեղի ունեցող մրցումներում:

Հայկական մարզական, ինչպես և հասարակական, քաղաքական ու մշակութային կյանքին անդառնալի հարված հասցվեց Մեծ եղեռնի տարիներին: Երիտթուրք պարագլուխների կողմից ծրագրված ու իրականացված ցեղասպանության քաղաքականության զոհ դարձան բազմաթիվ հայ մտավորականներ, այդ թվում նաև՝ մարմնամարզիկներ: Այդ գոհերի շարքում մեծ կորուստ էր Շավարշ Քրիստիանի արքայազմը հայ մտավորականների հետ դեպի Այաշ և նրա դաժան սպանությունը: Շավարշ Քրիստիանի կյանքի վերջին դրվագների մասին անդրադարձ կա արքայազմը հայ մտավորականներից հրաշքով փրկված դոկտոր Ա. Նագգաշյանի հուշերում: Վերջինս հիշատակում է արքայազմը Շավարշի գվարթ ու անընկճելի պահվածքը, երբ ամեն առավոտ նա ստիպելով մտավորական արքայազմերին հրավիրում էր մարմնամարզի²⁴:

Երիտթուրք կառավարիչների այս դաժան հաշվեհարդարն արևմտահայ մտավորականության հայտնի դեմքերի հետ պայմանավորված էր նրանց կատաղի անհանդուրժողականությամբ ազգային փոքրամասնությունների առաջնակարգ դիրքերի նկատմամբ՝ թուրքական ազգայնամոլական գաղափարախոսության և ազգային պետություն ստեղծելու ճանապարհին:

1908 թ. գալով իշխանության՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը հետևողականորեն սկսեց իրագործել թուրքական ազգայնամոլական գաղափարախոսությունը, որի առանցքն էին կազմում թրքացման քաղաքականությունն ու փոքրամասնությունների իրավունքների սահմանափակումը: Երիտթուրքերի հետաքրքրությունը սպորտային մրցակցության ասպարեզում և նրանց հետևողական աջակցությունը թուրքական ակումբներին ու թիմերին վկայում էին հետևողականորեն իրագործվող մի քաղաքականության մասին, որտեղ հայերի ու հույների մարզական հաջողություններն ու առաջադիմությունն այս ոլորտում պետք է համարվեին անհանդուրժելի ու վտանգավոր:

Հայ մտավորականության ներկայացուցիչների ձեռքակալությունից հետո որոշ հայ մարզիկներ հայտնվեցին ձեռքակալվածների շարքում և արքայազմին, մյուսները, ինչպես օրինակ՝ Հակոբ Սիրունին, երկար ժամանակ ստիպված եղան թաքնված կյանք վարել՝ խուսափելով թուրքական գաղտնի ոստիկանության գործակալներից: Զոհերի թվում էին Գալուստ Արխանյանը «Արտավազդ» մարմնամարզական ակումբի Կետիկ փաշայի մասնաճյուղից, ով մահացավ Դեր-Զորում տարագրության մեջ: Դեպի Դեր-Զոր տարագրված նահատակ մարմնամարզիկներից էր Վարդևար Եափուճեանը: Պոլսահայ մարզիկ և «Արաքս» թիմի ֆուտբոլիստ Հայկ Ճոլոյանը, զինվորագրվելով թուրքական բանակ և ծառայելով որպես երկրաչափի օգնական Մեքաստիայում, 1700 հայ զինվորների հետ զոհ է գնում թուրքական բանակում ծառայող հայ զինվորականության դեմ կազմակերպված սպանողի ժամանակ: Պատերազմի ու Մեծ եղեռնի գոհերի թվում էին Պոլսի Մաքրիգյուղի «Մասուն» մարմնամարզական միության

²¹ Թուրքիոյ պատերազմական նախարարին կոչը, «Մարմնամարզ», Բ տարի, թիվ 2, 1914, էջ 38:
²² Şevki Çapan M. Türk Sporunda Selim Süri Tarcan, Ünyay Muğla, 1999, s. 144.
²³ «Հայ սկսուր», Ա տարի, թիվ 6, 1920, էջ 91:

²⁴ Տե՛ս Նագգաշեան Ա., Հայ մրատրականներու ձեռքակալութիւնը և Այաշի բանարը, Պեղրութ, 1969

հիմնադիրներից Երվանդ Նշանյանը և Գևորգ Քերեստեճյանը, «Ռոբերտ» քոլեջի լավագույն ֆուտբոլիստներից Հովհաննես Գոբյանը, «Սանասարյան» վարժարանի շրջանավարտ, Չմշկաձագին մերձակա Ուշպեկ գյուղի վարժարանի մարզանքի ուսուցիչ Ղազարոս Գույումջյանը, Հայկական առաջին օլիմպիական խաղերի կազմակերպիչներից Գևորգ Թերջիմանյանը, սկաուտական շարժման ներկայացուցիչ Պողոս Զեննեյանը և ուրիշներ: Մեծ եղեռնին զոհ գնացած հայ մարզիկների թվում էին նաև Պոլսի «Տորք» մարմնակրթական միության անդամ Ավետիս Այճյանը, որը, գտնվելով Բիթլիսում և աշխատելով թուրքական վարժարանում որպես ուսուցիչ, զոհ է դառնում տեղահանությանը: Յեղասպանությանը զոհ դարձած խոստումնալից հայ մարզիկների թվում էր նաև աղաքազարցի Սարգիս Թորիկյանը, ով մրցանակային տեղեր գրավեց երրորդ ու չորրորդ Հայկական օլիմպիական խաղերում:

Առաջին աշխարհամարտից հետո հայ մարզաշխարհի բեկորները կրկին հավաքվեցին Պոլսում՝ դեռ առ դեռ հայտնվելով նոր մարտահրավերների առաջ, փորձելով միահամուռ ջանքերով վերացնել Մեծ եղեռնի սոսկալի հետևանքները, լծվելով առաջին հերթին տասնյակ հազարավոր հայ որբերի կրթության ու դաստիարակության գործին:

Սպորտը, սկաուտական շարժումը և ազգայնական մրցակցությունն Օսմանյան կայսրությունում XX դարի սկզբին

Հայկ Դեմոյան

Ամփոփում

Հոդվածում ներկայացվում և վերլուծության է ենթարկվում XX դարի սկզբին Օսմանյան կայսրությունում սպորտի և սկաուտական շարժման ասպարեզներում հայթորքական ազգայնական մրցակցության դրսևորումները:

1908 թ. գալով իշխանության՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը հետևողականորեն սկսեց իրագործել թուրքական ազգայնամոլական գաղափարախոսությունը, որի առանցքն էին կազմում կայսրության հպատակների թրքացումը ու փոքրամասնությունների իրավունքների սահմանափակումը:

Հայ մարզիկների հաջողություններն ու հայկական մարզական կյանքի զարգացումը հակադրվում էին թուրքերին բոլորից բարձր դասելուն միտված պաշտոնական քաղաքականությանը: Առաջին աշխարհամարտի նախօրեին երիտթուրքերը թուրքական մարզական կյանքը լիովին վերաձևեցին իթթիհատական ոգով՝ այդ կերպ ձգտելով առավելության հասնել քրիստոնյա փոքրամասնությունների առավել զարգացած մարզական կառույցների ու ցուցանիշների նկատմամբ:

Բանալի բառեր՝ երիտթուրքեր, սպորտ, սկաուտական շարժում, Օլիմպիական խաղեր, մարմնակրթություն:

Sport, Scout Movement and the Nationalist Competition in the Ottoman Empire at the Beginning of the XX Century

Hayk Demoyan

Summary

The article presents and analyzes the episodes of the Armenian-Turkish nationalist rivalry in sport and the scout movement in the Ottoman Empire at the beginning of the XX century.

Coming to power in 1908 the Young Turk party "Unity and Progress" launched a consistent policy, based on the ideology of the Turkish chauvinist nationalism, the cornerstone of which became the policy of Turkification and restrictions on the rights of national minorities.

The success of the Armenian sportsmen and the development of the Armenian sport life were in contradiction with the official policy aimed at strengthening the domination of the Turkish element in the Empire. On the eve of World War I the Young Turks completely reorganized the Turkish sport life in the spirit of Ittihatist ideology thus seeking to gain an advantage toward the most advanced sports structures belonging to non-Turkish ethnic groups of the Ottoman Empire.

Keywords: Young Turks, sport, scout movement, Olympic games, phisycal education.

Спорт, скаутское движение и националистическое соперничество в Османской империи в начале XX века

Гайк Демоян

Резюме

В статье представлены и проанализированы отдельные эпизоды истории армяно-турецкого соперничества в сферах спорта и скаутского движения в Османской империи в начале XX века.

Придя к власти в 1908 г., младотурецкая партия «Единение и прогресс» стала проводить последовательную политику, основанную на идеологии турецкого шовинистического национализма, краеугольным камнем которой являлась политика туркизации и ограничения прав национальных меньшинств.

Успехи армянских спортсменов и развитие армянской спортивной жизни вступили в противоречие с официальной политикой, направленной на укрепление доминирования турецкого элемента в империи. Накануне Первой мировой войны младотурки полностью реорганизовали турецкую спортивную жизнь в духе идей иттихатизма, стремясь таким образом добиться преимущества над наиболее развитыми спортивными структурами, принадлежавшими нетурецким этническим группам Османской империи.

Ключевые слова: младотурки, спорт, скаутское движение, Олимпийские игры, физическая культура.

**ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԴԱՄԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ (XIX ԴԱՐԻ ՎԵՐՁ ԵՎ
XX ԴԱՐԻ ՄԿԻՋԲ)**

Նարինե Հակոբյան

XIX դարի 90-ական թթ. Օսմանյան կայսրությունում կառավարող վարչակարգի որդեգրած քաղաքականությունն աղետալի հետևանքներ ունեցավ պետության հայ հպատակների համար: Արդյուլ Համիդ II սուլթանի հակահայկական քաղաքականությունը ծանր հարված էր Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության այլ շրջանների հայ բնակչության ստեղծարար կյանքին: Հարյուր հազարավոր հայեր կոտորվեցին, բռնի կրոնափոխվեցին կամ տարագրվեցին: Ավերվեցին հայկական բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր և այլ շինություններ:

Արևմտահայության կոտորածների պատմության ուսումնասիրության առումով կարևոր նշանակություն ունի այդ ժամանակ Օսմանյան կայսրության տարածքում աշխատող օտարերկրյա միսիոներների գործունեությունը: Ընդ որում, դա կարևոր է ինչպես թուրքերի ոճրագործության փաստագրման, այնպես էլ բազմաթիվ հայերի կյանքի փրկության դրվագների արձանագրման առումներով: Հողվածում անդրադառնալու ենք համիդյան կոտորածների տարիներին օտարերկրացի միսիոներների գործունեության հիմնական ուղղություններին և արդյունքներին:

1894-1896 թթ. շարունակվեց դեռևս նախորդ տասնամյակներում Օսմանյան կայսրությունում իրենց գործունեությունը սկսած ամերիկյան միսիոներների աշխատանքը: Մասնավորապես Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհուրդը¹, որը նախորդ տասնամյակներին, հատկապես 1850 թ. սուլթանի կողմից բողոքականներին որպես առանձին կրոնական համայնք ճանաչվելուց հետո արևմտահայության շրջանում քարոզչական ակտիվ գործունեություն էր ծավալել: 1894-1896 թթ. կոտորածների ժամանակ այդ կազմակերպության միսիոներները զգալի նպաստամատույց աշխատանք կատարեցին՝ չնայած առկա դժվարություններին: Հիշատակության է արժանի, օրինակ, Ուրֆայում աշխատող միսիոներուհի օրիորդ Կորինա Շաթթուք (Miss Corinna Shattuck), ով, կոտորածների ժամանակ վտանգվելով սեփական կյանքը, իրեն հատկացված տան մեջ պաստապարեց և փրկեց 240 հայի կյանք (60-ը՝ տղամարդիկ, մնացածը՝ կանայք և երեխաներ)²: Նրա աշխատանքը լավագույնս բնութագրվում է տեղացի հայերից մեկի խոսքերով. «Եթե չլինեք միս Շաթթուքը, մենք չէինք դիմանա ճնշմանը. բոլորս կիսլամացվեինք»³:

Այս կազմակերպության Վանի կայանը դարձավ 15 000 գաղթականի ապաստան,

¹ Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհուրդը՝ ՕԱԼԱԲ-ը (անգլ.՝ American Board of Commissioners for Foreign Missions or ABCFM), հիմնադրվել է 1810 թ.: Օսմանյան կայսրություն, մասնավորապես Պաղեստին, ներթափանցելու առաջին փորձերը կատարվել են դեռևս 1819 թ.: Հայկական վիլայեթներ ՕԱԼԱԲ-ի մուտքը թվագրվում է 1830-ականների վերջով, իսկ 1840 թ. Էրզրումում նրանք բացեցին իրենց կայանը:

² Strong William E. (ed.), *The Story of the American Board: An Account of the First Hundred Years of the American Board of Commissioners for Foreign Missions*, Boston, The Pilgrim Press, 1910, p. 395.

³ Նույն տեղում:

իսկ Մարաշի շրջանում նպաստամատույց աշխատանքը ներառեց շուրջ 30 000 հայերին օգնելը⁴: Մարզվանի կայանում խնամվում էին 250 այրի և 800 որբ, իսկ Ուրֆայի, Խարբերդի և Մարաշի կայաններում նրանց թիվը կրկնակի ավելի էր⁵:

Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհուրդը մեծ ավանդ ունեցավ նաև որբախնամ աշխատանքներում: ՕԱԼԱԲ-ի ջանքերով որբանոցներ ստեղծվեցին Խարբերդում, Ուրֆայում, Այնթապում, Մարաշում, Հաճրում:

Պետք է նշել, որ 1894-1896 թթ. հայանպաստ ակտիվ գործունեություն էր իրականացնում նաև Հայկական ազգային նպաստամատույց կոմիտեն (անգլերեն՝ National Armenian Relief Committee)՝ իր ջանքերը միավորելով Ամերիկյան կարմիր խաչի հետ: Հայկական ազգային նպաստամատույց կոմիտեն ստեղծվել է 1896 թ.՝ կոտորածների հետևանքները թեթևացնելու համար: Կազմակերպության գործադիր մարմնի մեջ էին գերագույն դատավոր Դեյվիդ Բրյուերը և Ֆրեդերիկ Դևիս Գրինը, ով ժամանակին ծառայել էր Օսմանյան կայսրության արևելյան շրջաններում՝ որպես Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհրդի (ՕԱԼԱԲ, ABCFM) աշխատակից: Այս կազմակերպությունը զբաղվում էր դրամահավաք գործունեությամբ: Այսպես, 1896 թ. մարտի դրությամբ այս կազմակերպության կողմից Ֆիլադելֆիայում հավաքվել էր 15 000, Բոստոնում՝ 40 000, իսկ Նյու Յորքում՝ 95 000 դոլար: Նույն թվականի փետրվարի դրությամբ արդեն 35 000 դոլար ուղարկվել էր Կոստանդնուպոլիս՝ Միջազգային հանձնախմբին, որը կազմված էր բրիտանացի դիվանագետներից և ամերիկացի միսիոներներից⁶: Ընդհանուր առմամբ ամերիկյան օգնությունն այդ տարիներին կազմեց շուրջ 300 հազար դոլար⁷:

Խոսելով համիդյան կոտորածների տարիներին ամերիկյան միսիոներների գործունեության մասին՝ պետք է առանձնացնել Կլարա Բարտոնին, ում գործունեությունն աչքի ընկավ մեծ արդյունավետությամբ, քանզի նա կարողացավ փրկել բազմաթիվ հայերի⁸:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 396:

⁶ Այս մասին տե՛ս Curti Merlie, *American Philanthropy Abroad*, New Brunswick, N. J., Transaction, 1988, էջ 125:

⁷ Նույն տեղում, տե՛ս նաև Balakian Peter, *From Ezra Pound to Theodore Roosevelt: American Intellectual Responses to the Armenian Genocide*, In “*America and the Armenian Genocide of 1915*”, edited by Jay Winter, Cambridge, Cambridge University Press, 2003, էջ 240:

⁸ Կլար(իս)ա Հարրոու Բարտոնը (1821-1912 թթ.) դեռևս 1854 թ. սկսում է աշխատել Միացյալ Նահանգների ապրանքանիշերի արտոնագրային գերատեսչությունում՝ դառնալով առաջին կինը, ով դաշնային կառավարությունում գրասենյակային ծառայողի պաշտոն էր ստանում: Իսկ Քաղաքացիական պատերազմի ընթացքում (1861-1865) Կլարա Բարտոնն ամբողջությամբ նվիրվում է վիրավոր զինվորների օգնության և խնամքի հարցերին: Իր անխնայ աշխատանքի համար նա հայտնի է դառնում «Մարտադաշտի հրեշտակ» անվամբ: Բարտոնի անունն անշուշտ առավել նշանավորվեց որպես Ամերիկյան կարմիր խաչի հիմնադիր: Դեռևս 1870-1871 թթ. ֆրանս-պրուսական պատերազմի տարիներին նա իր օժանդակությունն էր ցույց տալիս Բադենի մեծ դքսին վիրավորներին օգնելու և ռազմական հոսպիտալներ պատրաստելու հարցում: Վերադառնալով ԱՄՆ՝ նա ձեռնամուխ եղավ Ամերիկյան կարմիր խաչի ստեղծման աշխատանքներին՝ 1882 թ. դառնալով նրա առաջին նախագահը: 1898 թ. մեկնում է Կուբա, որտեղ աշխատում է օգնել ԱՄՆ-Իսպանիա պատերազմի վիրավորներին: Կլարա Բարտոնի կյանքի մասին ավելի մանրամասն տե՛ս նրա ինքնակենսագրական գրքի մեջ՝

1896 թ. փետրվարի 16-ին «Ամերիկյան կարմիր խաչ»-ի հիմնադիր և նախագահ, մեծ մարդասեր Կլարա Բարտոնը, ժամանելով Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիս, հանդիպում է Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար Ահմեդ Թեֆիկ փաշային: Հաշվի առնելով Կլարա Բարտոնի անձը և Ամերիկյան կարմիր խաչի հեղինակությունը՝ թուրքական կառավարությունն իր համաձայնությունն է տալիս կոտորածների հետևանքով տուժած հայ բնակչությանն օգնելու և գյուղատնտեսության վերականգնման ծրագրերի իրականացմանը⁹:

Կլարա Բարտոնի առաքելության և դրա արդյունքների մասին շատ լավ պատկերացում են տալիս հենց իր՝ Բարտոնի և նրա աշխատակիցների զեկույցները, որոնք մեկ գրքով հրատարակվել են 1896 թ. Վաշինգտոնում¹⁰, որի հայերեն թարգմանությունը լույս ընծայվեց 2012 թ. Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից¹¹:

Այսպես, արդեն մարտ ամսին Բարտոնի օգնական Ջուլիան Հաբելը ճանապարհի ընկավ Ալեքսանդրեթ, որտեղից էլ ուղևորվեց Խարբերդ և Մարաշ: Կարմիր խաչը չորս արշավախումբ ուղարկեց հայաբնակ նահանգներ¹²: Նրանք եղան բազմաթիվ հայկական բնակավայրերում՝ սկսած Այնթապից ու Մարաշից մինչև Մեքաստիա, Թոքատ և Մամսուն: Թե ինչ վիճակ էր տիրում հայկական բնակավայրերում կոտորածներից և ավերածություններից հետո, դիպուկ ներկայացվում է Բարտոնի օգնականների զեկույցներում: Այսպես, Ջ. Հաբելը, խոսելով Արաբկիրում տիրող վիճակի մասին, գրում է. «Գրեթե ողջ Արաբկիրն ավերված էր, միայն երևում էին այն քարակույտերը, որտեղ ժամանակին կանգուն տներ կային: 1800 տներից միայն մի քանիսն էին կանգուն մնացել: Շուկան, ինչպես նաև կացարաններն ավերված էին, և մարդիկ կողոպտված, անտուն խառնվել էին այդ մի քանի տներում: Նրանք հիվանդ էին տիֆով: Մեզ ասացին, որ արդեն 600 հոգի մահացել էին այդ հիվանդությունից, իսկ երկրում այդ շրջանի միակ բժշկին ձերբակալել էին»¹³: Ջ. Հաբելի զեկույցից պարզ է դառնում նաև, որ միայն Խարբերդի վիլայեթում 200 գյուղ կամ թավանվել, կամ ամբողջությամբ ոչնչացվել էր, իսկ Մալա-

Barton Clara Harlowe, *The Story of My Childhood*, New York, Baker & Taylor Co., 1907. Կուրայում նրա գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս Ardalan Christine, *Clara Barton's 1898 Battles in Cuba: A reexamination of Her Nursing Contributions*, "Florida Atlantic Comparative Studies Journal 2010-2011", Volume 12, էջ 1-20:

⁹ Կիրակոսյան Արման, Ամերիկյան Կարմիր խաչի 1896 թ. Հայկական առաքելությունը, «Թուրքագիրական և օսմանագիրական հետազոտություններ», IV, Երևան, 2006, էջ 233-234:

¹⁰ American National Red Cross, *Report: America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross*, Washington, DC, 1896:

¹¹ Կլարա Բարտոն, *Ջեկույց: Ամերիկյան Կարմիր խաչի նպաստամատուց առաքելությունը Փոքր Ասիա*, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012:

¹² Առաջին արշավախմբի ղեկավարն էր Ջուլիան Հաբելը, երկրորդինը՝ Էդուարդ Ուիստարը, երրորդինը՝ Չարլզ Քինգ Վուդը, չորրորդինը՝ Այրա Հարիսը:

¹³ Կլարա Բարտոն, *նշվ. աշխ.*, էջ 92:

թիայի տներից 567-ն ավերվել էր¹⁴:

Ջեյթուն և Մարաշ քաղաքներում համաճարակները կանգնեցնելու համար այստեղ հրավիրվեց Սիրիայի Տրիպոլի քաղաքում հաստատված հայտնի համաճարակաբան բժիշկ Այրա Հարիսը: Երկու քաղաքներում հիվանդների թիվը գերազանցում էր 10 000-ը¹⁵: Մեծ քանակությամբ մարդիկ էին մահանում: Ամերիկացի մասնագետների ջանքերի շնորհիվ հիվանդության և մահացության դեպքերի թիվը նշանակալիորեն նվազեց:

Բարտոնի առաքելությունը, մասնավորապես նրա գործընկերներն ու օգնականները հսկայական աշխատանք տարան համիդյան կոտորածների սարսափները և տառապանքները մեղմելու առումով: Նրա զեկույցից պարզ է դառնում, որ սուլթանի հակահայկական դաժան քաղաքականության հետևանքով մոտավոր հաշվարկներով 100 000-200 000 մարդ՝ տղամարդիկ, կանայք, երեխաներ, դարձել էին ընչազուրկ՝ մնալով առանց սննդի, հագուստի և կենսական անհրաժեշտության մյուս միջոցների: Եվ եթե չլինեին Բարտոնի առաքելությունը և նրա օգնականների աշխատանքը, ապա այդ մարդկանցից առնվազն 50 000 հազարը մահացած կլինեին սովից կամ տարբեր հիվանդություններից¹⁶: Մարդասիրական գործունեությունը ներառում էր հիվանդների, որբերի և այրիների խնամք, ավերված տների և շինությունների վերականգնում: Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում քայքայված տնտեսությունը՝ արհեստագործությունը և գյուղատնտեսությունը վերականգնելուն: Բավական է նշել, որ միայն Խարբերդ քաղաքում և համանուն սանջակում կատարված աշխատանքի արդյունքում վերականգնվել է 4575 արհեստավորի աշխատանք, գյուղացիներին բաժանվել են 700 գլուխ եգ, կով, ավանակ և ձի, պատրաստվել և բաժանվել են 3 000 գյուղատնտեսական և այլ գործիքներ, տրամադրվել են 3 500 կտոր հագուստ, 500 անկողնային պարագա և 1470 բուշեղ հացահատիկ¹⁷:

Կլարա Բարտոնի առաքելության արդյունքում փրկվեցին տասնյակ հազարավոր հայերի կյանքեր, և որոշակիորեն վերականգնվեց կոտորածներից փրկված հայերի տնտեսությունը:

Հայերի կոտորածները մեծ արձագանք ունեցան նաև Գերմանիայում: Այդ առումով կարևոր և առանցքային տեղ են զբաղեցնում Յոհանես Լեփսիուսը և նրա գործունեությունը: Գործելով «Գերմանական առաքելություն Արևելքում» (ԳԱԱ, գերմաներեն՝ Deutsche Orient Mission, DOM) կազմակերպության կազմում, որի նպատակն էր Արևելքի մուսուլման բնակչության շրջանում ավետարանական քարոզությունը, 1896 թվականին հայազգի Ջ. Գրինֆիլդի¹⁸ հետ մեկնեց Կ. Պոլիս:

¹⁴ Նույն տեղում, էջ 97-100:

¹⁵ Կլարա Բարտոն, *նշվ. աշխ.*, էջ 38:

¹⁶ Նույն տեղում, էջ 64:

¹⁷ Նույն տեղում, էջ 118:

¹⁸ Ջ. Գրինֆիլդը, ում մայրը հայ էր, ծնվել է 1874 թ. Թավրիզում և յոթ տարեկանում տեղափոխվել Գերմանիա, որտեղ ավարտելով Գյութերպոլտի գիմնազիան՝ սովորել է Լայպցիգի, Բեռլինի և Տյուբինգենի համալսարաններում: 1898 թ. պաշտպանել է իր դոկտորական թեզը քաղաքագիտությունից:

Հանդիպելով կոտորածներին ակնատեսներին՝ Լեփսիուսը շատ տեղեկություններ հավաքեց արևմտահայերի կոտորածների մասին. նրան այդ գործում օգնեցին նաև Օսմանյան կայսրությունում գործող ամերիկացի միսիոներների տրամադրած փաստաթղթերը: Ընդհանուր առմամբ «Գերմանական առաքելություն արևելքում» կազմակերպության ծրագիրը, որը վերաբերում էր ավետարանական քարոզչությանը, վերաճեց հազարավոր այրիներին և որբերին օգնության մատակարարման¹⁹:

Համիդյան կոտորածների տարիներին Յ. Լեփսիուսի գործունեությունը կարելի է գնահատել երկու ուղղությամբ: Դրանցից առաջինը նրա կողմից համիդյան կոտորածների մասին փաստական մեծաքանակ նյութի հավաքումն ու գերմանական հանրությանը դրա մասին իրազեկումն էր²⁰: Մյուս կողմից նա անմիջական մասնակիցը դարձավ հայությանն օգնության կազմակերպման աշխատանքներին: Մասնավորապես Օսմանյան կայսրությունում եղած ժամանակ նա Թալատում՝ Կեսարիայի մոտ, և Ուրֆայում իր խնամքի տակ վերցրեց 100 հայ որբերի: Նրա՝ Թուրքիայում վեց-շաբաթյա ճամփորդության ընթացքում հիմնվեցին «Գերմանական առաքելություն արևելքում» կազմակերպության առաջին երկու որբանոցները²¹: Նա բացի որբանոցներից Ուրֆայում հիմնեց գորգի ֆաբրիկա, որտեղ աշխատում էին հայ այրիները:

Գերմանիա վերադառնալուց հետո Յ. Լեփսիուսը ստեղծեց «Հայաստանի օգնության գերմանական միություն» կազմակերպությունը, որի գործունեության առաջին 12 ամիսների ընթացքում միայն Բեռլինի և Ֆրանկֆուրտի կոմիտեների հատկացումները կազմում էին համապատասխանաբար՝ 390 և 360 հազարական մարկ²²: Այդ նույն ժամանակահատվածում գերմանական որբանոցներում էին հավաքագրվել շուրջ 1350 հայ որբ երեխա²³: Այս կազմակերպության գործունեությունը շարունակվեց հետագա տարիներին և մեծապես նպաստեց համիդյան կոտորածների հետևանքների մեղմացմանը:

1899 թ. Յոհաննես Լեփսիուսի նախագահությամբ գործող «Գերմանական առաքելություն արևելքում» ընկերության կողմից Ուրֆա էր գործուղվել նաև 1871 թ. Շվեյցարիայի Ապենցել շրջանի Հունդվիլ գյուղում ծնված Յակոբ Կյունցլերը՝ այդ ընկերության որբանոցային հաստատությանը կից ստեղծված հիվանդանոցի և կլինիկայի աշխատանքները ղեկավարելու համար, որի առաջնահերթ խնդիրը տեղի

1918-1921թթ. եղել է ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը Բեռլինում:

¹⁹ Հայրունի Ա. Ն., *Յոհ. Լեփսիուս: Հայաստան գործիչն ու հրապարակախոսը*, Երևան, «Միտք», 2001, էջ 10:

²⁰ Խոսքն այն մասին է, որ նա 1896 թ. Բեռլինում հրատարակեց «Armenien und Europa: Eine Anklageschrift wider die christlichen Großmächte und ein Aufruf an das christliche Deutschland, Berlin, 1896» ժողովածուն («Հայաստանը և Եվրոպան: Մեղադրանքներ քրիստոնեական մեծ տերություններին և կոչ քրիստոնյա Գերմանիային»): Նա հայերի կոտորածների մասին հողվածներով հանդես եկավ նաև գերմանական մամուլում: Իսկ 1897 թ. Բեռլինում հիմնադրեց և սկսեց հրատարակել «Der Christliche Orient» ամսագիրը, որի տարբեր համարներում ներկայացվում էին ինչպես հայերի կոտորածների, այնպես էլ նրանց պատմության, կրոնի, մշակույթի մասին տեղեկություններ:

²¹ Հայրունի Աշոտ, *Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը*, Երևան, «Նաիրի», 2002, էջ 44:

²² Նույն տեղում, էջ 60:

²³ Նույն տեղում:

որբանոցի սաներին և 1894-1896 թթ. կոտորածներից տուժած Ուրֆայի հայ բնակչությանն օգնելն էր²⁴:

1895-1896 թթ. Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայերի ջարդերը մեծ արձագանք գտան նաև Սկանդինավյան պետություններում: Սկանդինավյանների ներդրումը սկզբում մեծապես կապված է եղել «Գերմանական արևելյան առաքելության» հետ: 1897 թ. դանիացի Էյե Մայե Բենեդիկտսենը, այցելելով Արևմտյան Հայաստան, այնտեղ տեսնելով ամերիկացիների և գերմանացիների նպաստամատույց գործունեությունը և նրանց հիմնած որբանոցները, որոշում է դանիական մի նմանատիպ կազմակերպություն ստեղծել, որը կունենար նպաստամատույց առաքելություն: Տուն վերադառնալուց կարճ ժամանակ անց՝ 1902 թ., ստեղծում է «Հայերի դանիացի ընկերներ» (ՀԴԸ, դանիերեն՝ Danske Armeniervenner կամ DA), որը, սակայն, ինքնուրույն գործելու համար չունենալով բավարար ռեսուրսներ, համագործակցում էր «Գերմանական առաքելություն արևելքում» կազմակերպության հետ²⁵: ԳԱԱ-ՀԴԸ համագործակցության ամենակարևոր դրսևորումներից էր դանիացի Կարեն Եփփեի գործունեությունը, ով 1903 թ. ժամանում է Ուրֆա և շուտով Լեփսիուսի առաջարկով դառնում է Ուրֆայում 1897 թ. հիմնված որբանոցի տնօրենը: Նա մեծ աշխատանք է տարել ջարդերից փրկված հայերին օգնելու հարցում²⁶:

Սկանդինավյան նպաստամատույց գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում «Կանանց առաքելության աշխատողներ» (ԿԱԱ, դանիերեն՝ Kvindelige Missions Arbejdere կամ KMA) կազմակերպությունը, որը հիմնվել է 1900 թ. Կոպենհագենում (դեռևս 1894 թ. ստեղծվել էր շվեդական KMA-ն): Համիդյան սարսափները վերապրած արևմտահայության վիճակին մոտիկից ծանոթանալու համար որոշվեց նաև միսիոներներ ուղարկել Արևմտյան Հայաստան: Այսպես, 1900 թ. ԿԱԱ-ի կողմից առաջինը Խարբերդ ուղարկվեց միսիոներուհի Քրիստա Համերը, ով այնտեղ հասավ 1901 թ. նոյեմբերին²⁷: Իսկ արդեն 1903 թ. ԿԱԱ-ն Մեզրեում հիմնադրում է «Էմաուս» անվանմամբ դանիական որբանոցը²⁸: 1909 թ. որբանոցը գլխավորում է մեկ այլ նվիրյալ միսիոներուհի՝ դանիացի Կարեն Պիտերսենը: Որբանոցը, բացի դանիացիներից, աշխատակիցների կազմում Նորվեգիայից և Շվեդիայից աշխատակիցներ ունենալու համար հայտնի էր որպես Սկանդինավյան որբանոց:

Քանի որ ամենուրեք հիվանդներ, անօթևաններ, որբեր էին, Քրիստա Համերը նաև հայերեն սովորեց՝ առավել օգտակար լինելու համար: Սակայն 1903 թ. նա

²⁴ Կյունցլեր Յ., *Արյան և արցունքների երկրում. իրադարձությունները Միջագետքում Համաշխարհային պարերազմի ժամանակ*, 1914-1918, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2011, էջ 10:

²⁵ Bjorlund Matthias, Before the Armenian Genocide: Danish Missionary and Rescue Operations In the Ottoman Empire, 1900-1914, “Haygazian Armenological Review”, № 26, 2006, p. 142.

²⁶ Ավելի մանրամասն տե՛ս Չոլաքեան Յ., *Քարեն Եփփե, Հայ գողգոթային և վերածնունդին հետ*, Հալեպ, 2001:

²⁷ Ճեյքըպարն Մարիա, *Օրագրութիւն, 1907-1919, Խարբերդ*, Անթիլիաս, տպարան կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1979, էջ Ժը:

²⁸ Արծվի Բախչինյան, Հայաստան շարժումը Սկանդինավյան երկրներում (1896-1930-ական թվականներ), «Պարմեսրանասիրական հանդես», №3, 2002, էջ 58:

հիվանդացավ և մահացավ: Քրիստա Համերին օգնելու նպատակով 1901 թ. շվեդ կանանց միսիոներական շարժման կողմից Մուշ և Մեզրե է ուղարկվել նաև հայերենին տիրապետող շվեդացի միսիոներուհի Ալմա Յոհանսոնը, ով այնտեղ է մնացել մինչև 1915 թ.²⁹:

Հայ ժողովրդին օգնության հասած սկանդինավյան միսիոներուհիների մեջ իր ուրույն տեղն է զբաղեցնում Մարիա Յակոբսենը: Մարիա Յակոբսենը ծնվել է 1882 թ. Դանիայի Սիմ քաղաքում: 1906 թ. ավարտելով հիվանդապահուհիների դասընթացները՝ դառնում է «Կանանց առաքելության աշխատողներ» կազմակերպության անդամ և արևմտահայերին օգնելու համար որպես միսիոներուհի ուղևորվում Խարբերդ: 1907 թ. ժամանելով Խարբերդ՝ համագործակցում է American Board-ի հետ և նշանակվում Խարբերդում նորաբաց փոքրիկ հիվանդանոցի կառավարչուհի: 1909 թ. տեղափոխվում են Մեզրեում կառուցված ավելի մեծ հիվանդանոց: Մարիա Յակոբսենը նաև հաճախ էր այցելում Խարբերդի և Մեզրեի մերձակա գյուղեր՝ հիվանդներին խնամելու համար: Սկանդինավյան մյուս միսիոներների նման Մարիա Յակոբսենը նույնպես տիրապետում էր հայերենին: Արևմտյան Հայաստանում իր գործունեության ողջ ընթացքում նա գրառումներ է կատարում իր օրագրում՝ շարադրելով նաև Խարբերդի հայության նկատմամբ իրականացված դաժանությունների, տեղահանության, բռնագաղթի մասին³⁰:

Այսպիսով, արևմտահայության՝ 1894-1896 թթ. կոտորածների ժամանակ եվրոպական և ամերիկյան մի շարք հայասիրական կազմակերպություններ զգալի աշխատանք տարան համիդյան սարսափները մեղմելու համար: Նրանց շնորհիվ տասնյակ հազարավոր հայ երեխաներ և այրիացած կանայք փրկվեցին վերահաս կործանումից և կարողացան նոր կյանք սկսել:

Արևմտյան Հայաստանում մարդասիրական օգնության կազմակերպման հարցի շուրջ (XIX դարի վերջ և XX դարի սկիզբ)

Նարինե Հակոբյան

Ամփոփում

Հնդվածում անդրադարձ է կատարվում 1894-1896 թթ. արևմտահայերի կոտորածների և դրան հաջորդած մի քանի տարիների ընթացքում Օսմանյան կայսրության տարածքում օտարերկրյա միսիոներների գործունեությանն ու դրա արդյունքներին: Քննության է առնվում ինչպես ամերիկյան (Օտարերկրյա լիազորների ամերիկյան խորհուրդ, Ամերիկյան կարմիր խաչ), այնպես էլ եվրոպական կազմակերպություն-

²⁹ Տե՛ս վերջինիս օրագիրը՝ Յոհանսոն Ալմա, *Աքսորյալ ժողովուրդ. մեկ տարի հայոց պատմությունից*, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2008, էջ 9:

³⁰ Յակոբսենի մասին ավելի մանրամասն տե՛ս Շեյքրապուրն Մարիա, *Օրագրություն, 1907-1919, Խարբերդ, Աթիլիաս, տպարան կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1979*: Նույնի թարգմանությունը անգլերեն՝ Jacobsen Maria, *Diaries of a Danish Missionary, Harpoot, 1907-1909*, Princeton and London, Gomidas Institute, 2001.

ների («Գերմանական առաքելություն արևելքում», «Կանանց առաքելության աշխատողներ») նպաստամատուց գործունեությունը: Ներկայացվում և վերլուծվում է այն վիթխարի և անձնվեր աշխատանքը, որն ուղղված էր հազարավոր որբերի և այրիների խնամքին, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի քայքայված տնտեսությունը վերականգնելուն:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, միսիոներներ, Օսմանյան կայսրություն, արևմտահայության կոտորածներ:

On the Issue of Organizing Relief Works for Western Armenians (late XIX - early XX cc.)

Narine Hakobyan

Summary

The paper studies the main directions as well as results of the humanitarian works carried out by foreign missionaries in the Ottoman Empire during and after the Hamidian massacres. The relief work of American (ABCFM, American Red Cross), as well as European (KMA, DOM) organizations of taking care of thousands of orphans and widows and recovering the devastated economy of Western Armenia is presented and analyzed.

Keywords: Armenian Genocide, missionaries, Ottoman Empire, Armenian Massacres.

К вопросу об организации гуманитарной помощи западным армянам (конец XIX - начало XX вв.)

Нарине Акопян

Резюме

В статье рассмотрены основные направления и результаты деятельности миссионеров в Османской империи во время и после массовых убийств при султанине Абдул-Гамиде (гамидовская резня). Проанализированы и представлены основные вопросы, связанные с деятельностью американских и европейских организаций по оказанию помощи армянским сиротам и вдовам, а также восстановлению разрушенной экономики Западной Армении.

Ключевые слова: Геноцид армян, миссионеры, Османская империя, массовые убийства западных армян.

ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԻԳՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Արփինե Բաբլումյան

1915-1923 թթ. Հայոց ցեղասպանությունն Օսմանյան կայսրության՝ հայ ազգաբնակչության նկատմամբ վարած բռնությունների քաղաքականության միայն հանգուցալուծումն էր, մինչդեռ տարածքի ժողովրդագրական պատկերի փոփոխման խնդիրը հոգուտ մուսուլման տարրի մշտապես եղել է օսմանյան իշխանությունների ուշադրության կենտրոնում: Դեռևս XVI-XIX դարերի ընթացքում նախկինում գուտ հայաբնակ բազմաթիվ բնակավայրեր հայաթափ են եղել, շատերը բռնությամբ կոտնափոխ են արվել: 1894-1896 թթ. կազմակերպված զանգվածային կոտորածները ևս նշված քաղաքականության մասն էին կազմում, ավելին, այս կոտորածներն արդեն փորձ էին արձանագրելու հայ տարրի բնաջնջմանն ուղղված խնդիրը: Ստորև փորձենք վերլուծել այն հիմնական մեխանիզմները, որոնք կիրառվեցին 1894-1896 թթ. հայերի զանգվածային կոտորածների ընթացքում Խարբերդի նահանգում, որտեղ XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին արձանագրված դեպքերը կարող են «դասական» որակվել:

Խարբերդի նահանգն Օսմանյան կայսրության այն տարածաշրջաններից էր, որտեղ 1894-1896 թթ. կոտորածներն ու բռնի իսլամացումն առավել լայն ծավալներ ունեցան: Այս մասին են փաստում բազմաթիվ օտարերկրացի ականատեսներ: «Այն դաշտում, որի կենտրոնում Խարբերդն էր, կային ավելի մեծ քանակությամբ ավերված քաղաքներ ու գյուղեր, քան ուրիշ վայրերում... Դեռ երկար ժամանակ մարդիկ ամբողջությամբ կաթվածահար էին: Նրանք ոչ միայն անօգնական էին, այլ նաև՝ հուսահատ»¹, - գրում է 1896 թ. սեպտեմբերի 3-ի իր նամակում ամերիկացի միսիոներ Գեյթսը: Կոտորածներն ընդգրկել էին նահանգի գրեթե բոլոր բնակավայրերը. հյուպատոսների տրամադրած տեղեկությունների համաձայն՝ անհնար էր նշել ավերված հայկական բնակավայրերի թիվը²: Կարմիր խաչի կազմակերպության աշխատակիցներից մեկը՝ Ջ. Հաբելը, 1896 թ. օգոստոսի 1-ին Կլարա Բարտոնին ուղղված տեղեկագրում գրում է, որ Խարբերդը տուժել է առավել, քան որևէ այլ տարածք, և որ իրենք պատրաստվում են այստեղ համակարգված աշխատանք իրականացնել: Թալանի ենթարկված կամ ամբողջությամբ ավերված բնակավայրերի թիվը տեղեկագրում հաշվվում էր շուրջ 200³:

Նահանգում կոտորածը սկսվեց Չարսանջակի գավառակի Բերդակ գյուղաքաղաքի վրա տեղի ունեցած հարձակումով: Դա, համաձայն մի փաստաթղթի,

կատարվեց հին տոմարով 1895 թ. հոկտեմբերի 10-ին⁴: Ընդհանուր առմամբ Խարբերդի նահանգի տարբեր բնակավայրերում կոտորածները կազմակերպվեցին հոկտեմբերի վերջին և հասկապես նույնքան ամսվա ընթացքում: 1895 թ. կոտորածից զերծ մնացած եզակի բնակավայրերից էր Ակնը: Սակայն արդեն 1896 թ. սեպտեմբերին Երզնկայից հատուկ զորք բերվեց՝ Ակնը ավերելու նպատակով: Ակնի կոտորածի մասին ամերիկացի միսիոներ Բարնումը գրում է. «Բոլոր վկաների ցուցմունքները հաստատում են, որ կոտորածը կազմակերպված է եղել պաշտոնական շրջանների կողմից, և այն սկսվել է առանց որևէ առիթի»⁵:

Այն հանգամանքը, որ համիդյան կոտորածները նախապատրաստված են եղել ու իրագործվել են պետության կողմից՝ զինվորականների մասնակցությամբ, կասկածից վեր է: Մասնավորապես, թուրքական կառավարության կողմից Մարզվանից վտարված հոգևորական Ջորջ Ֆիլյանը, խոսելով համիդյան կոտորածների մասին, վկայակոչում է մահմեդական մի սպայի խոսքը, որի համաձայն. «Խարբերդում, Սևերեկում, Հուսեյնիկում, Մալաթիայում և Արաբկիրում զոհերի մեծ մասը սպանվել էր զինվորների կողմից, իսկ Խարբերդ քաղաքի Վերին թաղի գրիգորյանների ու միսիոներների դպրոցները, եկեղեցիներն ու տները հրկիզվել էին թնդանոթների միջոցով»⁶: Ամերիկացի միսիոներ, հրապարակախոս Էդվին Բլիսը, ով առավել կարևոր ու մանրամասն տեղեկություններ է ներկայացնում համիդյան կոտորածների վերաբերյալ, ևս փաստում է կոտորածներին զինվորականների մասնակցության մասին. «Պարզ է, որ Հարպուտում, Քեսիրիկում, Մալաթիայում, Արաբկիրում զոհերի մեծամասնությունը սպանվել է զինվորների կողմից, նաև թնդանոթներով հրետակոծվել են Հարպուտ քաղաքի վերին թաղում գտնվող միսիոներների ու գրիգորյանների եկեղեցիներն ու դպրոցները»⁷: Դեպքերի մեկ այլ ժամանակակից՝ Էլիզաբեթ Լաթիմերը, խոսելով Խարբերդի մասին, նշում է, որ այստեղ հեղափոխական որևէ ազդեցություն չկար, և մինչև արևելքից ու հյուսիսից քրդական ավազակախմբերի հայտնվելն ամեն ինչ լավ էր: Հեղինակի հավաստմամբ կանոնավոր բանակի թուրք զինվորները չեն մասնակցել կոտորածներին: Այնուամենայնիվ, Լաթիմերը գտնում է, որ զինվորների անգործությունը նրանց մեղավոր է դարձնում կատարվածում, քանի որ որևէ կերպ նրանք չեն կանխել կոտորածները⁸:

Ինչևիցե, մյուս վկայությունները գալիս են փաստելու, որ որոշ բնակավայրերում ջարդերին մասնակցություն են բերել նաև զինվորները, ինչի մասին է վկայում նաև թնդանոթների օգտագործման փաստը: Էդվին Բլիսը ներկայացնում է Խարբերդի

¹ Harris R. and Harris H., *Letters from the Scenes of the recent Massacres in Armenia*, London, James Nisbet & Co., 1897, p. 198.

² Charmentant P. F., *Tableau officiel des massacres d'Arménie dressé après enquêtes par les six ambassades de Constantinople et statistique dressée par des témoins oculaires grégoriens et protestants...*, Paris, p. 22.

³ Barton C., *The Red Cross: A History of this Remarkable International Movement in the Interest of Humanity*, Washington, D.C.; American National Red Cross, 1898, pp. 337-343.

⁴ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Ներսիսյանի խմբագրությամբ, կազմ.՝ Մ. Ներսիսյան, Ռ. Սահակյան, Երևան, Հայաստան, 1991, էջ 116:

⁵ Նշվ. աշխ., էջ 64:

⁶ Filian G., *Armenia and Her People, or the Story of Armenia by an Armenian*, Hartford, (T.), American Publishing Company, 1896, p. 263.

⁷ Bliss E., *Turkish Cruelties upon the Armenian Christians*, Chicago, Monarch Book Company, 1896, p. 444.

⁸ Latimer E., *The Last Years of the Nineteenth Century*, second edition, Chicago, 1901, p. 172.

նահանգի բնակավայրերի ողջ վնասները: Ըստ Բլիսի՝ միայն 1895 թ. հոկտեմբերի ջարդերից հետո նահանգի բնակավայրերում սպանվել է 24724 մարդ, սովից, ցրտից ու վախից մահացել է 3119 հոգի, ևս 3860-ը սպանվել կամ մահացել են բնակավայրերից դուրս: Կոտորածներին զոհ էր գնացել 32801 մարդ, 3750-ը առևանգվել էին, 14844-ը՝ բռնի իսլամացվել:⁹ Ներկայացրած տվյալներում Բլիսը չի ներառել մասնավորապես 1896 թ. Ակնի ջարդի զոհերին, որոնց թիվը հասնում էր մինչև մի քանի հազարի: Ամերիկացի քարոզիչ Բարնումի՝ Խարբերդից գրած նամակում նշվում է, որ Խարբերդի շրջակա 176 բնակավայրերից ստացված տեղեկության համաձայն՝ քրիստոնյաներին պատկանող 15400 տներից 7054-ը հրկիզվել էին: Հեղինակը կարծում է, որ իրականությունն ավելի սարսափելի կարող է լինել¹⁰: Ջ. Ֆիլյանի վկայակոչած թուրք սպայի ներկայացրած փաստաթղթի համաձայն՝ Խարբերդի նահանգում սպանվածների թիվը կազմում էր 39334, վիրավորներինը՝ 8000 հոգի, այրված տների թիվը՝ 28562, կարիքավորներինը՝ 94870 մարդ¹¹: Տվյալների համեմատությունը խոսում է այն մասին, որ նահանգի տարածքում համիդյան կոտորածներին զոհ է գնացել շուրջ 40000 հայ: Թուրք սպան չի նշում իսլամացվածների թվաքանակը, որը ևս փոքր թիվ չէր կազմում:

Բոլոր ականատեսները նշում են, որ համիդյան կոտորածների տարիներին Խարբերդի նահանգում կրոնափոխության դեպքերը զանգվածային բնույթ են կրել: Միսիոներուհի Թերեզա Հանթինգթոն Ջիզելի վկայության համաձայն՝ համիդյան կոտորածների տարիներին շատ մեծ էր քրիստոնյաների վրա՝ իրենց կյանքը փրկելու համար մուսուլման դառնալու ճնշումը, ուստի «շատ շատերը միանում էին մարտիրոսների ազնվական բանակին»¹² Այս մասին է վկայում ամերիկացի միսիոներ Ֆ. Գրինը. «Գյուղերի վրա մուսուլման դառնալու ճնշումը սարսափելի էր: Մեծաթիվ մարդիկ, ովքեր անհապաղ չհրաժարվեցին իրենց քրիստոնեական հավատից, անմիջապես գնդակահարվեցին կամ տանջամահ արվեցին»¹³:

Նրանց, ովքեր կրոնափոխ էին եղել, մահվան սպառնալիքով արգելվում էր խոսել իրենց կրոնափոխության փաստի մասին: 1896 թ. հունվարին Խարբերդի ու Դիարբեքի նահանգների տեղական պաշտոնյաները նույնիսկ հրամաններ ուղարկեցին կրոնափոխ եղած գյուղերին՝ պահանջելով որևէ բացատրություն չտալ այն մասին, որ նրանք իսլամացվել են բռնի կերպով¹⁴: Կաթոլիկ եկեղեցու հոգևորական Ֆ. Շարմետանի հրատարակած գրքում հիշատակվում են Խարբերդի դաշտի տասնյակից ավելի գյուղերի անուններ՝ Մորենիկ, Աշուան, Հուսեյնիկ, Խոխ, Նեկերեկ,

Շենթիլ, Քեռրբե, Հարսիկ, Ջոր, Ծառուկ, Բագմաշեն, որոնց հայ բնակիչները ստիպված իսլամ են ընդունել: Վերոնշյալ գյուղերի եկեղեցիներն ավերվել ու թալանվել են¹⁵: Նույն սկզբնաղբյուրում նշվում են նաև Արաբկիրի գավառակի բնակավայրերի անունները՝ Սաղմկա, Մաշկերտ, Էհնեցիք, Վաղշեն, Ծապլվար, Քուշնա, Ադին, Վանք, Կոանի, Հացկնի, Ծագ և այլ գյուղեր, որոնց բնակիչներն իսլամացվել են, տղամարդիկ՝ թլպատվել¹⁶:

Հարկ է նշել, որ 1890-ական թթ. ջարդերին բնորոշ էին ոչ միայն կանանց առևանգումն ու մուսուլմաններին կնության տալը, ինչը լայնորեն իրականացվեց 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության տարիներին, այլև հատկապես տղամարդկանց իսլամացումն ու թլպատումը, ինչը հատուկ չէր 1915-1923 թթ., երբ տղամարդկանց ոչնչացմանն այլընտրանք չկար ընդհանրապես: Տղամարդկանց թլպատման դեպքեր արձանագրվեցին ոչ միայն Արաբկիրի¹⁷, այլ նաև Չմշկածագի, Ակնի գյուղերում, մասնավորապես Կարմիրում¹⁸, Չարսանջակում՝ Բերրիում¹⁹: Ինչ վերաբերում է կանանց ու երեխաների առևանգման դեպքերին, ապա սա հատուկ էր գրեթե բոլոր բնակավայրերին:

Թեև իսլամացման դեպքերը նահանգի տարածքում բազմաթիվ էին, և այդ դեպքերի վերաբերյալ վկայությունները ևս քիչ չեն, չենք կարող կրոնափոխ եղած հայերի որևէ որոշակի թիվ նշել: Կրոնափոխ եղած հայերի՝ Բլիսի ներկայացրած թիվը՝ 14844, միակ ընդհանուր տվյալն է նահանգի կտրվածքով, այլ ընդհանուր տվյալներ չունենք: Բացի այդ կրոնափոխ եղած բազմաթիվ հայեր կոտորածներից որոշ ժամանակ անց վերադարձան քրիստոնեությանը, վերականգնեցին ավերված եկեղեցիները, որոշ վայրերում կառուցեցին նոր աղոթատեղիներ: Ընդունենք, որ կոտորածների տարիներին Խարբերդի նահանգում իսլամացվել է շուրջ 15000 հայ, որոնց մեծամասնությունը մինչև 1897-1898 թթ. վերադարձել էր քրիստոնեությանը: Ցավոք, դժվար է հստակեցնել համիդյան կոտորածների ընթացքում իսլամացված և հետագայում քրիստոնեությանը չվերադարձած հայերի թվաքանակը:

Համիդյան կոտորածների ընթացքում մեծ հարված հասցվեց հայկական մշակութային հուշարձաններին՝ նախ և առաջ եկեղեցիներին: Ավելին, ջարդերից հետո դեռ երկար տարիներ ոչ մի քրիստոնեական աղոթատեղի չէր կարող կառուցվել. «...որոշ եկեղեցիներ վերածվեցին մզկիթների, այլ եկեղեցիներ ենթարկվեցին անարգման, սուրբ գրքերը բաժան-բաժան արվեցին»²⁰: Հեղին Հարրիսի բերած աղյուսակի համաձայն, որը կազմվել է պատրիարքարանի տրամադրած տվյալների հիման վրա, Խարբերդում ու նրա շրջակա 73 գյուղերում հրկիզվել էին 15 եկեղեցի, 2 վանք, վնասվել՝ 4 վանք, ավերվել՝ բողոքական 5 ժողովարան, զգալիորեն

⁹ Bliss E., նշվ. աշխ., էջ 445:
¹⁰ Filian G., նշվ. աշխ., էջ 264:
¹¹ Նույն տեղում:
¹² *Great need over the Water, The Letters of Theresa Huntington Ziegler, Missionary to Turkey, 1898-1905*, edited by Stina Katchadourian, Gomidas Institute, Taderon Press, Michigan, 1999, p. 70.
¹³ Greene F., *Armenian Massacres or the Sword of Mohammed*, Philadelphia and Chicago, International Publishing Co., 1896, p. 267.
¹⁴ Bliss E., նշվ. աշխ., էջ 494:

¹⁵ Charmetant P. F., նշվ. աշխ., էջ 64:
¹⁶ Նույն տեղում, էջ 6:
¹⁷ ԳԱԹ, թ. Ազատյանի Ֆ., 37/III, էջ 6-12:
¹⁸ Charmetant P. F., նշվ. աշխ., էջ 66:
¹⁹ Bliss E., նշվ. աշխ., էջ 441:
²⁰ Bliss E., նշվ. աշխ., էջ 444:

վնասվել՝ 18-ը: Անարգվել ու վնասվել էր ևս 29 եկեղեցի²¹: Է. Բլիսի բերած տվյալների համաձայն՝ նահանգի տարածքում ավերվել էին հայկական 211 վանք, եկեղեցի ու դպրոց, որից 108-ը՝ Խարբերդում ու նրա շրջակա 59 գյուղերում²²: Եկեղեցիներից շատերը բացի վնասվելուց, նաև անարգվել էին, ինչի մասին ևս վկայությունները բազմաթիվ են:

Բացի եկեղեցական ու կրթական հաստատությունների կրած կորուստներից, խոշոր նյութական կորուստներ ունեցավ և բնակչությունը: Կոտորածներից տուժած բնակիչները հայտնվել էին անօգնական վիճակում: Ավերվել էին նրանցից շատերի տները, թալանվել ունեցվածքը: Մասնավորապես Արաբկիր քաղաքում հրդեհվել էր հայերի 1560²³, Մալաթիա քաղաքում՝ 560²⁴, Ակնում՝ 980 տուն²⁵: Ընդհանուր առմամբ, ըստ Բլիսի՝ նահանգի քաղաքներում և գյուղերում հրդեհվել էր հայերի 25662 տուն²⁶: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ բնակչության նյութական կորուստներն ի մի բերելու խնդիրը չափազանց բարդ է, քանի որ ամբողջական տվյալներ չկան տարբեր բնակավայրերում ապրող հայերի ունեցվածքի ու նրանց կրած վնասների վերաբերյալ:

Կոտորածներից հետո գրեթե բոլոր բնակավայրերում հարյուրներով հաշվվում էին որբեր ու այրիներ, որոնց գոյատևման հարցերն օրակարգային էին դարձել օտարերկրացի միսիոներների համար: Դրսից ստացված յուրաքանչյուր միջոց վերջիններս ուղղում էին անօթևան ու անոթի մարդկանց օգնության գործին: Միայն Խարբերդում ու նրա շրջակա 73 գյուղերում, համաձայն պատրիարքարանի տվյալների, 1896 թ. հուլիսի դրությամբ հաշվվում էր 26 990 կարիքավոր անձ, այդ թվում՝ որբեր, այրիներ²⁷: Է. Բլիսի բերած տվյալներն ընդգրկում են գրեթե ամբողջ նահանգի տարածքը: Վերջինիս համաձայն՝ Խարբերդում և նրա հարակից 59 գյուղերում, Արաբկիրում, Ակնում, Կապան Մաղենում, Մալաթիայում, Դերսիմում և դրանց հարակից գյուղերում կոտորածներից հետո հաշվվում էր 83 245 կարիքավոր²⁸: Կարիքավորների մոտավորապես նման թվաքանակ արձանագրված է ամերիկացի միսիոներների նպաստամատույց աշխատանքների վերաբերյալ զեկույցներում: Մասնավորապես Հելեն Հարրիսը նամակներից մեկում մեջբերում է Խարբերդի շրջանում աշխատող մի միսիոների զեկույց, որում նշվում է, որ նշված տարածքի 256 քաղաքներում ու գյուղերում օգնություն է տրամադրվել

²¹ Harris R. and Harris H., *նշվ. աշխ.*, էջ 146:

²² Bliss E., *նշվ. աշխ.*, էջ 445:

²³ Harris R. and Harris H., *նշվ. աշխ.*, էջ 196:

²⁴ Նույն տեղում, էջ 168:

²⁵ Severance Gordon and Diana. *Against the Gates of Hell*, New York. Toronto.Oxford, University press of America, 2003, p. 253.

²⁶ Bliss E., *նշվ. աշխ.*, էջ 445:

²⁷ Harris R. and Harris H., *նշվ. աշխ.*, էջ 146:

²⁸ Bliss E., *նշվ. աշխ.*, էջ 445:

74 805 անձի²⁹:

Ջարդերի հետևանքով ոչ միայն նվազեց հայ բնակչության թվաքանակը, այլև ծայր առան բնակչության նոր տեղաշարժեր, որոնց հետևանքով արդեն XX դարի սկզբներին շատ բնակավայրեր ունեին բնակչության այլ կազմ, քան նախկինում: Նոր կոտորածների վախը ստիպում էր շատերին ապաստան գտնել ու հաստատվել ավելի մեծ և կարևորը՝ հայաշատ բնակավայրերում: Նման տեղաշարժերի հետևանքով նախկինում փոքրաթիվ հայություն ունեցող բնակավայրեր հայաթափ եղան: 1894-1896 թթ. ջարդերի տարիներին և դրանից հետո շեշտակիորեն աճեց Թուրքիայից ԱՄՆ մեկնողների քանակը, որոնց մեջ բազմաթիվ էին հենց Խարբերդի նահանգի տարբեր բնակավայրերի հայերը:

Ամփոփելով համիդյան կոտորածների հետևանքները Խարբերդի նահանգում՝ նշենք, որ 1895-1896 թթ. ընթացքում Խարբերդի նահանգում զանգվածային կոտորածների գոհ դարձավ շուրջ 40 000 հայ: Կոտորածների տարիներին նահանգի տարածքում բռնությամբ կրոնափոխ արվեց շուրջ 15 000 հայ, որոնց մեծ մասը հետագա տարիներին վերադարձավ քրիստոնեությանը, իսկ մյուսները համալրեցին նախկինում իսլամացած հայերի շարքերը: Կոտորածներից հետո արագացան արտագաղթի տեմպերը: Համիդյան կոտորածների իրագործման մեխանիզմները, այսպիսով, գրեթե նույնն էին, ինչ 1915-1923 թթ., բացառությամբ զանգվածային տեղահանության իրագործման, ինչը հատուկ էր հենց Հայոց ցեղասպանությանը:

Խարբերդի նահանգի հայ ազգաբնակչությունը համիդյան կոտորածների տարիներին

Արփինե Բարլումյան

Ամփոփում

Հոդվածում ներկայացվում են համիդյան կոտորածների իրականացման հիմնական մեխանիզմներն Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի օրինակով: Օսմանյան կայսրությունում իշխանությունների՝ դարեր շարունակ վարած հայահալած քաղաքականության կարևոր մասն է եղել տարածքի ժողովրդագրական պատկերի փոփոխումը հոգուտ մուսուլմանների: XIX դարի վերջին կազմակերպված հայերի զանգվածային կոտորածները ևս կարևոր ժողովրդագրական փոփոխությունների հանգեցրին: Մասնավորապես, Խարբերդի նահանգում կոտորածներին գոհ գնաց շուրջ 40000, բռնությամբ կրոնափոխ արվեց շուրջ 15000 հայ:

Բանալի բառեր՝ Արևմտյան Հայաստան, Խարբերդի նահանգ, համիդյան կոտորածներ, իսլամացում, ժողովրդագրություն, Մալաթիա, Արաբկիր, Ակն:

²⁹ Harris R. and Harris H., *նշվ. աշխ.*, էջ 193:

The Armenian Population of Kharberd Province during the Hamidian Massacres

Arpine Bablumyan

Summary

The paper analyzes the main mechanisms of Hamidian massacres on the example of Kharberd province of Western Armenia.

Anti-Armenian policy of Turkish authorities was pursued for centuries. An important part of that policy was attempt to change the demographic situation in favor of Muslim population. Massacres of the Armenians at the end of XIX century also brought to demographic changes: nearly 40,000 Armenians were killed during these slaughters, nearly 15,000 were forcefully Islamized in Kharberd province.

Keywords: Western Armenia, Kharberd province, Hamidian massacres, Islamization, demography, Malatia, Arabkir, Akn.

Армянское население Харбердского вилайета в годы гамидовской резни

Арпине Баблумян

Резюме

В статье рассматриваются основные механизмы осуществления гамидовской резни на примере провинции Харберд Западной Армении. Антиармянская политика проводилась властями Османской империи на протяжении веков. Важной частью этой политики было стремление изменить демографическую картину Западной Армении в пользу мусульманского населения. Массовая резня армян в конце XIX века также привела к значительным демографическим изменениям: на территории провинции Харберд было истреблено около 40 000 армян, приблизительно 15 000 армян было исламизировано.

Ключевые слова: Западная Армения, провинция Харберд, гамидовская резня, демография, Малатия, Арабкир, Акн.

ДЕПОРТАЦИЯ АРМЯН ОСМАНСКОЙ ТУРЦИИ: МИФЫ ТУРЕЦКОЙ ИСТОРИОГРАФИИ

Валерий Тунян

Для Геноцида армян как этнополитического преступления против человечества можно предложить периодизацию из четырех фаз: 1) создание геноцидного общества (1878-1893); 2) протогеноцид-ехерн (1894-1896); 3) геноцид - Мец ехерн (1915-1922); 4) отрицание геноцида (1915 -2014).

Определяющим этот процесс являются три составные: политика ведущих держав, Армянский вопрос и деятельность турецких режимов. С момента возникновения Армянского вопроса как международной проблемы в 1878 г. он стал инструментом вмешательства во внутренние дела Османской империи для решения определенных политических целей. При этом ведущие державы затягивали решение Армянского вопроса, стремясь сохранить одряхлевшую Османскую империю как источник получения дивидендов, охранения статус-кво и охрану черноморских проливов слабым стражником.

Депортация армянского населения Османской Турции, составная часть Геноцида армян 1915-23 гг.¹, является предметом политизации в современной Турции, где используют анналы реальной истории Армянской Голгофы для распространения собственных установок. В этом контексте значительное внимание уделяется конструированию мифов вокруг депортации армян, с целью сокрытия исторической правды.

Архитекторы мифов ставят целью воздействовать на историческое сознание, внутреннее общественное мнение и международное сообщество.² Можно выделить следующие основные мифы вокруг депортации армян: 1) причины - политическая нелояльность армян, армянские восстания, армяно-русский тандем против турок;³ 2) экономический, религиозный и культурный аспекты армянофобии;⁴ 3) переселенчество, выселение или депортация;⁵ 4) характер и формы депортации; 5) количество жертв;⁶ 6) вопрос ответственности за геноцид;⁷ 7) деятельность армянских политических партий в Турции.

¹ *Депортация*. - genocide.ru/enc/deportation.htm

² *Стереотип*. - http://www.psychologos.ru/articles/view/stereotip

³ "Геноцид армян" - факты говорят другое 2. - http://spaces.ru/dary/?r=diary/read&BP=0&id=2022181415&sid=6893624701832328; Шоу Ст. Д., *История Османской империи* - http://armterror.info/index.php? p = reasons

⁴ Шуваева-Петросян Е. *Исламский фанатизм и геноцид армян* (ч. III).- http:// www.diplomat.am/load/public/chastiii/5-1-0-; Армянофобия в Турции.- http:// taregir.livejournal.com/24320.html

⁵ Глава МИДа Турции признал депортацию армян в 1915 г. бесчеловечной ошибкой младотурков. - http://www.newsru.com/wordl/13dec2013/mid.html

⁶ Алиев Х. *Выдуманный "армянский Геноцид"*. - http://qwsswww.disput.az/index.php?sjowtopic=475342

⁷ Файгл Э. *Правда о терроре. Армянский терроризм-истоки и причины*. Баку, 2000, с. 40. - http://ebooks.preslib.az/pdfbooks/rubooks/fayqll.pdf

Современные мифотворцы используют разные приемы для опровержения понятия депортация. Для этого ему противопоставляется понятие переселения. Исмаил Хагани утверждает: “Депортация - означает выдворение. Армян же никто не выдворял за пределы страны. Их поселили, причем временно внутри страны в места, где они не могли бы создавать проблем. Все это нашло свое отражение в Законе о Техчире”⁸.

Мотивацию под это понятие подводит турецкий историк Гюрюн: “Как понимается переселение в мусульманском мире? Техчир (переселение) - слово арабского происхождения, корнем ему служит “хиджрет”, означающее буквально “перекочевка”. В этом слове нет того значения, которое содержится в слове депортация”⁹.

После этого дается классическое определение депортации времен бурской войны начала XX в., когда в концентрационные лагеря с колючей проволокой было согнано 200 тыс.: из них умерло 15% от недоедания и болезней, в том числе 50% детей до 16 лет:¹⁰ “Депортация, - отмечает Гюрюн, - это, по существу, ссылка, выдворение, принудительное размещение в определенном месте. Депортированный в месте своего размещения лишен свободы, средств к существованию, каких-либо прав, он может быть изолирован от внешнего мира в специальных лагерях”¹¹.

В этом контексте понятие депортация используется и сегодня: “Депортация (от лат. deportatio) - изгнание, ссылка. Исторически истоки депортации связывают со специальными видами ссылки преступников, используемыми по уголовному праву Франции в XVIII- XIX вв, а также “политически неблагонадежных лиц”. Эти лица подвергались пожизненному поселению в отведенных местах депортации. Имелись и другие виды ссылки: транспортиция - каторжные работы, релегация - дополнительное наказание после отбытия основного наказания: “В широком смысле под депортацией понимается принудительная высылка лица или категории лиц в другое государство или другую местность, обычно, под конвоем”. При этом если депортация охватывает весь этнос, а не часть, то она называется всеобщей либо “тотальной депортацией”¹².

Тогда в чем же разница между понятиями “техчир” (“переселение”) и “депортация?” Турецкий историк предьявляет ряд критериев:

1) территориальное переселение без лишения прав. В качестве пояснения приводится пример с построением плотины и выселением местного населения. На этой основе делается вывод, что в иностранных языках понятие “переселение” было переведено “с заведомым искажением” “тенденциозными переводчиками”;

⁸ Исмаил Х. Претензии о “Геноциде армян” в свете исторических фактов.-<http://minval.az/news/46342/>

⁹ Гюрюн К. *Армянское досье*. Баку, 1993, с. 131. - ebooks.preslib.az/pdfbooks/ubooks/armdosye.pdf

¹⁰ *Англо-бурская война 1899 - 1902 гг.* - <http://www.zaxodi-v-internet.ru>

¹¹ Гюрюн К. *Армянское досье...*, с. 13.

¹² *Принудительное переселение (депортация) народов в СССР*. - <http://na.ru/spravka/20140421/10-04857138.html>

2) размещение иностранных подданных в концентрационных лагерях воюющими странами для “обезвреживания тылов”. Ассиметричный аргумент, что армяне не являлись иностранными подданными отвергается турецкою ментальностью: “Именно поэтому они и не были сосланы в концлагеря”. Более того, выдвигается положение о расплывчатом гражданстве турецких армян: “Вместе с тем, подданными какой страны, России или Турции, являлись армяне в ходе Первой мировой войны? Не думаю, что ответить на этот вопрос так уже просто. Однако, одно не вызывает сомнений, армяне, юридически являвшиеся подданными Османской империи, фактически вели себя как подданные России”;

3) лица, ведущие подрывную деятельность против воюющей страны, являются “изменниками родины”. В качестве примера указываются “участники зейтунского восстания”, которых всего лишь переселили (“техчир”)”¹³.

Здесь очень тонко расставлены акценты, чтобы обосновать идею переселения (“техчир”). С этой целью обыгрывается понятие “концлагерь”. В фашистской Германии концлагеря в начале с 1933 г. являлись “исправительно-трудовыми”, а с 1941 г. возникают “лагеря смерти”, призванные уничтожать узников по расовой принадлежности. Непосредственно в концентрационных лагерях оставались узники-евреи, используемые в трудовой деятельности.¹⁴

То, что пустыни Месопотамии – Дейр-эз-Зор и Рас-уль-Айн - не были обнесены колючими проволоками, вовсе не означает, что они не выполняли роль функций концлагерей. Причем именно в смысле трудовых лагерей, а затем лагерей смерти. Наместник Сирии и Палестины Джемаль-паша, исходя из интересов Месопотамского фронта, к началу 1916 г. сумел организовать трудовые фабрики и артели, что обратило на себя негативное внимание турецкой печати. После чего стамбульские правители Энвер и Талаат сумели к осени добиться уничтожения большинства выселенных армян.

Концепция “Техчир” избегает представления политического компонента депортации армянского населения, прошедшей определенное историческое развитие. Еще на Салоницком съезде партии “Иттихиад” 10 августа 1910 г. была принята программа ликвидации Армянского вопроса, впоследствии оформленная в программу “Десять инструкций”. Она намечала запрет на деятельность армянских политических организаций и ссылку их лидеров в Мосул или Багдад; лишение оружия армянского населения; использование мусульманского населения против армян, из которых мужская половина подлежала уничтожению до 50 - летнего возраста; учет исторического опыта армянских погромов; удаление от государственных должностей всех армянских служащих под предлогом шпионажа; осуществление расправы над армянскими заключенными в тюрьмах; системную деятельность против армянского населения,

¹³ Гюрюн К. *Армянское досье...*, с. 131.

¹⁴ *Нацистские концлагеря в годы Второй мировой войны*.-<http://ria.ru/spravka/20100427/227000409.html>

чтобы не допустить его противодействия. Десятая инструкция фиксировала секретный характер документа, ознакомление с ним лишь 2-3 лиц в каждом вилайете.

В начале января 1915 г. совещание неофициального центра партии “Иттихад” - Талаат, Бехаэддин Шакир, И. Джанполад - глава тайной полиции внутривластного ведомства, доктор Назим и полковник Сейфи, возглавлявший политическое управление генштаба, - подтвердило “Десять инструкций”: 1) запретить армянские организации, а армян, занимающихся антиправительственной деятельностью выслать “в такие провинции, как Багдад, Мосул, и уничтожить их в пути или по прибытии на место назначения”; 2) изъять оружия у армян; 3) натравить мусульман против армян, учитывая опыт вилайетов Вана, Эрзерума и Аданы; 4) использовать для этого вооруженные силы; 5) ликвидировать мужчин до 50 лет, священников и учителей, а детям и женщинам позволить принять ислам; 6) прервать связь выселенцев с родиной; 7) обвинить в шпионаже армянских государственных служащих с удалением и наказанием; 8) уничтожить армянских военнослужащих; 9) осуществить одновременное и системное насилие, “чтобы не дать армянам времени для принятия официальных мер”; 10) обеспечить секретный характер инструкций.¹⁵

“Десять инструкций” представляли собой подготовительную программную базу по осуществлению Геноцида армян. В середине февраля 1915 г. центральный комитет партии “Иттихад” под председательством Талаата принял решение о поголовном уничтожении армянского населения.¹⁶ А уже 27 февраля военный министр Энвер отправил зашифрованную телеграмму командующим армиям об “истреблении армянской нации”: “Исходя из данных обстоятельств, имперское правительство издало приказ об истреблении всей армянской нации. В отношении их должны быть проведены следующие операции: всех армян страны, являющихся оттоманскими подданными, старше пяти лет, вывести из городов и уничтожить. Всех армян, служащих в имперских армиях, не нарушая обычного распорядка, отделить от своих дивизий, увести в уединенные места - подальше от посторонних глаз, и расстрелять”.¹⁷

Приказ был воплощен в жизнь. Осведомленный современник отмечает: “Армяне-солдаты в турецкой армии разоружены и обращены в конюхов и погонщиков мулов, очень много армян - аскеров расстреляно, армяне - офицеры посажены в крепость или тоже расстреляны, армяне - врачи работают только в тылу, но и их расстреливают при малейшем подозрении”.¹⁸

2 марта 1915 г. уполномоченный католикоса Киликии Саак поставил в известность Константинопольского патриарха Завена Егияна о плане предстоящей депортации

армянского населения Турции. Лобовой запрос патриарха о достоверности информации был опровергнут Высокой Портой и немецким послом Г. Вангенгеймом. При этом министр иностранных дел в середине марта обсуждал характер депортации в Берлине. Из запроса патриарха Талаат сделал выводы. 13 марта завершилась сессия Османского парламента, армянские депутаты лишились политической трибуны для обличения политики младотуркизма.¹⁹

Следовательно, вопреки мифическим утверждениям о наличии “техчира” - переселения, мы имеем дело с депортацией армянского населения. Депортация представляла собой этнополитическое выселение в незнакомую тяжелую природную среду, лишение средств существования с целью уничтожения армянского народа Османской Турции.

Пробным шагом к массовой депортации стали зейтунские события. Солдаты-дезертиры из Зейтуна укрылись в горах. Для их поимки был отправлен военный отряд, что привело к столкновению, введению военного суда.²⁰ Мусульмане г. Мараша отправили телеграмму в Константинополь о необходимости расправы с зейтунскими соседями, откуда поступила санкция на использование возможностей местного мутасарифа.

На расправу в Зейтун были посланы войска, в результате чего было арестовано 70 видных представителей армянской общины, что создало напряженность. Последовали репрессии.²¹ 26 марта/8 апреля 1915 г. первый караван зейтунцев был депортирован в болотистые местности Конийского вилайета, а второй из 16 тыс. - в сирийскую пустыню Дер Зор, куда выжившие добрались 6/19 апреля. Правовую основу депортационной меры командующий Четвертой армией Джемаль-паша осуществил лишь приказом от 29 марта 1915 г., говорящем о наличии “военной операции”, который был опубликован 31 марта.²²

Между тем, мифотворцы”, в частности Мим Кемал Оке, Зейтунские события представляют “первым армянским восстанием”, которое нанесло значительный ущерб мусульманскому населению Османской Турции.²³ Творцы мифов говорят: “После Сарыкамьшской битвы армяне-сепаратисты решили воспользоваться сложившейся ситуацией и начали действовать в качестве “пятой колонны”²⁴. В книге Ж. де Малевилла “Армянская трагедия 1915 г.” значится, что в феврале 1915 г. “армянские террористы” приступили к “плановому уничтожению” 1,6 млн. мусульманского

¹⁵ Тунян В. Г. *Младотурки и Армянский вопрос*, ч. 3, с. 16, 17, 20 -24.

¹⁶ *Геноцид армян в Османской империи*. Под. ред. М. Г. Нерсисяна. Ереван, 1983, N 142, 143, с. 277, 278.

¹⁷ Документы об Армянском вопросе из дипломатического архива Министерства иностранных дел Италии. Ереван, 2008, т. 1, N181, с. 150-154 (на арм. яз.).

¹⁸ Тунян В. Г. *Младотурки и Армянский вопрос*..., ч. 3, с. 25.

¹⁹ *Анатомия Армянского вопроса* (Выдержки из книги “Армянский вопрос в 1914 - 1923 гг.”). - <http://armterror.info/index.php?p=reasons/>; Мим Кемал Оке. *Анатомия Армянского вопроса*. - <http://forum.bakililar.az/index.php?showtopic=17547>

²⁰ *Испорчены...* - http://www.erevangala500.com/?direct=news_page&id=208

¹⁵ Геноцид 1915 года. Просто факты. Слова излишни... “Десять инструкций”, принятых в январе 1915 г. тайным центром младотурок. - [http:// gau. am / gau. gazetaold/?v=309&t=334](http://gau.am/gau.gazetaold/?v=309&t=334)

¹⁶ Тунян В. Г. *Младотурки и Армянский вопрос*. Ереван, 2010, ч. 3, с. 12, 13.

¹⁷ *Документы младотурецкого комитета о геноциде западных армян в 1915-1916 гг.* сост. Саакян Р. - Известия Академии наук АрмССР. Общественные науки. 1965, N 3, с. 2. - [http:// www.vostlit. info/ Texts/ Dokumenty/ Turk/XX/19-1920/.../text. htm](http://www.vostlit.info/Texts/Dokumenty/Turk/XX/19-1920/.../text.htm)

¹⁸ Беседа с турецким врачом. - “Кавказское слово”. 1915, 15 мая.

населения Восточной Анатолии.²⁵ Странники и последователи де Малевила довели цифру до 2 миллионов турок-мусульман.²⁶

В реальности события имеют иной вектор развития. В 1894-1896 гг. было убито около 300 тыс. армян, весной 1909 г. в результате Аданских событий погибло 30 тыс., всё это было следствием исламского фанатизма и политики правящих режимов. В начале 1915 г. в составе турецкой армии служили 60 тыс. армянских солдат, которые были планомерно уничтожены.²⁷ Одной из причин армянофобии являлся экономический фактор: армяне в 1914 г. контролировали 60 % импорта и 40 % экспорта Османской империи.²⁸

Американский историк Джастин Маккарти в книге “Армянский терроризм: история как яд и как противоядие” также находит, что антиосманская деятельность армянских революционных групп стала причиной депортации: “Какой бы ошибочной ни считалась депортация с точки зрения сегодняшней морали, никто не может серьезно отрицать тот факт, что именно вследствие помощи, оказываемой армянами вторгающимся русским армиям в 1828, 1854 и 1877 гг., османы решили, что они не могут доверять армянам”.²⁹

Дж. и К. Маккарти также отвергают понятие “депортация” армянского населения Османской Турции, противопоставляя ей идею внутреннего переселения: “Ответом Османского правительства на армянские восстания было применение классической ближневосточной тактики умиротворения мятежного региона - депортация. После Ванского восстания 27 мая 1915 года, был принят временный закон, предписывающий принудительное переселение армян. (Само применение термина “депортация” в данном случае неверно в силу своей ошибочности. Армян перемещали в пределах одной и той же страны, а не изгоняли в другую, что и означало бы “депортацию”). Закон был претворен в жизнь месяцем позже”.³⁰

Сущность расхождения в том, что супруги Маккарти не желают видеть в депортации цель - уничтожение армянского населения Западной Армении и всей Османской державы. Наличие такой установки на высшем партийно-государственном уровне представляет либеральный турецкий историк Танер Акчам: “Как правительство, так и центральный комитет партии и военное министерство разрабатывали специальные программы. Главной темой проводимых военным министерством закрытых

заседаний была депортация многочисленных нетурецких народов, населяющих стратегически важные районы империи и, следовательно подверженных влиянию внешних сил”.

Изучение сценариев депортации осуществлялось в ходе закрытых заседаний военного министерства и партийных представителей в мае, июне и августе 1914 г., о которых не знали ряд членов правительства. Между тем сценарий депортации проигрывался накануне мировой войны на Эгейском побережье, в частности в Измире, из трех компонентов: “а) общие мероприятия, проводимые правительством; б) мероприятия, проводимые армией; в) мероприятия партии “Единение и прогресс””.³¹ Отказ от их применения к армянскому населению в это время объясняется контролем политики руководства Турции в Армянском вопросе со стороны Англии, России и Франции.

Таким образом, подход Дж. и К. Маккарти имеет неверный характер, поскольку игнорирует запланированность депортации армянского населения на партийно-государственном уровне со специальными мерами.

Асимметричный подход проявляется к определению причин депортации. Маккарти представляют в ней борьбу против подрывной армянской партизанской деятельности: “Принцип депортации был одним из немногих известных способов борьбы с партизанским движением и используется издревле по сегодняшний день. Смысл ее состоит в том, что, поскольку партизаны зависят от местных поселений в плане снабжения, поддержки и пополнения новобранцами, их следует отделить от местного населения”.³²

Маккарти пишут так, как им интересно, а не так, как было. Они не раскручивают историю подготовки депортации-геноцида, а представляют её с точки зрения вымышленной партизанской борьбы армян с начала Первой мировой войны. Между тем нами уже показывалась длительность подготовки к депортации армянского населения в Османской Турции. В укороченной форме эту точку зрения развивает Т. Акчам: “Геноцид армян был составной частью плана туркизации Анатолии”.³³ Представляется время создания: “Эта программа была разработана в мае-августе 1914 года”.

Значительное внимание уделяется мифу о политической нелояльности армянского населения Османской Турции, что повлекло депортацию и геноцид. Внук военного руководителя младотурецкой Турции Энвер паша Осман Маятепек отрицает наличие геноцида армян: “Получается, Османская империя за один день решила осуществить “геноцид” против народа, прожившего там вместе сотни лет... Что же, им делать было нечего? Этому нет никакого другого объяснения, поэтому все это сказка”.

Причинами так называемой “сказки” о геноциде указываются: 1) военная атмосфера Первой мировой войны, обусловившая насилия над армянским населением

²⁵ Преступления армянских террористических и бандитских формирований против человечества (XIX – XXI вв.). Краткая хронологическая энциклопедия. Руководитель Р. Мустафаев. Баку, 2002, с. 17. - <http://ebokks.preslib.az/pdfbooks/rubooks/>

²⁶ *Испорчены...* - <http://www.erevangala500.com/?direct=newspage&id=208>

²⁷ Шуваева-Петросян Е. *Исламский фанатизм и геноцид армян* (ч. II). - www.diplomat.am/load/avtory/Elenashuvaevapetrosjan/27

²⁸ Шуваева-Петросян Е. *Армянофобия в Турции*. - <http://taregir.livejournal.com/24320.html>

²⁹ Корни конфликта 1915 года. - <http://www.erevangala500.com/?direct=ge&id=98>

³⁰ Маккарти Дж. и К. *Тюрки и Армяне...*, с. 36. - <http://karabakh-dos.azerall.info/ru/armyanstvo/am23-6.php>

³¹ Акчам Т. *Турецкое национальное “я” и Армянский вопрос*. – Литературная Армения. 1995, N 4 - 6, с. 92.

³² Маккарти Дж. и К. *Тюрки и Армяне...*, 36. - <http://karabakh-dos.azerall.info/ru/armyanstvo/am23-6.php>

³³ Акчам Т. *Турецкое национальное “я”...*, с. 92.

турецкими властями, признается следствием “ побуждений” Англии и России. В результате произошла межэтническая трагедия, повлекшая гибель людей с обеих сторон; 2) деятельность армянской диаспоры, которая подпитывает свою деятельность в США разными лоббистскими мероприятиями в пользу соотечественников. Отмечается: “Представители армянской диаспоры спокойно живут в Париже, Лос-Анджелесе, однако в Армении бедный народ окружен, не имеет выхода к морю, не имеет пути. Дай Бог, чтобы, оставив в стороне эту сказку о “геноциде армян”, освободившись от нее, сможем урегулировать отношения с соседней Арменией и вместе осуществлять какие-то торговые и культурные программы”.³⁴ Отметим, что внук другого вождя младотуркизма Джемал паши - Хасан Джемаль признает геноцид.³⁵

Различия в подходах потомков к геноциду армян Энвера и Джемаля симптоматичны, хотя Осман Маятепеки называет армян великим народом.³⁶ Однако главное то, что первый концентрированно выражает мнение доминирующей турецкой историографии, и с этой точки зрения, его мнение заслуживает внимания.

Формирование современной армянской диаспоры в связано с последствиями геноцидальной политики Османской Турции. Решающий вклад в возникновении армянских общин в Париже и США внесли события “зулума” (протогеноцид) 1894 - 1897 гг. и геноцида армян 1914-1923 гг. в Османской Турции.³⁷ В начале XX в. во Франции проживало 4 тыс. армян, в 1920-х годах - уже 60 тыс., а сегодня - полмиллиона. Если в канун Первой мировой войны в США находилось 61 тыс. армян, то сегодня - более полутора миллиона. Армянские общины США и Франции своими лоббистскими структурами оказывают воздействие на политику местных властей.³⁸

Согласно выявленному в 2005 г. “Докладу Талаата паши о Геноциде армян в 1917 году” (личные записи в тетради с “черной обложкой”), официальным количеством армян в Османской империи указано 1 млн. 200 тыс. армян. Но Талаат, учитывая разные факторы, проставил цифру 1 млн. 500 тыс. Из них было депортировано 924 тысячи 158 человек. Самым значительным признается выселение 141 тысячи армян из города Свас (Себастья).³⁹ Имеются две графы проживания армян за 1914 г. и переписи 1917 г., что позволяло Талаату иметь наглядное представление об итогах депортации, сопоставлять результаты проводимой депортации и геноцида, варьировать темпами

³⁴ Внук Энвера паши назвал Геноцид армян “сказкой”. – <http://www.tert.am/ru/news/2014/01/27/>

³⁵ Внук Джемал - паши произнес слово “геноцид”, а правнучка Моргентау - нет. - <http://www.yerkramas.org/2011/04/09/>

³⁶ Потомок Энвера назвал геноцид “сказкой”, а армян - великом народом.- <http://www.nv.am/regi-op/32930-2014-01-30-08-19-17>

³⁷ Дятлов В., Мелконян Э. *Армянская Диаспора: очерки социокультурной типологии*. Ереван, 2009, с. 39. <http://test.c-i.am/other%20books/Armenian%20>

³⁸ Дятлов В., Мелконян Э. *Армянская Диаспора...*, с. 58, 60, 61.

³⁹ “Тетрадь в черной обложке” одного из идеологов Геноцида армян. - <http://www.regnum.ru/news/445741.html>

истребительной политики. Между тем нижний порог численности армянского населения Османской Турции превышал два миллиона.⁴⁰

Мифотворцами проявлен интерес ко времени принятия и содержания решения о депортации. К. Гюрюн признает, что переселение началось до официального решения, принятого Советом министров 30 мая 1915 г. Выделяется несколько промежуточных решений. Главное командование 26 мая довело общую установку до сведения Министерства внутренних дел, которое получило “устное согласие” на выселение армян восточных вилайетов Анатолии, Зейтуна и “иных мест компактного проживания” на юг Диарбекирского вилайета, в долину реки Ефрата, в район Урфы - Сулеймание.⁴¹

Представляется конкретный механизм размещения депортируемого армянского населения, который позволял бы осуществлять над ним тотальный контроль: “а) армянское население в местах их нового расселения не должно превышать 10 процентов от общей численности местного мусульманского населения; б) поселения переселенцев не должны насчитывать более 50 домов; в) армянские переселенческие семьи не имеют права обменивать свои дома с жителями близлежащих районов”.

Также 26 мая Министерство внутренних поставило в известность правительство о необходимости выселения армянского населения прифронтовых территорий, “часть” которого сотрудничала с врагом, осуществляла восстания, “отвлекала силу от боевых операций”. Сообщалось о репрессиях против восставших армян, в число которых входила депортация: “Осуществляется переселение армянского населения Ванского, Битлисского, Эрзерумского вилайетов (за исключением Аданы, Оса и Мерсина), Искендерунской, Бейланской, Джисри Шугурской и Антакийской каз в южные вилайеты; население северных районов Вана переселяется в санджаки Мосул и Зор, южных районов - в восточную и юго-восточную части вилайета Алеппо и восточные районы Сирии”.⁴²

При этом Гюрюн опускает, что отношение Министерства внутренних дел представляет собой докладную Талаата правительству Турции, спустя два дня после предупреждения стран Антанты об ответственности за гибель армянского населения. Этим шагом Талаат возлагал ответственность за депортацию уже на правительство Турции, хотя сам являлся разработчиком депортации и геноцида.⁴³

27 мая (14 мая) 1915 г. был принят закон об антигосударственной деятельности, позволяющий руководству крупных воинских частей (армий, корпусов, дивизий, отдельных соединений) за “измену, предательство и шпионаж” населения той или иной местности применять силу и переселять жителей в “другие местности”. Завершающим

⁴⁰ Акунни С. *История резни миллиона армян*. Константинополь, 1921, с. 20, 21 (на арм. яз).

⁴¹ Гюрюн К. *Армянское досье...*, с. 133, 134.

⁴² Там же, с. 134.

⁴³ В преддверии 100-летия Геноцида армян самой важной работой является подача судебного иска против Турции с требованием о выплате компенсации. - www.regnum.ru/news/fd-abroad/turkey/1645564.html

актом стал закон правительства от 30 мая о “переселении” армян, который подписали Талаат, Энвер и другие министры.

Из содержания этих решений Гюрюн сделал три вывода: 1) “перемещение началось до принятия решения правительства”. Данный процесс он не связывает с зейтунскими событиями, а лишь с директивой правительства 24 апреля о закрытии армянских общественных организаций, клубов, партий и аресте их руководителей; 2) привлечение к депортации армейских сил, указывающих на охват выселением армянского этноса; 3) закон 30 мая являлся временным и подлежал утверждению парламентом, возобновление деятельности которого было намечено на 15 сентября. Причем решение правительства предполагало мирный характер выселения, содействие через переселенческий фонд, обеспечение сохранности имущества депортируемых, выделение земельных участков, задействование специальных комиссий, применение наказаний за нападение и грабеж в пути и лагерях.⁴⁴

Эти “благие пожелания” и стали основанием для Гюрюна считать, что имела место не депортация, а переселение (техчир). Сообщается о деятельности судов над лицами, совершившими преступления по отношению к переселенцам, что позволяет составить миф видимой справедливости и законности переселенческого процесса: “Как видим, правительство обращало особое внимание вопросу защиты жизни и имущества переселенцев, всячески добиваясь безопасности армян”.⁴⁵ Демонстрируется страусиная тактика, чтобы не видеть расхождения между декларируемым и реальным подходами к армянскому населению.

Теймур Атаев депортацию армян выводит из ванских событий: “С учетом всех этих фактов, после занятия в мае 1915 г. русскими войсками района оз. Ван, турецкое правительство издало декрет о депортации армян прифронтовой полосы”. При этом Атаев стремится взвалить ответственность за депортацию и на Германию. Приводятся строки письма посла Германии в Османской империи Г. Вангенгейма от 30 мая 1915 г. внешнеполитическому ведомству,⁴⁶ где он отмечает: “Для того чтобы пресечь шпионаж армян и предотвратить новые массовые восстания армян, Энвер намеревается закрыть значительное число армянских школ, армянские газеты, запретить армянам почтовую переписку и расселить из недавно охваченных восстанием армянских центров в Месопотамию все те семьи, которые считаются не совсем благонадежными... Конечно, меры турок вновь вызовут серьезные волнения во всем враждебном нам мире и будут использованы против нас... Эти подрывные действия армян, которые пользуются поддержкой России, приняли такие масштабы, что они угрожают существованию Турции”.⁴⁷

Позиция посла Вангенгейма является проявлением лицедейства. Он был в курсе происходящего и роли Армянского вопроса, но Германия нуждалась в турецкой

винтовке на фронтах для сохранения жизни немецкого солдата.⁴⁸ Именно поэтому в ответ о вышеуказанном новогоднем запросе патриарха Завена Егияна он ответит: “Будьте полностью уверены, что ни здесь, ни в провинциях нос ни одного армянина не будет окрашен в кровь”.⁴⁹ Окрасили, да еще как окрасили.

Из строк посла Вангенгейма Теймур Атаев делает обобщение о германском вкладе в депортацию армянского населения: “Т.е. Берлин, как усматривается, был напрямую заинтересован в происходящем”.⁵⁰ Данное мнение обосновано. 2 марта 1915 г. католикос Киликии Саак довел до сведения патриарха Завена посредством нарочного о наличии информации о предстоящей депортации армянского населения Турции. Однако немецкий посол и турецкое правительство предприняли все усилия, опровергая все слухи, чтобы “усыпить” армянскую бдительность. Между тем положение в армянских вилайетах стало катастрофически ухудшаться.⁵¹ В любом случае исполнителями армянского геноцида и решения Армянского вопроса на государственном уровне были младотурки.

Об этом прямо свидетельствует заявление Энвера послу Г. Моргентау, который “делкатно” указал, что правительство не контролирует процесс “массовых убийств”. “Вы ошибаетесь, - сухо изрек он. - В этой стране все под нашим контролем. Я не имею ни малейшего желания перекладывать вину на своих подчиненных, напротив, я считаю себя ответственным за все происходящее. Решение о депортации принял кабинет, и я абсолютно убежден, что мы имели на это право, поскольку армяне настроены крайне враждебно к оттоманскому правительству. Мы являемся истинными правителями Турции, и никто из наших подчиненных не осмелился бы сделать нечто подобное без приказа”.⁵²

Гюрюн делает упор на реализацию идеи депортации из ряда актов репрессивного характера турецких властей: “И что же в этой ситуации предприняло Османское правительство?”⁵³ Развивая этот ход событий, он приводит решения правительства относительно армянского населения: 6 сентября 1914 г. - о контроле “партийных деятелей и главарей армянского движения”; 25 февраля 1915 г. - о готовящихся беспорядках в Турции на примере ряда эксцессов; 24 апреля 1915 г. - распоряжение Министерства внутренних дел о закрытии “центров” армянских комитетов и 26 апреля совместно с главным командованием - о рассмотрении дела арестованных партийных деятелей военным трибуналом; 23 мая (10 мая 1331 г.) - шифрованные телеграммы внутривластного ведомства в Эрзерум N 14), в Ван (N 21) и Битлис (N 14) о размещении предназначенных к выселению местных армян в районы

⁴⁸ История дипломатии..., с. 269.

⁴⁹ Архиеп. Завен. *Патриаршие воспоминания*. - Каир, 1947. с. 84 - (на арм.яз.)

⁵⁰ Атаев Т. *Что стоит...* - <http://www.echoaz.com/archive/2007-05/1559/istoriya01.shtml>

⁵¹ Архиеп. Завен. *Патриаршие воспоминания...*, с. 79.

⁵² Трагедия армянского народа... - <http://www.e-reading.ws/chapter.php/1007/33/27/>

⁵³ Гюрюн К. *Армянское досье...*, с. 133.

⁴⁴ Там же, с. 131, 133 -135.

⁴⁵ Там же, с. 137.

⁴⁶ Армянский геноцид в сообщениях немецких дипломатов..., N 1, с. 18.

⁴⁷ Атаев Т. *Что стоит за датой 24 апреля*. - <http://www.echoaz.com/archive/2007-05/1559/istoriya01.shtml>

Мосульского вилайета, прилегающих к Ванскому вилайету, “за исключением его северной части, санджака Зор и санджака Урфа, исключая его центральную казу”.⁵⁴

Наконец, 26 мая 1915 г. главное командование поставило в известность Министерство внутренних дел о получении “устного согласия” на выселение армян восточных вилайетов Анатолии, Зейтуна и других мест на юг Диарбекирского вилайета - долину р. Евфрат и район Урфы-Сулеймание, а 27 мая (14 мая) последовал закон о наказании за антигосударственную деятельность и проч.⁵⁵

Из всех этих постановлений, решений и законов следует последовательное и системное осуществление депортации центральной властью Турции, которая контролировала ситуацию в стране, варьировала темпом и местами выселения армянского населения. Этот подход Гюрюна позволяет ему игнорировать заранее запрограммированный и системно осуществленный характер Геноцида армян, ядром которого стала депортация и уничтожения выселенного армянского населения.

Профессор Маккарти развивает также идею заговора в освещении депортации странами Антанты для прикрытия захватнической восточной политики: “Западным странам нужно было широко распространять истории об оттоманских и турецких зверствах и заставить поверить в них, чтобы оправдать свои собственные планы аннексии оттоманских земель”. Предлагается стать выше политики и пропаганды, жертвами которой представляются жертвы депортации и мучители: “Страдало все население на востоке Оттоманской империи. Оно подвергалось такому террору, что абсурдно пытаться определить, чьи страдания были больше... было бы намного лучше изучить историю армян и турок как огромную человеческую потерю и отказаться от пропагандистских терминов”.⁵⁶

Уравнительный подход игнорирует значимость потерь армянской стороны в человеческом исчислении, потери большей части исторической родины, в то время как потомки младотуркизма занимаются приращением доставшихся материальных ресурсов. Подход выявления “точной вины” между воюющими и безвинными жертвами ведет к отпущению грехов младотурецкой Турции. Есть горечь от национальной катастрофы, но её воздействие может преодолеть импульс создания высокоразвитого общества и цивилизных отношений соседних стран.

Есть другие псевдонаучные подходы к объяснению содержания депортации армян. Э. В. Осерская стремится номинально её обосновать комплексным политэкономическим и идеологическим подходом: “Имеется множество объяснений депортации армян в годы Первой мировой войны: от пантюркистского экспансионизма до желания подавить восстание армян на востоке империи, включая ряд факторов, касающихся особой роли армянской диаспоры в Османской империи, участие армянской элиты в

управлении Портой и доминирующее положение в экономике, тяготеющей к Европе и Америке. Националистическая идеология, насаждавшаяся режимом младотурок в начале двадцатого столетия, также явилась причиной депортации в годы Первой мировой войны”.

Не говорится о главном-истреблении армян во имя удержания территории Западной Армении, упразднения Армянского вопроса и создания однородной Анатолии. Большинство армянского населения в Османской Турции проживали на территории Западной Армении, являлись автохтонными жителями, а не представителями армянской диаспоры. В то же время наличие взаимодействия разных факторов существует, но Осерская игнорирует этнополитическую составляющую и главным представляется стремление обеспечить безопасность Турции путем сохранения “минимума” армянских подданных.⁵⁷

Достижения ангажированных историков стали основой новой мифологии в современной Турции. 23 апреля 2014 г. премьер-министр Турции Р. Эрдоган выступая в турецком парламенте представил соболезнование по поводу “горьких событий” потомкам погибших или депортированных в 1915 году армян Османской империи. Целью соболезнования сочтено восстановление “исторической справедливости”, когда с обеих сторон в 1915 г, погибло по 1,5 млн. чел, что представлено “общей болью”. При этом Геноцид армян трансформирован в депортацию, т.е. осуществлена локализация “горьких событий” 1915 годом, не учитывая их хронологических событий до 1923 г.⁵⁸

Сформирован политический мегамиф “признания” и “отрицания” Геноцида армян из следующих составных.

Таблица № 1

Армянская сторона	Турецкая сторона
1. Признания депортации составной Геноцида армян для нормализации отношений.	1. Признание депортации армян и гибель мусульман в 1915 г., но не геноцида, без взаимных последствий
2. Отрицание предпосылок в Турции для признания геноцида и нормализации отношений	2. Выдвижение предпосылок для нормализации отношений, поддержка Азербайджана
3. Учет руководством Республики Армения мнения армянской диаспоры.	3. Обвинение армянской диаспоры, мировых СМИ и организаций в стимулирование вопроса Геноцида

⁵⁷ Осерская Э.В. Причины депортации армян младотурецким режимом в годы первой мировой войны. - *Вестник Адыгейского государственного университета*. Серия 1. 2011, N 3, с. 5. - <http://cyberleninka.ru/article/n/>

⁵⁸ Премьер Турции Р. Т. Эрдоган накануне годовщины Геноцида армян лишь повторил старые тезисы. - <http://www.panorama.am/ru/politics/2014/04/23/>; Эрдоган выразил соболезнование потомкам османских армян. - mktucey.ru/politics?2014/04/23/sobytie-1915.html

⁵⁴ Там же, с. 135.

⁵⁵ Там же, с. 133 - 135.

⁵⁶ Атаев Т. *Имел ли место геноцид в Османской империи?* (1915 год и современность). - <http://www.ia-centr.ru/expert/7455/>

4. Отказ от принятия турецких предусловий замирения.	4. Реваншизм диаспоры обуславливает антитурецкие акции за рубежом.
5. Критические настрои к политике Турции как проявление общенациональных интересов и развития нации.	5. Воздействие диаспоры, которая, якобы, разыгрывает “антитурецкую карту” для получения финансовых и политических дивидендов.
6. Единение диаспоры и Республики Армения.	6. Дифференциация отношение армян разных стран к Турции.
7. Корректировка истории со стороны Турции.	7. Наличие “процветающей” армянской общины в Турции.

В этой начинке турецкого мифа отсутствует политическое и правовое признание геноцида армян, необходимость комплексной компенсации потерь армянского народа, прекращение блокады Республики Армения, установление нормальных межгосударственных отношений, введение политкорректного взаимоотношения между турками и армянами. Если армяне стали жертвой спланированного геноцида на уровне государства, то погибшие мусульмане - результат решения правительства Турции участвовать в Первой мировой войне.

Вышеизложенное дает нам возможность констатировать, что мифы турецких властей и турецкой историографии вокруг вопроса депортации армянского народа во время Геноцида армян прошли несколько этапов развития: официальные мифы младотурецкого правительства (1915-1918), направленные на оправдание политики режима в отношении армян; мифы искажения и отрицания истории (конец XX - начало XXI века), развивающие и модернизирующие образы депортации и Геноцида армян; мифы отрицания и признания (2014), признающие факт депортации, но продолжающие отрицание Геноцида, уравнивая потери среди армянского и мусульманского населения.

Депортация армян Османской Турции: мифы турецкой историографии

Валерий Тунян

Резюме

Исторические мифы, касающиеся депортации армянского населения Османской Турции во время Первой мировой войны, вызваны этнократическим подходом турецких властей, желанием обелить историю для будущих поколений, а также избежать ответственности. В турецком обществе история Геноцида армян построена на основе младотурецких мифов, а также сочинений предвзятых историков, которые способствуют нагнетанию нетерпимости в отношении армян, сокрытию действительности, навязыванию ложных образов и стереотипов. Результатом является образование комплекса мемов, направленного на противодействие процессу признания Геноцида армян.

Мифы вокруг вопроса депортации армянского народа во время Геноцида армян прошли несколько этапов развития: официальные мифы младотурецкого правительства (1915-1918), направленные на оправдание политики режима в отношении армян; мифы искажения и отрицания истории (конец XX - начало XXI века), развивающие и модернизирующие образы депортации и Геноцида армян; мифы отрицания и признания (2014), признающие факт депортации, но продолжающие отрицание Геноцида, уравнивая потери среди армянского и мусульманского населения.

Ключевые слова: отрицание Геноцида армян, депортация армян, младотуркизм, мифотворчество, Турция, Армения.

Օսմանյան Թուրքիայի հայերի բռնագաղթը. թուրքական պատմագրության առասպելաբանությունը

Վալերի Թոնյան

Անփոփում

Օսմանյան Թուրքիայի, ինչպես նաև արդի Թուրքիայի, հայերի արտաքսման մասին միջերի (առասպելների) նպատակն է քողարկել Հայոց ցեղասպանության պատմական եղելությունը: Հանդիսանալով պետական գաղափարախոսության և քաղաքականության բաղկացուցիչ մասը՝ նրանք ձգտում են ապահովել թուրքական հասարակության անմեղության վարկածը, խուսափել պատասխանատվությունից և փոխհատուցումից: Թուրքիայի քաղաքական ընտրախավը, հակազդելով Հայոց ցեղասպանության մեղադրանքին, 2014 թ. ապրիլի 23-ին ճանաչեց միայն 1915 թ.-ին հայերի «արտաքսելու» փաստը:

Հայերի արտաքսման մասին առասպելաբանությունը Հայոց ցեղասպանության ժամանակ անցել է որոշակի փուլեր՝ երիտթուրքերի պաշտոնական առասպելաբանությունը, որն արդարացնում է իրականացվող քաղաքականությունը, ժխտման և կեղծման առասպելները (XX դ. վերջ - XXI դ. սկիզբ), Ճանաչման և ժխտման միջերը (2014): Վերջին առասպելաբանությունը, ընդունելով հայերի արտաքսումը, հավասարեցնում է հայերի և մահմեդականների զոհերի քանակը՝ ժխտելով Հայոց ցեղասպանությունը:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանության ժխտողականություն, հայերի տեղահանություն, երիտթուրքեր, առասպելաբանություն, Թուրքիա, Հայաստան:

Deportation of the Armenians of the Ottoman Turkey: Myths of the Turkish Historiography

Valeri Tunyan

Summary

Historical myths on the deportation of the Armenian population of the Ottoman Turkey during World War I are caused by ethnocentric approach of the Turkish authorities, the wish to whitewash the history for the future generations and avoid responsibility. The contribution is made by the biased historians promoting the ethnic conflict, concealing the reality, imposing false images and stereotypes. In the Turkish society the history is constructed on the Young Turk's myths about the Armenian Genocide as well as the biased historians. The result is the complex meme formation to counteract the Armenian Genocide recognition.

Mythology about deportations of the Armenians during the Armenian Genocide passed a number of stages: the official myths of the Young Turks (1915-1918) that justify the policy regime; the myths of denial and distortion (late XX century-early XXI century), developing and modernizing the images of the deportation and the Armenian Genocide; the myths of denial and recognition (2014), acknowledging the deportation, equalizing the number of victims of the Armenian and Muslim populations, denying the Armenian Genocide.

Keywords: Armenian genocide denial, deportation of the Armenians, Young Turks, meme formation, Turkey, Armenia.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԻՍԼԱՄԻ ԳՈՐԾՈՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒԻՋ

Նարինե Մարգարյան

Ցեղասպանությունը մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն է, որը դատապարտվում է ոչ միայն միջազգային իրավունքի (1948 թ. ՄԱԿ-ի Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիա, 1968 թ. «Ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» որոշում), այլև դավանանքի տեսանկյունից:

Նշենք, որ ցեղասպանական գործողությունների ժամանակ կրոնական տարբերությունը երբեմն դառնում է բնորոշիչ, որը տարբերակում է գոհին և դահիին: Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր, սոցիոլոգ, Հայոց ցեղասպանության հարցերով զբաղվող Լ. Կուպերը ցեղասպանության ընդհանուր բնութագրիչներից մեկը համարում է գոհերի և հանցագործությունը կատարողների ռասայական, էթնիկ կամ ազգային խմբերի միջև կրոնական տարբերության առկայությունը¹:

Կրոնական տարբերությունը հաճախ դրվում է տարբերակման այլ տարբերի՝ ռասայական, էթնիկական, մշակութային ժառանգության, տնտեսական և քաղաքական կյանքում մասնակցության, մարդու իրավունքների պաշտպանության հարցում անհավասարության, և սեգրեգացիայի կամ տարածքային կենտրոնացման վրա: Կրոնական պատկանելությունը դառնում է տարբերակիչ սոցիալական կարգավիճակի մաս և հաճախ նպաստում է հասարակության բազմաշերտ կառուցվածքում այլ խմբերից օտարմանը²:

Հարկ է փաստել, որ պատմության ընթացքում արձանագրվել են իրադարձություններ, երբ կրոնական զգացումներն օգտագործվել են զանգվածային սպանությունների արդարացման, իսկ որոշ դեպքերում կրոնն օգտագործվել է նաև հրահրման նպատակով: Կրոնական գործնի շահարկմամբ կատարված նմանատիպ օրինակներ են XI-XIII դարերում իրականացված հաչակրաց արշավանքները: Արդեն ուշ միջնադարում եվրոպական տերությունների գաղութային նվաճումները երբեմն հիմնավորվում էին որոշ ժողովուրդների շրջանում քրիստոնեության տարածման անհրաժեշտությամբ: Հրեաների հանդեպ քրիստոնյաների շրջանում առկա բացասական պատկերացումներն օգտագործվեցին նացիստների կողմից Հոլոքոսթի իրականացման ընթացքում:

Կրոնական գործնի շահարկման ուղղակի օրինակը XX դարի սկզբին Օսմանյան կայսրությունում հայերի դեմ իրագործված ցեղասպանությունն է: Դեռևս XVII դարի երկրորդ կեսից Օսմանյան կայսրության տիրապետության տակ հայտնված Արևմտյան Հայաստանում հայ ազգաբնակչության հանդեպ կիրառվող խտրականության

¹ St' u Leo Kuper, *Theological Warrants for Genocide: Judaism, Islam and Christianity*, Confronting Genocide Judaism, Christianity, Islam, Edited Steven Leonard Jacobs, Lanham, Boulder, New York Lexington Books, 2009, էջ 4:

² Նույն տեղում:

հիմքում ի սկզբանե առկա էր կրոնական գործոնը: 1908 թ. հեղաշրջման արդյունքում իշխանության եկած «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը սկզբում փորձում էր առաջնորդվել հավասարության, եղբայրության և ազատության կարգախոսներով՝ հույսեր առաջ բերելով կայսրության ճնշված ժողովուրդների, այդ թվում նաև հայերի շրջանում: Մակայն շուտով ակնհայտ է դառնում, որ երիտթուրքական քաղաքական կոչերը և իրական գործողությունները քիչ ընդհանրություններ ունեին, և հայերի նկատմամբ համիդյան ջարդերից մինչև երիտթուրքական ցեղասպանություն թուրքերի համար ընդամենը մեկ քայլ էր:

Շարիաթի կանոնները համաձայն՝ իրավական տեսակետից ի սկզբանե որոշակիացվել է մուսուլմանների և ոչ մուսուլմանների կարգավիճակը: Դեռևս VII դարում արաբական արշավանքների ժամանակ, նրանք, ովքեր իսլամ չէին ընդունում, պայմանագիր էին կնքում՝ Ակո ալ-Ջիմնա, որով արաբ կառավարիչը պարտավորվում էր պահպանել քրիստոնյայի անհատական, քաղաքական և սոցիալական ազատությունը, որի դիմաց վերջինս պետք է հարկ վճարեր: Այսինքն՝ ինքը՝ Ղուրանը, չէր կարող իր համակարգում հավասարություն թույլ տալ մուսուլմանների և ոչ մուսուլմանների միջև: Փաստորեն ստեղծվում էր երկշերտ հասարակություն՝ մի կողմից մուսուլմանները, որոնք պատկանում էին ումմային, իշխող ազգ էին, և ոչ մուսուլմանները, որոնք մի աստիճան ցածր էին կանգնած: Հետևաբար, երբ 1908 թ. երիտթուրքական ուժերն իշխանության եկան հավասարության կարգախոսն առաջ քաշելով, որն ի սկզբանե չէր համապատասխանում իսլամի սկզբունքներին: Եվ այդ նույն արդարության, հավասարության սկզբունքներով իշխանության եկած երիտթուրքերը կրկին հաստատում են իրենց՝ թուրքերի իշխող ազգ լինելու փաստը, անգամ նրանց պաշտոնական երդումը տպագրվել է «Իթթիհադ վե թերաքիի» կիսապաշտոնական «Թանին» թերթում: Վերջինիս գլխավոր խմբագիրը՝ Հուսեյն Քահիդը, խմբագրական հոդվածում հայտարարել է, որ անկախ դեպքերի ընթացքից և ելքից թուրքերը «եղել և մնում են իշխող ազգ»³:

Տեսակետները հակաբևեռ են. երիտթուրքերի ու ցեղասպանական գործողությունների հակասություններն իսլամական դրույթներով հիմնավորելը բարդ է՝ հաշվի առնելով Ղուրանի, սունայի, հադիսների⁴ տարաբնույթ մեկնաբանությունները: Իսլամում առկա են որոշ համայնքներին հատուկ կարգավիճակ տալու, նրանց նկատմամբ բարյացակամ լինելու, նրանց կյանքի անվտանգությունը երաշխավորելու դրույթներ:

Հարկ է մեջբերել Ղուրանի մի քանի սուրաներից հատվածներ, ինչպիսիք են օրինակ. «Եկե՛ք, ես կկարդամ այն, ինչ արգելել է ձեր Աստվածը ... Մի՛ սպանեք որևէ մեկին, ում Ալլահն արգելում է, միայն մի բացառությամբ՝ իրավունքով» (Ղուրան,

³ Dadrian V., *The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, NY, Oxford, Berghahn Books, 1995, p. 5.

⁴ Հադիս՝ արաբերենից թարգմանաբար նշանակում է պատմություն, որը սուննայի մի մասն է կազմում: Բաղկացած է հիմնական տեքստից, որն ընդգրկում է Մուհամմադ մարգարեի գործունեությունը, նրա պատմությունները, և հենքից, որն այդ պատմությունը փոխանցողների անունների չընդհատվող շղթա է, որոնց միջոցով տեքստը փոխանցվել է մինչև գրի առնվելը: Հիմնականում հադիսները գրի են առնվել VII դ. վերջերին ու VIII դ. սկզբներին:

6:152)⁵:

«Նրանք՝ իսկական մուսուլմանները, չեն սպանում հակառակ Ալլահի կամքին հակառակ, բացառությամբ, եթե դրա իրավունքը չունեն և ինքնագործունեություն չեն ծավալում, իսկ նրանք, ովքեր այդպես են վարվում, իրենց պատիժը կստանան Ահեդ դատաստանի օրը» (Ղուրան, 25:68):

Ըստ իսլամի սկզբունքների՝ հանցագործությունը հանցագործություն է՝ անկախ այն բանից, թե ինչքան մարդ է տուժում: «Նա, ով սպանում է մեկին ու դա սպանության դիմաց կամ էլ երկրում չարիքը կանխելու համար չէ, ապա նշանակում է, որ նա սպանում է ողջ մարդկությանը, իսկ նա, ով խնայում է մեկի կյանքը, ապա նա խնայում է ողջ մարդկության կյանքը» (Ղուրան, 5: 32):

Նմանատիպ մտքեր հանդիպում ենք նաև Բուխարիի⁶ հադիսներում.

«Երբ Մուհամմադ մարգարեի քարանձավներից մեկում սպանված կին է հայտնաբերվում, նա արգելում է սպանել երեխաներին ու կանանց»:

Մուհամմադ մարգարեն ասում է. «Ես ձեզ հրամայել եմ չայրել մարդկանց, քանի որ կրակով կարող է պատժել միայն Աստված»⁷:

Աբու Բաքր Աս-Սադդիկը⁸ իր գորահրամանատարներից մեկին արշավանքների վերաբերյալ գրավոր տեղեկացրել է. «Եթե թշնամուն ընդառաջ եք գնում, մի՛ սպանեք նրանց, եթե հաղթում եք, մի՛ սպանեք ծերերին, կանանց ու երեխաներին, եթե վանականներ տեսնեք իրենց մենաստաններում, թողե՛ք նրանց՝ ապրելու այն կյանքով, որ իրենք են ընտրել, քանի որ նրանք Աստծուն են ծառայում»⁹:

Ի հակակշիռ նմանատիպ սուրաների, ըստ որի՝ Ղուրանը կոչ է անում հանդուրժողականության, գոյություն ունի մի այլ տեսակետ, որը նույնպես ունի իր հիմնավորումները: Ղուրանում կարելի է հանդիպել մի շարք այլ սուրաների, որտեղ կոչ է արվում սպանել անհավատներին, ջիհադ սկսել «ճշմարիտ կրոնը» չդավանողների դեմ և սպանել նրանց¹⁰:

Մեջբերենք Ղուրանից մեկ այլ, որտեղ կոչ է արվում կռվել թշնամիների դեմ. «Սպանի՛ր հանուն Ալլահի նրանց, ովքեր քեզ սպանում են, բայց նախահարձակ մի՛ եղիր, քանի որ Ալլահը չի սիրում նախահարձակ եղողներին» (Ղուրան, 2:190): Իսկ դրա հաջորդ այլայլում նշվում է. «Սպանի՛ր նրանց, որտեղ կհանդիպես, հանի՛ր

⁵ Ամբողջությամբ՝ «Եկե՛ք, ես կկարդամ ձեզ համար այն, ինչ արգելել է Ձեր Աստվածը. հեռու մնացե՛ք ստոր արարքներից՝ լինեն դրանք ակնհայտ կամ թաքնված: Մի՛ սպանեք մեկին, ում Ալլահն արգելել է սպանել, միայն մի բացառությամբ, եթե դուք դրա իրավունքն Ալլահի կողմից չունեք, այսինքն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա պահանջում է արդարությունը»:

⁶ Հավաստի և համակարգված հադիսների 6 ժողովածուներից մեկի հեղինակն է Իսմայիլ Ալ-Բուխարին, ում «Ալ-Ջամիի աս-Սահիի» հադիսների ժողովածուն պարունակում է մոտ 7275 հավաստի հադիսներ:

⁷ Ֆայեզ Ալ-Ղուսեյն, *Ջարդերը Հայաստանում*, Հալեպ, Արևելք-Հալեպ, 1991, էջ 60 (արաբերեն):

⁸ Աբու Բաքր Աս-Սադդիկը Մուհամմադից հետո եղել է առաջին խալիֆը: Համարվել է արաբական խալիֆայության հոգևոր և աշխարհիկ ղեկավարը: Նա ռազմական առաջին հրամաններն է տվել, որոնք պատվիրանին (պատգամին) համարժեք նշանակություն են ունեցել:

⁹ Ֆայեզ Ալ-Ղուսեյն, *նշվ. աշխ.*, էջ 60-61:

¹⁰ Dadrian V., *նշվ. աշխ.*, էջ 4:

նրանց այնտեղից, որտեղից նրանք են քեզ դուրս արել, քանի որ աղետն ավելի վատ է, քան մահը» (Ղուրան, 2:191): «Անհավատներին Ալլահի մոտ չեն փրկի ո՛չ իրենց բարությունները, ո՛չ իրենց երեխաները և նրանք կայրվեն կրակում» (Ղուրան, 3:10):

Օրինակները բազմաթիվ են, և կարելի է անել մի եզրակացություն, որ քրիստոնյաները կամ մուսուլմանները, Ղուրանի նույն սուրան կամ այսպիսի կարդալով, կարող են տարբեր մեկնաբանություններ անել: Ղուրանի լեզվական ու ոճական ճկունությունը թույլ է տալիս նույն նախադասությունը կամ արտահայտությունը բազմաթիվ տեսանկյուններից քննարկել և հակաբևեռ մեկնաբանություններ անել. դա են վկայում մինչև այժմ գոյություն ունեցող Ղուրանի մեկնաբանությունների բազմահազար հատորյակները:

Այս պարագայում մենք տեսնում ենք իսլամի երկփեղկվածությունը. մի երևույթ, որը միշտ եղել է իսլամական հասարակության՝ ումմայի մեջ: Խոսքն իսլամի՝ որպես կրոնի և իսլամի՝ որպես քաղաքական ֆենոմենի կամ այսպես ասած քաղաքական իսլամի մասին է: Առաջին հերթին իսլամը որպես կրոն համադրվում է Սուրբ գրքով, իրեն հատուկ արարողակարգերով, իսկ մյուս դեպքում էլ մի շարք քաղաքական և կրոնական նպատակներով իսլամի օգտագործման մասին է: Այսինքն՝ հարկ եղած դեպքում իսլամը վերափոխվում է՝ դառնալով գործոն, դուրս է գալիս հավատքի իր սահմաններից՝ անցում կատարելով քաղաքական ոլորտ, և հաճախ նաև ծառայում որպես գործիք, շահարկվում՝ որոշ քաղաքական նկատառումներից ելնելով:

Իր քաղաքական նպատակների իրականացման համար երիտթուրքական կառավարությունը չէր խուսափում կրոնական գործոնի շահարկումից: Առաջին համաշխարհային պատերազմի մեջ մտնելուց մի քանի օր անց՝ 1914 թ. նոյեմբերին, շեյխ ուլ-իսլամ Հայրի էֆենդին Ֆաթիհ Սուլթան Մեհմեդ մզկիթից սրբազան պատերազմ՝ ջիհադ¹¹ հայտարարեց, որը Օսմանյան կայսրության սուլթան Մեհմեդ V-ի ստորագրությամբ տպագրվեց Կոստանդնուպոլսի օրաթերթերում: Ջիհադի այս կոչն ամբողջությամբ ներծծված էր կրոնական մոլեռանդությամբ, որտեղ կոչ էր արվում. «Ամեն մահմեդական, աշխարհի որ մասի մեջն ալ բնակվի, թող հանդիսավոր երդում ընէ, որ զինք շրջապատող քրիստոնյաներէն պիտի սպանէ առնվազն երեք կամ չորս հատ, քանզի անոնք Ալլահի թշնամիներն են: Թող ձեզմէ ամեն մէկը գիտնա, որ իր վարձքը պիտի կրկնապատկուի Աստուծոյ կողմէն»: Նույն տարվա նոյեմբերի 23-ին հրապարակվել է նոր մանիֆեստ, որը պահանջում էր աշխարհի մուսուլմաններին ենթարկվել Ղուրանի պահանջներին ու պաշտպանել իսլամը և նրա սրբավայրերը¹²: Կրոնական մոլեռանդությունն օգտագործվեց նաև Հայոց ցեղասպանության իրականացման ընթացքում, երբ երիտթուրքական կառավարությունը շահարկում էր կրոնի գործոնը, ընդ որում այն

¹¹ Ջիհադ՝ արաբերենից թարգմանաբար նշանակում է ջանք գործադրել: Սկզբնական շրջանում ջիհադ հասկացությունն ունեցել է միայն հանուն իսլամի պայքարելու և վերջինս տարածելու իմաստ: Իսլամում գոյություն ունի փոքր ջիհադ, որ ենթադրում է ջանք գործադրել անհավատներին ճշմարիտ հավատքին՝ իսլամին բերելուն: Փոքր Ջիհադը ճանապարհ է հարթում մեծ ջիհադին հասնելու ճանապարհին: Վերջինս բարոյական ջանքն է և ենթադրում է յուրաքանչյուր մուսուլմանի ներքին հոգևոր պայքարը՝ ինքնամաքրվելու և Ալլահին ավելի մոտ լինելու համար:

¹² Hovhannisyán N., *The Armenian Genocide*, Yerevan, Zangak-97, 2009, p. 446.

արվում էր պետական մակարդակով: Կայսրության ռազմական նախարար Էնվերի՝ դեռևս 1914 թ. հոկտեմբերի 9-ի հեռագրի բնագրում նշվում է. «Մաքրել երկիրը անբաղձալիներէն, անհավատների արիւնը անարժէք է, ասկէ աւելի բարի գործ չկայ»¹³: Նոյեմբերի 16-ին ջիհադի կոչին անմիջապես հետևել է Էնվերի «իրադէ»-ն (հրամանագիր), որտեղ օսմանյան բանակի ուշադրությունը հրավիրեց սրբազան պատերազմի վրա ու կոչ արեց արդարացնել 300 միլիոն մուսուլմանների հույսն ու հավատը, ովքեր ջերմեռանդորեն աղոթում են հաղթանակի համար: «Մենք պետք է հիշենք, որ մեր մարգարեների և բոլոր սուրբ մարդկանց հոգիները մեզ հետ են, և մեր փառավոր նախնիները մեր գործողությունների վկաներն են»¹⁴:

Հարկ է նշել, որ իսլամական սկզբունքների համաձայն՝ Դար ուլ-Իսլամի¹⁵ տարածքների նկատմամբ ցանկացած ոտնձգություն կամ հարձակում թույլ է տալիս մուսուլմաններին ջիհադ հայտարարել հարձակվողների դեմ¹⁶:

Փաստորեն, ջիհադի հիմնական նպատակը Ռուսական կայսրությունում բնակվող մուսուլմանների շրջանում հակառուսական հուզումների հրահրումն էր, որը պետք է հեշտացնէր թուրքական բանակի առաջխաղացումը կովկասյան ռազմաճակատում, սակայն հոչակված ջիհադը հնտորեն օգտագործվում է նաև Հայոց ցեղասպանության իրականացման ընթացքում: Ջիհադի հիմքի վրա բարձրացրած կրոնական մոլեռանդության ալիքը ներառեց հոծ զանգվածներ՝ ապահովելով Հայոց ցեղասպանության գործում նրանց անմիջական մասնակցությունը:

Ջիհադի հայտարարումն անմիջական կապ ուներ արաբների հետ՝ որպես սուննի մուսուլմաններ¹⁷: Սիրիացի քաղաքական ու մշակութային գործիչ Մուհամմադ Քուրդ Ալին այն կարծիքն է հայտնում, որ երիտթուրքական կառավարությունը ցանկանում էր արաբների մոտ շահարկել իսլամի գործոնը՝ դրդելով նրանց հայերի դեմ, որի արդյունքում պետք է արաբներն իրենց կիսատ թողած գործն ավարտեին¹⁸:

Մուհամմադ Քուրդ Ալիի այս դրույթը հանդիպում ենք նաև 1913-1916 թթ. Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուի հուշերում, ով ևս մեկ անգամ փաստում է, որ երիտթուրքական կառավարությունը 2 միլիոն հայությանը որոշում է տեղափոխել անապատ՝ գիտակցելով, որ «հայ տարագիրների մեծ մասը սահմանված վայրը չէր կարող հասնել. ծարավից, քաղցից կմահանային կամ զոհ կդառնային անապատների վայրենի մուսուլման ցեղերին»¹⁹:

¹³ Ղազարեան Հ., *Յեղասպան թուրքը*, Պեյրուֆ, Համագգային, 1968, էջ 27:

¹⁴ Lüdke T. *Jihad made in Germany, Ottoman and German Propaganda and Intelligence Operations in the First World War*, Münster, 2005, p. 53.

¹⁵ Դար ուլ-Իսլամ բառացի նշանակում է իսլամի տուն: Կրոնական տեսանկյունից վերջինս համարվում է «իսլամական մշակութային տարածք», որտեղ մուսուլմանները մեծամասնություն են կազմում, ազատ դավանում են իրենց կրոնը և գերիշխող են:

¹⁶ Lüdke T. *նշվ. աշխ.*, էջ 33:

¹⁷ Շեյխ ուլ-Իսլամի սրբազան պատերազմի ֆեթվաները վերաբերում էին սուննի մուսուլմաններին, քանի որ շիաների վրա չէր տարածվում սուլթան-խալիֆի կրոնական հեղինակությունը:

¹⁸ Մուհամմադ Քուրդ Ալի, *Շամի փեղագրությունը*, Դամասկոս, 1983, Ան-Նուրի, հ. 3, էջ 163:

¹⁹ Morgenthau Henry, *Ambassador Morgenthau's Story*, 1918, p. 309.

Դեռ ավելին, Մորգենթաուն նշում է, որ երիտթուրքերը հայերին տարագրում էին սիրիական անապատ՝ «նվազագույն չափով անգամ մտադրություն չունենալով հայերին այդ երկրում հաստատելու»²⁰:

Երիտթուրքերի ղեկավարությունը հստակ գիտակցում էր, որ ջիհադը կարող է հաջողության հասնել, եթե դրան միանան նաև արաբները՝ հետագայում իրենց գործերին աջակցելու և դրանք շարունակելու համար: Դրա համար նրանք դիմում են Մեքքայի շերիֆ ու էմիր Հուսեյն իբն Ալիին²¹, սակայն վերջինս չի արձագանքում, քանի որ նախապատրաստվում էր ապստամբելու Օսմանյան կայսրության դեմ:

Հարկ է նշել, որ Հուսեյնը մի քանի անգամ մերժել էր թուրքական կառավարության՝ ջիհադ հայտարարելու պահանջները: Դրանից հետո թուրքական կառավարությունը կրոնական հաստատությունների և մամուլի միջոցով հայտարարել է, թե իբր Հուսեյնն օրհնել է ջիհադը²²: Հուսեյնի՝ շերիֆի պատվավոր տիտղոսը, նրան ուղղված ջիհադ հայտարարելու պահանջը վկայում են նրա հոգևոր և քաղաքական մեծ հեղինակության մասին:

Նշված ժամանակահատվածում բարդ էր Սիրիայի և ընդհանրապես Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող արաբների իրավիճակը: Սկսված Առաջին համաշխարհային պատերազմը, ջիհադի հայտարարումը, Սիրիայում Ջեմալ փաշայի վարած քաղաքականությունն աստիճանաբար ժողովրդի մեջ ամրապնդում էին ապստամբության գաղափարը: Դեպքերի ակնատես և մասնակից արաբ փաստաբան, Խարբերդի գավառներից մեկի նախկին կայմական Ֆայեզ Ալ-Ղուսեյնն իր «Բռնություններ Սիրիայում, Իրաքում և Հիջազում» գրքի «Սիրիացիների կախաղանները և նրանց ոչնչացումը» գլխում գրում է. «Թուրքական կառավարության որոշումը՝ ժխտել ցանկացած ազգային զգացմունք ոչ թուրք ժողովուրդների մեջ տարբեր ձևերով է իր դրսևորումները ստանում: Հայերին՝ ֆիզիկական ոչնչացմամբ, արաբների պարագայում նրանք ոճի բազմազանությունն են հիմք ընդունել»²³: Թուրքական կառավարությունն արաբ զինվորներին հնարավորինս հեռու տեղեր էր զորակոչում, ժողովրդին սովի էր մատնում, հայտնի ու անվանի ընտանիքներին Անատոլիայի խորքերն ուղարկում: Սովի մատնելով Սիրիայի և Լիբանանի բնակչությանը՝ Ջեմալ փաշան հեզնանքով հայտարարել է մամուլում. «Չկա սով Սիրիայում»²⁴: Ջեմալն առավել դաժան է վարվում արաբ ազգային-ազա-

²⁰ Նույն տեղում:

²¹ Նա կրում էր շերիֆ (ազնվական տոհմից սերված) տիտղոսը, քանի որ Հաշիմյան ցեղից էր ու Մուհամմադ մարգարեի անմիջական հետևորդներից: Երիտթուրքական կառավարությունը, մեծապես տպավորվելով Հուսեյնի ազնվական ծագումից և նպատակ ունենալով նրան օգտագործել իր ծրագրերի իրականացման համար, 1908 թ. նշանակում է Հիջազի՝ մուսուլմանների համար կարևոր այդ նահանգի կառավարիչ՝ էմիր:

²² Տե՛ս Լազարև Մ. Շ., *Крушение турецкого господства на Арабском востоке 1914-1918*, Москва, Вост. Лит., 1960, с. 96-97.

²³ Ֆայեզ Ալ-Ղուսեյն, *Բռնություններ Սիրիայում, Իրաքում և Հիջազում*, Ակաբա, 1918, էջ 41 (արաբերեն):

²⁴ Նույն տեղում, էջ 81:

տագրական գործիչների հետ՝ վերջիններիս 1916 թ. մայիսին Դամասկոսի, Բեյրութի կենտրոնական հրապարակներում կախաղան բարձրացնելով²⁵:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հուսեյնը, ակնկալելով Մեծ Բրիտանիայի ռազմական օգնությունը, նամակագրական կապ է հաստատում Կահիրեում բրիտանական գլխավոր հանձնակատար և Եգիպտոսի փաստացի կառավարիչ Կիթչիների, իսկ 1915 թ. նրան փոխարինած Մակ-Մահոնի հետ: Տեղյակ չլինելով Սայքս-Պիկոյի պայմանագրի մասին, որը բացահայտ հակասում էր արաբներին տրված Բրիտանիայի խոստումներին, անգամ վերջիններիս կողմից չստանալով որևէ փաստաթուղթ՝ Հուսեյնը 1916 թ. հունիսի 5-ին զինված ապստամբության կոչ է անում՝ հայտարարելով. «Ապստամբության նպատակը ոչ թե մի տիրապետության փոխարինումն է մյուսով, այլ արաբական երկրների ազատագրումը, արաբ կառավարության ստեղծումը, որը կվերականգնի մեր նախնիների փառքը»²⁶:

1916 թ. հունիսի 26-ին Հուսեյնը հատուկ ուղերձով²⁷ արաբական տարածքներն Օսմանյան կայսրությունից անկախ է հռչակում: Այս ուղերձների կարևորությունն այն է, որ նա բացի իրավիճակը ներկայացնելուց ու վերլուծելուց, անդրադառնում է թուրքական քաղաքականությանը՝ առանձին դրույթներով Ղուրանից ու հադիսներից մեջբերումներ կատարելով, դատապարտում թուրքական իշխանություններին ու նրանց վարած քաղաքականությունը՝ հավաստիացնելով, որ իսլամի սկզբունքները հակասում են երիտթուրքական գործողություններին:

Հուսեյն իբն Ալի նշում էր, որ անկախ այն բանից, թե ջիհադն ուղղված է Ռուսաստանի, Անգլիայի կամ Ֆրանսիայի դեմ, և ինչ քաղաքական ենթատեքստ ունենին երիտթուրքերի գործողությունները, միևնույնն է, նրանց կատարած ոճրագործությունները դատապարտվում են իսլամի գաղափարական և հավատքի տեսանկյունից, քանի որ նման գործողությունները հակասում են Ղուրանի սուրաներին, Շարիաթին, բազմաթիվ հադիսներին ու պատմական վկայություններին:

Մուսուլմաններին ուղղված իր այս ուղերձում նա հիմնավորում է իսլամի և երիտթուրքերի գործողությունների հակասությունների տեսակետը՝ բազմիցս հիշատակելով.

«...նրանք պետք է իրենց պետությունը կառուցեին Շարիաթի հիման վրա, այնինչ շեղվեցին օրինական ուղուց:

...Նրանք հազարավոր մարդկանց կյանք են խլում Ռուսաստանի սահմաններում: Ղուրանում ասվում է, որ յուրաքանչյուրն իր արած բարիքի չափով կզնահատվի Ահեդ դատաստանի օրը: Այդ օրը նրանք պատասխան կտան մուսուլմանների ու զինմիների²⁸ սպանությունների համար՝ առանց կողմնակի դատի ու դատավորների:

²⁵ Նույն տեղում, էջ 50-51:

²⁶ Саид А., *Восстание арабов в XX веке*, Москва, Прогресс, 1964, с. 61.

²⁷ *Արաբական աղբյուրները հայերի ջեղասպանության վերաբերյալ*, Բեյրութ, Հայ դատի կենտրոնական հանձնախումբ, 1988, էջ 11-26 (արաբերեն):

²⁸ Աիլ ալ-Ջինմա՝ թարգմանաբար նշանակում է հովանավորյալներ: Դրանք այն այլադավաններն էին, ովքեր ընդունել էին մուսուլմանների իշխանությունը և ջիզյե (գլխահարկ) վճարել՝ թշնամիներից պաշտպանվելու, անձի և գույքի անձեռնմխելիության հարցերում մուսուլմանների հովանավորությունը ստանալու

...Թուրքական իշխանությունն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ իրականացրեց հայերի ոչնչացումը՝ կենդանի թողնելով նրանց մեկ տասներորդ մասը: Աստծո Մարգարեն ասում է. «Ով ցավ պատճառի մուսուլմանների հովանավորության տակ գտնվող զինմիների, ես նրա թշնամին կդառնամ»:

...Որ մուսուլմանը կամ մահկանացուն կգոհանա, եթե տեսնի իր ժողովրդին նման դժբախտության ու նվաստացման մեջ: Ալլահը թույլ է տվել. «Նրանք, ովքեր սպանում են անարդարներին, Տերը նրանց աստար է կանգնում»: Ալլահը պահանջում է ոչ մուսուլմանների նկատմամբ արդար գործել. «Մի՛ սպանեք նրանց իրենց կրոնի համար, մի՛ վտարեք իրենց տներից և արդար եղե՛ք նրանց նկատմամբ»:

...Վտանգը գնալով ավելի սպառնալի է դառնում: Մենք հայտնվել ենք մի վտանգի մեջ, որն իսլամում իր նախադեպը չի ունեցել:

...Եկել է երիտթուրքերի պետության վերջը ... Իսլամում չկան նմանօրինակ արարքներ, ինչպիսիք իրականացրին Թալեաթը, Էնվերը և Ջեմալը: Մենք տեսել կամ լսել ենք նրանց ոճրագործությունները, մեկնաբանությունների կարիք չկա: Նրանց պետության մեջ ոտնահարվել են կրոնի սրբությունները...»²⁹:

Հուսեյն իր՝ 1917 թ. մարտի 3-ի հրապարակած ուղերձում կրկին անդրադառնում է վերոնշյալ հակասություններին.

«Մենք ցանկանում ենք տեղեկացնել Ձեզ երիտասարդ Իթթիհադականների մեղսագործությունների մասին. իրագործվել են սպանություններ՝ նույնիսկ մուսուլմանների նկատմամբ: Դա արդեն բացառում է նրանց օրինական, մաքուր մուսուլման լինելը:

...Իսլամական աշխարհը պետք է գիտակցի, որ երիտթուրքերի մեղսագործությունները դատապարտվում են մեր կրոնով: Եվ եթե որևէ մուսուլման երկմտի մեր այս հայտարարության ճշմարտացիությանը, թող վկաներ փնտրի, որոնք կապացուցեն մեր ասածների իսկությունը: Իսկ դրանք հաստատողը հարյուր հազարավոր տարագիրներն են ու տեղացիները»³⁰:

Հուսեյն իր ուղերձներում հստակ շեշտում է այն հանգամանքը, որ երիտթուրքական կառավարությունը ոտնահարում է իսլամի սկզբունքները: Եվ դա Հուսեյնն անում էր մի քանի նկատառումներից ելնելով. շեշտը դրվում էր իսլամի գործոնի վրա՝ նշելով, որ թուրքերը լրիվ շեղվել են իսլամի ուղուց, և նրանց արածները դուրս

են իսլամի սկզբունքներից: Հուսեյնն արաբներին հայտարարում է իսլամի իրավական հաջորդներ՝ որպես ապացույց մեջբերելով Ղուրանը, որտեղ Ալլահը «Անպրոպ» սուրայի մեջ ասել է. «Մենք իմաստությունն արաբերենով ենք ներշնչում»: Հուսեյնը հատուկ նպատակ ունեւր՝ համախմբել արաբներին, նրանց մեջ բարձրացնել ազգային ինքնագիտակցությունը, ապստամբել Օսմանյան կայսրության դեմ ու անկախություն ձեռք բերել: Այս գործում նրա գլխավոր խաղաթուղթը երիտթուրքերի ու արաբների՝ իսլամի նկատմամբ ունեցած վերաբերմունքի տարբերությունն էր: Հուսեյնն ամեն կերպ փորձում էր թուրքերի նկատմամբ ատելությունն արմատացնել՝ մատնանշելով նրանցից սպառնալի բոլոր վտանգները:

Խոսելով թուրքական կառավարության վայրագ քաղաքականության մասին՝ նա անդրադառնում է Միջագետքի անապատներում հայտնված հայ ժողովրդի տարագիր հատվածին: Մեքքայի առաջնորդ Հուսեյն իբն Ալին, ի պաշտպանություն հայերի, 1918 թ. ապրիլի 28-ին (Ռաջաբ 18, 1336, հիջրա) իր որդի Ֆեյսալին և Աբդ ալ Ազիզ ալ-Ջարբային է ուղարկում հրովարտակ, որտեղ կոչ է արվում հայ տարագիրներին պաշտպանել, հովանավորել և ամեն տեսակ օգնություն ցույց տալ. «...պաշտպանել և հոգ տանել ձեր տարածքների սահմաններում և ցեղերի մեջ ապրող Հակոբիկյան»³¹ հայ համայնքից յուրաքանչյուրին, օգնել նրանց իրենց բոլոր գործերում և պաշտպանել նրանց այնպես, ինչպես կապաշտպանեք ձեզ, ձեր ունեցվածքն ու երեխաներին, տալ նրանց անհրաժեշտ ամեն բան, անկախ այն բանից՝ նրանք կմնան նույն տեղում, թե կգնան տեղից տեղ, քանի որ նրանք զինմի են համարվում»³²:

Չնայած Հիջազի կառավարիչը հայտարարում է, որ ինքը թուրքերի դեմ պատերազմ է հայտարարել «ոչ միայն արաբներուն, այլ նաև Հայ ազգին համար ալ»³³, սակայն անհերքելի է, որ արաբների կողմից հայերին պաշտպանելու պատճառներից էր, որ արաբները, ի դեմս հայերի, դաշնակից էին տեսնում ընդհանուր թշնամու՝ թուրքական բռնապետության դեմ մղվող պայքարում: Այս քայլով նա ցանկանում էր հայերին իր կողմը պահել՝ հետագայում նրանց աջակցությունն ստանալու համար:

Հայոց ցեղասպանության տարիներին մյուս քաղաքական գործիչը, ով նույնպես փաստել է իսլամի և երիտթուրքական գործողությունների անհամատեղելիությունը, Ֆայեզ Ալ-Ղուսեյնն է: Նա իր «Ջարդերը Հայաստանում» գրքում³⁴ ամփոփել է ակնհայտ հիշողությունները, որտեղ այն մտավախությունն է հայտնել, որ հետագայում Հայոց ցեղասպանության իրագործման ողջ մեղքը կարող է ընկնել իսլամի վրա:

պայմանով: Ջինմիների վերաբերյալ Մուհամմադ մարգարեն ասել է. «Ով նրանցից թեկուզ մի պարան վերցնի, ես նրա հակառակորդը կլինեմ Դատաստանի օրը»:

Ջինմի համարվող համայնքներին թույլատրվում էր կարգավորել իրենց սոցիալական և կրոնական կյանքը, սակայն քրեական խնդիրներում պարտավոր էին ենթարկվել իսլամական կանոններին: Օսմանյան կայսրությունում մուսուլման և ոչ մուսուլման ժողովուրդների հարաբերությունների մասին առավել հանգամանորեն տե՛ս Akcam T., *A Shameful Act, The Armenian Genocide and Question of Turkish Responsibility*, London, Constable, 2007, էջ 7-8:

Հարկ է նշել, որ հայերը, Ահլ ալ-Ջինմա լինելուց բացի, համարվում էին նաև Ահլ ալ-Քիթաբ, այսինքն՝ Սուրբ Գիրք ունեցող ժողովուրդ, որի մեջ մտնում էին քրիստոնյաներն ու հրեաները: Այս երկու պարագայում էլ հայերը, մուսուլման ժողովուրդների կողմից իսլամի սկզբունքներից ելնելով, հովանավորյալ ժողովուրդ էին համարվում:

²⁹ *Արաբական աղբյուրները հայերի ցեղասպանության վերաբերյալ*, էջ 12-22:

³⁰ Նույն տեղում, էջ 23-26:

³¹ Հակոբիկյան անվանաձևն ամենայն հավանականությամբ գալիս է Երուսաղեմի Ս. Հակոբ վանքի արաբերեն Տեր Յակոբ անվանումից:

³² Նայիմ Ալ-Յաֆի, *Հայոց ցեղասպանությունը և արաբական հասարակական կարծիքի դիրքորոշումը*, Լաթակիա, Դար ալ-Հիուար, 1992, էջ 68 (արաբերեն):

³³ «Հայ ձայն», 29.11.1918:

³⁴ Գիրքն առաջին անգամ ֆրանսերենով լույս է տեսել 1917 թ. Բուրբեյում, այնուհետև թարգմանվել և տպագրվել է անգլերեն (Նյու-Յորք, 1918), գերմաներեն (Յյուրիխ, 1918) և հայերեն (Նոր Ջուղա, 1920):

Գրքի վերջաբանում նա գրում է. «Ես հաստատում եմ, որ հայերի հետ կատարվածը միայն «Միություն և Առաջադիմություն» կուսակցության պատճառով է եղել: Նրանք այդպես են վարվել հայերի հետ՝ ելնելով իրենց ազգային մոլեռանդությունից ու նրանց նկատմամբ նախանձից: Իսկապես չի արդարացնում նրանց գործողությունները»³⁵: Նա կոչ է անում բոլոր մուսուլմաններին մերժել երիտթուրքական կառավարությանը, այլապես նրանք էլ մասնակիցը կդառնան այդ ոճրագործությանը, որի հավասարը չկա պատմության մեջ: Ֆայեզ Ալ-Ղուսեյն իր հուշերն ավարտում է հետևյալ մտքով. «Մի կառավարություն, որը գործում է նման ձևով, չի կարող իսլամական համարվել, ոչ էլ իրավունք ունի դրան հավակնելու»³⁶: Նրա կարծիքով երիտթուրքական կառավարության ոճրագործությունները չեն կարող համարվել ո՛չ կրոնական մոլեռանդության, ո՛չ էլ իսլամական արմատականության դրսևորման ձև:

Հենվելով մի շարք փաստերի վրա՝ կարելի է պնդել, որ իթթիհադի ողջ դեկավարությունն իրեն իսլամի հետևորդ չէր համարում: Փաստորեն ստացվում է այնպես, որ, իրականում աթեիստ լինելով հանդերձ, նրանք «ընտրեցին երկրի կառավարման ինստիտուցիոն իսլամի տարբերակը, և նրանց նման մոտեցումը բացատրվում է նրանով, որ այս կերպ կարող էին իսլամը որպես գործիք օգտագործել»³⁷: Դեսպան Հ. Մորգենթաուն Թավեթի հետ իր ունեցած գրույցների հիման վրա հավաստիացնում է. «Թավեթի համար լրիվ միևնույնն էր իսլամը, կուսակցության առաջնորդների մեծամասնությունը ծաղրում էին բոլոր կրոնները»³⁸: Այսպիսով, երիտթուրքերը չկարողացան տարբերել իսլամը պետական գործերից և մինչև վերջ փորձեցին ֆեթվաների միջոցով օգտագործել կրոնն իրենց պետական գործերն իրականացնելու համար: Փաստորեն մենք ականատես ենք լինում իսլամի՝ որպես կրոնի իսպառ անտեսմանը:

Մի փաստ անհերքելի է, որ երիտթուրքական կառավարությունը կարողացել է շահարկել կրոնի գործոնը: Օգտվելով այն հանգամանքից, որ մուսուլմանների համար իսլամը ոչ միայն զուտ հավատ է, այլ նաև կենսաձև, փորձել է հետամնաց զանգվածների վրա ազդել կրոնի փիլիսոփայական տեսանկյունով՝ Ալլահի այնկողմնային (տրանսցենդենտալ) բնույթն առաջ բերելով. անհավատների նկատմամբ նման ձևով վարվելը նրանց ազատում էր Ահեդ դատաստանից, Ալլահին ավելի մոտ էին կանգնելու, և, ինչու չէ, նաև նահատակվելն այդ «սուրբ գործի» համար խրախուսվում էր: Նման հետամնաց զանգվածը հստակ չէր էլ գիտակցում իսլամի բուն էությունն ու իր կրոնական պարտականությունները:

Իսլամական այն գաղափարը, որ մուսուլմանները, հայերին սպանելով, կատարում էին իրենց կրոնական պարտքը, գուցեև որոշումներ ընդունողների մակարդակում մոտիվ չէր, բայց կարևոր գործոն էր 1915 թ. ցեղասպանություն իրագործողների համար³⁹:

³⁵ Ֆայեզ Ալ-Ղուսեյն, *Ջարդերը Հայաստանում...*, 1991, էջ 58:
³⁶ Նույն տեղում, էջ 62:
³⁷ Dadrian V., *Կոլ. աշխ.*, էջ 5:
³⁸ Նույն տեղում:
³⁹ Akçam T., *A Shameful Act*, p. 34-35.

ԱՄՆ Մասաչուսեթսի նահանգի Հեմփշիր քոլեջի պրոֆեսոր Լեոնարդ Գլիկի կարծիքով անկախ թուրքերի կրոնական զգացումներից, թուրք ոճրագործները իսլամը դիտարկում էին իրենց կոլեկտիվ ինքնության բաղկացուցիչ մաս, միաժամանակ քրիստոնեությունը հավասարաչափ կարևոր տարր էր նրանց գոհերի ինքնության մեջ⁴⁰:

Այնուհանդերձ, նույնիսկ այս կերպ հոգեբանական ճնշում գործադրելով ժողովրդի վրա, հարկ է նշել, որ երիտթուրքական՝ իսլամն իր քաղաքական շահերին ծառայեցնելու ծրագիրը միշտ չէ, որ գործել է: Երիտթուրքական կառավարությունը համոզված էր, որ սիրիական անապատներում տեղի մուսուլման արաբները, քրդերն ու թուրքերը կշարունակեն իրենց կիսատ գործը՝ վերջնականապես բնաջնջելով հայերին, սակայն նրանք սխալվեցին իրենց ծրագրերում: Փաստորեն, անկախ թուրքական կառավարական օղակների վարած քաղաքականությունից, նրանց հրամաններից ու վերահսկումից, որ հնարավորինս անշեղորեն իրականացվեն այդ հրամանները բազմաթիվ են դեպքերը, երբ մուսուլմանները, մասնավորապես արաբները, անտեսելով ջիհադի հոչակումը, կառավարության խիստ հսկողությունը, իրենց սպառնացող մահապատիժը, փրկել են հայերին կործանումից:

Հայոց ցեղասպանության իրականացման գործընթացում իսլամի գործոնի հարցի շուրջ

Նարինե Մարգարյան

Ամփոփում

Հողվածում ներկայացված է Հայոց ցեղասպանության իրականացման գործընթացում երիտթուրքերի՝ իսլամը որպես գործիք օգտագործելու քաղաքականությունը: Թուրք քաղաքական գործիչները կրոնական մոլեռանդության սերմանմամբ փորձում էին ուժեղացնել իրենց հակահայկական հոեոտորաբանությունը: Հայերը ներկայացվում էին որպես իսլամի թշնամիներ, և դրանով փորձ էր կատարվում ամրապնդել հայ ազգի ոչնչացման հիմնավորումները: Ջիհադի գաղափարը ևս շահարկվում էր հակահայկական զգացումների ուժեղացման նպատակով:

Միևնույն ժամանակ արաբ առաջնորդները, այդ թվում՝ շերիֆ Հուսեյնը, ուժեղորեն հակադրվում էին այս մոտեցմանը՝ կասկածի տակ դնելով երիտթուրքերի գաղափարները: Նրանք կոչ էին անում երիտթուրքերին չօգտագործել իսլամը քաղաքական նպատակներին հասնելու համար և հայտարարում էին, որ իսլամի հիմնական սկզբունքներն ուղղակի հակադրվում էին Օսմանյան կայսրության իշխանությունների՝ հայերի դեմ ուղղված ցեղասպանական քաղաքականությանը:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, երիտթուրքական կառավարություն, արաբներ, պետական քաղաքականություն, իսլամի շահարկում, իսլամական գաղափարներ, կրոնական մոլեռանդություն, ջիհադ:

⁴⁰ St'u Glick L. B., *Religion and Genocide, The Widening Circle of Genocide*. Genocide: A Critical Bibliographic Review, vol. 3, Edited by Israel W. Charny, New Brunswick and London Transaction publishers, 1994, էջ 54:

On the Factor of Islam in the Perpetration of the Armenian Genocide

Narine Margaryan

Summary

This paper deals with the Young Turks' policy to use Islam as a tool in implementing the Armenian Genocide. Turkish politicians were trying to foster their anti Armenian rhetoric through triggering religious bigotry. Armenians were portrayed as a foe of Islam thus trying to substantiate their arguments for annihilation of the Armenian nation. Jihad was also exploited to further bolster anti-Armenian feelings. Meanwhile Arab religious leaders, among them Sheriff Hussein, were vehemently opposing this line by directly challenging Young Turks' approach. They were urging Young Turks not to use Islam to achieve their political goals and declaring that main postulates of Islam were in sharp contradiction with Ottoman Empire's authorities' Genocidal policy against Armenians.

Keywords: Armenian genocide, Young Turk government, Arabs, government policy, manipulating Islam, Islamic ideas, religious intolerance, Jihad.

К вопросу о факторе ислама в деле осуществления Геноцида армян

Нарине Маргарян

Резюме

Анализируется политика младотурок по использованию ислама как средства в рамках осуществления Геноцида армян. Турецкие политики старались поддержать свою антиармянскую риторику путём инициирования религиозной нетерпимости в турецком обществе. Армяне представлялись врагами ислама, и таким образом обосновывалось по уничтожение армянского народа.

Джихад также был использован для поддержания антиармянских настроений. Между тем арабские духовные лидеры, среди них шериф Хусейн, противились такому подходу, открыто бросая вызов позиции младотурок. Они призывали младотурок не использовать ислам для достижения своих политических целей и объявляли, что основные постулаты ислама находятся в остром противоречии с геноцидальной политикой властей Османской империи по отношению армян.

Ключевые слова: Геноцид армян, правительство младотурок, арабы, государственная политика, манипуляция исламом, исламские идеи, религиозный фанатизм.

ԿԱՐՄԻ ՄԱՐԶԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ՀԵՏՈՒ
ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԻ ՆԱԽԱԳԾԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գևորգ Վարդանյան

Առաջին համաշխարհային պատերազմում պարտվելուց և Մուդրոսի զինադադարը (1918 թ. հոկտեմբերի 30) ստորագրելուց հետո Օսմանյան կայսրությունը հայտնվեց խիստ ծանր վիճակում: Զինադադարի պայմանների համաձայն՝ Թուրքիան պարտավորվում էր իր զորքերը դուրս բերել Անդրկովկասից՝ հասցնելով մինչև պատերազմը գոյություն ունեցող սահմանները: Իր հերթին կառավարող իթթիհական վերնախավը փորձում էր պահպանել Բաթումի պայմանագրով (1918 թ. հունիսի 4) ձեռք բերած տարածքները, ուստի ձգձգում էր զորքերի դուրսբերումը: 1918 թ. նոյեմբերի 24-ին թուրքական սպայակույտը տեղեկացվեց դաշնակիցների գերագույն ռազմական խորհրդի որոշման մասին, որի համաձայն՝ պահանջվում էր թուրքական զորքերի դուրսբերումը Կարսից, Արդահանից և Բաթումից՝:

Տարածաշրջանում աշխարհաքաղաքական նոր իրադրությունը կառավարող վերնախավին ստիպեց որոշ փոփոխություններ մտցնել մոտեցումների և կիրառվող միջոցների մեջ: Անդրկովկասին տիրանալու համար Թուրքիան առայժմ չէր կարող ռազմական բաց գործողություններ ծավալել: Աշխարհաքաղաքական հաջող իրադրությունը և դրան նախորդած երկարատև նախապատրաստություններն արդեն հանգեցրել էին նրան, որ Անդրկովկասում 1918 թ. կովկասյան թաթարները հայտարարեցին Ադրբեյջան անվանումով պետության ստեղծման մասին²: Մյուս կողմից թուրքական իշխանությունները սկսեցին լուրջ միջոցառումներ ձեռնարկել նորաստեղծ անդրկովկասյան հանրապետություններում՝ Հայաստանում և Վրաստանում, աշխուժացնելու մուսուլման զանգվածների անջատողական ձգտումները, դրդելու նրանց ակտիվ գործողությունների, այնուհետև հանդես գալու որպես նրանց հովանավոր³:

¹ Հովհաննիսյան Ռ. Գ., *Հայասրանի Հանրապետություն*, հատոր I. Առաջին տարին, 1918-1919 (ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., խմբ.՝ Ա. Խառատյան), Եր., «Տիգրան Մեծ», 2005, էջ 218:

² Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Դեմոյան Գ., *Թուրքիա և Կարաբախի կոնֆլիկտ (վե քոնցե XX - նաչալա XXI վեքոյ)*. Իստորիկո-սրաճնիտելնիյ աճալիզ, Երևան, 2006, սր. 47-48. Տե՛ս նաև հետևյալ աշխատությունը՝ Վարճանյան Դ., *Ազերբայճանցի: Իստորիա ռոնոյո նեզաճերիշենոյո էտնոքոքեկտա. Իստորիկո-էտնոլոգիկոսկիյ ռոչերկ*, Մոսկճա: Րուսկայա քոնոքաճա, 2012.

³ Այստեղ հարկ է նշել, որ Բաթումի մարզի մուսուլմաններին թուրքական իշխանություններն օգտագործել էին դեռևս 1918 թ. ամռանն այստեղ կազմակերպված «հանրաքվեի» առիթով: «Հանրաքվեն» անցկացվում էր բոլոր հնարավոր անօրինական միջոցներով, երբ տեղական բնակչության զգալի մասը կոտորվել էր, իսկ ընտրություններին մասնակցում էին թուրքերի կողմից այստեղ բերված մարդիկ: Նման պայմաններում «հանրաքվեն» չէր կարող չվերածվել «կատակերգության», երբ իրենք՝ թուրքերն էին խախտում Բրեստի պայմանագրի չորրորդ հոդվածը: Տե՛ս Բաճալյան Խ.Ա., *Թուրքո-գերմանկայա էքսքոնկսիա ճա Զոքաճաճազե 1914-1918 ճճ.*, Երևան, «Այստան», 1980, էջ 92: Նպատակը պարզ էր. իթթիհականները փորձում էին օրինական տեսք տալ իրենց զավթողական քաղաքականությանը՝ կեղծ ընտրությունների միջոցով հասնելով «ինքնորոշման», սպա նաև Թուրքիայի հետ միացման: Այնուամենայնիվ իրադարձությունների հետագա ընթացքը հնարավորություն չտվեց իրացնելու «հանրաքվեի» արդյունքները:

Այս մտտեցումն ուներ մի շարք առավելություններ:

1. Անմիջական ռազմական գործողություններ չմղելով անդրկովկասյան հանրապետությունների դեմ՝ կարելի էր տեղի մուսուլման տարրի ուժերով անջատել որոշ շրջաններ՝ այդ գործում օգտագործելով թուրքական բանակի հրահանգիչներին և սպաներին:

2. Առաջիկայում Փարիզում նախատեսվում էր գումարել խաղաղության վեհաժողով, որտեղ կարելի էր ներկայացնել մուսուլման տարրի «պահանջատիրությունը» և հնարավորության դեպքում որոշ առավելություններ ստանալ:

3. Ապստամբած մուսուլման տարրը կարող էր ապավինել նորաստեղծ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության օգնությանը:

Նշված խնդրի լուծման համար իթթիհադական վերնախավը փորձեց մի միջոց կիրառել, որը նոր էր թուրքական ծավալապաշտության մեջ: Խոսքը վերաբերում է «արհեստական պետություններ» կամ ավելի ճիշտ կլինի ասել «արհեստական պետական կազմավորումներ» ստեղծելուն: Նշված եղանակն առաջին անգամ կիրառվել էր Բալկանյան պատերազմների ժամանակ, երբ Արևմտյան Թրակիայում հռչակվել էր «թուրքական հանրապետությունը»: Այն ժամանակ ևս ակտիվացնելով տեղի փոքրամասնություն կազմող մուսուլմաններին՝ 1913 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կազմավորեց «Արևմտյան Թրակիայի ժամանակավոր կառավարությունը»: Իրականում, սակայն, ողջ իշխանությունը կենտրոնացված էր «Հատուկ կազմակերպության»⁴ և դրա ղեկավարներից Մուլեյման Ասկերիի ձեռքում⁵: Այդ ամենի գլխավոր նպատակն Ադրիանապոլսի հարցում զիջումներ ստանալն էր⁶:

⁴ «Հատուկ կազմակերպությունը» («Teşkilat-i Mahsusa») - Ռազմական նախարարության հատուկ զինված կազմակերպություն՝ ստեղծված Էսվեր փաշայի կողմից, որն ունի բացառիկ դեր Հայոց ցեղասպանության իրականացման գործում: Չնայած տարածված տեսակետներից մեկի համաձայն՝ կազմակերպության պաշտոնական հիմնադրումը թվագրվում է 1914 թ. օգոստոսով, ըստ երևույթին, Հատուկ կազմակերպության պաշտոնական հիմնադրումը միայն գոյություն ունեցող իրավիճակի վավերացումն էր: Հստակ է, որ դրա անդամները որպես առանձին ջոկատ գործել են դեռևս 1912-1913 թթ. ընթացքում: Դրա օգտին է նաև այն, որ ըստ կազմակերպության ակտիվ անդամ Էշրեֆ Քուչուքաշլիի՝ այն ստեղծվել է 1911-1913 թթ. (տե՛ս Stoddard Philip, *Teşkilâtî Mahsusa: Osmanlı Hükmüeti ve Araplar 1911-1918: Teşkilâtî Mahsusa Üzerine Bir Ön Çalışma*, İstanbul, Arma Yayınları, 2003, էջ. 54): Թուրքական որոշ աղբյուրներում «Teşkilat-i Mahsusa» անվանումը տարածվում է մինչև 1914 թ. գործող այդ խմբի վրա: Տե՛ս Zürcher E. J., *The Unionist Factor: The Role of the Committee of Union and Progress in the Turkish National Movement 1905–1926*, Leiden, E. J. Brill, 1984, էջ 59:

⁵ Авакян А., *Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX - первая четверть XX вв.)*, Ереван, изд. «Гитутюн», 2001, стр. 227-228.

⁶ Բալկանյան երկրորդ պատերազմը (1913 թ. հունիսի 29 - օգոստոսի 10) ընթանում էր Բուլղարիայի և Բալկանյան առաջին պատերազմում (1912 թ. հոկտեմբերի 8- 1913 թ. մայիսի 30) նրա դաշնակից Սերբիայի, Հունաստանի, Չեռնոգորիայի, Ռումինիայի և հակառակորդ Օսմանյան կայսրության միջև: Առաջին պատերազմում Օսմանյան կայսրությունը, ի թիվս այլ եվրոպական տարածքների, կորցրեց նաև Ադրիանապոլիսը: Երկրորդ պատերազմում արդեն Բուլղարիան չկարողացավ դիմադրել իր նախկին դաշնակիցներին և նրանց միացած Օսմանյան կայսրությանը: 1913 թ. օգոստոսի 10-ի Բուխարեստի պայմանագրի ստորագրումից որոշ ժամանակ անց (Բուլղարիայի և վերոնշյալ Բալկանյան պետությունների միջև) Բուլղարիան 1913 թ. սեպտեմբերի 29(30)-ին

Թուրքերը հասան իրենց նպատակին, քանի որ Բալկանյան երկրորդ պատերազմից հետո Ադրիանապոլիսը մնաց Թուրքիային:

Անդրկովկասում, անշուշտ, քաղաքական իրադրությունը և ուժերի հարաբերակցությունն այլ էր: Այստեղ անհրաժեշտ էր համախմբել մուսուլմաններին, որը պահանջում էր կազմակերպական մեծ աշխատանք: Առաջին քայլը եղավ 1918 թ. նոյեմբերի 5-ին Կարսի մահմեդական խորհրդի ստեղծումը Հիլմի (Ուրան) բեյի և Ֆահրեդդին (Էրդողան) բեյի գլխավորությամբ: Կազմակերպական առումով կարևոր էին նաև 1918 թ. նոյեմբերի 14-15-ին և հատկապես 1918 թ. նոյեմբերի 30-դեկտեմբերի 2-ը Կարսում գումարված կոնգրեսները: Ստեղծվեց Կարսի Իսլամական ազգային խորհուրդը՝ բաղկացած 12 հոգուց: Այն ղեկավարվում էր Ֆահրեդդին բեյի և Ջհանգիրօղլու Իբրահիմի կողմից⁷: Այս ամենը կատարվում էր անմիջականորեն թուրքական 9-րդ բանակի հրամանատար գեներալ Յակուբ Շևքի⁸ փաշայի հրահանգներով և ցուցումներով: Մահմեդական խորհուրդը կարողացավ ոտքի հանել մոտ 8.000 մարդ⁹: Այժմ արդեն թուրքական ուժերի հեռանալուց հետո նշված շրջաններում կազմավորված խորհուրդը և նրա ենթակայության տակ եղած ուժերը կարող էին լուրջ գործոն դառնալ:

1919 թ. հունվարի 17-18-ին շուրջ հարյուր պատվիրակներ հավաքվեցին Կարսում՝ խորհրդաժողովի: Այն նախագահում էր Չըլդըրից Էսադ Օքթայը¹⁰: Խորհրդաժողովը որոշեց, միավորելով Կարսի, ինչպես նաև մյուս շրջանների շուրաները, հռչակել Հարավարևմտյան կովկասյան ժամանակավոր ազգային կառավարություն¹¹: Ընդունված սահմանադրության համաձայն, որը բաղկացած էր 18 հոդվածից, Հարավարևմտյան կովկասյան ժամանակավոր ազգային կառավարության իշխանությունը տարածվում էր Աջարիայից՝ Սև ծովից մինչև Նախիջևան՝ պարսկական սահմանի մոտ¹²: Նորաստեղծ կառավարությունն օգտագործելու էր թուրքերենը՝ որպես պաշտոնական լեզու, ունենալու էր օրենսդիր մարմին (մեջլիս՝ կազմված 64

Օսմանյան կայսրության հետ ստորագրեց Կոստանդնուպոլսի պայմանագիրը, որով էլ, ի թիվս շրջակա այլ տարածքների, վերջինիս զիջեց Ադրիանապոլիսը: Այս իրադարձությունների մասին ավելի մանրամասն տե՛ս Richard C. Hall, *The Balkan Wars, 1912-1913: Prelude to the First World War*, London, Routledge, 2000; Edward Erickson, *Defeat in Detail: The Ottoman Army in the Balkans, 1912-1913*, Westport, Ct: Praeger, 2003): Ահա մինչ այս պայմանագրի ստորագրումը Բուլղարիայի վրա ճնշում գործադրելու համար էր, որ երիտթուրքերն այստեղ կիրառեցին արհեստական պետական կազմավորում ստեղծելու մեթոդը: Տե՛ս Авакян А., *Черкесский фактор в Османской империи и Турции...*, стр. 227-228:

⁷ Հովհաննիսյան Ռ. Գ., *նշվ. աշխ.*, էջ 219:

⁸ Յակուբ Շևքի (Սուրաշը) փաշան (1876-1939 թթ.) թուրք ռազմական գործիչ է: Մասնակցել է Բալկանյան պատերազմներին, եղել Առաջին աշխարհամարտի մի շարք կարևոր թատերաբեմերում, 1918-1919 թ.թ. եղել է Օսմանյան 9-րդ բանակի հրամանատար: Նա եղել է Մալթա արքայազմի երիտթուրք գործիչների շարքում, ապա վերադարձել և ակտիվորեն մասնակցել է Ազգայնական շարժմանը:

⁹ Նույն տեղում, էջ 220:

¹⁰ Էսադ Օքթայը (1887-1972 թ.թ.) մասնագիտությամբ բժիշկ է եղել:

¹¹ Նույն տեղում, էջ 223:

¹² Նույն տեղում, էջ 224:

պատգամավորից՝ 60 մուսուլման, 3 հույն և մեկ մոլդական ռուս), որն ընտրվելու էր ժողովրդավարական ընթացակարգով՝ լիազորություն ունենալով նշանակել մշտական կառավարություն:

Հարավարևմտյան կովկասյան կառավարությունն իր առջև խնդիր էր դրել միավորել Կարսի, Բաթումի, Արդահանի, Ախալցխայի, Ախալքալաքի, Շարուրի, Նախիջևանի, Մուրմալուի և Երևանի (մի մասի) գավառները և հասնել այդ շրջանների ընդգրկմանը «հանրապետության» կազմի մեջ¹³: Այդ տարածքները «մասն էին կազմում» ևս երկու արհեստական պետական կազմավորումների՝ «Արաքսյան թուրքական հանրապետության» և «Ախալցխայի ժամանակավոր կառավարության»¹⁴: Դրանք պետք է դառնային տեղական կառավարություններ, որոնք հնարավորություն կտային երիտթուրքերին գործերը դուրս բերելուց հետո պահպանելու ազդեցությունը տարածաշրջանում և հող նախապատրաստեին հետագայում թուրքերի վերադարձի համար: Սակայն ինչպես Ախալցխայի, այնպես էլ «Արաքսյան հանրապետությունը», նման լինելով իրենց առաջ դրած խնդիրներով և նպատակներով, այնուամենայնիվ, այնքան ուժեղ և կազմակերպված չէին, որքան Կարսի կառավարությունը:

Կարսում փաստացի իշխանությունը հայտնվեց մուսուլմանական շուրայի (խորհուրդ) և նրա ստեղծած մարմինների ձեռքում: Միայն դրանից հետո գեներալ Յակուբ Շևքի փաշան սկսեց օսմանյան 9-րդ բանակի դուրսբերումը Կարսից՝ միաժամանակ գեներալ ու գինամթերքն ամբողջ Կարսի մարզով մեկ թաքցնելով և թողնելով առանձին սպաների՝ տեղի մուսուլմաններին օգնելու և նրանց ուղղություն ցույց տալու համար¹⁵: Կարսի մուսուլմանները լավ զինվել էին և նույնիսկ ունեին գնդացրային վաշտեր¹⁶:

Թուրքական ծավալապաշտությունը փորձում էր ամեն կերպ օգտագործել մուսուլման բնակչությանը՝ արհամարհելով անգամ այն փաստը, որ ազգային խմբերից Կարսի մարզում մեծամասնություն էին կազմում հայերը և ոչ թե թուրքերը: Կարսի մարզը Ռուսական կայսրությանն էր միավորվել 1877-1878 թ.թ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո: 20-րդ դարի սկզբին մարզը վարչականորեն բաժանված էր չորս օկրուգի՝ Կարսի, Կադվանի, Արդահանի և Օլթիի: 1916 թ. տվյալներով մարզի բնակչության թիվը կազմում էր 404305 մարդ: Առաջին երկու օկրուգներում հայերը կազմում էին մեծամասնություն (Կարսում 191.970 բնակչությունից հայեր էին 80752-ը, թուրք-թաթարներ՝ 50790, մնացածը՝ հույներ, ռուսներ, քրդեր և այլն, իսկ Կադվանի օկրուգում 83.208 բնակչությունից հայեր էին 34721-ը, թուրք-թաթարներ՝

¹³ Кадисhev А. Б., *Интервенция и гражданская война в Закавказье*, Москва, Воениздат, 1960, стр. 170.

¹⁴ Արհեստական պետական կազմավորումներ ստեղծելու թուրքական երկու նախագծեր: Այսպես կոչված «Արաքսյան թուրքական հանրապետությունը» կազմավորվեց 1918 թ. վերջին Ջաֆարդուլի խան Նախիջևանսկու գլխավորությամբ և անկում ապրեց 1919 թ. հունիսին հայկական ուժերի կողմից Նախիջևանի առժամանակյա ազատագրմամբ:

¹⁵ Հովհաննիսյան Ռ. Գ., *նշվ. աշխ.*, էջ 226:

¹⁶ «Յանուս», 1919 հունվարի 29:

5717-ը, մնացածը՝ քրդեր, հույներ և այլն)¹⁷:

Հաշվի չառնելով այս կարևոր հանգամանքը՝ ինքնահռչակ կառավարությունը պահանջում էր ճանաչել իր իրավունքները Կարսի, Բաթումի, Ախալցխայի, Ախալքալաքի, Շարուրի և Նախիջևանի նկատմամբ¹⁸: Նոր հանրապետությունը երաշխավորում էր իր բոլոր քաղաքացիների հավասարությունը՝ անկախ ազգային, կրոնական կամ սոցիալական պատկանելությունից¹⁹, սակայն ինչպես ցույց է տալիս իրադարձությունների ընթացքը, դա չէր վերաբերում հայերին:

Այս հանգամանքը չափազանց կարևոր նշանակություն ունի այն առումով, որ լրացուցիչ ապացույց է Կարսի շուրայի՝ որպես պետական կազմավորման, շինծու և արհեստական լինելը: Իրեն կառավարություն համարող մարմինը հավակնում էր կառավարել մի շրջան, որտեղ հաշվի չէին առնվում հիմնական բնակչության շահերը: Դրան գումարվում է նաև Կարս քաղաքը որպես կենտրոն ընտրելը, որը մարզի ամենահայաշատ վայրերից էր: Ինչպես նշում է պատմաբան Է. Ջոհրաբյանը. «Նպատակը պարզ էր, ինքնորոշման շղարշ տալով այս կազմավորմանը՝ խոչընդոտել պանթուրքիզմի պլանների տեսակետից խիստ կարևոր նշանակություն ունեցող այս տարածքների միացումը Հայաստանի Հանրապետությանը և պահպանել հնարավորություն՝ ապագայում կրկին դրանց տիրանալու, կամ հակառակ դեպքում՝ Ադրբեյջանին միացնելու համար»²⁰:

Դաշնակցական գործիչ Ռուբենը նշում է, որ անգլիացիների կողմից շուրայի անդամների ձերբակալումից հետո կազմվել է նոր խորհուրդ: Այս նոր շուրան էր, որ ղեկավարում էր Կարսի մուսուլմաններին: Անգամ հայտնի չեն եղել նրա անդամների անունները, քանի որ, ըստ Ռուբենի, այս նոր շուրան գործում էր շատ զգույշ և կազմակերպված²¹: Ռուբենը նշում է նաև, որ որոշ տարբերություն կար Նախիջևանի և Կարսի մուսուլմանների գործողությունների մարտավարության մեջ: Այստեղ՝ Կարսում, նրանք կարծես նպատակ էին դրել պահպանելու մուսուլմաններին, նրանցից կազմակերպված ուժ ստեղծելու, դրսևորելու համբերատարություն՝ սպասելով Թուրքիայում դեպքերի զարգացմանը: Այդ գործելակերպի առավելությունն այն էր, որ երբ Թուրքիան հարմար առիթ ունենար վերադառնալու Կարս, իրենք կմտնեին թուրքական տիրապետության մեջ²²:

Կարսի մարզի տարածքում հռչակված Հարավարևմտյան կովկասյան կառավարության նպատակների մեջ էր մտնում Հայաստանի թուլացումը հայկական

¹⁷ Шахатурия, А., *Административный передел Закавказского края*, Тифлис, Тип. Ашхатавор, 1918, стр. 72-74.

¹⁸ Kazemzadeh Firuz, *The struggle for Transcaucasia (1917-1920)*, with an introduction by Micheal Karpovich, New York: Philosophical Library, 1951, p. 199.

¹⁹ Նույն տեղում, էջ 199:

²⁰ Ջոհրաբյան Է. Ա., *Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտ. - 1920 թ. ապրիլ)*, Եր., 2002 թ., էջ 37:

²¹ Ռուբեն, *Հայ Յեղափոխականի մը յիշարակները*, Է հատոր, Երևան, «Աղանա», 1990, էջ 210:

²² Նույն տեղում, էջ 211:

ուժերի վրա ավագակային միավորների ուժերի հարձակումների միջոցով²³: Այս առումով ուշագրավ են պատմաբան Հայկ Դեմոյանի եզրահանգումները, որոնց համաձայն՝ կազմավորելով այդպիսի խամաճիկային պետական միավորներ, թուրքական կողմի հետապնդած ռազմավարական նպատակը կապի ստեղծումն էր Ադրբեջանի և Նախիջևանի ու Սևծովյան ափի միջև: Միաժամանակ նպատակ էր դրված ստեղծելու բուֆերային գոտի թուրքական ուժերի և կովկասյան հանրապետությունների միջև²⁴:

Մուսուլմանական խորհուրդը գոյություն ունեցավ Կարսում անգլիական գեներալ-նահանգապետության հետ զուգահեռ: Անգլիացիներն էլ իրենց հերթին էին փորձում օգտագործել այդ կառավարությունն իրենց շահերի համար: Պատահական չէ, որ 1919 թ. փետրվարի 15-ին Ն. Ժորդանիան Անգլիայի ներկայացուցիչ Ֆորսթեր Ուոկերի հետ զրույցի ժամանակ նշել է, որ այդ նոր կառավարությունը բացահայտ հայտարարում է, որ գտնվում է Անգլիայի հովանավորության տակ²⁵:

Կարսի մարզի թաթար բնակչությունն ընդգրկվում էր մեծ կամ փոքր գորաջուկատների մեջ, դրանց աջակցում և զինում էին թուրքերը, ովքեր պետք է նահանջեին նախապատերազմյան իրենց սահմանը²⁶: Այդ ամենը կատարվում էր Կարսի մարզի գրեթե բոլոր թաթարաբնակ գյուղերում թուրքական և գերմանական սպաների ղեկավարությամբ, և դա այն պայմաններում, երբ հայ բնակչությունն ապահովության ոչ մի երաշխիք չունեցրել էր:

Կարսի շուրան իր գոյության կարճ ժամանակահատվածում եղել է թուրքական սվինների աջակցությամբ ոտքի կանգնած Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության ուշադրության կենտրոնում: Ադրբեջանական իշխանությունները, անմիջական կապ չունենալով արհեստական այդ միավորման ստեղծման հետ, այնուամենայնիվ փորձել են օգտագործել և աջակցել դրա գոյությանը: Ադրբեջանական իշխանությունները չէին կարող անուշադրության մատնել Կարսը Հայաս-

տանի Հանրապետության տարածքում իրենց ծավալած քայքայիչ գործունեության ժամանակ: Երբ 1919 թ. Կարսը միավորվեց Հայաստանի Հանրապետությանը, Ադրբեջանը հրաժարվեց ճանաչել դա, ավելին՝ իր դիվանագիտական ներկայացուցչին՝ Մ. Խան-Թեքինսկուն հրահանգեց հետևյալը. «Անհապաղ կա՛յ հաստատեցեք Ղարսի կառավարության հետ: Ցու՛յց տվեք նրան ամեն տեսակ աջակցություն, իմացե՛ք, թե ինչ կարիքներ ունի, հեռագրեցեք մեզ՝ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար...»²⁷: Այս հաղորդագրությունն ինքնին ներկայացնում է այս հարցում Ադրբեջանի քաղաքականության էությունը:

1919 թ. ապրիլին, կապված անգլիացիների որոշման հետ, Խան-Թեքինսկին հեռագրում է Ադրբեջանի արտգործնախարարություն՝ առաջարկելով. «Անհրաժեշտ է բողոքել Հոդկաստանի, Թուրքեստանի, Աֆղանստանի, Մալայան կղզիների և Կովկասի ողջ մահմեդականների, ինչպես նաև Հաշտության վեհաժողովի առաջ անգլիացիների այն ցանկության դեմ, որով նրանք մի քանի միլիոն մահմեդականներին ենթարկում են թվով կես միլիոն հայերին»²⁸:

Կարսի մարզում ինքնահռչակ կառավարության ստեղծումը, լինելով թուրքական կողմի գործունեության անմիջական արդյունք, այնուամենայնիվ, ներկայացվում է որպես ադրբեջանական: Ինչպես Նախիջևանի շրջանում հռչակված «Արաքսյան հանրապետությունը», այնպես էլ Կարսի Հարավարևմտյան Կովկասյան կառավարության ստեղծումը պայմանավորվում են «այն ծայրահեղ անհրաժեշտությամբ, որ ստեղծվել էր շրջանի և նրա բնակչության համար թուրքական գործերի հեռանալուց հետո»²⁹: Այդ տեսակետը հատկապես ակտիվ պաշտպանվում է ադրբեջանցի պատմաբան Ա. Հաջինի կողմից, ով ևս ընդգծում է, որ իբր Կարսի և Բաթումի մարզերի տարածքում ձևավորվում էր անկախ պետականություն, որն ավելի շատ հակվում էր դեպի ԱԴՀ, քան Թուրքիա³⁰: Ադրբեջանական պատմագրության մեջ տարածված այս տեսակետը չի համապատասխանում իրականությանը: Այդ ինքնահռչակ պետական կազմավորումների ստեղծման գլխավոր նպատակը Թուրքիայի կողմից Նախիջևանի, Շարուրի, ինչպես նաև Կարսի մարզի տարածքի զավթումն էր՝ այդ նպատակի համար օգտագործելով մուսուլման բնակչությանը:

1919 թ. ապրիլի 10-ին գեներալ Թոմսոնը հրապարակեց հայտարարություն «Հարավարևմտյան Կովկասյան կառավարության» լուծարման մասին՝ նշելով, որ Հաշտության վեհաժողովը պետք է որոշի Կարսի և մյուս վիճելի տարածքների վերջնական կարգավիճակը³¹: 1919 թ. ապրիլի 12-ին գինաթափ անելով շենքը հսկող պահակներին՝ ձերբակալեցին պառլամենտի և կառավարության անդամներին:

²³ Демоян Г., Турция и Карабахский конфликт..., стр. 49.

²⁴ Демоян Г., Внешняя политика Турции и Карабахский Конфликт, с. 77-79.

Հարկանուր առմամբ թուրքական ծավալապաշտության մեջ կիրառվող այս մոտեցմանը հայ պատմագրության մեջ համեմատաբար քիչ է անդրադարձ կատարվել: Չնայած Կարսի մարզում ծավալված իրադարձությունների մասին համառոտ կամ ընդարձակ անդրադարձներ կան մի շարք պատմաբանների գործերում, այնուամենայնիվ, դրանք Թուրքիայի արտաքին քաղաքականության ծիրում դիտարկելու և տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումների տեսանկյունից մեկնաբանելու առումով պետք է առանձնացնել Հայկ Դեմոյանի դիտարկումները:

²⁵ Մեծ Բրիտանիայի դիրքորոշումն այս հարցում միանշանակ դժվար է գնահատել: Սկզբնական շրջանում բրիտանացիները նախընտրում էին չվստահել հայերին՝ երկյուղելով, ըստ իրենց, նրանց ռուսասիրությունից, որը կարող էր մեծացնել Ռուսաստանի ազդեցությունը, ուստի հրաժարվում էին Հարավարևմտյան Կովկասյան կառավարության դեմ կտրուկ գործողություններից: Մակայն ժամանակի ընթացքում տեսնելով Կարսի շուրայի խողովարար գործողության սաստկացումը և ազդեցության գոտու մեծացումը՝ ի վերջո հանգեց մուսուլմանական խորհուրդը տապալելու մտքին: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., *նշվ. աշխ.*, էջ 227-234: Кадишев А.Б., *указ. соч.*, стр. 171.

²⁶ Rawlinson A., *Adventures in the Near East 1918 – 1922*, New York, Dodd, Mead and Company, 1924, p. 151.

²⁷ *Գաղղնի փաստաթղթերը. Ադրբեջանի դատարանական գործունեությունից մի էջ*, Երևան, Գլխատր Շտաբի տպ., 1920, էջ 23:

²⁸ Նույն տեղում, էջ 19:

²⁹ *Азербайджанская Демократическая Республика*, Баку, «Елм», 1998, стр. 77.

³⁰ Гаджиев Айдын, *Демократические республики юго-западного Кавказа*, Баку, «Нурлан», 2004, стр. 50-51. Հաջինի առաջ քաշած տեսակետների քննադատությունը տե՛ս Կնյազյան Դ., էջ 65-66:

³¹ Kazemzadeh F., *նշվ. աշխ.*, էջ 200:

Նրանք արքայազնին նախ՝ Բաթում, ապա՝ Կ. Պոլիս, այնուհետև՝ Մալթա³²: Ապրիլի 19-ին իշխանությունը փոխանցվեց Կարսի նահանգապետ նշանակված Ստեփան Գորդանյանին, իսկ ապրիլի 28-ին հայկական 2-րդ հետևակային գունդը փոխարինեց քաղաքն ու ամրությունները հսկող բրիտանացիներին: Կարսը առժամանակ միավորվեց Հայաստանի Հանրապետությանը:

Այսպիսով, պայմանավորված Մուդրոսի զինադադարից հետո Անդրկովկասում ստեղծված իրավիճակով, թուրքական իշխանությունները, նպատակ ունենալով թույլ չտալ Կարսի մարզի անցումը Հայաստանի Հանրապետությանը, փորձեր արեցին ակտիվացնելու տեղի մուսուլման բնակչությանը և, օգտագործելով նրանց ներուժը, հասնելու այդ շրջանի տրոհմանը և հետագայում թուրքական պետությանը միավորմանը: Այդ նպատակի համար նրանք օգտագործեցին արհեստական պետություն ստեղծելու, նրան կեղծ ժողովրդավարական կերպարանք հաղորդելու միջոցը: Նման մոտեցումը նոր-նոր էր ձևավորվում թուրքական ծավալապաշտության մեջ, որը հետագայում՝ 20-րդ դարի հետագա տասնամյակներին, կիրառվեց հանրապետական Թուրքիայի կողմից՝ այլ տարածքներ գավթելու համար (օր.՝ «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության ստեղծումը»):

Կարսի մարզը Առաջին աշխարհամարտից հետո. երիտթուրքական մի նախագծի պատմություն

Ֆևրգ Վարդանյան

Ամփոփում

Մուդրոսի զինադադարից ստորագրումից հետո պատերազմում պարտություն կրած Օսմանյան կայսրությունը պարտավորվեց Անդրկովկասից դուրս բերել իր զորքերը մինչև Առաջին աշխարհամարտը գոյություն ունեցող սահմանները: Սակայն թուրքական իշխանությունները ձգձգում էին զորքերի դուրսբերումը: Ավելին, նրանք ստեղծում են Կարսի մահմեդական խորհուրդը, ապա հռչակում «Հարավարևմտյան կովկասյան ժամանակավոր կառավարությունը»: Այդ քաղաքականության հիմնական նպատակը նորաստեղծ Հայաստանի Հանրապետությանը նշված տարածքների անցումը կանխելն էր: Արհեստական պետական կազմավորումներ ստեղծելու ռազմավարությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ լայնորեն օգտագործվեց 20-րդ դարի ընթացքում:

Բանալի բառեր՝ Օսմանյան կայսրություն, Հարավարևմտյան կովկասյան ժամանակավոր կառավարություն, Կարս, շուրա, Հայաստանի Հանրապետություն, Ադրբեջանի Հանրապետություն:

³² Մալթա արքայազնների մասին ավելի մանրամասն տե՛ս Vartkes Yeghiayan, *British Foreign Office Dossiers on Turkish Was Criminals* (Pasadena, CA: AAIC, 1991).

Kars Province after World War I: History of a Young Turk Project

Gevorg Vardanyan

Summary

After the Mudros armistice Ottoman Empire had to withdraw its troops from Transcaucasia to the pre-World War I boundaries. However, the Turkish authorities delayed the removal of the soldiers. They established the Muslim Council of Kars and declared so-called South-Western Caucasian Provisional Government. The main goal of this policy was “to preserve” those areas and prevent their transition to the newly established Republic of Armenia. The attempts to create artificial state formations were largely used in the Turkish foreign policy throughout the 20th century.

Keywords: Ottoman Empire, South - Western Caucasian Provisional Government, Kars, Shura, Republic of Armenia, Republic of Azerbaijan.

Карсская область после Первой Мировой войны: к истории одного младотурецкого проекта

Геворг Варданян

Резюме

После Мудросского перемирия Турция должна была вывести свои войска из Закавказья к границам, существующим до Первой мировой войны, однако турецкие власти задержали эвакуацию войск. Создав мусульманский совет Карса, они провозгласили так называемое «Юго-Западное кавказское временное правительство». Основной целью данной политики было недопущение перехода этих районов к вновь созданной Республике Армения. Стратегия создания искусственных государственных образований широко использовалась в турецкой внешней политике на протяжении XX века.

Ключевые слова: Османская Империя, Юго-Западное кавказское временное правительство, Карс, Шура, Республика Армения, Азербайджанская Республика.

ՄՈՒՍՏԱՖԱ ՔԵՄԱԼԻ 1927 Թ. ՃԱՌԸ՝ ՈՐՊԵՍ ԹՈՒՐԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱՔԱՐ

Ռեզինա Գալուսյան

Պատմությունը և դրա մասին հիշողությունը վճռորոշ են ազգաստեղծման նախագծերի համար: Անցյալի հիշողության միջոցով է հավաքականությունը ձեռք բերում ինքնությունը: Թուրքիայի Հանրապետության պարագայում նման գործընթացը տեղի ունեցավ ինքնության արհեստական ձևավորման միջոցով, և այս ամենի մեջ մեծ էր Օսմանյան կայսրության՝ բռնության դրվագներով լի պատմությունը, որի մեջ ուրույն տեղ ունեւր հայերի ցեղասպանության պատմության ձևախեղումը: Թուրքական ազգային պետություն կառուցելիս հանրապետական առաջնորդները որոշում կայացրին կենտրոնանալ ազգի ապագայի վրա: Օսմանյան անցյալը գիտակցաբար խեղաթուրվում էր²: Այս նպատակաուղղված քաղաքականության ընթացքում զարգացավ առասպելականացված թուրքական պատմագրությունը, որը հերոսացնում էր թուրքական նվաճումները, սպիտակեցնում հանցագործությունները³, պարտությունների մեջ մեղադրում հատկապես քրիստոնյա փոքրամասնություններին, որոնք դաշնակցում էին Արևմուտքի հետ⁴: Այս համատեքստում կառուցվեց նաև Հայոց ցեղասպանության վերաբերյալ այն «թեզը», որով կատարվածի հիմնական մեղքը բարդվեց հայերի ապստամբական գործունեության վրա: Այս դիրքորոշումը շարունակվում է մինչ օրս:

Նոր ձևավորված թուրք ազգին անհրաժեշտ էր պաշտոնական պատմագրության հիմնաքար, որը դարձավ 1927 թ. հոկտեմբերի 15-20-ը Մուստաֆա Քեմալի (հետագայում՝ Աթաթուրք)՝ Թուրքիայի միակ օրինական Ժողովրդական հանրապետության կուսակցության համագումարին ընթերցած ճառը⁵: Այն տևեց 36 ժամ 31 րոպե, ներկայացվեց վեց օրվա ընթացքում և պատմության մեջ մտավ Ճառ

¹ St' u Smith Anthony D., *Ethno-Symbolism and Nationalism*. A cultural approach, Routledge, L&NY, 2009, էջ 65:

² Նշենք, որ ընդհուպ մինչև 20-րդ դարի սկիզբը, օսմանյան պատմագրությունը գրեթե չէր հետաքրքրվում թուրքերի ծագմամբ: Դրա բովանդակությունը օսմանյան ցեղից օսմանյան տերության ծագման և սուլթանական դինաստիայի հետ կապված իրադարձությունների վերապատումն էր: Օսմանյան պատմաբանների անտարբերությունը թուրքերի պատմության նկատմամբ պայմանավորված էր իսլամով: Իսլամը բոլոր ժողովուրդներին բաժանում էր մուսուլմանների և ոչ մուսուլմանների՝ անտեսելով ազգային պատկանելությունը: Թուրքերի ծագման հանդեպ հետաքրքրությունը Թուրքիայում առաջացավ ազգային ինքնագիտակցության առաջին ծիլերի հետ (տե՛ս Eremeev D. E., *Этногенез турок*, М., Наука, 1971, էջ 20: Կրոնական և ազգային ինքնությունների նույնացման մասին տե՛ս Smith Anthony D., *National Identity*, Penguin Books, London, 1991, էջ 7):

³ St' u Buckley-Zistel Susanne, Nation, narration, unification? The politics of history teaching after the Rwandan genocide, *Journal of Genocide Research*, Routledge, 11 (1), (2009), էջ 31:

⁴ St' u Göçek Fatma Müge, Reading Genocide; Turkish Historiography on 1915, *A Question of Genocide*, Oxford University Press, 2011, էջ 42-43:

⁵ Ֆաթմա Ուլգենը գտնում է, որ Ճառում Քեմալը «հայտնագործեց թուրքական ազգային ինքնությունը» (Ulgen Fatma, Reading Mustafa Kemal Atatürk on the Armenian genocide of 1915, *Patterns of Prejudice*, 44, , Routledge, 2010, (4), p. 384):

(Nutuk)⁶ անվամբ: Ինչպես ընդգծում է հենց ինքը՝ Քեմալը, նա սահմանափակվում է՝ միայն նշելով ուղղությունը, որով զարգանում էին իրադարձությունները, և նպատակ ունի ինչ-որ չափով դյուրին դարձնել իրենց հեղափոխությունն ուսումնասիրելու պատմության խնդիրը⁷: Մուստաֆա Քեմալի առաջադրած տեքստն այնուհետև պարտադրվեց որպես պաշտոնական թուրքական ազգային պատմություն և ծխականացվեց պետության կողմից⁸: Այն վիթխարի ազդեցություն է գործել շարժման և հանրապետության առաջացման վերաբերյալ պատմագրության վրա՝ ամրապնդվելով թուրքական կրթական համակարգի միջոցով⁹: Ճառում մատուցվող նյութի քննարկումը քրեորեն պատժելի արարք էր, և մինչ օրս գոյություն չունի դրա քննական հրատարակությունը: Այն, ինչ պետք է լիներ անցյալի «հավաքական հիշողություն», վերափոխվեց «հավաքական առասպելի»¹⁰:

1919-1920 թվականներին «օտար իմպերիալիստների դեմ» ազգային անկախության համար պայքարում Թուրքիայում առաջացավ գաղափարախոսական ուղղություն՝ քեմալականություն: Այդ շարժման համատեքստում թուրք գիտնականների առջև խնդիր էր դրվում գիտականորեն հիմնավորել Փոքր Ասիայի նկատմամբ թուրքերի իրավունքը, մասնավորապես ապացուցել թուրքերի փոքրասիական տեղաբնիկությունը: Քեմալը և քեմալականները կոչ էին անում թուրք գիտնականներին ժամանակակից թուրքերի նախնիներին փնտրել Փոքր Ասիայի հնագույն բնակիչների, օրինակ՝ խեթերի շրջանում¹¹: Տեղաբնիկության թեզի հիմքերը Քեմալը դրեց հենց իր Ճառում¹²: Թուրք պատմաբանների համար Ճառի վստահելիությունը հիմնավորվում է

⁶ St' u Zürcher E. J., *The Young Turk Legacy and Nation building from the Ottoman Empire to Ataturk's Turkey*, I. B. Tauris, London, New York, 2010, էջ 6, Fatma Ulgen, *Նշվ. աշխ.*, էջ 383:

⁷ St' u Кемаль Мустафа, *Путь Новой Турции; Интервенция союзников, греко-турецкая война и консолидация национального фронта 1920-1921*, Гос. социально-экономическое изд-во, М., 1934, т. III, էջ 70:

⁸ Ulgen Fatma, *Reading Mustafa Kemal Atatürk...*, p. 384.

⁹ St' u Göçek Fatma Müge, *Նշվ. աշխ.*, էջ 44, նաև՝ Zürcher E. J., *Նշվ. աշխ.*, էջ 9:

¹⁰ St' u Göçek Fatma Müge, *Նշվ. աշխ.*, էջ 43: Նման կարգի առասպելների ազդեցությունը հանրային վրա չի կարելի անտեսել, քանի որ դրանք հաստատում, սահմանում են հավաքականության կամ ազգի կեցությունը, բարոյականության համակարգը և արժեքները, այսինքն՝ կերտում են աշխարհընկալումը (Hülya Adak, National Myths and Self-Narrations: Mustafa Kemal's Nutuk and Halide Edib's Memoirs and The Turkish Ordeal, *The South Atlantic Quarterly* 102, (2/3), (2003), p. 513):

¹¹ St' u Eremeev D. E., *Նշվ. աշխ.*, էջ 21: Հայոց պատմության խեղաթուրումների մասին մանրամասն տե՛ս Զուլայան Մ., *Հայոց պատմության խեղաթուրումը արդի թուրք պատմագրության մեջ*, Եր., 1995, էջ 7, 42: Սարգսյան Ե., Սահակյան Ռ., *Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ*, Եր., 1963, էջ 19:

¹² Բնագիր տեքստի այս տպագրություններից բացի, Թուրքական լեզվաբանական ընկերությունը 1963-ից սկսած հրատարակեց «Սոյլև» անունը ստացած առնվազն վեց տպագրություն (Soylev՝ ճառ): Սոյլևը օգտագործվում է՝ մատնանշելու տեքստի այն տարբերակը, որը փոփոխվում կամ թարգմանվում է «մաքուր» թուրքերենի՝ ի սկզբանե արաբերեն և պարսկերեն բառերը փոխարինելով թուրքերեն բառերով, որոնց մեծամասնությունը նոր էր ստեղծվել ընկերության կողմից: Տեքստը մատչելի դարձնելու իրենց ջանքերի ընթացքում խմբագիրներից շատերը մեծ չափով մեկնաբանություններ էին կիրառում: Այս ժամանակակից թուրքերենով հրատարակությունների առաջացման պատճառն այն էր, որ այն սերունդը, որ կարող էր կարդալ և հասկանալ Աթաթուրքի տեքստը,

մեծ քանակությամբ վավերագրերի ներառմամբ, ինչը նաև նպատակ ուներ քաղաքականացված նյութը դարձնելու պատմական բնույթի փաստաթուղթ: Այն փաստը, որ դրանք ընտրվել էին Աթաթուրքի կողմից, որպես խնդիր չէր դիտվում¹³:

Դրույթները, որոնք ճառում առաջ քաշվեցին և «հիմնավորվեցին», կանխորոշեցին թուրքական պատմագրության հետագա ընթացքը: Քարոզվում էին առաջընթացը և Արևմուտքի գիտատեխնիկական հայտնագործությունների ներմուծումը, ի հակադրություն անցյալի, երբ առաջնորդվում էին «մուսուլմանին վայել չէ ընդօրինակել անհավատին»¹⁴ սկզբունքով: Արևմուտքի հանդեպ վերաբերմունքի փոփոխությունն ուներ նաև այլ պատճառ, ինչպես նշում է Քեմալը. «Պետք էր վերացնել ֆեոդը, որը դրված էր մեր գլխին որպես տգիտության, ֆանատիզմի, առաջընթացի և քաղաքակրթության հանդեպ ատելության նշան, և դրա փոխարեն ներմուծել գլխարկ, ցույց տալու համար, որ թուրքական ազգի և քաղաքակրթության ազգերի ընտանիքի միջև տարբերություններ չկան»¹⁵:

Անդրադառնանք ճառում ներկայացված մի քանի դրույթներին:

Ներքաղաքական իրադրությունը և դրա առաջին խեղաթուրումները ճառում

Տարիները, որ նախորդում էին Ճառի ներկայացմանը 1927 թ. հոկտեմբերին, ոչ միայն արմատական բարեփոխումների, այլև քաղաքական ընդդիմության բոլոր ձևերի ճնշման շրջան էին: «Ազատագրական պատերազմի» բոլոր գլխավոր ռազմական առաջնորդները (Քյազիմ Կարաբեքիր, Ռեֆեթ Բեկե, Ալի Ֆուադ (Ջեբելայ), Ջաֆար Թայյար, Հուսեյն Ռաուֆ (Օրբեյ)) միացել էին ընդդիմությանը: Նրանք էին Քեմալին հակադրաձող միակ հավանական ուժը, ովքեր, դեմ գնալով նրա կամքին,

սկսում էր հեռանալ կյանքից: Աթաթուրքի խոսքը ուշումանյան է: Նա իր ոճը ձևավորել է 19-րդ դարի կեսի գրող և քաղաքական գործիչ Նամըք Քեմալի ձևով: Ճառի բառերի 85%-ը պարսկերենից և արաբերենից է: 1930-ական թթ. Թուրքիայում լեզվի բարեփոխումներն այնպիսի արդյունք ունեցան, որ թուրքերն այսօր չեն կարողանում կարդալ տեքստն առանց հատուկ պատրաստության (տե՛ս Zürcher E. J., *Նշվ. աշխ.*, էջ 7-8, տե՛ս նաև Кемаль Ататюрк, *Избранные речи и выступления*, “Прогресс”, М., 1966, էջ 29):

¹³ St’u Zürcher E. J., *Նշվ. աշխ.*, էջ 11. Ճառի անառարկելիությունը պայմանավորված էր նաև միևնույն ժամանակահատվածում քաղաքական ու ռազմական գործիչների կողմից գրված ինքնակենսագրությունների հրատարակման և Թուրքիայում դրանց տարածման արգելքով, քանի որ դրանք ներկայացնում էին ազատագրական շարժման այլընտրանքային պատմություն: Օրինակ, Հալիդե Էդիպ Ադըվարը «The Turkish Ordeal» աշխատության մեջ գրում է, որ ազգային շարժման օրինականությունն ապահովելու համար Քյազիմ Կարաբեքիր փաշան հանդես է եկել Էրզրումում կոնգրես հրավիրելու առաջարկով: Նրան է պատկանում նաև Քեմալին ազգային շարժման առաջնորդ նշանակելու գաղափարը (տե՛ս Halide Edib, *The Turkish Ordeal*, <http://louisville.edu/a-s/history/turks/Turkish%20Ordeal.pdf>; Hülya Adak, *Նշվ. աշխ.*, էջ 511): Որպես հակադրաձող Քեմալը ճառում ներկայացնում է Էդիպի կողմից իրեն ուղղված նամակը (տե՛ս *Путь Новой Турции*, т. I, էջ 94), որով վերջինս առաջարկում էր դիտարկել ԱՄՆ-ի մանդատի հարցը: Այդ արարքը քննարկվում է համընդհանուր պատմական իրադրությունից և դրանից բխող անհրաժեշտությունից դուրս, ներկայացվում է որպես համագործակցություն դրաի հետ, հետևաբար՝ դավաճանություն ազգային շարժմանը (տե՛ս Hülya Adak, *Նշվ. աշխ.*, էջ 519):

¹⁴ Акчам Танер, *Турецкое национальное “Я” и Армянский вопрос*, М., АО “Арио-Никс” 1995, с. 54.

¹⁵ Кемаль Мустафа, *Путь Новой Турции. Победа новой Турции (1921-1927)*, т. IV, Гос. социально-экономическое издательство, М., 1934, с. 260.

1924 թ. կազմավորել էին ընդդիմադիր Առաջադիմական Հանրապետական կուսակցությունը¹⁶: 1925 թ. փետրվարին հարավ-արևելքում բռնկված քրդական ապստամբությունը պատրվակ բերելով՝ Ժողովրդահանրապետական կուսակցությունը երկրում հայտարարեց ռազմական դրություն: Քրդական ապստամբությունը ճնշվեց, իսկ ընդդիմադիր կուսակցությունն արգելվեց¹⁷: 1926 թ. ամռանը նախագահին սպանելու դավադրության բացահայտումը օգտագործվեց Աթաթուրքի և նրա կուսակցության բոլոր հավանական մրցակիցներին ոչնչացնելու համար¹⁸: Երբ Աթաթուրքը սկսել էր գրել իր ճառը, այս դեպքերն ունեին մոտ երկու ամսվա վաղեմություն: Թուրքագետ Էրիկ Ցյուրխերը վստահ է, որ ճառը պետք է դիտել գլխավորապես որպես փորձ Աթաթուրքի կողմից արդարացնելու վեց ամիս առաջ տեղի ունեցած քաղաքական գտումները և հիմնավորելու իր առաջատար դերը¹⁹: Ցյուրխերն անդրադառնում է նաև դրա մեջ առկա խեղաթուրումներին: Նա գրում է, որ Քեմալի Ճառի առաջին միտքն է. «1919 թ. մայիսի 19-ին ես ափ իջա Սամսունում», որն Աթաթուրքը համարում է ազատագրական պայքարի սկիզբ²⁰: Այս պատկերը հեռու է իրականությունից նրանով, որ դիմադրության շարժումն ավելի քան վեց ամսական էր, երբ նա ժամանեց Փոքր Ասիա: Երկրորդ, Աթաթուրքն իր ողջ ճառի ընթացքում առաջ է քաշում այն միտքը, որ անկախության համար պայքարը մղվում էր թուրքական նոր ազգային պետություն ստեղծելու նպատակով²¹: Նա, հնարավոր է, փայփայում էր թուրքական ազգային պետության հաստատման գաղափարը, բայց սա անշուշտ այն չէր, ինչը դրդում էր շարժումը: Նման նպատակադրումը ոչ թե իրավիճակի նկարագրություն է, այլ հետագայի մեկնաբանություն: Անկախության համար պայքարը մղվում էր Օսմանյան կայսրության (կամ նրա մի մասի) անկախ գոյության համար՝ Կոստանդնուպոլսի օկուպացված լինելու պայմաններում: Երրորդ կարևոր խեղաթուրումը Հանրապետական Ժողովրդական կուսակցության և 1919-1922 թթ. շարժման միջև շարունակականության արհեստական ցուցադրումն էր: Անկախության համար պայքարն ուղղորդվում էր Ազգային մեծ ժողովի կողմից, որը բացվել էր 1920 թ. ապրիլի 20-ին և կազմված էր նախկին օսմանյան խորհրդարանականներից, որոնք կարողացել էին փախչել Կ. Պոլսից: Ազգային մեծ ժողովի երկրորդ՝ 1923 թ. ամռանը կայանալիք ընտրություններին մասնակցեցին միայն Աթաթուրքի կողմից հաստատված թեկնածուները: Այս Ժողովի ներկայացուցիչներն առաջին անգամ

¹⁶ St’u Кемаль Ататюрк, *Избранные речи и выступления*, էջ 17:

¹⁷ St’u Zürcher E. J., *Նշվ. աշխ.*, էջ 12:

¹⁸ St’u Ülgen Fatma, *Reading Mustafa Kemal Atatürk...*, էջ 384: Գործը քննելու համար վերաբացվեցին Անկախության դատարաններն Անկարայում և Իզմիրի շրջիկ դատարանը, որոնք 1925-1927 թթ. ընթացքում 130 մահվան դատավճիռ կայացրին, մոտ երեք տասնյակ երիտթուրքական հայտնի գործիչներ կախաղան հանվեցին:

¹⁹ St’u Hülya Adak, *Նշվ. աշխ.*, էջ 509-510:

²⁰ Հուլյա Ադակը գտնում է, որ դեպքերի նկարագրությունը մայիսի 19-ով սկսելը օսմանյան անցյալի հետ կապը կտրելու, այն ժխտելու և նոր թուրքական պատմագրության համար ելակետ (zero-point) սահմանելու նպատակ է հետապնդում (տե՛ս նույն տեղում, էջ 516):

²¹ St’u Zürcher E. J., *Նշվ. աշխ.*, էջ 13:

հանդիպել են 1923 թ. օգոստոսի 9-ին²², սակայն ազգային դիմադրության շարժման առաջին կոնգրեսը 1919 թ. սեպտեմբերին Սեբաստիայում հետադարձ հռչակվեց կուսակցության առաջին կոնգրեսը²³: Ինչը ևս հետագա գործողությունների օրինականացման փորձ էր:

Էրզրումի, Սվազի կոնգրեսների, ազգային շարժման պարունության մեկնարանությունները և արևելյան վիլայեթները որպես հայրենիք ներկայացնելու ուղեգիծը Ճառում

Այժմ անդրադառնանք մյուս խեղաթյուրումներին: Խոսելով Սամսունում իր ափ իջնելու և երկրի օրհասական վիճակի, բանակի զինաթափման և Անտանտի պետությունների կողմից զինադադարի²⁴ պայմանները չհարգելու մասին՝ Քեմալն այնուհետև նշում է. «Վերջապես 1919 թ. մայիսի 15-ին, չորս օր առաջ այն օրից, որը մենք ընտրել ենք որպես սույն աշխատանքի շարադրման սկզբնակետ, հունական բանակը Անտանտի երկրների համաձայնությամբ իջավ Իզմիրում: Դրանից բացի ամենուր՝ երկրում բացահայտ կամ գաղտնի գործում են քրիստոնյա փոքրամասնությունների ներկայացուցիչները, նպատակ ունենալով պահպանելու իրենց խմբային շահերը՝ նույնիսկ երկրի փլուզման հաշվին»²⁵: Ըստ Քեմալի՝ այս պայմաններում կարելի էր ընդունել միայն մեկ որոշում՝ ինքնիշխանությամբ օժտված նոր թուրքական ազգային պետության ստեղծում²⁶:

Քեմալականների գլխավոր՝ Էրզրումի և Սեբաստիայի համագումարները հակահայկական դիրքորոշում ունեին: Առհասարակ, քրիստոնյա փոքրամասնություններին որպես վտանգ ներկայացնելու ուղեգիծը Ճառում հստակ առանձնանում է²⁷: 1919 թ. հուլիսի 23-ին գումարված Էրզրումի կոնգրեսի ընթացքում Քեմալը հայտարարում է, որ թուրք ազգի իր ճակատագրի տերը դառնալու ցանկությունը վերաբերում է միայն Փոքր Ասիայի *արևելյան նահանգներին*, ինչպես նաև մեկնաբանում, որ քրիստոնյա տարրերին Թուրքիայում չպետք է տրվի ոչ մի արտոնություն, որը կարող է վնաս հասցնել երկրի քաղաքական

ինքնիշխանությանը կամ էլ խախտել սոցիալական հավասարակշռությունը²⁸: Ըստ Աթաթուրքի՝ «Արևելյան Անատոլիայի» (Արևմտյան Հայաստանի) վիլայեթները՝ Տրապիզոնը Քանիկ սանջակով, ինչպես նաև Էրզրումը, Սեբաստիան, Դիարբեքիրը, Խարբեղը, Վանը, Բիթլիսը և դրանց տարածքում գտնվող ինքնավար սանջակները ոչ մի դեպքում ոչ մի ձևով չեն կարող տարանջատվել միմյանցից և մեկ ամբողջություն են կազմում²⁹: Էրզրումի կոնգրեսի հռչակագրի մեջ նշվում է, որ թուրքերը երբեք թույլ չեն տա հույներին կամ հայերին իրենց հանդեպ գրավել այնպիսի դիրք, որը կարող է վտանգ ստեղծել իրենց գոյության համար³⁰: Այդ իսկ պատճառով թուրք ազգն իրեն իրավունք է վերապահում իր տրամադրության տակ գտնվող հնարավոր բոլոր միջոցներով դիմակայելու իրենց «հայրենիքին» վնաս հասցնելու հույների և հայերի կողմից ձեռնարկվող փորձերին: Նույնիսկ Օսմանյան կայսրության գոյությանը սպառնացող վտանգի պայմաններում ամրագրվում էր, որ գերիստիքը «Արևելյան Անատոլիայի վիլայեթներ»-ի ամբողջականության և դրանց՝ օսմանյան հպատակության ապահովումն է³¹: Հայտարարվում էր, որ եթե սուլթանական կառավարությունը Անտանտի ճնշման ներքո ստիպված լինի կնքել որևէ դիվանագիտական փաստաթուղթ, որը կկտրի «Արևելյան Անատոլիայի» վիլայեթները օսմանյան իշխանությունից, այդ նահանգներում անմիջապես կհռչակվի ժամանակավոր կառավարություն, որի խնդիրը կլինի կապ ապահովել օսմանյան սուլթանի գահի հետ և խոչընդոտել հույներին կամ հայերին ոտնձգություն կատարել իրենց «հայրենիքի» հանդեպ³²: Հատուկ որոշմամբ ստեղծվում է «Արևելյան Անատոլիայի իրավունքների պաշտպանության կոմիտե»-ն: Դրա նպատակն էր, համախմբելով ազգային ուժերը, պաշտպանել ազգի սուվերենությունը, անկախությունը, օսմանյան հայրենիքի անձեռնմխելիությունը և սուլթան-խալիֆի սրբազան իշխանությունը: Բոլոր մուսուլման հայրենակիցները հայտարարվում էին կոմիտեի բնական անդամներ³³:

1919 թ. սեպտեմբերի 4-ին բացվում է Սվազի կոնգրեսը, որի կանոնադրության հիմնական երկու կետերն էին՝ Մուդրոսի զինադադարով թուրքական սահմաններում թողնված տարածքների ամբողջականությունը և երկրի պաշտպանությունը

²² Տե՛ս նույն տեղում, էջ 14:

²³ Տե՛ս նույն տեղում, էջ 15:

²⁴ Խոսքը վերաբերում է Անտանտի երկրների և Թուրքիայի միջև 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարին, որով պատերազմական գործողությունները դադարում էին մինչև հաշտության պայմանագրի կնքումը (տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբ.՝ Կիրակոսյան Ջ. Ս., Եր., 1972, էջ 538-539):

²⁵ Кемаль Мустафа, *Путь Новой Турции; Первые шаги национально-освободительного движения 1919*, т. I, Литиздат, М., 1929, с. 6.

²⁶ Նույն տեղում, էջ 15:

²⁷ Նկատելի է նաև սպառնալիք: Պատասխանելով ռազմական նախարար Շևքեթ փաշայի՝ 1919 թ. հունիսի 2-ի ծածկագիր հեռագրին՝ Քեմալը նշում է, որ Սեբաստիայում ոչ մի միջադեպ չի եղել, որը կարող էր տեղի հայերին և նոր ժամանած փախստականներին հուզում պատճառել, սակայն չկա որևէ հրամանատար, քաղաքացիական պաշտոնյա կամ ինչ-որ կառավարություն, որն իր վրա պատասխանատվություն կվերցնի միջադեպերի համար, որոնք կարող են ծագել հետագայում (տե՛ս Кемаль Мустафа, *Путь Новой Турции...*, h. I, էջ 27):

²⁸ Տե՛ս Путь Новой Турции, h. I, էջ 63-64:

²⁹ Թաներ Աքչամը գրում է, որ Հայերի ցեղասպանությունն իրականացվել էր ոչ թե վերացական գաղափարախոսության համար, այլ բավականին շոշափելի շահերի: Իրական շահ ցեղասպանությունից ստանում էր պետությունը, որը հնարավորություն ստացավ թուրքացնելու Փոքր Ասիան, ինչը հատկապես Բալկանյան պատերազմների արդյունքում տարածքային կորուստներից և Մեծ Թուրանի ստեղծման հույների ջախջախումից հետո դարձավ կառավարության կենտրոնական քաղաքականությունը: Հասունացավ նրա ռազմավարական նշանակության գիտակցումը: Բալկաններից Փոքր Ասիայի արևելք փախստականների հոսքի և տեղի հայ ու հույն բնակչության ազգային գիտակցության ուժեղացմամբ կառավարության մոտ ծագեց «թուրքական Անատոլիան ստեղծելու գաղափարը (տե՛ս Акчам Танер, *նշվ. աշխ.*, էջ 111): Ճառում, ըստ Հույս Ադալի, սուրբ տարածքի մասին առասպելը միավորվում է ազգ-քնտանիքի մասին առասպելի հետ՝ «Անատոլիա»-ն թուրքերի հայրենիք ներկայացնելու նպատակով (տե՛ս Hülya Adak, *նշվ. աշխ.*, էջ 517):

³⁰ Տե՛ս *Путь Новой Турции*, h. I, ծնթ. 32, էջ 374:

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 375:

³² Տե՛ս նույն տեղում:

³³ Տե՛ս *Путь Новой Турции*, h. I, ծնթ. 32, էջ 377, Ülgen Fatma, Reading Mustafa Kemal Atatürk..., էջ 385:

ցանկացած ներխուժումից, հատկապես նրա տարածքում հունական կամ հայկական պետություն ստեղծելու ջանքերից³⁴: Կոնգրեսի չորրորդ օրը քննարկվեցին Էրզրումի կոնգրեսի կանոնադրության հարցերը: Ըստ Քեմալի՝ կատարվեցին որոշակի փոփոխություններ, մասնավորապես «Արևելյան Աստուղիայի իրավունքների պաշտպանության կոմիտե»-ի անվանումը վերափոխվեց «Աստուղիայի և Ռումելիայի^{35*} իրավունքների պաշտպանության կոմիտե»՝ անփոփոխ թողնելով մուսուլմանների կոմիտեի բնական անդամ լինելու մասին ձևակերպումը³⁶: Հիրավի, Էրզրումի կոնգրեսի ընթացքում քննարկվում էին միայն բուն «Աստուղիայի հարցերը», այնինչ Սվազի կոնգրեսի ընթացքում հետաքրքրությունների և քննարկումների շրջանակ ներառվեց նաև Ռումելիան: Ավաժի ապացույցն է հաջորդ կետը. «Ներկայացուցչական կոմիտեն ներկայացնում է ողջ Արևելյան Աստուղիան» ձևակերպումը փոխարինվեց «Ներկայացուցչական կոմիտեն ներկայացնում է ողջ երկիրը» արտահայտությամբ: Սվազում «այդ նահանգներ» արտահայտությունը փոխարինվեց ավելի լայն ձևակերպմամբ՝ «մեր երկրի որևէ մասի հանդեպ»³⁷: Էրզրումի կոնգրեսում Քեմալն անդրադառնում է Աստանտի գործողությունների նկատմամբ միջազգային հանրության բացասական վերաբերմունքին, բայց արդեն Սեբաստիայի կոնգրեսում նախընտրում է չանդրադառնալ այդ հարցին՝ «սխալ չհասկացվելու» պատճառով: Զգուշության այդ դրսևորումը հեշտ է բացատրվում: Այդ ժամանակ թուրքերին մեղադրում էին փոքրամասնությունների հանդեպ վատ վերաբերմունքի և հայերին տեղահանելու ու կոտորելու մեջ: Սուր անկյունները հարթեցնելու նպատակով անհրաժեշտ էր նաև ժխտել կապը երիտթուրքերի հետ՝ հաշվի առնելով Արևմուտքի բացասական վերաբերմունքը վերջիններիս հանդեպ³⁸: Սակայն մեղադրանքներ էին հնչում նույնիսկ երկրի ներսում՝ հարուցելով Քեմալի զայրույթը: Մեծ վեճի ֆերիդ փաշան, նախարարներ Ադիլ բեյը և Սուլեյման Շևֆիկ փաշան հայտարարել էին, որ ազգային շարժումը բոլշևիկյան շարժում է, և այն իրականում իշխանության մնալու իթթիհադականների հուսահատ ճիգն է, որը ֆինանսավորվում է նրանց կողմից³⁹: Բոլոր առաջնորդները՝

ներառյալ Մուստաֆա Քեմալը կա՛մ Իթթիհադի անդամ էին, կա՛մ կապ ունեին դրա հետ⁴⁰:

1919 թ. օգոստոսի 21-ին 12-րդ և 20-րդ բանակային կորպուսների հրամանատարների ծածկագիր հեռագրին Քեմալը պատասխանում է, որ Կ. Պոլսում տարբեր կուսակցությունների կողմից ընդունված որոշումները, հատկապես արևելյան վիլայեթները հայերին զիջելը, Ներկայացուցչական կոմիտեի մոտ դառն զգացումներ են առաջացրել: Քեմալը հայտարարում է, որ անհնար է զիջել Հայաստանին հողի որևէ պատահիկ, որը գերազանցապես բնակեցված է թուրքերով և քրդերով: Նա նախատում է հրամանատարներին՝ ասելով, որ նրանց պատկերացումն առ այն, որ Երզնկայի և Սեբաստիայի միջև մեծ քանակությամբ հայեր են ապրում, իրերի դրության լիակատար անտեղյակություն է: Ըստ նրա՝ նույնիսկ մինչ պատերազմը այդ շրջանների բնակչությունը կազմում էին թուրքեր ու «գազա» անունով քրդեր⁴¹ և շատ քիչ քանակությամբ հայեր, որոնք պատերազմից հետո նույնիսկ այդ քանակությամբ չեն մնացել⁴²: Կ. Պոլսում որոշ պատգամավորներ ահագանգում էին Քեմալի՝ փոքրամասնությունների հետ հաշվեհարդար տեսնելու մասին, ինչպես նաև սուլթանին նամակներ էին գրում ինքնակոչ Քեմալի մասին, որը, իբր գործելով ժողովրդի անունից, կոծկում է իր չարաշահումները⁴³: Քեմալը, իր հերթին, առաջ էր քաշում ազգային շարժման անհաջողություններում հայերին մեղադրելու քաղաքականությունը՝ հայտարարելով Հայոց պատրիարքարանում ինչ-որ գաղտնի հավաքների⁴⁴ և այն մասին, թե ինչպես են հունական և հայկական պատրիարքները Աստանտի

առաջադիմություն» կուսակցության անդամների կողմից, որոնք Հայոց ցեղասպանությունն իրականացնողներն էին: Հանրապետության հիմնադիր հայերը այս կամ այն կերպ ներառված էին Հայոց ցեղասպանության մեջ: Այդ մարդիկ նաև թուրք ժողովրդի ազգային հերոսներն են: Ընդունելով ցեղասպանությունը՝ թուրքերը պետք է ընդունեն, որ իրենց հիմնադիր հայերը կա՛մ մարդասպաններ են, կա՛մ գողեր, կա՛մ երկուսն էլ (Քլարկի համալսարանում Աքչամի ընթերցած դասախոսությունից, տեքստը տե՛ս Akcam T., *Turkey and the Armenian Ghost*, <http://www.armenianweekly.com/2012/12/15/akcam-turkey-and-the-armenian-ghost/>):

⁴⁰ Տե՛ս Akcam Taner, *նշվ. աշխ.*, էջ 340: Ազգային շարժում կազմակերպելու հաստատություններից մեկը Կարակոյն էր (The Provincial Guard): Այս գաղտնի կազմակերպությունը դրվել էր Թավաթի և Էնվերի անմիջական հրամանատարության տակ՝ երիտթուրքերի գաղտնի գործունեությունը շարունակելու նպատակով: Դրա պարտականությունն էր նաև Հայոց ցեղասպանությունն իրագործած նախկին երիտթուրքերի փախուստն ապահովելը: Կազմակերպության հայտնի անդամներն էին Կարա Քեմալը, Կարա Վասիլը, իսկ ազգային շարժման երկրորդ բարձրաստիճան ղեկավար Ռաուֆ Օրբեյը կապ էր պահպանում նրանց հետ (նույն տեղում, էջ 347): Քեմալը որոշ վերապահումով էր մոտենում Կարակոյնի՝ Էնվեր փաշայի ղեկավարության պատճառով, սակայն Քեմալի աջակից գեներալ Ալի Ֆուադը իր հուշերում հաստատում է, որ նա սերտ կապերի մեջ էր Կարակոյնի հետ 1918 թ. նոյեմբերից 1919 թ. մայիսին Ստամբուլում գտնվելու ժամանակ (նույն տեղում, էջ 349): Մուստաֆա Քեմալի՝ Իթթիհադի պատկանելու և դրա հետ կապ պաշտպանելու մասին տե՛ս նաև Erik-Jan Zürcher, *In the name of the father, the teacher, and the hero: the Atatürk personality cult in Turkey*, <http://www.hum.leiden.edu/lia/organisation/turkish/zurcherj.html>):

⁴¹ Տե՛ս Ulgen Fatma, *Reading Mustafa Kemal Atatürk...*, էջ 387:

⁴² Տե՛ս *Путь Новой Турции*, h. I, էջ 101, Fatma Ulgen, *Reading Mustafa Kemal Atatürk...*, էջ 387:

⁴³ Кемаль Мустафа, *Путь Новой Турции; Подготовка Ангорской базы 1919-1920*, т. II, Гос. социально-экономическое изд-во, М., 1932 с. 63.

⁴⁴ Նույն տեղում, էջ 53:

³⁴ Տե՛ս *Путь Новой Турции*, h. I, ծնթ. 65, էջ 414:

^{35*} Եվրոպական Թուրքիան:

³⁶ Տե՛ս *Путь Новой Турции*, h. I, ծնթ. 65, էջ 416:

³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 86-87:

³⁸ Տե՛ս Akcam Taner, *նշվ. աշխ.*, էջ 134: Հատկանշական է այն հանգամանքը, որ Քեմալն իր դերը ծանրակշիռ դարձնելու նպատակով հետագայում՝ 1922 թ., «Վաքիթ» (Ժամանակ) թերթին տված հարցազրույցում իրեն ներկայացրել է որպես երիտթուրքերի սպունկյան կենտրոնի հիմնադիրներից մեկը: Հետագայում Իսմայիլ Ջամիլադը, որի խմբակցությունում էր գտնվում նաև Քեմալը, պատասխանելով երիտթուրք, ֆինանսների նախարար Ջավիդի նամակին, պարզաբանում է, որ սպունկյան կենտրոնի ստեղծման պահին Քեմալն այնտեղ չէր, և նույնիսկ նրա շարքերում ընդգրկվելուց հետո (29 հոկտեմբերի, 1907 թ.) իր կողմից ստեղծված որևէ կենտրոնի մասին չի հիշատակել: Ավելին, Քեմալը նույնիսկ չգիտեր, որ երիտթուրքերի շարքերում են իր մտերիմ ընկերներից մի քանիսը (տե՛ս Авакян А., *Геноцид армян: механизмы принятия и исполнения решений*, Ер., МИГА, 2013, ծնթ. 5, էջ 13-14):

³⁹ Տե՛ս *Путь Новой Турции*, h. I, էջ 182: Թաներ Աքչամը պնդում է, որ կառավարության շարունակականությունը կայրությունից հանրապետություն բացատրում է Հայոց ցեղասպանության ժխտողականությունը: Թուրքիայի Հանրապետությունը գրեթե ստեղծվել է «Միություն և

երկրներին դիմել ազգային կազմակերպությունների վերաբերյալ թշնամական հայտարարություններով⁴⁵: Սակայն 1920 թ. մարտի 16-ին (դաշնակիցների կողմից Կ. Պոլիսը գրավելու օրը) Մուստաֆա Քեմալը Իրավունքների պաշտպանության բոլոր կոմիտեներին արագ հեռագիր է ուղարկում, որով զգուշացնում է մարդասիրական վերաբերմունք դրսևորել երկրի քրիստոնյա բնակչության նկատմամբ⁴⁶: Սա ձևական հայտարարություն էր, որը նպատակ ուներ հաշտության պայմանագրի ստորագրման նախօրյակին Թուրքիային դրական կողմով ներկայացնելու միջազգային հանրությանը, սակայն իրականում «անկախության պատերազմ» ասվածը վարվում էր ոչ թե արտասահմանյան օկուպացիայի, այլ այդ նույն «պաշտպանյալ» ազգային փոքրամասնությունների դեմ: Թուրքական ազատագրական պատերազմի շարժիչ ուժ հանդիսացող Իրավունքների պաշտպանության կոմիտեները ստեղծվում էին այն շրջաններում, որտեղ հայերի և հույների կողմից իրական վտանգ էր զգացվում: Այդ կոմիտեի Տրապիզոնի մասնաճյուղի որոշման առաջին կետը նախատեսում էր «զինված պայքար ընդդեմ ազգային փոքրամասնությունների»⁴⁷: Դա է ապացուցում նաև Մուստաֆա Քեմալի հայտարարությունը 1919 թ. հուլիսի 8-ի՝ բանակից հրաժարականի դիմումի մեջ. «Իմ պաշտոնական զինվորական դիրքն ինձ խանգարում է մասնակցել իմ հայրենիքի ամբողջականության պահպանման համար իմ ժողովրդի պայքարին և թույլ չտալ, որպեսզի այն դառնա հայերի ու հույների խարդավանքների գոհ»⁴⁸: Հայտարարվում էր, որ ազգի խնդիրն էր ոչ միայն Կ. Պոլսի, այլև Ջնյոտնիայի, Ադանայի և «մեր հայրենիքի» բոլոր շրջանների սուվերենության ապահովումը, և ներկայացուցչական կոմիտեն զենքը ցած չի դնի, մինչև չհասնի այդ նպատակի իրագործմանը⁴⁹: Այդ պատերազմի հակաիմպերիալիստական չլինելու փաստը ապացուցվում է նաև նրանով, որ Աթաթուրքը բազմիցս զգուշացրել էր իր համախոհներին չգործել անգլիացիների դեմ⁵⁰: Ազատագրական պատերազմի ողջ ընթացքում հաշտության պայմանագրի պայմանների կատարմանը հետևելու նպատակով Փոքր Ասիայում գտնվող Անտանտի ստորաբաժանումների դեմ որևէ կրակոց չէր արձակվել: Պատերազմի ընթացքում առաջին կրակոցն արձակվել է 1918 թ. դեկտեմբերի 19-ին Դյորթ Յոլում՝ ֆրանսիական բանակի համազգեստ

կրող հայ զինվորների վրա⁵¹: Խնդիրը հարթվեց անգլիացիների միջամտությամբ: Քեմալը գրում է Ճառում, որ որևէ բռնություն հայերի հանդեպ չի իրականացվել, և եթե իրենց ու ֆրանսիացիների կողմից զինված հայերի միջև տեղի են ունեցել որոշ գործողություններ, ապա դրանց համար պատասխանատվությունն ընկնում է հայ ազգայնականների և նրանց հրահրողների վրա: Այսպիսով, թուրքերին ազատագրական պայքարի մղեցին հունական ներխուժման վտանգը և հայկական պետության ստեղծումը: Զուգահեռաբար պատվիրակություններ էին ուղարկվում եվրոպական մայրաքաղաքներ՝ ապացուցելու համար, որ իրենց կողմից վերահսկվող տարածքներում մեծամասնությունը կազմում էին թուրքեր: Նպատակը հստակ էր. համոզել մեծ տերություններին հրաժարվել հայերի, հույների և թուրքերի միջև Փոքր Ասիայի բաժանման ծրագրից⁵²: Վախը հայերի և հույների՝ Արևմուտքի հետ դաշնակցելու նկատմամբ գոյություն ուներ միշտ:

Միջազգային պարավորությունների և Հայկական հարցի գնահատումը Ճառում

1920 թ. օգոստոսին մի կողմից դաշնակիցների և պարտված Թուրքիայի միջև ստորագրվում է Սևրի պայմանագիրը, որով վերջինս այլ պարտավորությունների հետ մեկտեղ հանձն է առնում ճանաչել Հայաստանը՝ որպես անկախ պետություն⁵³: Պայմանագիրը վտանգի տակ էր դնում հանցագործ Թուրքիայի անկախ գոյությունը և ամրագրում դրա բաժանումը⁵⁴: Այս պայմանագիրը թուրք ազգայնականների մտածողության մեջ հիմք դրեց «Սևրի սինդրոմին»⁵⁵: Սևրի պայմանագրի պարտադրված լինելու և, հետևաբար, անօրինականության ընկալումը հստակ երևում է նաև Քեմալի՝ պատգամավորների պալատի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Ֆրանկլին Բույոնի հետ բանակցությունից, որը 1921 թ. հունիսի 9-ին ֆրանսիական կառավարության կողմից ոչ պաշտոնական կերպով ուղարկվել էր և ընդունվել Աթաթուրքի կողմից⁵⁶: Բույոնի ազգային շարժման մասին հարցերին Քեմալը պատասխանում է, որ նախկին Օսմանյան կայսրությունը վերափոխվել է սոր թուրքական պետության, որը կկարողանա հասնել միջազգային ասպարեզում իր իրավունքների ճանաչմանը: Սևրի պայմանագիրը, նշում է նա Ճառում, մահվան դատավճիռ է թուրք ազգի համար. «Մենք պահանջում ենք, որպեսզի շուրթերը, որոնք հավակնում են լինել բարեկամական

⁴⁵ Նույն տեղում, էջ 70:

⁴⁶ Տե՛ս *Путь Новой Турции*, հ. III, էջ 49:

⁴⁷ Տե՛ս Акчам Танер, *նշվ. աշխ.*, էջ 133:

⁴⁸ Նույն տեղում, էջ 134:

⁴⁹ Տե՛ս *Путь Новой Турции*, հ. III, էջ 14, 18:

⁵⁰ Ըստ Աբչամի՝ պաշտպանության կոմիտեների նպատակը Անտանտի երկրներին «Անատոլիայի» թուրքականությունը համոզելն էր: Ուղղակի դիմադրությունը տերություններին սկսվեց միայն Փոքր Ասիան բաժանելու և ցեղասպանության համար թուրքերին պատժելու վերջիններիս նպատակադրության պայմաններում: Դրա վաղ ապացույցն է նաև Սվազի կոնգրեսում նախկին Օսմանյան կայսրության տարածքի նկատմամբ օտարերկրյա մանդատի հաստատման հարցի քննարկումը՝ դրա ամբողջականությունը պահպանելու սկզբունքով (տե՛ս Акчам Танер, էջ 358, նաև *Путь Новой Турции*, հ. I., էջ 111):

⁵¹ Տե՛ս Акчам Танер, *նշվ. աշխ.*, էջ 383:

⁵² Տե՛ս Акчам Танер, *նշվ. աշխ.*, էջ 135:

⁵³ *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)...*, էջ 676-677:

⁵⁴ Տե՛ս *История дипломатии*, т. III, под ред. Громыко А. А., Политиздат, М., 1965, էջ 213:

⁵⁵ Киреев Н. Г., *История Турции XX век*, Крафт+ ИВ РАН, М., 2007, с. 132. «Սևրի սինդրոմի» մասին մանրամասն տե՛ս Հովսեփյան Լ., «Սևրի սինդրոմը» որպես Թուրքիայի ազգային անվտանգության դիվանագիտական քաղաքականության, *«21-րդ դար»*, թիվ 4(38), 2011 թ., 37 էջ, Hovsepian L., *The Fears of Turkey: The Sèvres Syndrome*, Yerevan, 2012, p. 9:

⁵⁶ Տե՛ս *Путь Новой Турции*, հ. IV, էջ 571, 42: Այդ բանակցությունների և դրանց բովանդակության մասին տե՛ս Киреев Н. Г., *նշվ. աշխ.*, էջ 148:

մեր նկատմամբ, նույնիսկ դրա անունը չպետք է արտաբերեն: Մենք չենք կարող անկեղծ հարաբերություններ հաստատել այն երկրների հետ, որոնք իրենց մտքից չեն հանել Սևրի պայմանագիրը: Մեր աչքերում այդ պայմանագիրը գոյություն չունի»⁵⁷: Քեմալը հայտնում է, որ իրենց նախորդների կողմից կատարված սխալների պատճառով է թուրք ազգը ենթարկվել բազմաթիվ սահմանափակումների: Այսպիսով, Սևրի պայմանագիրն էլ էր մնում օսմանյան անցյալում, որը համառորեն ժխտվում էր. «Օսմանյան կայսրությունը, որի ժառանգորդն ենք մենք համարվում, աշխարհի աչքի առջև չունեն ոչ մի արժեք, ոչ մի ձեռքբերում, չէր վայելում հարգանք: Նա համարվում էր միջազգային իրավունքի սահմաններից դուրս գտնվող պետություն և, կարծես թե, դրված էր մյուս պետությունների խնամակալության ու հոգաբարձության տակ: Մենք մեղավոր չէինք անցյալի բացթողումների և սխալների համար, և իրականում մեզնից չէ, որ պետք էր պահանջել վճարել այն հաշիվները, որոնք կուտակվել էին հարյուրամյակների ընթացքում»⁵⁸: «Հայկական խնդիրը» նույնպես տեղափոխվել էր օսմանյան անցյալ⁵⁹, և հավաքական բռնությունը փոքրամասնությունների դեմ հանրապետական շրջանի սկզբին և ընթացքում ամբողջապես վերացվել էր թուրքական հանրապետական պատմությունից: Ի հավելումն՝ թուրք ազգը կազմող հայրենասերները, որոնց Մուստաֆա Քեմալը դիմում է տեքստում, բացառապես մուսուլմաններ են, հատկապես մուսուլման թուրքեր, որոնք համախմբվել են անկախության համար պայքարում՝ պաշտպանելու իրենց հայրենիքը⁶⁰:

1922 թ. նոյեմբերի 21-ին գումարվեց Լոզանի կոնֆերանսը, որն ամրագրեց թուրքական հաղթանակները և ըստ Քեմալի՝ վերջ դրեց այն կանխամտածված դավադրությանը, որը դարերի ընթացքում նյութում էին թուրք ազգի դեմ և հույս ունեին կյանքի կոչել Սևրի պայմանագրով⁶¹:

1923 թ. ապրիլի 8-ին Քեմալը հրապարակեց իր ծրագրի ինը դրոյթները⁶², որոնք

⁵⁷ *Путь Новой Турции*, т. IV, с. 43, 45.

⁵⁸ Նույն տեղում, էջ 114: Ամենայն օսմանյանը ժխտելու ուղեգիծը նկատվում է նաև Զիյա Գյոքալփի մոտ. «Ինչո՞ւ է նման հակասություն այս երկրում գոյություն ունեցող երկու ուղղության՝ թուրքականության և օսմանականության միջև: Ինչո՞ւ է թուրքական ուղու վրա գտնվող ամեն ինչն այդքան գեղեցիկ և օսմանյան ուղու վրայինն այդքան տգեղ» (*Ziya Gökalp, Turkish Nationalism and Western Civilization*, Columbia University Press, New York, 1959, p. 107):

⁵⁹ Ֆաթմա Ուլգենը նշում է, որ Ճառում հայերին և Հայկական հարցին անդադարձը պետք է դիտարկել որպես հիմնաքար պատումի համար, որը սահմանում է, թե ինչն է անհրաժեշտ հիշել, իսկ ինչը՝ մոռանալ հայերի մասին նոր թուրքական հանրապետությունում՝ դրա նոր պատմագրության շրջանակներում (տե՛ս Ulgun Fatma, *Reading Mustafa Kemal Atatürk...*, էջ 385):

⁶⁰ Տե՛ս Fatma Müge Göçek, *նշվ. աշխ.*, էջ 43: Պաշտպանության կազմակերպումը և այնուհետև՝ հարձակումը թուրքական կողմի մոտ վատ չէր ստացվում: Դրա հետևանքով առաջին հաղթանակը գրանցվեց Ինոնյուի մոտ՝ 1921 թ. ապրիլի 1-ին, երկրորդը՝ Սաքարիայի մոտ՝ նույն թվականի սեպտեմբերի 13-ին, իսկ 1922 թ. օգոստոսին, անցնելով հակահարձակման, Քեմալի գլխավորած բանակը սեպտեմբերին մտավ Զմյուռնիա, կրակի տվեց քաղաքը և կազմակերպեց տեղի հույն և հայ բնակչության գաղթ՝ ունեցվածքի բռնագրավումով (տե՛ս Киреев Н. Г., *նշվ. աշխ.*, էջ 146-147):

⁶¹ Տե՛ս *Путь Новой Турции*, h. IV, էջ 149:

⁶² Տե՛ս նույն տեղում, էջ 127:

դարձան Հանրապետական Ժողովրդական կուսակցության սկզբունքները⁶³: Այս ամենի հիմքի վրա 1923 թ. հոկտեմբերի 29-ին ընդունվում է հանրապետություն հռչակելու մասին որոշումը⁶⁴: Սակայն ինչպես նշում է «Թանին» թերթի խմբագիրը, Ժողովրդական կուսակցության ծրագիրը մի բան էր, իսկ ուղին, որով նրանք գնում էին, մեկ այլ բան⁶⁵:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Մուստաֆա Քեմալի Ճառն իրականում քաղաքական գործչի ընդգրկվելն է պատմագրության մեջ՝ արդարացնելու իրեն, ամրապնդելու իր դիրքերը և օրինականացնելու իշխանության գլուխ մնալը: Բայց քաղաքական գործչի անձի ծանրակշիռ լինելու հանգամանքով պայմանավորված տեքստի բովանդակությունն ընդունվել է թուրք հասարակության կողմից որպես անառարկելի ճշմարտություն: Հատկապես դրա մեջ ամրագրված որոշ դրոյթներ, այն է՝ հայերի եկվորության, թուրքերի տեղաբնիկության, հայկական նահանգների թուրքական լինելու, հայերի և կայսրության բոլոր փոքրամասնությունների դավաճանության, Արևմուտքի հետ վերջիններիս համագործակցության, Հայոց ցեղասպանության մեջ թուրքերի անմեղության վարկածները միավորվելով ստեղծեցին «թուրք ժողովրդի դեմ համաշխարհային դավադրության» տեսությունը, որը նրանց ստիպեց ընդունել իրենց թուրք ինքնությունը, միավորվել արտաքին վտանգի դեմ նոր Թուրքիայի Հանրապետության մեջ, ժխտել հայկականը և հայերին: Պատմական իրականությանը հակադարձող՝ պատմություն-առասպելով պայմանավորված այդ խեղաթյուրումները թուրքական պատմագրության մեջ գերիշխում են մինչ օրս և ուղղորդում թուրքերի պատմաստեղծման գործընթացը մինչև 21-րդ դար, սակայն ոգին և սկզբունքները մնացել են անփոփոխ:

Մուստաֆա Քեմալի 1927 թ. ճառը՝ որպես թուրքական պատմագրության կառուցման հիմնաքար

Ռեզինա Գալուսյան

Ամփոփում

Պատմությունը և պատմական հիշողությունը կարևոր են ազգաստեղծման նախագծերի համար: Անցյալի հիշողությամբ է հավաքականությունը ձեռք բերում ինքնություն: Թուրքիայի Հանրապետության դեպքում այդ ինքնության կառուցումն ակնհայտ արհեստական բնույթ էր կրում: Այս քաղաքականության արդյունքում զարգացավ արհեստական թուրքական պատմագրությունը, որի հիմնաքարը դարձավ Մուստաֆա Քեմալի (հետագայում՝ Աթաթյուրք) Ճառը: Դրոյթները, որոնք

⁶³ Տե՛ս նույն տեղում, ծնթ. 26, էջ 321:

⁶⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 191:

⁶⁵ 1924 թ. նոյեմբերի 4-ի «Թանինի» «Բանակ և քաղաքականություն» հոդվածում խմբագիրը գրում է, որ կառավարման ձևը համարվում է հանրապետական, սակայն այն, ինչը պետք էր փոփոխել, ոգին և սկզբունքներն էին, որոնք, սակայն, մնացին անփոփոխ (տե՛ս նույն տեղում, էջ 245):

հիմնավորվեցին Ճառում, ինչպես օրինակ՝ Արևմտյան Հայաստանում թուրքերի տեղաբնիկության, հայկական նահանգների թուրքական լինելու, հայերի և կայսրության բոլոր փոքրամասնությունների դավաճանության, Արևմուտքի հետ վերջիններիս համագործակցության, Հայոց ցեղասպանության մեջ թուրքերի անմեղության վարկածները միավորվելով ստեղծեցին «թուրք ժողովրդի դեմ համաշխարհային դավադրության» տեսությունը, որը նրանց ստիպեց ընդունել իրենց թուրք ինքնությունը, միավորվել արտաքին վտանգի դեմ նոր Թուրքիայի Հանրապետության մեջ, ժխտել ամենայն հայկականը և հայերին:

Բանալի բառեր՝ ինքնության կերտում, հիշողության ձևավորում, պատմագրություն, Ճառ, Արևմտյան Հայաստան:

Mustafa Kemal's Speech of 1927 as a Cornerstone in Constructing the Turkish Historiography

Regina Galustyan

Summary

The history and historical memory are crucial for nation building projects. With the memory of the past collectiveness obtains identity. In the case of Republic of Turkey identity formation was factitious. During this policy fabulous Turkish historiography was developed the cornerstone of which became a Speech delivered by Mustafa Kemal Pasha (later Atatürk). Theses underpinned in it, such as indegenouty of Turks in the Western Armenia, the Turkishness of Armenian regions, treachery of Armenians and of all the minorities in the Empire, their collaboration with the West, the version of the Turks' innocence in the Armenian Genocide has united to form the theory of "the world conspiracy against Turkish people", which made them accept their Turkish identity, consolidate against foreign danger in a new Turkish Republic, to deny Armenians and anything Armenian.

Keywords: identity construction, memory formation, historiography, Speech, Western Armenia.

Речь Мустафы Кемаля 1927 г. как основа для конструирования турецкой историографии

Регина Галустян

Резюме

История и историческая память имеют решающее значение для формирования наций. С помощью памяти о прошлом коллективность приобретает идентичность. В случае Турецкой Республики формирование идентичности было искусственным.

При проведении соответствующей политики была сконструирована мифическая турецкая историография, краеугольным камнем которой стала речь Мустафы Кемаля (позже Ататюрка). Утверждаемые в ней тезисы, такие как: турки - коренное население в Западной Армении, армянские области принадлежат Турции, предательство армян и других меньшинств империи, а также их сотрудничество с Западом, версия невинности турок в Геноциде армян - все это объединилось в теорию «мирового заговора против турецкого народа», которая вынудила турок осознать свою национальную идентичность и объединиться против иностранной опасности в новой турецкой республике.

Ключевые слова: конструирование идентичности, формирование памяти, историография, Речь, Западная Армения.

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՋՈՇԵՐԻ ԹՎԻ ՀԱՐՑԵՐԻ ԵՎԱՏՄԱԲԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇ ԵՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ռորերդ Թաթոյան

Մեծ եղեռնի նախօրյակին Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի թվաքանակի, ինչպես նաև Եղեռնին զոհ գնացած հայերի թվի հարցերը յուրահատուկ տեղ են գրավում Հայոց ցեղասպանության փաստը ժխտող ուսումնասիրողների նենգավիճակների շարքում: Այսպես, Թուրքիայի արտգործնախարարության կայք այցելելու դեպքում այնտեղ կարող ենք գտնել «Յեղասպանության մասին հայկական պնդումները. խնդիր և փաստեր» գրությունը, որտեղ որպես փաստ համար մեկ նշվում է հետևյալը. «Ժողովրդագրական ուսումնասիրությունները փաստում են, որ Առաջին աշխարհամարտի նախօրյակին Օսմանյան կայսրությունում բնակվում էր 1.5 միլիոնից պակաս հայ. այսպիսով պնդումներն առ այն, որ ավելի քան 1.5 միլիոն Արևելյան Անատոլիայի հայ է մահացել, կեղծ են»¹: Այս «փաստի» գիտական հիմնավորման բնագավառում աչքի են ընկել բազմաթիվ ուսումնասիրողներ, որոնցից կարելի է նշել Էսաթ Ուրասի², Սթենֆորդ Շոուի³, Քյամուրան Գյուրունի⁴, Քեմալ Կարպատի⁵, Ջասթին ՄաքՔարթի⁶ և այլոց անունները: Ժխտողական ուղղությանը պատկանող ուսումնասիրողներին հատուկ են արևմտահայության թվաքանակի վերաբերյալ 1878-1914 թթ. օսմանյան կառավարության վիճակագրական տվյալների (հենց դրանք են հաղորդում «1.5 միլիոնից պակաս» թիվը) անվերապահ ու ոչ քննադատաբար ընդունումը և այդ տվյալներին հակասող, հիմնականում հայկական աղբյուրներից ծագող վիճակագրության մերժումը (համաձայն Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1914 թ. տվյալների՝ Օսմանյան Թուրքիայում շուրջ երկու միլիոն հայ էր բնակվում)⁷:

¹ The Armenian Allegation of Genocide: The issue and the facts (<http://www.mfa.gov.tr/the-armenian-allegation-of-genocide-the-issue-and-the-facts.en.mfa>, վերցված է՝ 07.10.2014).

² Uras Esat, *Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi*, Ankara: Yeni Matbaa, 1950, անգլերեն թարգմանությունը՝ Uras Esat, *The Armenians in History and the Armenian Question*, Ankara, Documentary Publications, 1988.

³ Shaw Stanford J. and Shaw Ezel Kural, *History of the Ottoman Empire and Modern Turkey*, vol.2, N.Y., Cambridge University Press, 1977; Shaw Stanford J., *The Ottoman Census System and Population, 1831-1914*, IJMES, 9, (1978), էջ 325-338.

⁴ Gürün Kamuran, *The Armenian File: The Myth of Innocence Exposed*, Nicosia and London: K. Rustem and Brother and Weidenfeld and Nicolson, 1985.

⁵ Karpat Kemal H., *Ottoman population 1830-1914: Demographic and Social Characteristics*, Wisconsin, The University of Wisconsin Press, 1985.

⁶ McCarthy Justin, *Muslims and Minorities. The Population of Ottoman Anatolia and the End of the Empire*, N.Y. University Press, 1983.

⁷ Համաձայն 1919 թ. Փարիզի հաշտության կոնֆերանսին Հայկական միացյալ պատվիրակության կողմից ներկայացված հուշագրի՝ 1914 թ. Օսմանյան կայսրությունում բնակվում էր 2,026,000 հայ, որից Թուրքահայաստանում (Տրապիզոնը և Կիլիկիան ներառյալ)՝ 1,403,000, Ասիական Թուրքիայի այլ մասերում՝ 440,000, Պոլսում և Եվրոպական Թուրքիայում՝ 183,000 (տե՛ս Հայկական հարցը

Դրա հետ մեկտեղ, վերջին շրջանում որոշ թուրք ուսումնասիրողներ ավելի տարբերակված, անկողմնակալ և հավասարակշռված մոտեցում են որդեգրել խնդրոտ առարկա հարցի նկատմամբ: Նրանցից է մասնավորապես Ֆուաթ Դյունդարն իր «Թվերի ոճիրը. վիճակագրության դերը Հայկական հարցում (1878-1918)» մենագրությամբ, որը լույս է տեսել 2010 թ. անգլերեն լեզվով⁸:

Ներածության (էջ 1-10) սկզբում հեղինակը հայտարարում է, որ ուսումնասիրության հիմնական թեզն է հիմնավորել, որ վիճակագրությունը կարևոր դեր է խաղացել Հայկական հարցում՝ ինչպես հարցի միջազգային ասպարեզում հայտնվելու, այնպես էլ «վերջնական հանգուցալուծման» մեջ:

Աշխատանքի առաջին գլխում, որը վերնագրված է «Դիվանագիտություն և վիճակագրություն. Հայկական հարցի ի հայտ գալը (1878-1913)» (էջ 11- 65), հեղինակը ներկայացնում է Արևմտյան Հայաստանի բնակչության վիճակագրության դերը նշված ժամանակաշրջանի Հայկական հարցի հետ կապված դիվանագիտական գործընթացներում: Այդ առումով նա անդրադառնում է Հայկական հարցի գործընթացի շրջանակներում մեծ տերություններին վիճակագրություններ ներկայացրած երկու մարմինների՝ օսմանյան կառավարության և Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական տվյալների արժանահավատության խնդրին: Ինչպես Դյունդարն արդարացիորեն նշում է. «...ի հակառակ որոշ ուսումնասիրողների, այդ թվում՝ Քեմալ Կարպատի և Ջասթին ՄաքՔարթիի պնդումների, հայ բնակչության վերաբերյալ օսմանյան վիճակագրական տվյալները ոչ ամբողջությամբ են վստահելի»: Հեղինակը փաստում է, որ օսմանյան իշխանությունները մարդահամարներ էին անցկացնում ոչ միայն զինվորագրվողների թիվը և/կամ հարկերի չափը որոշելու, ինչպես պնդում են Ք. Կարպատն ու Ջ. ՄաքՔարթին, այլ նաև տեղական ինքնակառավարման մարմիններում մահմեդականների և ոչ մահմեդականների ներկայացուցչության մասնաբաժինը սահմանելու նպատակով: Այդ պատճառով օսմանյան կառավարությունը ձգտում էր վերահսկել վիճակագրական տվյալներն այն տեղերում, որտեղ ոչ մահմեդականները (հայերը) մեծամասնություն էին կազմում: Ուսումնասիրողը կարևորություն է տալիս այն հանգամանքին, որ, ի տարբերություն Ք. Կարպատի և Ջ. ՄաքՔարթիի պնդումների, օսմանյան իշխանությունները հաշվել և գրանցել են մահմեդականներին՝ նաև ըստ իրենց էթնիկական ծագման հատկանիշի՝ թուրքեր, քրդեր, չերքեզներ և այլն: Վերոնշյալը թույլ է տալիս ուսումնասիրողին եզրահանգելու, որ օսմանյան իշխանությունները միջամտել են ինչպես վիճակագրական տվյալների հավաքման, այնպես էլ դրանց համակարգման գործընթացին՝ համապատասխան իրենց սեփական քաղաքական շահերի (էջ 3):

Միևնույն ժամանակ Դյունդարը փորձում է վիճարկել Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական տվյալների արժանահավատությունը. ըստ հեղինակի՝

հաշտության կոնֆերանսի առաջ, Երևան, 1919, էջ 32):

⁸ St' u Dünder Fuat, *Crime of Numbers. The Role of Statistics in the Armenian Question*, The State University of New Jersey-Rutgers, Transactions Publishers, 2010, xiv + 238 pp.

«հայերի կողմից ներկայացվող տվյալները ևս երբեմն հակասական էին» (էջ 2) և «ուռճացված»: Մասնավորապես, հեղինակը հակասություններ է տեսնում Գրիգոր Զոհրապի՝ 1913 թ. հրատարակած վիճակագրության⁹ և Հայոց պատրիարքարանի տվյալների միջև՝ նշելով, որ թեև Զոհրապը պնդում է, որ տվյալները Հայոց պատրիարքարանին են, սակայն դրանք պատրիարքարանի տվյալների համեմատ ուռճացված են: Իր այս կարծիքը հեղինակը հիմնավորում է լոկ այն փաստարկով, որ իրեն չի հաջողվել գտնել որևէ փաստաթուղթ, որը կարող է վկայել Զոհրապի տվյալների վավերականության մասին (էջ 3): Իրականում Գրիգոր Զոհրապը 1913 թ. հրատարակած իր գրքում ընդամենը զետեղել էր Հայոց պատրիարքարանի կողմից լիազորված մարմնի՝ Ապահովության հանձնաժողովի՝ 1912 թ. վերջերին կազմած վիճակագրական աղյուսակները, որոնք ներկայացվել էին մեծ տեղությունների դեսպանների ուշադրությանը 1913 թ. սկզբներին Հայկական հարցի վերաբացման կապակցությամբ¹⁰:

Ընդհանրապես Դյունդարն աղոտ պատկերացում ունի Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից 1878-1914 թթ. անցկացված մարդահամարների և դրանց արդյունքում հավաքված վիճակագրական տվյալների մասին: Այսպես նա սխալմամբ համարում է, որ Գրիգոր Զոհրապի՝ 1913 թ. հրատարակած տվյալները¹¹ և սիյուռքահայ ուսումնասիրող Ռայմոն Գևորգյանի կողմից 1992 թ. կազմված վիճակագրությունը¹² Հայոց պատրիարքարանի նույն՝ 1912 թ. կազմած վիճակագրության երկու տարբերակներ են, և այդ առումով հակասություններ տեսնում դրանց մեջ (էջ 145), մինչդեռ Ռայմոն Գևորգյանի վիճակագրությունը հիմնված է Հայոց պատրիարքարանի՝ 1913-1914 թթ. կազմակերպած մարդահամարի ցուցակների ամփոփման վրա¹³:

⁹ Տվյալները զետեղված են Գ. Զոհրապի «Հայկական հարցը փաստաթղթերի լույսի տակ» ֆրանսերեն լեզվով հրատարակված գրքում (Léart Marcel, *La question Arménienne a la lumière des documents*, Paris, Challamel, 1913):

¹⁰ 1912-14 թթ. Հայկական հարցի վերաբացման շրջանում Կ. Պոլսի պատրիարքարանին կից ստեղծված Ապահովության հանձնաժողովի աշխատանքներին Գրիգոր Զոհրապի մասնակցության մասին տե՛ս մասնավորապես Շարուրյան, Ա. Ս., Գրիգոր Զոհրապի օրագրությունները հայկական բարենորոգումների (1912-1914) վերաբերյալ, «Պարմես-բանասիրական հանդես», № 4, էջ. 202-228:

¹¹ Ըստ Գ. Զոհրապի՝ 1912 թ. Օսմանյան կայսրությունում բնակվում էր 2,100,000 հայ (տե՛ս Léart Marcel, *La question Arménienne a la lumière des documents...*, էջ 62):

¹² Համաձայն Ռայմոն Գևորգյանի տվյալների՝ Օսմանյան կայսրության հայ բնակչության թիվը Առաջին աշխարհամարտի նախօրյակին 1,915,560 է (տե՛ս Kévorkian Raymond H., Paboudjian Paul B., *Les Arméniens dans l'Empire ottoman à la veille du génocide*, Paris, Arhis, 1992, էջ 57-60):

¹³ Մեր կողմից կատարված ուսումնասիրության մեջ, որի արդյունքներն ամփոփված են ատենախոսական աշխատանքում, ցույց է տրվել, որ 1878-1914 թթ. ընթացքում Պատրիարքարանի կողմից Արևմտյան Հայաստանի ամբողջությամբ ընդգրկող հինգ մարդահամարներ և հաշվառումներ են կազմակերպվել. 1-2) 1878-80թթ. և 1880-81 թթ.՝ պատրիարք Ներսես Վարժապետյանի օրոք, 3) 1902թ.՝ Մաղաքիա Օրմանյանի պատրիարքության շրջանում, 4) 1912թ.՝ Հայկական հարցի վերաբացման կապակցությամբ և 5) 1913-14թթ.՝ հայկական բարեփոխումների նախագծի շուրջ ընթացող զարգացումներին զուգահեռ: Առանձնակի տեղ է զբաղեցնում 1878թ. Բեռլինի վեհաժողովին ներկայացված Արևմտյան Հայաստանի բարեփոխումների հայկական նախագծին կից վիճակագրական աղյուսակը, որի հեղինակն է հայոց պատվիրակության անդամ Ստեփան Փափագյանը: Նա հիմնել է Արևմտյան Հայաստանի բնակչության թվաքանակի իր հաշվարկը օսմանյան

Երկրորդ՝ «Պատերազմ, կոտորած և վիճակագրություն (1914-1918). Հայկական հարցի «վերջնական հանգուցալուծումը», գլխում (էջ 67-140) ներկայացվում է հայերի տեղահանության և բնաջնջման գործընթացը: Դյունդարը չի ժխտում օսմանահպատակ հայերի հետ տեղի ունեցածի ծրագրված բնույթը, սակայն նա դիտարկում է 1915-1917 թթ. դեպքերը որպես «ժողովրդագրական գործողություն», երիտթուրքերի «էթնիկ վերակազմակերպում» (ethnic engineering) քաղաքականության մի մաս: Ըստ հետազոտողի՝ երիտթուրքերի նպատակն էր ոչ թե արևմտահայության բնաջնջումը, այլ ամբողջ բնակչության համեմատ հայերի տեսակարար կշռի նվազեցումը: Նշենք, որ հեղինակը կարծես թե խուսափում է «ցեղասպանություն» բառեզրը օգտագործելուց¹⁴, նրա համար տեղի ունեցածը «1915-1917 թթ. կոտորածներ են» (էջ 5):

Դյունդարը գտնում է, որ երիտթուրքերի նպատակն էր ամբողջապես տեղահանել 1914 թ. ռուս-թուրքական բարեփոխումների ծրագիրն ընդգրկող տարածքի (Արևմտյան Հայաստանի վեց նահանգներ և Տրապիզոնի նահանգը) հայ բնակչությանը, մինչև 5%-ի իջեցնել Անատոլիայի (Փոքր Ասիայի) նահանգների, մինչև 2%-ի՝ Հալեպի նահանգի, և մինչև 10%-ի՝ այլ տարածքների հայ բնակչության տեսակարար կշիռը (էջ 2): Ըստ հեղինակի՝ Հայկական հարցի հանգուցալուծման երիտթուրքական քաղաքականությունն անցել է երեք փուլերով՝ 1) հայ «հեղափոխականների» ընդվզման «պատճառների» և «ոգու» ոչնչացումը 2) հայ ժողովրդի անհատական և ինստիտուցիոնալ ներկայացուցչական միջոցների ոչնչացումը և, վերջապես, 3) հայ բնակչության կիսաանապատային տարածքներ տեղահանելը և այնտեղ նրանց թվաքանակի նվազեցումն այն մակարդակի, որ հայերը «վիճակագրական տեսանկյունից» վտանգ չներկայացնեն (էջ 68):

Իրականում այն, որ Հայոց ցեղասպանության կազմակերպիչներն իրենց հակահայկական քաղաքականության մեջ պետք է առաջնորդվեին այլ՝ ավելի լուրջ նկատառումներով, քան հայ բնակչության թվաքանակի լոկ նվազեցումը մինչև 2,5, 5 կամ 10%-ը, կարող ենք տեսնել, երբ մենք թեկուզ թեթև հայացք ենք նետում 1914 թվականին վերաբերող օսմանյան վիճակագրական տվյալների վրա: Ըստ այդ պաշտոնական տվյալների, որոնք պետք է դրված լինեին երիտթուրքերի «էթնիկական ճարտարագիտություն» քաղաքականության հիմքում, արդեն իսկ նախքան տեղահանությունը Փոքր Ասիայի մի քանի նահանգներում հայ բնակչությունը ցածր էր կամ չէր գերազանցում 5%-ը (տե՛ս Աղյուսակ 1): Այս հանգամանքը, սակայն, չի խանգարել երիտթուրքական իշխանություններին տվյալ տարածքների հայ բնակչությանը ևս ենթարկել տեղահանության ու կոտորածների:

վիճակագրական տարբեր աղբյուրների վրա:

¹⁴ Ամբողջ շարադրանքի մեջ այն օգտագործված է լոկ մեկ անգամ, այն էլ ծանոթագրությունում (էջ 7):

Աղյուսակ 1.¹⁵

Վարչական միավոր	Հայեր ¹⁶	Ընդհանուր բնակչություն	Հայ բնակչության տեսակարար կշիռը, %
Ադրիանապոլիս	19,773	631,094	3,1
Անկարա	51,576	953,817	5,4
Կաստամունի	8,959	767,227	1,1
Կոնիա	12,971	789,308	1,6
Էսքիշեհիր	8,592	152,726	5,6
Նիզդե	4,935	291,117	1,7
Բիդա (Կալե-ի Սուլթանիե)	2,474	165,815	1,5

Իհարկե չի կարելի ժխտել, որ երիտթուրքերը մեծ տեղ էին տալիս վիճակագրական տվյալներին արևմտահայության բնաջնջման գործողությունները կազմակերպելու գործում, սակայն վիճակագրությունը լոկ միջոց էր, գործիք՝ ցեղասպանության ընթացքը կառավարելու համար և ոչ երբեք նպատակ, ինչպես փորձում է ներկայացնել Ֆուաթ Դյունդարը: Բացի դրանից, լոկ «ժողովրդագրական ճարտարագիտության» քաղաքականության տրամաբանությունից ելնելով հնարավոր չէ բացատրել ո՛չ արևմտահայ հասարակական-քաղաքական և մշակութային ընտրանու ձերբակալությունները, աքսորն ու բնաջնջումը և ո՛չ էլ հայ զինվորականության ոչնչացումը, որոնք Հայոց ցեղասպանության գործողությունների մասն են կազմում:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին արևմտահայության թվաքանակի և Մեծ եղեռնին զոհ գնացած հայերի թվի հաշվարկներին է նվիրված Դյունդարի աշխատության երրորդ գլուխը, որը կրում է «Հանցագործության թիվը. հաշվելով հայկական մահերը» վերնագիրը (էջ 141-157): Նախքան տեղահանությունը հայ բնակչության թվաքանակը որոշելու հարցում ուսումնասիրողը սեփական որևէ հաշվարկ չի կատարում, այլ ընդունում է մի թիվ, որն առկա է վերջերս հայտնաբերված և հրատարակված թուրքական մի զեկուցագրում, որը կազմվել էր Հայոց ցեղասպանության առանցքային կազմակերպիչներից մեկի՝ Թալեաթի համար 1917 թվականին և պահվել նրա արխիվում: Զեկուցագրում ներկայացվում է հայ բնակչության թվաքանակն ըստ Օսմանյան կայսրության վարչական միավորների, նախքան Հայոց ցեղասպանությունը՝ 1914-ին և հետո՝ 1917-ի դրությամբ: Զեկուցագիրը կազմած թուրք պաշտոնյան, մեկնաբանելով օսմանյան վիճակագրության տվյալը, համաձայն որի 1914-ին արևմտահայության թիվը 1,251,785 շունչ էր (առաքելադավան և կաթոլիկ հայեր), ծանոթագրության կարգով նշում է, որ այդ տվյալն իրականից ցածր է,

քանի որ ոչ բոլոր հայերն են հաշվառվել, և իրական թիվը պետք է լինի 1,500,000-ի սահմաններում: Ահա այս տվյալն է Ֆուաթ Դյունդարը ընդունում որպես մի թիվ, որը «վերջ է դնում հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ վեճերին» (էջ 149): Ի հիմնավորում իր այս պնդման՝ ուսումնասիրողը բերում է երկու փաստարկ. 1) տվյալը կազմվել է մի քաղաքական կազմակերպության կողմից, որը ցանկանում էր վերջնականապես հանգուցալուծել Հայկական հարցը և այդ նպատակով բոլոր ջանքերն էր գործադրում հայ բնակչության ճշգրիտ թվաքանակը պարզելու համար և 2) այս տվյալը պատրաստվել էր ոչ թե հրապարակման նպատակով, այլ կազմակերպության ներսում ներքին օգտագործման համար (նույն տեղում):

Նախ, եթե անգամ ընդունենք Հայկական հարցի հանգուցալուծման և հայ բնակչության ճշգրիտ թիվը պարզելու միջև հեղինակի կողմից փաստվող կապը, ինչը տրամաբանական առումով այնքան էլ ակնհայտ չէ, նույնիսկ այդ դեպքում անհասկանալի է, թե ինչպես 1,5 միլիոն թիվը կարելի է համարել «ճշգրիտ»: Ընդհակառակը, տրամաբանությունը հուշում է, որ եթե 1917-ին կազմված թուրքական զեկուցագրի հեղինակը իր առջև նպատակ դրած լիներ ճշգրիտ թիվ պարզելու, ապա նա չէր սահմանափակվի ծանոթագրության կարգով տողատակում նշված մոտավոր կլորացված թիվ ներկայացնելով, այլ կփորձեր ավելի հիմնավոր և կոնկրետ հաշվարկներ կատարել, նամանավանդ որ, ինչպես արդեն նշեցինք, 1914 թ. օսմանյան վիճակագրական տվյալներով հաղորդվող օսմանյան հայերի թիվը բավականին որոշակի է՝ 1,251,785 շունչ:

Այսպիսով, ուսումնասիրողի կարծիքը, որ Թալեաթի համար պատրաստված այս զեկուցագրում զետեղված հաշվարկները վերջ են դնում Պոլսի Հայոց պատրիարքարանի այն պնդումներին, որ Մեծ եղեռնի նախօրյակին Օսմանյան Թուրքիայում շուրջ 2 միլիոն հայ է բնակվել, հիմնագուրկ է: Թալեաթի զեկուցագրում առկա տվյալն իրականում միայն մեկ բան է ապացուցում, այն է՝ իրենք իսկ օսմանյան պաշտոնյաները չէին վստահում արևմտահայության թվաքանակի վերաբերյալ օսմանյան պաշտոնական վիճակագրության հավաստիությանը, գտնում էին, որ տվյալը շտկման կարիք ունի: Մինչև նույն ժամանակ օսմանյան տվյալները շտկելու նպատակով զեկուցագրում առաջարկվող շուրջ 20%-ով ավելացումը պետք է գնահատել որպես ոչ բավարար. նախքան տեղահանությունը և կոտորածները լուսավորչական և կաթոլիկ հայ բնակչության թիվը 1,500,000 հաշվելը թերհաշվառում է և իրականությունից ցածր է¹⁷:

«Պարզելով» Առաջին աշխարհամարտի նախօրյակին օսմանահպատակ հայերի թվաքանակը՝ 1,5 միլիոն, հեղինակն անցնում է իր առջև դրված հաջորդ նպատակին՝ որոշել Մեծ եղեռնին զոհ գնացած հայերի թիվը: Դյունդարը նշում է, որ դա կարելի է անել հետևյալ մեթոդի օգտագործման միջոցով՝ հանելով 1918 թ. վերապրածների

¹⁵ 1914 թ. օսմանյան վիճակագրական տվյալները վերցրել ենք Քեմալ Կարպատի «Օսմանյան բնակչությունը 1830-1914 թթ. ժողովրդագրական և սոցիալական բնութագրիչներ» գրքից (տե՛ս Karpat Kemal H., *նշվ. աշխ.*, էջ 188-189):

¹⁶ Լուսավորչական և կաթոլիկ:

¹⁷ Նշենք, որ արևմտահայության թվաքանակի վերաբերյալ Թալեաթի համար պատրաստված տվյալներին անդրադարձել է նաև Թաներ Աքչամը: Թուրք անվանի պատմաբանը, սակայն, հայտարարում է, որ նպատակ չունի բանավիճելու հայ բնակչության թվաքանակի և ցեղասպանության զոհերի թվի հարցի շուրջ, այլ օսմանյան տվյալներն օգտագործում է երիտթուրքերի ժողովրդագրական քաղաքականության և ցեղասպանության միջև կապը լուսաբանելու համար (տե՛ս Akcam Taner, *The Young Turks' crime against humanity: the Armenian genocide and ethnic cleansing in the Ottoman Empire*, Princeton University Press, 2012, էջ 255):

թիվը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրության հայ բնակչության թվաքանակից: Վերապրածների թիվը պարզելու համար Դյուն-դարը դասակարգում է նրանց երեք խմբերի՝ հայեր, որոնց «թույլ էր տվել մնալ Անատոլիայի տարածքում», տեղահանված հայեր և այլ երկրների տարածքում ապաստան գտած փախստական հայեր: Առաջին խմբի մեջ հեղինակը հաշվում է 281,000 շունչ, այդ թվում՝ Կոստանդնուպոլսի, Զմյուռնիայի (Ադրին), Ադրիանապոլսի (Էդիրնե) և Կոնիայի հայեր, կաթոլիկների, բողոքականների, արիեստավորների և զինվորականների ընտանիքներ (շուրջ 75,000), ինչպես նաև շուրջ 50,000 իսլամացված հայեր՝ հիմնականում կանայք և երեխաներ: Երկրորդ խումբը կազմող՝ Միրիայի և Միջագետքի արքայականներում վերապրած հայերի թիվը ուսումնասիրողը հաշվում է շուրջ 300,000: Երրորդ՝ փախստականների խմբի թվաքանակը, ըստ հեղինակի, 255,000 է: Հանելով իր կողմից արդեն իսկ որոշված 1,5 միլիոն թվից՝ 1918 թ. դրությամբ վերապրածների թիվը՝ 836,000՝ հեղինակը հանգում է այն եզրակացության, որ Մեծ եղեռնին զոհ է գնացել 664,000 հայ (էջ 151):

Ինքնին պարզ է, որ զոհերի այս թիվն իրականության հետ որևէ կապ չունի, քանի որ հիմնավորապես սխալ է մուտքային տվյալը՝ հայ բնակչությունը նախքան Առաջին աշխարհամարտը 1,5 միլիոն շունչ հաշվելը: Դրա հետ մեկտեղ լուրջ հարցեր է առաջացնում հեղինակի մոտեցումը, որը պատերազմի նախօրյակին հայ բնակչության թվաքանակի որոշման համար իր հաշվարկների հիմքում դնում է օսմանյան տվյալները, սակայն վերապրածների թվաքանակը հաշվարկելու համար լայնորեն օգտվում է հայկական և արևմտյան տվյալներից: Այսպես, իրականությանը մոտ է Կովկասում ապաստանած հայ փախստականների թիվը շուրջ 255,000 հաշվելը, սակայն հեղինակը, գուցե, տեղյակ չէ, որ այդ թվի կեսից ավելին (շուրջ 150,000 շունչ) կազմում են Վանի նահանգից գաղթած հայերը¹⁸: Այս

¹⁸ Տե՛ս Կիրակոսյան Զ. Ս., *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը*, Երևան, «Հայաստան» հրատ., էջ 43:

Համաձայն Կովկասի հայոց բարեգործական ընկերության լիազոր Ալեքսանդր Շարաֆյանի տվյալների՝ 1916 թ. հունվարի դրությամբ Ռուսական կայսրության տարածքում ապաստանած արևմտահայ փախստականների թիվը 229,293 էր, այդ թվում Բասենի բնակիչներ՝ 18,910 հոգի, Բիթլիսի, Մշո, Բայազետի գավառի և Վանի նահանգի բնակիչներ՝ շուրջ 170,000, Վանի նահանգի արևելյան և Պարսկաստանի արևմտյան շրջանների բնակիչներ՝ 18,055 հոգի, ինչպես նաև Պարսկաստանում ապաստանած Վանի նահանգի գաղթականներ՝ մոտ 10,000 և 3,500 որբ: Նույն աղբյուրում նաև նշվում էր, որ 1915 թ. հուլիսին Վան-Վասպուրականի հայ բնակչության գաղթի ժամանակ մահացել էր մոտ 20,000 հոգի (տե՛ս «Հայ գաղթականներ. հունվար 1916 թ.» հոդվածը «Համբավաբեր» շաբաթաթերթում («Համբավաբեր», հասարակական-գրական շաբաթաթերթ Կովկասի Հայոց բարեգործական ընկերության, 3 հունվարի 1916 թ., թիվ 2):

1919 թ. հայկական պատվիրակության կողմից Փարիզի հաշտության կոնֆերանսին ներկայացրած հուշագրում որպես հանրահայտ իրողություն նշվում էր, որ Վանի վիլայեթի հայերի թիվը, որոնք ապաստան էին գտել Ռուսաստանում, 220,000-ից ավելի էր (տե՛ս *Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ*, Թիֆլիս, տպ. «Աշխատատեղ», 1919, էջ 17):

Հայ ուսումնասիրող Գ. Բաղայանը, հիմք ընդունելով 1917 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին անցկացված գաղթականների հաշվառման տվյալները, համաձայն որի Վանի նահանգից դուրս եկած հայ ընտանիքների թիվն էր 24,127, և վանեցի հայերի տան մեծության միջին գործակիցը հաշվելով 8,8 շունչ, գտնում է, որ 1914 թ. Վանի նահանգում ապրում էր 210-212 հազ. հայ (տե՛ս Բաղայան Գ. Մ., *Արևմտահայության թվաքանակի ճշգրտման ժողովրդագրական որոշ սկզբունքներ*

վավերական թիվը և ս մեկ անգամ ապացուցում է օսմանյան պաշտոնական վիճակագրության՝ իրականության հետ որևէ աղերս չունենալու բնույթը, քանի որ, ըստ օսմանյան տվյալների, 1914 թ. Վանի նահանգի հայ բնակչության թվաքանակն էր 67,792 շունչ¹⁹:

Ուսումնասիրությունը եզրափակող «Ռոշ դիտարկումներ» վերտառությամբ գլուխը (էջ 157-172) ըստ էության վերջաբանի դեր է կատարում: Դյունդարը ավարտում է իր ուսումնասիրությունը հետևյալ տողերով. «Անգամ այսօր վիճակագրությունը անխուսափելիորեն կենտրոնական տեղ է զբաղեցնում Հայոց ցեղասպանության և Հայկական հարցի բոլոր ասպեկտների շուրջ ցանկացած բանավեճում» (էջ 171): Անշուշտ, հեղինակի պնդումը, որ Թալեաթի համար պատրաստված զեկուցագրի տվյալները վերջակետ են դնում արևմտահայության թվաքանակի վերաբերյալ վեճերին, հիմնագուրկ է, խիստ վիճելի են նաև հեղինակի բազմաթիվ այլ պնդումներ, սակայն, այնուամենայնիվ, գուցե հենց դա է «Թվերի ոճիրը» գրքի արժեքը: Որպես բանավեճի հրավիրող աշխատանք՝ այն կարող է նպաստել Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության թվաքանակի և Մեծ եղեռնին զոհ գնացած հայերի թվի ճշգրտման բարդ և խճճված խնդիրների ուսումնասիրությանը, ինչպես նաև 1878 թ. Բեռլինի կոնգրեսից հետո Օսմանյան պետության հակահայկական քաղաքականության՝ իր վիճակագրական և վարչաժողովրդագրական դրսևորումներում լուսաբանման ուղղված նոր աշխատանքների ի հայտ գալուն:

Արևմտահայության թվաքանակի և Հայոց ցեղասպանության զոհերի թվի հարցերի նկատմամբ թուրքական պատմագրության որոշ նոր մոտեցումների մասին

Ռոբերտ Թաթոյան

Ամփոփում

Հոդվածում թուրք ուսումնասիրող Ֆուաթ Դյունդարի «Թվերի ոճիրը. վիճակագրության դերը Հայկական հարցում (1878-1918)» մենագրության օրինակով (լույս է տեսել 2010-ին անգլերեն լեզվով) ներկայացվում և վերլուծության են ենթարկվում Հայոց ցեղասպանության նախօրյակին Օսմանյան կայսրության հայ բնակչության թվաքանակի և Եղեռնին զոհ գնացած հայերի թվի ճշգրտման հարցերի ուսումնասիրության մեջ ի հայտ եկած որոշ նոր միտումները:

(Էրզրումի և Վանի վիլայեթների օրինակով), «*Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հետևանքները*» հայագիտական միջազգային համաժողովի (Երևան, 2003, 15-20 սեպտեմբեր) զեկուցումների դրույթներ, Երևան, 2003, էջ 140): Տե՛ս նաև Թաթոյան Ռ.Ա., *Վիճակագրական տվյալները Վանի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ 1878-1914 թթ.* (աղբյուրների համադրության և վերլուծության փորձ), «*Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր*», №7, Եր., ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատ., 2003, էջ 65-79:

¹⁹ Եթե անգամ հաշվի առնենք օսմանյան վիճակագրական տվյալները ճշտելու նպատակով Դյունդարի կողմից կիրառվող գործակիցը (20%), ապա ստացված թիվը՝ 81,600, մինևսուն է, գուրկ է վավերական լինելուց:

Իր գրքում Դյունդարը, ի թիվս այլ թեմաների, անդրադառնում է վերոնշյալ հարցերին՝ մասնավորապես առանձին գլուխ նվիրելով Մեծ եղեռնի զոհերի քանակի հաշվարկներին: Այդ հաշվարկների արդյունքում Դյունդարը, հիմք ընդունելով Հայոց ցեղասպանության հիմնական կազմակերպիչներից մեկի՝ Թալեաթի վերջերս հայտնաբերված և հրատարակված նոթատետրում առկա վիճակագրական տվյալները, գալիս է այն եզրակացության, որ 1915 թ. նախօրյակին Օսմանյան կայսրությունում բնակվել է մոտ 1,5 միլիոն հայ՝ մի թիվ, որն էապես ցածր է իրականից:

Այնուհետև Դյունդարը, Մեծ եղեռնի նախօրյակին Օսմանյան կայսրության հայ բնակչության՝ իր որոշած 1,5 միլիոն թվից հանելով 1918 թ. հայ վերապրածների՝ իր հաշվարկած թիվը (836,000 շունչ), հանգում է այն եզրակացության, որ Մեծ եղեռնին զոհ է գնացել մոտ 664,000 հայ, թիվ, որը ևս չի համապատասխանում իրականությանը և թերհաշվառում է:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանության ժխտում, վիճակագրություն, թուրքական պատմագրություն:

Analysis of Some New Approaches in the Turkish Historiography Concerning the Questions of Numbers of Western Armenian Population and the Armenian Genocide Victims

Robert Tatoyan

Summary

The article presents and analyzes some of the new tendencies in the Turkish historiography aimed at lessening the number of victims of the Armenian Genocide in the Ottoman Empire on the example of the monograph of the Turkish historian Fuat Dündar "Crime of Numbers: The Role of Statistics in the Armenian Question" (published in English in 2010).

In his book Dündar among other topics touches upon the issues of the Armenian population of the Ottoman Empire on the eve of the Armenian Genocide and the number of victims of this terrible crime, devoting a separate chapter to its estimates. Dündar bases his calculations on the statistical figures found in recently published notebook of Talaat, one of the main organizers of the Armenian Genocide, and comes to the conclusion that on the eve of 1915 about 1.5 million Armenians lived in the Ottoman Empire. This number is miscalculation and is significantly below the reality.

Then Dündar deducts from the number of the Armenian population of the Ottoman Empire on the eve of the genocide, estimated by him as of 1.5 million, the number of survived Armenians in 1918, which he defines as 836,000, coming to the conclusion that as a result of the Armenian Genocide about 664,000 were killed – the number, which is also underestimate.

Keywords: Armenian genocide denial, statistics, Turkish historiography.

О некоторых новых подходах турецкой историографии к вопросам численности западноармянского населения и числа жертв Геноцида армян

Роберт Татоян

Резюме

На примере монографии турецкого исследователя Фуада Дюндара «Преступление чисел: роль статистики в Армянском вопросе» (опубликована на английском языке в 2010 г.), представлены и проанализированы некоторые новые тенденции в турецкой историографии по преуменьшению численности жертв Геноцида армян в Османской империи.

Среди прочих тем Дюндар затрагивает вопросы численности армянского населения Османской империи накануне Геноцида армян и числа жертв этого страшного преступления, посвящая этому отдельную главу. В своих вычислениях Дюндар основывается на недавно опубликованных статистических данных из записной книжки одного из главных организаторов Геноцида армян Талаата, приходя к выводу, что накануне 1915 г. в Османской империи проживало около 1,5 млн армян – число, которое существенно ниже действительного.

Затем Дюндар отнимает из определенного им числа армянского населения Османской империи накануне геноцида (1,5 млн) число выживших в 1918 г. армян, которое он определяет в 836 000 человек и приходит к выводу, что в результате Геноцида армян погибло около 664 000 человек – число, которое также существенно ниже реальной картины.

Ключевые слова: отрицание Геноцида армян, статистика, турецкая историография.

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԻ
ՀԻԵՐԱՐԽԻԱՅԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

Մուրեն Մանուկյան

Յուրաքանչյուր ցեղասպանության ուսումնասիրության համար հիմնարար խնդիրներից են ոճրագործության կազմակերպիչների և իրականացնողների շրջանակի ուրվագծումը, ինչպես նաև զանգվածային սպանությունների ընթացքում նրանց դերակատարման վերլուծությունը:

Յեղասպանությունն առաջին հերթին քաղաքական հանցագործություն է, միաժամանակ այն ծնվում է մարդկանց ուղեղներում և իրականացվում մարդկանց ձեռքերով: Հանցագործության իրականացման մեխանիզմները հասկանալու համար անհրաժեշտություն է առաջանում քննության ենթարկելու ոճրագործների ամբողջ հիերարխիկ համակարգը՝ որոշում կայացնողներից մինչև շարքային մարդասպաններ և աջակիցներ:

Այս խնդիրը որոշակիորեն դուրս է մնացել Հայոց ցեղասպանության ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների ուշադրության կենտրոնից՝ հայտնվելով ընկալման և մտածողության հայտնի ծուղակում, երբ ստեղծվում է տպավորություն, որ կարիք չկա հետազոտել մի բան, որ այդքան բացահայտ է: Իհարկե, տարբեր գիտնականներ այս կամ այն չափով անդրադարձել են ոճրագործների բացահայտման խնդրին, սակայն ամբողջ համակարգն իր ուղղահայաց և հորիզոնական բազմաթիվ կապերով, որոշումների կայացման պահից մինչև սպանության անմիջական իրականացումը չի դարձել ուսումնասիրության թեմա:

«Յեղասպանություն» հանրագիտարանը սահմանում է «(ոճրագործ)» («Perpetrator») եզրն իբրև մարդ, ով «նախաձեռնում, նպաստում կամ իրականացնում է ցեղասպանության գործողությունները կամ մարդկության դեմ հանցագործությունները»¹: Այս երեք գործողությունը՝ **նախաձեռնել, նպաստել և իրականացնել**, որոշակիորեն բնութագրում են այն աստիճանակարգը, որ գործում է ցանկացած ցեղասպանության իրականացման ընթացքում:

Յեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված կոնվենցիայի 4-րդ հոդվածում նույնպես արձանագրված է հանցավոր գործողությունների մասնակիցների շրջանակը. «Յեղասպանություն կամ [նույն կոնվենցիայի – Ս.Մ.] 3-րդ հոդվածում թվարկված որևէ արարք կատարած անձինք ենթակա են պատժի՝ անկախ այն բանից, նրանք սահմանադրությամբ պատասխանատու ղեկավարներ են, թե պաշտոնատար կամ մասնավոր անձինք»²: 1919-1920 թթ. երիտթուրքերի նկատմամբ կազմակերպված դատավարությունների ընթացքում հանցագործները հիերարխիայի նույնանման դասակարգման էին ենթարկվում: Առանձնացված դատավարություններ ընթացան կուսակցության և պետության ղեկավարների, «Հատուկ կազմակերպության» անդամ-

ների, ինչպես նաև տեղական պաշտոնյաների և կուսակցական պատասխանատու քարտուղարների նկատմամբ³:

1915 թ. մայիսի 24-ի Անտանտի պետությունների համատեղ հռչակագիրը նույնպես անդրադառնում է այն խնդրին՝ առանձնացնելով անհատական պատասխանատվության հարցը և ընդգծելով Օսմանյան կայսրության պաշտոնյաների մասնակցությունը հայ բնակչության կոտորածներին՝ հաստատելով, որ Օսմանյան կայսրության անդամներն ու այդ ջարդերի մասնակիցներն անձնական պատասխանատվություն են կրելու⁴:

Այս հոդվածում փորձ է արվում քննելու Հայոց ցեղասպանության իրականացման ընթացք ներգրավված անձանց շրջանակը և աստիճանակարգը՝ պայմանականորեն բաժանելով ոճրագործներին մի քանի մակարդակի՝ վերին՝ որոշում կայացնողներ, միջին՝ տեղական կազմակերպիչներ և գործընթաց ներգրավված կազմակերպություններ ու կառույցներ, ինչպես նաև ստորին՝ հասարակ բնակչություն, և ուրվագծելով յուրաքանչյուր շրջանակի նշանակությունը և գործունեության առանձնահատկությունները:

ա. Որոշում կայացնողներ

Հայոց ցեղասպանության ոճրագործների ամենավերին օղակը ճակատագրական որոշում կայացնողներն էին: Նրանք ձևակերպում էին ցեղասպանական գաղափարախոսությունը, կայացնում ցեղասպանության իրականացման որոշումը և վերահսկում կոտորածների ընթացքը: Որոշում կայացնողները հարյուր հազարավոր մարդկանց մահվան էին ուղարկում՝ շատ հաճախ անձնապես չմասնակցելով սպանության գործընթացին:

Այս մակարդակում ոճրագործները ներկայացված էին պետության բարձրագույն իշխանության ներկայացուցիչների, կուսակցական վերնախավի և մի քանի ազդեցիկ անհատների տեսքով, որոնց դերը Հայոց ցեղասպանության նախագծման մեջ որոշիչ էր: Տարանջատել այս խմբերն անհնար է, քանի որ նույն մարդը հաճախ մի քանի դերով է հանդես եկել՝ լինելով միաժամանակ և՛ կուսակցապետ, և՛ պետության ղեկավար, և՛ ազդեցիկ գործիչ:

Պետության դերը ցեղասպանությունը ծրագրելու ու իրականացնելու մեջ վճռորոշ է: XX դարում ցեղասպանությունները միշտ իրականացվել են պետական իշխանության կամ պետության ներկայացուցիչների կողմից, քանի որ միայն պետական իշխանության չափազանց կենտրոնացվածության, ինչպես նաև հաղորդակցության

³ Տե՛ս Dadrian Vahakn N. and Taner Akçam, *Judgment at Istanbul: The Armenian Genocide Trials*, New York and Oxford: Berghahn Books, 2011, Անույան Մ., *Ճանաչում և դատապարտում. Երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.)*, ՀՏԹԻ, Երևան, 2013:

⁴ «Մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված թուրքիայի այս նոր հանցագործություններին ի տես՝ դաշնակիցների կառավարությունները հրապարակայնորեն տեղյակ են պահում Բարձր Դռանը, որ իրենք նշված հանցագործությունների համար անհատապես պատասխանատու կճանաչեն օսմանյան կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև նրա այն գործակալներին, որոնք ներգրավված կլինեն համանման կոտորածներում»: Տե՛ս Մեծ պետությունները, *Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918)*, հ. I, խմբ. Պեյլերյան Արթուր, Երևան: «Հայաստան», 2005, էջ 99:

¹ *Encyclopedia of Genocide and Crimes against Humanity*, Macmillan Reference USA, 2004, p. 790.

² Կոնվենցիայի տեքստն առկա է http://www.un.am/res/UN%20Treaties/III_1.pdf

և փոխադրամիջոցների վերահսկողության դեպքում է հնարավոր լինում գործուն կերպով կազմակերպել նման ոճրագործություն⁵: Պետական ռեսուրսները, օրինական բռնություն կիրառելու իրավունքը, ինչպես նաև ենթակառուցվածքները՝ հեռագրական մեքենաներ, երկաթուղիներ, համակենտրոնացման ճամբարներ, թույլ են տալիս նախաձեռնել նման հսկայածավալ «նախագիծ», ինչպիսին է ցեղասպանությունը: Պետությունը նաև միակ «խաղացողն» է, որ տիրապետում է բոլոր այն միջոցներին, որոնք թույլ են տալիս բնակչության շրջանում ատելության քարոզչություն տարածել՝ սպանարդկայնացնելով զոհերին, ներկայացնելով նրանց իբրև չարիք և նույնիսկ մահացու վտանգ, դրանով իսկ հավաքագրելով մարդկանց հսկայական զանգվածներ, որոնք լծվում են սպանության գործընթացին:

Սովորաբար նման պետությունների գլուխ կանգնած են լինում քաղաքական ուժեր, որոնք որդեգրում են ցեղասպանական գաղափարախոսություն և դրսևորում զանգվածային ոճրագործություն իրականացնելու կամք: Հոլոքոստի դեպքում դա Նացիոնալ-սոցիալիստական կուսակցությունն էր, Կամբոջայում՝ Կոմունիստական կուսակցության հոսանքներից մեկը՝ Կարմիր կիներները: Հայոց ցեղասպանությունն Օսմանյան պետության կողմից իրականացված հանցագործություն է, սակայն այն իրագործելու որոշումները կայացրել է «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն, որը ողջ իշխանությունը երկրում փաստացի կենտրոնացրել էր իր ձեռքում՝ կատարելով պետական մարմինների գործառնություններ⁶: «Միություն և առաջադիմություն» կուսակցության որոշումները, որոնք գործարկվել էին կառավարության միջոցով, հետադարձ թվագրությամբ հաստատվել և օրենքի ուժ են ստացել Օսմանյան խորհրդարանի կողմից:

Յեղասպանության իրականացման որոշումը ձևավորվեց 1910 և 1911 թթ. երիտթուրքական համաժողովների ընթացքում⁷: Օսմանիզմի գաղափարախոսության անարդյունավետության պայմաններում ուժեղացել էր այն թյուրքիզմով փոխարինելու ձգտումը: 1910-1911 թթ. ժողովների ընթացքում պանթուրքական ուղղվածության մի շարք ջատագովներ ընդգրկվեցին Իթթիհաթի Կենտրոնական կոմիտեի կազմում⁸: 1911 թ. աշնանը Իթթիհաթի 4-րդ համաժողովը վավերացրեց անցումը դեպի բռնի թուրքացում: Կոնգրեսի մասնակից Կյազին Նամի Դուրուն իր հուշերում նշում էր. «Իթթիհաթը երդվեց ձուլել այլ ժողովուրդներին թուրքական միջավայրում և համապատասխան ծրագիր մշակել»⁹: Դուրունը Նազըմը, ով այս գծի

առաջամարտիկ էր 1910, 1911 թթ. ժողովներում հաստատեց Կայսրության «վերջնական թուրքացման» տեսակետը, որը իրականացվելու էր մուսուլմանների զանգվածային վերաբնակեցումների ձևով և կոտորածների միջոցով¹⁰:

1913 թվականից կենտրոնը դադարեց հաշվետու լինել համագումարի առջև և հենվելով անդամների հեղինակության և պետական իշխանության մեջ զբաղեցրած պաշտոնների վրա՝ երկրի ամբողջ իշխանությունը կենտրոնացրեց իր ձեռքերում: Հենց Իթթիհաթի կենտրոնն էլ ուղղակիորեն մշակեց և իրականացրեց հայերի ոչնչացումը: Հայոց ցեղասպանության ծրագրման և իրականացման ամբողջ ընթացքում, այսինքն՝ 1912-17 թթ., Իթթիհաթի կենտրոնի կազմն անփոփոխ էր՝ Իթթիհաթի գլխավոր քարտուղար Միդհատ Շյուքրու, Սաիդ Հալիմ փաշա, Թալաթ փաշա, Էյուբ Սաբրի, դոկտոր Նազըմ, դոկտոր Բեհաեդդին Շաքիր, դոկտոր Ռուսուհի, Զիյա Գյոքալի, Էմրուլլահ, Կյուչուք Թալաթ, Աթիֆ Ռիզա, Կարա Քեմալ¹¹:

Այս գործիչներից Հայոց ցեղասպանության ծրագրման և իրականացման մեջ դերակատարում ունենալու տեսակետից մի շարք հեղինակներ /Արսեն Ավագյան, Դոզան Ավչոզյու¹², Շուքրու Հանիօղլու, Ռոբերտ Մելսոն¹³/ կենտրոնական տեղ են տալիս դոկտորներ Նազըմին և Բեհաեդդին Շաքիրին:

Հեռու մնալով հանրային ուշադրության կենտրոնից՝ Նազըմն այնուամենայնիվ իր ձեռքերում էր կենտրոնացրել կուսակցության վերահսկողությունը: Նա բազմիցս արտահայտվել էր ոչ թուրքական փոքրամասնությունների վերացման օգտին և այս գործում գտել էր իր համար հավատարիմ համախոհ: Հենց Բեհաեդդին Շաքիրն է Նազըմի հետ հավանաբար հեղինակել տեղահանության մասին օրենքը¹⁴: Շաքիրի կարևոր դերը հաստատել է նաև գերմանացի գնդապետ Շտանգեն, ում հետ համատեղ Շաքիրը կազմակերպել է պարտիզանական գործողությունները ռուսների դեմ Առաջին աշխարհամարտի առաջին երեք ամիսների ընթացքում: Ըստ Շտանգեի՝ հետագայում այս նույն ջոկատները վերափոխվում են մարդասպանների ջոկատների¹⁵: Վահագն Դադրյանը նույնպես նշում է այս երկուսի վճռական դերը (Թալեաթի, ազգային անվտանգության ղեկավար Ջամիլուալի և Գլխավոր շտաբի երկրորդ վարչության /հետախուզման/ ղեկավար գնդապետ Սեյֆիի հետ միասին)

механизмы принятия и исполнения решений, Ереван, Музей-институт Геноцида армян, 2013, էջ 43:

¹⁰ Pinon Rene, *La Liquidation de L'Empire Ottoman*, *Revue des Deux Mondes*, 53 (September, 1919), pp.131, 139-140 ըստ Dadrian Vahakn N., *Warrant for Genocide, Key Elements of Turko-Armenian Conflict*, էջ 98:

¹¹ Авакян Арсен, *Геноцид армян: механизмы принятия и исполнения решений*, Ереван, Музей-институт Геноцида армян, 2013, стр. 46-48.

¹² Avcioglu Dogan, *Milli Kurtulu Tarihi*, Vol. 3 (Istanbul: Istanbul Publications, 1974).

¹³ Melson Robert, *Revolution and Genocide, On the Origins of the Armenian Genocide and the Holocaust*, The University of Chicago Press, 1992, p. 145, 313, (ft 44).

¹⁴ Авакян А., *указ. соч.*, стр. 55-56.

¹⁵ Report No. 3481, dated 23 August 1915, Botschaft Konstantinopel 170/23, մեջբերումն ըստ Dadrian, Vahakn N., *The Role of Turkish Physicians in the World War I Genocide of Ottoman Armenians, "Holocaust and Genocide Studies"*, 1 (2) (1986) p. 173.

⁵ *The History and Sociology of Genocide: Analyses and Case Studies*, Chalk Frank and Jonassohn Kurt, eds, New Haven and London: Yale University Press, 1990, p. 26.

⁶ Այդ մասին մանրամասն տե՛ս Akçam Taner, *A Shameful Act*, London, Macmillan. 2007, Dadrian Vahakn, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, Berghahn Books, 2003:

⁷ Dadrian Vahakn, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, Berghahn Books, 2003, pp. 179-180.

⁸ Melson Robert, *Revolution and Genocide, On the Origins of the Armenian Genocide and the Holocaust*, The University of Chicago Press, 1992, p. 165, Jacob Landau, *Pan-Turkism: from Irredentism to Cooperation*, Bloomington and Indianapolis: Indiana University Press, 1995, p. 49.

⁹ Duru Kazim Nami. Ziya Gökalp. İstanbul, 1965, s. 41 մեջբերումն ըստ Авакян Арсен, *Геноцид армян:*

ցեղասպանական ծրագրի վերջնական որոշման ընդունման մեջ¹⁶:

Բացի վերոնշյալ գործիչներից, կարելի է նշել նաև ցեղասպանության տարիներին Իթթիհաթի հիմնական գաղափարախոսներին՝ պանթուրքիստներ Զիյա Գյոքալփին և Յուսուֆ Աքչուրային: Նրանք քարոզում էին, որ քրիստոնյաների ոչնչացումը կվերացնի այն խոչընդոտը, որ խանգարում է Անատոլիայից մինչև Միջին Ասիա բնակվող բոլոր թուրքալեզու ժողովուրդների միավորմանը նոր գերկայսրության մեջ¹⁷:

Սակայն մի ամբողջ ժողովրդի ոչնչացման մանրամասնորեն մշակված ծրագիրը կարող էր իրականացվել միայն այն պայմաններում, երբ երիտթուրքական կուսակցության վերահսկողության տակ կլինեին ամբողջ պետական ապարատը և նրա կառույցները, այդ թվում՝ ուժային: Այս պատճառով չափազանց կարևոր էր 1913 թ. հեղաշրջումից հետո Իթթիհաթի բռնապետության ձևավորումը, երբ տեղի ունեցավ պետական և կուսակցական ապարատի ամբողջական սերտաճում: Կառավարությունը փաստացի վերածվեց կուսակցության կամքն իրականացնող մի մարմնի: Ամբողջ իշխանությունն անցավ **եռապետերի** ձեռքը: Եռապետերը դարձան նաև ցեղասպանական ծրագրի իրականացման գլխավոր պատասխանատուները: Ռազմական նախարար դարձավ **Իսմայել Էնվերը**, որն իր ձեռքում էր կենտրոնացրել ամբողջ ռազմական գործերը, Գերմանիայի հետ դաշինքի ջատագով էր և նույնիսկ գահի նկատմամբ հավակնություններ ուներ, քանի որ ամուսնացած էր սուլթանի զարմուհու հետ: **Ահմեդ Ջեմալը**՝ նախ Ստամբուլի նահանգապետն էր, հետո՝ ռազմածովային նախարարը, Չորրորդ բանակի հրամանատարը և Սիրիայի փաստացի տերը: Նրա հարաբերություններն Էնվերի հետ մշտապես բարդ էին¹⁸: Ընդհանրապես եռապետերից յուրաքանչյուրը փորձում էր բացառել մյուսների միջամտությունը սեփական վերահսկողության տակ գտնվող ոլորտի գործերին, և սրանով կարելի է բացատրել Հայոց ցեղասպանության ընթացքում նրանց գործողություններում երբեմն նկատվող տարաձայնությունները:

Եռապետության երրորդ անդամը **Մեհմեդ Թալեթն** էր, ով զբաղեցնում էր ներքին գործերի նախարարի, հետագայում նաև կառավարության ղեկավարի պաշտոնները և փաստացի ամենամեծ իշխանությունն էր կենտրոնացրել երկրի ներսում, քանի որ ստանձնել էր երիտթուրքական կուսակցության նեղ շրջանակի մեջ գոյություն ունեցող հակամարտող հոսանքները և ազդեցիկ անհատներին հաշտեցնելու և զսպելու գործառնությունը¹⁹: Լինելով ներքին գործերի նախարար՝ նա նաև վերահսկում էր վիլայեթներում ամբողջ ոստիկանությունը և վարչական ապարատը, ինչը նրան հսկայական ազդեցություն էր հաղորդում, ինչպես նաև կենտրոնական գործող անձ

¹⁶ Dadrian Vahak N., The Secret Young-Turk Ittihadist Conference and the Decision for the World War I Genocide of the Armenians, *“Holocaust and Genocide Studies”*, 7, (2) (1993), p. 176.

¹⁷ Naimark Norman M., *Fires of Hatred: Ethnic Cleansing in Twentieth-Century Europe*, Harvard University Press, 2002, pp. 25–26.

¹⁸ *The Memoirs Of Abram Elkus: Lawyer, Ambassador, Statesman*, Taderon Pr, 2004, pp. 61-62.

¹⁹ Zürcher, Erik, *Turkey-A Modern History*, 2003, p. 110.

էր դարձնում Հայոց ցեղասպանության իրականացման համակարգում²⁰: Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպան կոմս Վուլֆ-Մեթթերնիխը Մեհմեդ Թալեթին նկարագրում էր իբրև «հայկական կոտորածների ոգին»²¹: Հենց նրա անունից էին ուղարկվել հիմնական այն հեռագրերը, որոնք համակարգում էին հայերի ոչնչացումը նահանգներում: Իհարկե, այդ հրահանգները չէին պարունակում սպանության բացահայտ հրամաններ, սակայն անուղղակիորեն վկայում են նախապատրաստվող հրեշավոր ծրագրի մասին: Օրինակ՝ 1915 թ. հուլիսի 21-ին թվագրված Թալեթի ծածկագիր հեռագիրը՝ ուղարկված Դիարբեքի, Խարբեռլի, Ուրֆայի և Դեր-Զորի նահանգապետներին և մութասարիֆներին, հրահանգում է ճանապարհներին մնացած դիակները թաղել, լքյալ գույքը վատել, այլ ոչ թե դիակները լցնել ձորերը, գետերը կամ լճերը²²: Դիարբեքի նահանգապետին 1915 թ. հուլիսի 22-ին ուղարկված մեկ այլ հեռագրում նա կոչ է անում անմիջապես դադարեցնել հայերից զատ այլ քրիստոնյաների սպանությունը, քանի որ հայերի նկատմամբ կարգապահական միջոցների անցումն այլ խմբերի վրա կարող է վատ արձագանքներ ունենալ²³:

Օսմանյան կայսրության **կառավարությունն** ընդամենը Երիտթուրքական կուսակցության ծրագրերն իրականացնող մի մարմնի էր վերածվել: Եգիպտական արքայազն **Սայիդ Հալիմ փաշան**, թեև երիտթուրքական կուսակցական առաջնորդների նեղ շրջանակի անդամ էր, սակայն երբեք վճռական ազդեցություն չունեցրեց որոշումների կայացման համակարգի վրա: Նա պարզապես եռապետերի իրականացմանը էր:

1915 թ. մայիսի 27-ին ընդունվեցին ժամանակավոր օրենքներ տեղահանության վերաբերյալ, որն ընտրել էր Հայոց ցեղասպանության իրականացման միջոց: Պետք է նշել, որ գարնան սկզբից տեղահանության գործընթացն արդեն ամբողջ թափով ընթանում էր, և ժամանակավոր օրենքների ընդունումը փորձ էր հետին թվով որոշակիորեն օրինականացնելու գործընթացը²⁴:

Տեղահանվածների ոչնչացումը թույլատրելու մասին է վկայում Թալեթի՝ 1915 թ. հունիսի 14-ի ցուցումը՝ սպանել տեղահանվածների քարավաններում դիմադրություն ցույց տվողներին և փախուստի դիմողներին²⁵: Մի քանի օր անց գերմանական դեսպանատան աշխատակցի հետ զրույցում նա հայտնել է «ներքին թշնամիների»

²⁰ Morgenthau Henry, *Ambassador Morgenthau’s story*, Garden City, N.Y., Doubleday, 1918, p. 24.

²¹ Walker, C. *Armenia: The Survival of a Nation*, London, St. Martin's Press, 1980, p. 234.

²² 1-ին դատավարություն, 1919, ապրիլի 27 (մեղադրական եզրակացություն)// *Հայերի ցեղասպանությունը, ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի*, Երևան, 1989, էջ 42-43:

²³ BOA/DH.ŞFR, no.54-A/73, ներքին գործերի նախարար Թալեթի ծածկագիր հեռագիրը Դիարբեքի նահանգապետին, 22 հուլիսի, 1915 թ., մեջվերվում է ըստ Akçam Taner, *The Young Turks’ Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire*, Princeton University Press, 2012, էջ 210:

²⁴ Ըստ օսմանյան օրենսդրության՝ ժամանակավոր օրենքները թույլ էին տալիս դրանք ուժի մեջ դնել մինչև Խորհրդարանում քննարկելը և հաստատելը:

²⁵ Osmanli Belgeler, 43, Interior Ministry to Erzurum, 14 June 1915 ըստ Bloxham Donald, *The Great Game of Genocide: Imperialism, Nationalism, and the Destruction of the Ottoman Armenians*, Oxford University Press, 2007, էջ 90:

հետ պատերազմի քողի տակ գործն ավարտի հասցնելու մասին Բ.Դոան մտադրության մասին²⁶: Բացի այդ, հունիսի 9-ին ներքին գործերի նախարարությունն ուղարկում է հրահանգ Էրզրումի նահանգապետին վաճառել տեղահանված հայերի ունեցվածքը²⁷, ինչը պարզ վկայում է այն մասին, որ նրանց վերադարձը չէր ակնկալվում:

Տեղահանության և իրենց բնակավայրերից քշված հայերին ոչնչացնելու գործընթացը համակարգում էր **ներքին գործերի նախարարությունը** տեղական իշխանության մարմիններին ուղարկվող շրջաբերականների և հրահանգների միջոցով: Այսպես, 1915 թ. մայիսի 27-ին կառավարության կողմից ընդունված «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքում հղում է կատարվում 1915 թ. մայիսի 13-ին ներքին գործերի նախարարության կողմից ընդունված N 270 որոշմանը հայերին Մոսուլի, Դեր-Ջորի և Սիրիայի այլ շրջաններ տեղափոխելու մասին²⁸: Ներքին գործերի նախարարության, ինչպես նաև նրա անմիջական ղեկավար Թալեաթի դերի առանցքային լինելու մասին է վկայում այն, որ 1918 թ. խորհրդարանական լսումների և 1919-1920 թթ. երիտթուրքերի դեմ նախաձեռնված դատավարության ժամանակ գրեթե բոլոր բարձրաստիճան մեղադրյալները հայերի տեղահանության ու կոտորածների ամբողջ պատասխանատվությունը դնում էին հենց նշված կառույցի վրա²⁹:

Ներքին գործերի նախարարությունը կատարվող բռնություններին օրինական տեսք տալու համար 1915 թ. մայիսի 23-ին հրահանգներ է ուղարկում այն միջոցառումների մասին, որոնք պետք է կիրառվեն «թշնամուն աջակցող քրիստոնյաների և նրանց հետ համագործակցող մուսուլմանների» նկատմամբ, որոնք ենթակա են ռազմական տրիբունալի³⁰:

Դեռևս մինչև Առաջին աշխարհամարտը ներքին գործերի նախարարության կազմում ստեղծվեցին տարբեր կառույցներ, որոնք մեծապես ներգրավված էին հայերի տեղահանությունները համակարգելու ծրագրում:

Մեկը **Ցեղերի և ներգաղթողների տեղավորման վարչությունն** էր, որը հիմնադրվել էր 1913 թ.³¹: Հետագայում այն ընդլայնվեց և բաժանվեց 4 մասնաճյուղերի, որոնք ստացան իրենց գործառնությունները նկարագրող անուններ՝ բնակեցման, անվտանգության ապահովման, տրանսպորտի և ցեղերի մասնաճյուղեր³²: Հետաքրքիր է, որ այդ

կառույցն ուներ նաև Զիյա Գյոքալփի կողմից ղեկավարվող «Գիտական խորհուրդ», որը զբաղվում էր ազգագրական տվյալների հավաքմամբ: Դրա ստեղծումը սերտորեն կապված էր Թալեաթի այն արտահայտության հետ, որ «Անատոլիան փակ արկղ է մեզ համար ու այնտեղ գործելուց առաջ անհրաժեշտ է նախ հասկանալ՝ ինչի հետ գործ ունենք»³³: Ցեղերի և ներգաղթողների տեղավորման վարչությունը Հայոց ցեղասպանության տարիներին կազմակերպում էր տեղահանության գործընթացի վարչարարությունը և հայերից ազատ մնացած տարածքների բնակեցումը մուսուլմաններով: Այն ղեկավարում էր **Շուքրու Քայան**: Ներքին գործերի նախարարության կազմում գործող հաջորդ կառույցը Ընդհանուր անվտանգության վարչությունն էր³⁴:

Մեկ այլ կառույց էր «**Լքյալ գույքի հանձնաժողովը**», որը համակարգում էր հայերի ունեցվածքի բռնագրավումը և վերաբաշխումը:

Թեև բռնագաղթի կազմակերպման հիմնական աշխատանքն իրականացվեց ներքին գործերի նախարարության և նրա ենթակայության տակ գտնվող ստորաբաժանումների միջոցով, տեղական կառավարման մարմինների, անվտանգության, ոստիկանության և ժանդարներիայի ուժերի մասնակցությամբ, սակայն Հայոց ցեղասպանության իրականացման մեջ ակտիվորեն ներգրավված էին նաև այլ նախարարություններ, հատկապես ռազմական և կրթության նախարարությունները:

Ամերիկացի սոցիոլոգ Ալեքս Ալվարեսն իր «օրենքը որպես ռեսուրսների հանրագումար» տեսության շրջանակում քննարկում է, թե ինչպես ցեղասպանությունների իրականացման շրջանում օրենքը դառնում է այն պաշտոնյաների ծառան, ովքեր, ստանալով իշխանություն, կարողանում են ծառայեցնել օրենքն իրենց պահանջներին ու հետաքրքրություններին³⁵: Վերահսկելով օրենքները՝ պետությունը ստանում է վերահսկողություն օրինականացված բռնություն իրականացնելու իրավունքով օժտված գործակալների նկատմամբ³⁶: Ցեղասպանության ժամանակ նաև օրինականացվում է «հանցանքը», կամ այդ «օրենքներին» են համապատասխանեցվում շատ գործողություններ: Խոսքն, իհարկե ոճրագործ պետության օրենքների, բայց ոչ միջազգային օրենքների մասին է³⁷: Այսպիսի օրինակ են Նյուրնբերգյան օրենքները³⁸,

ըստ Ungor Ugur Umit, *The Making of Modern Turkey; Nation and State in Eastern Anatolia, 1913-50*, Oxford University Press, 2011, էջ. 36:

³³ Նույն տեղում:

³⁴ The First World War and the Development of the Armenian Genocide by Bloxham Donald, *A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire*, edited by Suny Ronald Grigor, Gocek Fatma Muge, Naimark Norman M., Oxford University Press, USA, 2011, p. 262.

³⁵ Alvarez Alex, *Governments, Citizens, and Genocide: A Comparative and Interdisciplinary Approach*, Bloomington and Indianapolis: Indiana University Press, 2001, p. 72.

³⁶ Նույն տեղում, էջ 74:

³⁷ Նույն տեղում, էջ 78:

³⁸ Նյուրնբերգյան օրենքներն ընդունվեցին Հիտլերի նախաձեռնությամբ 1935 թ. սեպտեմբերի 15-ին Նյուրնբերգում հրավիրված Նացիոնալ-սոցիալիստական կուսակցության և Ռայխստագի նիստերի ժամանակ: Դրանք երկուսն էին՝ «Ռայխի քաղաքացու մասին» օրենքը (Reichsbürgergesetz) և «Գերմանական արյան և զերմանական պատվի պահպանության մասին» օրենքը (Gesetz zum Schutze

²⁶ AAPA, Abt. 1A, Turkei 183/37, Pera, 17 June 1915 ըստ Bloxham, *Նշվ. աշխ.*, էջ 90:

²⁷ Affaires armeniens: Les 'Telegrammes', ed. Orel and Yuca, 117, no. 29, մեջբերումն ըստ Bloxham, *Նշվ. աշխ.*, էջ 90:

²⁸ Авакян Арсен, *Նշվ. աշխ.*, էջ 67:

²⁹ Նույն տեղում

³⁰ Նույն տեղում էջ 73:

³¹ Այն կազմավորվեց 1860 թ. ստեղծված Ընդհանուր ներգաղթի վարչական հանձնաժողովի հիման վրա, որի գործառնություն էր մոտ մեկ միլիոն չեչենների, Դրիմի թաթարների, մուսուլման վրացիների և թուրքմենների ներգաղթը համակարգելը (տե՛ս Karpat Kemal, 'Population Movements in the Ottoman State in the Nineteenth Century', in Bacque-Grammont Jean-Louis and Dumont Paul (eds.), *Contributions a' l'histoire e' conomique et sociale de l'Empire ottoman* (Leuven: Editions Peeters, 1983), 385-428 at 405-8, մեջբերումն ըստ Bloxham Donald, *Նշվ. աշխ.*, էջ 42:

³² Orhonlu Cengiz, *Osmanli Imparatorlugu'nda Aşiretlerin Iskâni* (Istanbul: Eren, 1987), s. 120, մեջբերումն

որոնք, ձևականորեն համապատասխանելով օրենքների սահմանմանը, իրականում հակաօրինական որոշումներ էին:

Օսմանյան կայսրության խորհրդարանը նմանատիպ «օրենքներ» էր ընդունում, որոնք շատ դեպքերում կոչված էին հետին թվով «օրինականացնելու» կատարվող ոճրագործությունը:

Պատերազմի սկզբնական շրջանում օսմանյան օրենսդիր մարմնի գործունեությունը փաստացի կասեցվել էր: Օսմանյան իշխանության դե ֆակտո կառուցվածքը պատերազմական արտակարգ պայմաններում գործադիր թևին էականորեն ազատել էր օրենսդիր մարմնի հնարավոր կաշկանդող ազդեցությունից: Իր հուշերում Թալեթին ակնարկում է, որ 1915 թ. մարտի 1-ին Խորհրդարանի գործունեության սառեցումն ուղղակիորեն կապված էր հակահայ ձեռնարկումների հետ³⁹: Մա որոշակիորեն վկայում է, որ Խորհրդարանում այս ծրագրին ընդդիմացում էր ակնկալվում: Բացի այդ Խորհրդարանի գործունեության սառեցումը թույլ էր տալիս պատգամավորներին վերադառնալ իրենց ընտրական շրջաններ և տեղեկացնել սեփական ընտրողներին «հայկական վտանգի մասին»: Տեղահանության մասին օրենքի 4-րդ հոդվածն ունի վերապահում այն մասին, որ պետք է պաշտոնապես հրապարակվի Խորհրդարանի հաջորդ նստաշրջանի ընթացքում⁴⁰, սակայն ինչպես իրավացիորեն նշում է Վ.Դադրյանը, չկա որևէ ապացույց, որ երբ 1915 թ. սեպտեմբերի 28-ին Խորհրդարանի գործունեությունը նորից վերագործարկվել է, դա տեղի է ունեցել⁴¹:

Հետագայում այս որոշումը քննարկվել է Խորհրդարանի ռազմական և իրավական հանձնախմբերում և հավանություն ստացել: Միայն 1916 թ. դեկտեմբերին՝ Խորհրդարանում քվեարկությունից հետո այն դարձել է «Տեղահանության մասին» օրենք⁴²:

բ. Տեղական պաշտոնյաներ, կուսակցության պատասխանատու քարտուղարներ

Յեղասպանության իրականացման աստիճանակարգի երկրորդ օղակը տեղական այն կառույցներն են, որոնք անմիջականորեն կազմակերպում են գործընթացը՝ հետևելով բարձրագույն իշխանությունից ստացված հրահանգներին և վերահսկելով դրանց կատարումը: Այս օղակի կամ պետական **բյուրոկրատիայի** կարևորությունը հսկայական էր: Որոշ ցեղասպանագետներ իրենց կողմից առաջարկված ցեղասպանության բնորոշումներում նույնիսկ առանձնահատուկ տեղ են հատկացնում նրան: Օրինակ, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ջեք Պորթերը նշում է, որ ցեղասպանությունը պետք է ունենա երեք կարևորագույն բաղադրիչ՝ գաղա-

des Deutschen Blutes und der Deutschen Ehre): Մանրամասն տե՛ս Newman Amy, *The Nuremberg Laws: Institutionalized Anti-Semitism*, 1998, Hecht Ingeborg and Brown John, *Invisible Walls and To Remember is to Heal: A German Family under the Nuremberg Laws*, 1999:

³⁹ Kutay C., *Talat Pasa'nın Gurbet Hatıraları* (The Memoirs of Talat Pasa in Exile), vol. 2 (Istanbul, 1983), 907 ըստ Dadrian Vahakn N., *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, Berghahn Books, 2003, էջ 236:

⁴⁰ Դա նախատեսված էր նաև օսմանյան սահմանադրության 36-րդ հոդվածով:

⁴¹ Dadrian Vahakn N., *և՛վ. աշխ.*, էջ 236:

⁴² Авакян А., *և՛վ. աշխ.*, էջ 86:

փարախոսություն, տեխնոլոգիա և բյուրոկրատիա⁴³: Սոցիոլոգ Իրվինգ Հորովիցը ցեղասպանությունը բնորոշում է իբրև «անմեղ մարդկանց կառուցվածքային և սիստեմատիկ ոչնչացում պետական բյուրոկրատական ապարատի միջոցով»⁴⁴:

Տեղական բյուրոկրատիան մեծապես կանխորոշում էր ցեղասպանության բնույթը և ինտենսիվությունը: Տեղական էլիտաները կարող էին ուժգնացնել կամ դանդաղեցնել սպանությունների իրականացման դինամիկան:

Նահանգներում հայերի բնաջնջումը համակարգելու գործը վստահված էր **վալի-ներին**՝ նահանգապետներին, որոնց մեծամասնությունը դարձավ տեղահանության և սպանությունների ակտիվ քարոզիչներ և կազմակերպիչներ⁴⁵: Եվ դա բնական է, քանի որ նահանգապետները հիմնականում Միություն և առաջադիմություն կուսակցության հավատարիմ կադրերն էին, մեծ մասը՝ Թալեթին մտերիմ զինակիցները էին:

Այսպես, Վանի վալի Ջևդեթը, Սեբաստիայի վալի Ահմեդ Մուամմերը, Տրապիզոնի վալի Ջեմալ Ազմին անձամբ գլխավորեցին ոչնչացման գործընթացը և ամբողջ եռանդով իրականացրին այն: Բայց, թերևս ամենախանդավառ կերպով այս գործին լծվեց երիտթուրքական կուսակցության հիմնադիրներից մեկը՝ Մեհմեդ Ռեշիդը, ով 1915 թ. դառնալով Դիարբեքիի նահանգի վալի, հարյուր հազարավոր հայեր տեղահանեց նահանգից և ոչնչացրեց: Ֆայել ալ-Ղոսեյնը նշում է, որ, 1915 թ. օգոստոսի դրությամբ 570 հազար հայեր էին ոչնչացվել Դիարբեքիում⁴⁶: Նրա ենթակայության տակ գտնվող նահանգում անասելի ոճրագործություններ էին կատարվում. զոհերին խաչում էին, պայտում, շիկացած պայտերով այրում նրանց սրտերը, փշրում գանգերը⁴⁷: Նրա դաժանությունն այնքան սահմոկեցուցիչ էր, որ նույնիսկ Մոսուլում գերմանական հյուպատոս Հոլշթայնը պահանջում է դեսպան Վանգենհայմից միջամտել ու ստիպել օսմանյան կառավարությանը կարգի հրավիրել Ռեշիդին⁴⁸: Վերջինս ազատվեց Դիարբեքիի վալիի պաշտոնից, սակայն ոչ թե կոտորածների

⁴³ Porter J. N., "Introduction: what is genocide: notes toward a definition," in *Genocide and Human Rights: A Global Anthology*, Washington, DC: University Press of America, 1982, pp. 12-15.

⁴⁴ Horowitz Irving Louis, *Taking Lives: Genocide and State Power*, New Brunswick, NJ: Transaction Books, 1980, p. 17.

⁴⁵ Տե՛ս օրինակ՝ Takvim-i Vekayi, no. 3549, 4th hearing, 8 Mayıs 1335 (8 May 1919) ըստ Akcam Taner, "The Ottoman Documents and the Genocidal Policies of the Committee for Union and Progress (Ittihat ve Terakki) toward the Armenians in 1915," *Genocide Studies and Prevention*, 1, (2), 2006, էջ 141:

⁴⁶ El-Ghusein Faiz, *Martyred Armenia*, London: C. A. Pearson, 1917, p. 49.

⁴⁷ Դիարբեքիի կոտորածների մասին տե՛ս Kaiser Hilmar, *The Extermination of Armenians in The Diarbekir Region*, Istanbul Bilgi University Press, 2014, Üngör Ugur Ümit, *Confiscation and Destruction: The Young Turk Seizure of Armenian Property*, Continuum, 2011, Kieser Hans-Lukas, From 'Patriotism' to Mass Murder: Dr. Mehmed Reşid (1873-1919), in Suny Ronald Grigor and Göçek Fatma Müge, *A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire*, Oxford: Oxford University Press, 2011.

⁴⁸ PAA-AA; BoKon/169; A53a, 4184; p.11.07.1915.Telegraphic report ըստ *The Armenian Genocide. Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916*, compiled and edited by Wolfgang Gust, New York: Berghahn Books, 2014, pp. 245-246.

իրականացման, այլ հայկական ունեցվածքը յուրացնելու համար⁴⁹: Պատերազմից հետո Իթթիհաթի գլխավոր քարտուղար Միդհատ Շուքրուի (Բլեդայի) հետ զրույցում դոկտոր Ռեշիդն արդարացում է հայերի ոչնչացումը՝ համարելով, որ որպես թուրք և որպես բժիշկ պարտավոր էր ոչնչացնել հայերին, ինչպես «վնասակար միկրոբների»⁵⁰:

Բացի վալիներից, այս գործընթացի մեջ ներգրավված էին նաև ավելի փոքր շրջանների ղեկավարներ՝ **մութասարիֆներ (գավառապետներ)**, ինչպես նաև **տեղական ոստիկանապետներ, ժանդարմերիայի ղեկավարությունը, կրոնական առաջնորդները**: Որոշ տեղերում հայերի ոչնչացման մեջ գործուն մասնակցություն են ունենում նաև օսմանյան խորհրդարանի **պատգամավորները**, օրինակ՝ Խոջա Իյլաս Մամին՝ Բիթլիսում, Մեհմեդ Նուրի բեյը՝ Խարբերդում և այլք:

Բացի տեղական պաշտոնյաներից, հայերի ցեղասպանության գործընթացի մեջ ակտիվ դերակատարում ունեցան նաև կուսակցական ներկայացուցիչներ:

Վիլայեթներում Իթթիհաթն ուներ կուսակցական կառույցների ամուր ցանց: 1908 թ.՝ հեղաշրջումից անմիջապես հետո, ամբողջ երկրով մեկ ձևավորվեցին **իթթիհաթական ակումբներ**, որոնք գավառում իսկական իշխանության մարմիններ էին և անմիջականորեն ի կատար էին ածում կուսակցության որոշումները⁵¹: Ակումբների վրա էր դրված նաև հայկական բնակչության նկատմամբ ատելության տարածման առաջադրանքը: Այսպես, Էրզրումում ռուսական հյուպատոս Ադամովը 1914 թ. Հունվարի 4-ին հաղորդում է, որ «... հայերը թույլ առ թույլ սպասում էին հարձակման: Չնայած մուսուլմանների գրգռված վիճակին, որոնց հրահրել էին իթթիհատականները մայրաքաղաքից եկած էմիսար Հիլմի բեյի գլխավորությամբ, իթթիհատական ակումբը, գերմանական հյուպատոսի նախագահությամբ, քաղաքի ծայրամասում կազմակերպել էր ատրճանակի մրցակցային հրաձգություն: Հավաքվել էր տեղացի խուլիգանների, կամ դադաշների մեծ մասը՝ իրենց զենքերով... Հայերը վստահ են, իսկ դադաշները բացերբաց ասում են, թե կոտորածը սուկ հետաձգված է»⁵²:

Քանի որ ակումբներին անդամակցում էր տեղական ամբողջ վերնախավը, այդ թվում նաև վալիները, դրանք ձեռք էին բերում հսկայական ազդեցություն: Էրզրումում Գերմանիայի փոխհյուպատոս Շյոքրե-Ռիխտերը 1915 թ. հուլիսի 28-ի իր զեկուցագրում նշում էր, որ նահանգում գործում է զուգահեռ իշխանություն (Nebenregierung): Նա ընդգծում էր Իթթիհաթի անդամներից բաղկացած խմբի կողմից իրականացվող տեղահանությունների խստությունը: Մի դեպքում, երբ նահանգապետը համաձայնվում է դադարեցնել հիվանդ, առանց տղամարդկանց մնացած

ընտանիքների և միայնակ կանանց տեղահանությունը, երիտթուրքական ակումբը միջամտում է՝ խափանելով այդ մտադրությունը: Նահանգապետի համեմատաբար մեղմ վերաբերմունքը փոխվում է անասելի դաժանությամբ, որը զոհերին ուղղակի մահվան է տանում⁵³:

Ակումբները միավորվում էին տվյալ վիլայեթի կուսակցական մասնաճյուղերի մեջ, որոնք էլ գտնվում էին կենտրոնի ենթակայության տակ: 1913 թ. կենտրոնը մասնաճյուղեր է գործողում կուսակցական պաշտոնյաների: Խոսքը Հայոց ցեղասպանության իրականացման գործընթացում մեծ դեր խաղացած «Միություն և առաջադիմություն» կուսակցության **պատասխանատու քարտուղարների (Kâtibi Mesut), պատվիրակների (Murahhas) և ընդհանուր տեսուչների (Umumi Müfettiş)** մասին է: Նրանք մանրակրկիտ ընտրվում և նշանակվում էին Իթթիհաթի կենտրոնի կողմից և մեծամասամբ բանակային նախկին սպաներ էին⁵⁴: Նման հավատարիմ կուսակցական կադրերը կարող էին առանց վարանելու և քննարկելու ապահովել հայերի ծրագրված ոչնչացման արդյունավետ կազմակերպումը և տեղերում գործընթացի ղեկավարումը: Նրանք փաստորեն կուսակցության ամեն ինչ վերահսկող գործակալներ էին, որոնց նպատակն էր հետևել ցեղասպանական գործողությունների ճշգրիտ իրականացմանը⁵⁵:

Այս կուսակցական գործիչները Իթթիհաթի կենտրոնի և կուսակցության շարքային անդամների միջև յուրատեսակ կապող օղակ էին, որը «ներքև» էր փոխանցում կենտրոնից եկած հրամանները: Հենց պատասխանատու քարտուղարների միջոցով էին բոլոր տեղական իշխանություններին և կառույցներին՝ նահանգապետներին, ներքին գործերի նախարարության անվտանգության նահանգային մասնաճյուղերին, ժանդարմերիային հասնում ներքին գործերի նախարարության ուղարկված գաղտնագրված հրահանգները⁵⁶:

Պատասխանատու քարտուղարները ստեղծում էին իրենց օժանդակող 4-6 հոգանոց հանձնախմբեր, գլխավորում կուսակցական կառույցները տեղերում, կազմակերպում ժողովներ, հրահրում տեղի բնակչությանը հայերի դեմ, հրամաններ արձակում՝ տեղահանությունը, կոտորածներն ու թալանը կազմակերպելու համար: Որոշ դեպքերում նրանք նույնիսկ անձամբ էին գլխավորում սպանության գործընթացը⁵⁷: Պատասխանատու քարտուղարները նաև զբաղվում էին «Թեշքիլաթ-ի մահսուսե»-ի համար ջոկատներ կազմելով ու նաև այս ավազակախմբերի գործողություններն ուղղորդելով⁵⁸:

⁵³ A.A., K170, No 4674, folio 63/ Dadrian Vahakn N., The determinants of the Armenian genocide, *Journal of Genocide Research*, 1, (1), (1999), p. 72.

⁵⁴ Vardar, Ittihad ve Terakki [n 23], p. 77 ըստ Dadrian Vahakn N., The determinants of the Armenian genocide, “*Journal of Genocide Research*”, 1 (1), (1999), էջ 72:

⁵⁵ Նույն տեղում, էջ 71:

⁵⁶ Akçam Taner, The Ottoman Documents and the Genocidal Policies of the Committee for Union and Progress (Ittihat ve Terakki) toward the Armenians in 1915, “*Genocide Studies and Prevention*”, 1 (2), 2006, p. 141.

⁵⁷ Kévorkian Raymond, *The Armenian Genocide: A Complete History*, I.B.Tauris, 2011, p. 144.

⁵⁸ Դրա մասին վկայում են շատ հեռագրեր, օրինակ՝ պատասխանատու քարտուղար Մեսուլ

⁴⁹ Akçam Taner, *The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire*, Princeton University Press, 2012, pp. 211-212.

⁵⁰ Interview with Ittihad party Secretary-General Midhat Sukru (Bieda) in Resimli Tarih, 5 July 1953 ըստ Dadrian Vahakn N., The Role of Turkish Physicians in the World War I Genocide of Ottoman Armenians, “*Holocaust and Genocide Studies*”, №1 (2), 1986, p. 175.

⁵¹ Göçek Fatma Müge, *The Transformation of Turkey: Redefining State and Society from the Ottoman Empire to the Modern Era*, I.B.Tauris, 2011, p. 79.

⁵² АВПР, Посольство в Константинополе, д.3726, л.94 ըստ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (լուս. Մ. Ներսիսյան), Երևան, «Հայաստան» հրատ., 1991, էջ 325:

Պատասխանատու քարտուղարները տեղերում հսկայական լիազորություններ էին ստանում՝ հրահանգներ տալով նույնիսկ վալիներին ու մութասարիֆներին: Այսպես, Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նախը չեղյալ էր հայտարարում վալիի որոշումը, որով երեխաները, հիվանդները ժամանակավորապես ազատվում էին տեղահանությունից⁵⁹: Այն նահանգներում (Անգորա, Յոզղաթ, Հալեպ և Կաստամունու), որտեղ տեղահանության որոշումը վալիների կողմից այդքան էլ մեծ ջանասիրությամբ չէր կատարվում, հենց իթթիհաթական այս պաշտոնյաների ջանքով վալիներն ուղղակի պաշտոնանկ արվեցին, երբեմն նույնիսկ պատժվեցին և փոխարինվեցին ավելի պատրաստակամ պաշտոնյաներով⁶⁰:

Պատասխանատու քարտուղարների դերի կարևորության մասին է վկայում այն, որ 1919-1920 թթ. հետպատերազմյան շրջանում նախաձեռնված դատավարության ընթացքում նրանց գործերն առանձնացվեցին առանձին դատական նիստերի մեջ⁶¹:

Այս կուսակցական կառույցները և պատասխանատու քարտուղարները հստակ գործակցում էին նահանգապետի, մութասարիֆների և ժանդարմերիայի գրասենյակների հետ:

Այս մոտ 30-40 հոգանոց տեղական էլիտայի խմբերում, որը սովորաբար ներգրավված էր լինում ցեղասպանության իրականացման գործընթացում տեղական վարչախմբից, ուժային կառույցների ղեկավարներից, հոգևոր առաջնորդներից և կուսակցական ակտիվիստներից բացի, մտնում էին նաև հայտնի ընտանիքների ղեկավարները, քրդական, չերքեզական ցեղապետերը: Որոշ տեղերում նույնիսկ սա վերածվում էր մրցակցության, որի ընթացքում փորձ էր կատարվում ավելի մեծ հավատարմություն ցույց տալ իթթիհաթական առաջնորդներին՝ ակնկալելով ապագայում որոշակի արտոնություններ: Այսպես, Դիարբեքիրում այս պայքարում հաղթող դուրս եկան Փիրիչիզադե, Մյուֆթիզադե և Դերեքադե ընտանիքները⁶²:

գ. ռազմական և կիսառազմականացված կառույցներ

Յեղասպանություններն իրագործվում են հիմնականում ռազմական և կիսառազմականացված կառույցների միջոցով: Որոշ դեպքերում օգտագործվում են արդեն իսկ գոյություն ունեցողները, այլ դեպքերում ցեղասպանական գործողություններ իրականացնելու համար հատուկ ստեղծվում են նորերը:

Ռոշթուն Սամսունից 1919 թ. մայիսի 27-ին հաստատում է, որ նա կազմակերպել է զինված խմբեր, որոնք անհրաժեշտ են այս տարածաշրջանի համար Takvim-i Vekayi, no. 3554, 5th hearing, 14 May 1919 ըստ Akcam Taner, *The Ottoman Documents and the Genocidal Policies of the Committee for Union and Progress...*, էջ 148 (ft 90):

⁵⁹ Dadrian, *History of the Armenian Genocide...*, pp. 406-407.

⁶⁰ Dadrian Vahakn N., *The Documentation of the World War I Armenian Massacres in the Proceedings of the Turkish Military Tribunal*, “*Journal of Political and Military Sociology*”, 22, 1994, p. 141.

⁶¹ Միություն և առաջադիմություն կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների ու պաշտոնյաների դատավարության նյութերը տե՛ս Հայերի ցեղասպանությունը, ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Երևան, 1989, էջ 129-162:

⁶² Ungor Ugur Umit, *The Making of Modern Turkey. Nation and State in Eastern Anatolia, 1913-1950...*, p. 106.

Հայոց ցեղասպանությանն անմիջական ակտիվ մասնակցություն են բերել ներքին գործերի նախարարության վերահսկողության ներքո գտնվող **նստիկանությունն ու ժանդարմերիան**՝ ներգրավվելով կոտորածների ու հայերից առգրավված գույքի հափշտակման մեջ: Ոստիկանությունն էր շրջապատում հայկական բնակավայրերը, զենք փնտրելու պատրվակով խուզարկում հայերի տները, ձերբակալում հայ տղամարդկանց, տեղահանության քշում հայ բնակչությանը: «Մահվան երթերը» սովորաբար ուղեկցում էին ժանդարմները: Նրանք քշում էին տեղահանվածներին՝ զրկելով վերջիններիս հանգստից, յուրացնում զարդեղենը և հագուստը, աղբյուրների և ջրհորերի մոտով անցնելիս արգելելով ջուր խմել, զրկելով հացից, տանջանքների էին ենթարկում, բռնաբարում, խեղանդամ դարձնում և սպանություններ իրականացնում⁶³:

Ներքին գործերի և ռազմական նախարարության վերահսկողության ներքո էին գտնվում նաև կայսրության հիմնական հաղորդակցության միջոցները՝ **հեռագրական և երկաթուղային ցանցը**: Հեռագրական մեքենաները վճռորոշ դեր ունեցան հայերի տեղահանման և զանգվածային կոտորածների կազմակերպման գործում: Նրանց միջոցով հրամաններ և զեկուցագրեր էին ուղարկում տեղական իշխանություններին և կուսակցական ներկայացուցիչներին: Ինքը՝ Թալեաթը, ժամանակին փոստային ծառայող էր եղել և իր տանը սեփական հեռագրական սպարատ ուներ, որն օգտագործում էր տնից հրամաններ ուղարկելու համար: Մեծ թվով հայեր, ովքեր աշխատում էին փոստային ծառայությունում, 1915 թ. սկզբին զանգվածաբար հեռացվեցին իրենց պաշտոններից⁶⁴:

Հայոց ցեղասպանության իրականացմանը մասնակցեց նաև **թուրքական բանակը**: Հատկապես մեծ դեր են խաղացել բանակի գլխավոր հրամանատար, ռազմական նախարար **Էնվերը**, 4-րդ բանակի հրամանատար **Ջեմալը** և 3-րդ բանակի հրամանատար **Մահմուդ Զյամիլը**: Հայերի ոչնչացման գործում ակտիվ մասնակցություն են ունեցել զեներալներ **Հալիլ Կուտը՝ Էնվերի հորեղբայրը, և Ալի Իհսան Սաբիը**⁶⁵:

Պետք է հիշել նաև, որ տեղահանության մասին 4-րդ հոդվածը ժամանակավոր օրենքի գործադրումը դնում էր **ռազմական նախարարության** վրա⁶⁶: Բանակի ներգրավվածությունը մեծապես պայմանավորված էր նաև Էնվերի գործնով: Հենց Սարիդամիշի ճակատամարտում նրա կրած ծանր պարտությունը դարձավ հայ զինվորականության զինաթափման և ոչնչացման ստիթը: Սարիդամիշից հետո հայերը նաև արդեն բացահայտ թիրախավորվեցին իբրև պետության թշնամիներ: Հենց բանակի ներսում 1915 թ. փետրվար-մայիս ամիսներին տեղի ունեցավ հարյուր

⁶³ Տե՛ս, օրինակ АВІР, Политархив, д. 3508, л. 16. ըստ *Русские источники о геноциде армян в Османской империи - 1915-1916 годы*, Ереван, 1995 г., с. 22, ЦГИА Арм. ССР, ф. 57, оп. 2, д. 692, п. 17-20, ըստ *Геноцид армян в османской империи: Сборник документов и материалов*. “Айастан”, Ереван, 1983, с. 284, *The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-16*, 1916. p. 262-264, Герберт Адамс Гиббонс. *Последние избиения в Армении*, Петроград, 1916, с. 15:

⁶⁴ Lepsius Johannes, Berichi aber die Lage de Armenischen Volkes ըստ *Геноцид армян в османской империи: Сборник документов и материалов*. “Айастан”, Ереван, 1983, էջ 389:

⁶⁵ Kévorkian Raymond, *The Armenian Genocide: A Complete History*, I. B. Tauris, 2011.

⁶⁶ Dadrian Vahakn N., *նշվ. աշխ.*, էջ 235.

հազարավոր հայ զինվորների ու սպաների ոչնչացումը: Հ.Մորզենյանը գրում էր. «1915 թ. սկզբին թուրքական բանակում ծառայող բոլոր հայ զինվորներին նոր կարգավիճակ տրվեց: Մինչ այդ պահը նրանց մեծ մասը կռվում էր ռազմադաշտում, իսկ հիմա նրանց զինաթափեցին և վերածեցին աշխատուժի: Իրենց երկրին որպես հրետանավոր կամ հեծելագորային ծառայելու փոխարեն երբեմնի հայ զինվորները վերածվեցին ճանապարհաշինարար բանվորների և «բեռնակիր անասունների... Բազմաթիվ դեպքերում հայագրի զինվորականներին ոչնչացնում էին էլ ավելի անմարդկային ձևով, հիմա արդեն նրանց սառնասրտորեն գնդակահարելը սովորական երևույթ էր դարձել»⁶⁷:

Բանակային ստորաբաժանումներն ակտիվորեն օգտագործվում էին այն տեղերում, որտեղ հայերն ինքնապաշտպանության էին դիմում, և առաջանում էր դիմադրությունը կոտորելու անհրաժեշտություն: Այսպես, Վանի և Մուսա լեռան դիմադրությունը փորձեցին կոտորել բանակային ստորաբաժանումների օգնությամբ:

Բացի այդ, թուրքական վերնախավի վրա զինվորականության ունեցած ազդեցությունը մեծապես նպաստեց այս գործողություններն իրեն ռազմական անհրաժեշտություն ներկայացնելու փորձին: 1919 թ. հունվարին թուրքական իշխանությունները ձեռքակալեցին մի շարք բարձրաստիճան զինվորականների՝ հայտարարելով վերջիններիս իրենց պատասխանատվության տակ գտնվող շրջաններում հայկական բնակչության կոտորածի կազմակերպիչներ: Դա որոշ չափով համապատասխանում էր իրականությանը: Այսպես, երբ Էրզրումում Գերմանիայի փոխհյուպատոս Շոյբեր-Ռիխթերը բողոքեց վալի Թահսինին տեղահանվողների նկատմամբ կատարվող դաժանություններից, վերջինս խոստացավ, որ նման բան այլևս չի կրկնվելու՝ միաժամանակ որպես արդարացում ներկայացնելով այն հանգամանքը, որ տարածաշրջանում իրական իշխանությունը կենտրոնացած էր երրորդ բանակի հրամանատար Մահմուդ Քամիլի ձեռքերում⁶⁸:

Քանի որ Հայոց ցեղասպանությունն իրականացվում էր պատերազմական շրջանում և ռազմական դրության պայմաններում, զինվորականությունն իր ձեռքն էր վերցրել իշխանությունը կայսրության շատ շրջաններում: Վ. Դադրյանը, օրինակ բերելով Կայսերիի շրջանը, ցույց է տալիս, որ բանակն այնտեղ հոգ էր տանում ոչ միայն զինվորների հավաքագրման, լոգիստիկայի և տրանսպորտի համար, այլև ստանձնել էին ևս երկու լրացուցիչ գործառնություն, որոնց գործադրումը հայերի նկատմամբ ողբերգական հետևանք ունեցավ. դրանք էին՝ տարբեր մակարդակների վրա իրականացվող անհամաչափ բռնագրավումները, ինչպես նաև ռազմական դատարանների միջոցով գործադրվող «արդարադատությունը»: Ավելին, բանակային հրամանատարությունը հաճախ ղեկավարում էր ժանդարմերիայի այն զորաջոկատները, որոնք ուղեկցում էին շատ հայկական տեղահանվածների խմբեր⁶⁹:

⁶⁷ Դեպքան Մորզենյանի պատմությունը, ՀՅԹԻ, Երևան, 2012, էջ 227-228:

⁶⁸ Kaiser H., A Scene from the Inferno, The Armenians of Erzerum and the Genocide, 1915-1916, Kieser H.L., *Der Volkermord an den Armenien und die Shoa*, Zurich, 2002, p. 139.

⁶⁹ Dadrian V., The Agency of “Triggering Mechanisms” as a Factor in the Organization of the Genocide

Ոչ կանոնավոր ուժերի օգտագործումը՝ «կեղտոտ գործն» իրականացնելու համար, հաստատված օսմանյան ավանդույթ էր⁷⁰: Թեև կանոնավոր զորքը նույնպես մասնակցություն ունեցավ Հայոց ցեղասպանության իրականացման տարբեր դրվագներում, սակայն այն շատ հազվադեպ էր օգտագործվում ամբողջ համայնքներ ոչնչացնելու համար: Հենց ոչ կանոնավոր ուժերն էին դառնում պետական քաղաքականության իրականացման կարևորագույն բաղադրիչը⁷¹:

Հայոց ցեղասպանության իրագործման գործում վճռական էր «**Թեշքիլաթ-ի մահսուսե**»-ի (Հատուկ կազմակերպության) դերը: Այս կազմակերպության էր հանձնարարված տեղահանվող հայ բնակչության ոչնչացումը, ինչպես նաև այս գործընթացում ներգրավված բոլոր մարմինների գործողությունների համակարգումը:

Կազմակերպության առաջացման հետ կապված կան տարբեր մեկնաբանություններ, սակայն հստակ է, որ այն գործել է մինչև Առաջին աշխարհամարտը ռազմական նախարար Էնվերի վերահսկողության ներքո և կրել պանիսլամական և պանթուրքական գաղափարների ազդեցություն⁷²:

Իր գոյության ընթացքում կազմակերպությունն ունեցավ երեք ղեկավար՝ Սուլեյման Ասքերի, Ալի Բաշխամփա, Հուսամեթթին Էրթուրք: Հետաքրքիր է, որ բոլորն ունեին հյուսիսկովկասյան (չերքեզական) ծագում: Բավականին շատ էին նրանք ներկայացված նաև Հատուկ կազմակերպության այլ ղեկավար դիրքերում⁷³:

Կազմակերպության իրական ղեկավարը, սակայն, **Բեհաեդդին Շաքիրն** էր: Դեռ 1914 թ. Բեհաեդդին Շաքիրը չերքեզ Հյուսեյն Հուսնիի հետ ճանապարհորդեց Էրզրում՝ հայկական նահանգներում զինված խմբեր կազմակերպելու նպատակով: Հետագայում նա համակարգում էր «Հատուկ կազմակերպության» գործողությունները՝ անձամբ շրջելով իր ավտոմեքենայով մի շրջանից մյուսը և գաղտնագրված հեռագրերի միջոցով⁷⁴: Մեծ էր կազմակերպությունում նաև Նազրմի դերը:

Թուրքագետ Արսեն Ավագյանն ընդգծում է այն չորս խնդիրները, որ դրվում էին «Թեշքիլաթ-ի մահսուսե»-ի առջև՝ հայկական բնակչության զինաթափման կազմակերպում, ուղեկցող ջոկատների կազմակերպում, որոնք պետք է իրականացնեին բնակչության տեղահանությունը և ոչնչացումը, սիրիական անապատներում և համակենտրոնացման այլ վայրերում հայկական բնակչության ոչնչացման համար նախատեսված ջոկատների կազմակերպում, հայոց ցեղասպանության կազմակերպման առումով վիլայեթի քաղաքացիական իշխանությունների

Against the Armenians of Kayseri District, “*Genocide Studies and Prevention*”, № 1, (2), (2006), p. 110:

⁷⁰ St’u Reid, James J, *Crisis of the Ottoman Empire: Prelude to Collapse 1839-1878*, Stuttgart: Steiner, 2000.

⁷¹ Reid J., “*Militarism*,” 6-11; Toynbee Arnold J., *The Western Question in Greece and Turkey: A Study in the Contact of Civilizations*, London: Constable and Co., 1923, p. 278-80.

⁷² Մանրամասն տես՝ Авакян А., *Նշվ. աշխ.*, էջ 93-96:

⁷³ Gingeras Ryan, *Sorrowful shores : violence, ethnicity, and the end of the Ottoman Empire, 1912-1923*, p. 58.

⁷⁴ *Supra*, p. 187, n. 155 ըստ Кéвorkian Raymond, *Նշվ. աշխ.*, էջ 199:

գործողությունների վերահսկում և համակարգում⁷⁵:

«Թեշքիլաթ-ի մահսուսեն» կազմված էր կենտրոնից և չորս մասնաճյուղերից: Արևելյան վիլայեթների բաժանմունքը զբաղվելու էր Ռուսաստանի թիկունքում պանիալամիզմի և պանթուրքիզմի քարոզչությամբ, սակայն հիմնական գործառնությունը դարձավ հենց հայկական կոտորածների իրականացումը: Արևելյան վիլայեթներում Հատուկ կազմակերպության այս գործառնության վերահսկողությունը դրվել էր հենց Տրապիզոնի վալի Ջեմալ Ազմիի, Էրզրումի վալի Թահսինի և Իթթիհաթի կենտրոնի անդամ Բեհաեդդին Շաքիրի ու դոկտոր Ֆուադ Սաքիթ բեյի վրա⁷⁶:

«Թեշքիլաթ-ի մահսուսեն»-ում հրահանգները փոխանցվում էին հիմնականում բանավոր, գրագրությունը կարդալուց հետո անմիջապես ոչնչացվում էր: Կազմակերպությունում գործում էր խիստ կարգապահության ռեժիմը: Գրագրության ժամանակ օգտագործվում էր ներքին գործերի նախարարության գաղտնագիրը:

Պետք է նշել, որ «Թեշքիլաթ-ի մահսուսեն» միայն ի կատար էր ածում արդեն իսկ ընդունված որոշումները: Սակայն այն ուներ որոշ լիազորություններ, որոնք թույլ էին տալիս հանձնարարություններ ուղարկել տեղական մարմիններին տեղահանության և ոչնչացման կազմակերպման հարցերով, վերահսկել այդ առումով նրանց գործունեությունը և պահանջել կատարված աշխատանքի վերաբերյալ հաշվետվություն: Այս պարագայում նույնիսկ վալիները և կայմակամները, ինչպես նաև Իթթիհաթի ներկայացուցիչները պարտավորված էին ենթարկվել Հատուկ կազմակերպության պահանջներին: Նրանցից շատերը հենց Հատուկ կազմակերպության անդամներ էին, ինչը զգալիորեն հեշտացնում էր գործը:

Ճիշտ է, «Թեշքիլաթ-ի մահսուսեն»-ի և որոշ այլ կառույցների միջև երբեմն լարվածություն էր առաջանում: Այսպես, բանակային ստորաբաժանումները երբեմն հրաժարվում էին օժանդակ ուժեր տրամադրելուց՝ պատճառաբանելով, որ ենթարկվում են միայն գերագույն հրամանատարին և չեն պատրաստվում կատարել հրահանգներ, որոնք գալիս էին Հատուկ կազմակերպության խողովակներով: Այս դեպքերում հրահանգներն ուղղվում էին հենց ռազմական նախարարությունից: Հարաբերությունները մերթընդմերթ չափազանց սրվում էին: Օրինակ, Երրորդ բանակի հրամանատար Մեհմեդ Վեհիբը մի անգամ նույնիսկ ցանկանում էր ձերբակալել Բեհաեդդին Շաքիրին, և միայն Էնվերի միջամտությունը խանգարեց դրան⁷⁷:

«Թեշքիլաթ-ի մահսուսեն»-ի հետ սերտ կապի մեջ էին պատասխանատու քարտուղարները: 1913 թ. սեպտեմբերի 13-ով թվագրված Հատուկ կազմակերպության կողմից Իթթիհաթի կենտրոնում ուղարկված մի փաստաթղթից պարզ է դառնում, որ հենց նրանք էին պատասխանատու շրջաններում ավագակալներ կազմակերպելու համար: Հեռագիրը նշում է, որ Սամսունի պատասխանատու քարտուղար Ռուշտուի գործողությունները, ով խմբեր է կազմել իր տարածքում, պետք է օրի-

նակ լինեն մյուսների համար⁷⁸: Խմբերը հավաքագրվելուց հետո ուղարկվում էին մայրաքաղաք⁷⁹, որտեղ անցնում էին ռազմական պատրաստություն և հանձնարարություն ստանալով՝ գործուղվում էին հայկական վիլայեթներ:

Հետաքրքիր է, որ այս գրագրությունը տեղի էր ունենում Իթթիհաթի գլխավոր քարտուղար Միդհատ Շուքրուի միջոցով:

Կազմակերպության ջոկատների թվային կազմը մշտապես փոփոխվում էր՝ կախված նրանց առջև դրված խնդիրներից: Նրանք համալրվում էին երեք հիմնական աղբյուրից՝ քրդական ցեղեր, Կովկասից և Բալկաններից ներգաղթյալներ, ինչպես նաև ներքին գործերի նախարարության հրահանգի հիման վրա բանտերից ազատ արձակված քրեական հանցագործներ⁸⁰: Այս ավագակալների անդամները նույնիսկ երիտթուրքական պաշտոնյաների կողմից էին բնորոշվում իբրև «վայրենիներ և հանցագործներ»⁸¹:

Արամ Անտոնյանը նշում է, որ քրիստոնյաների նկատմամբ առանձնահատուկ ատելությանը և դաժանությանը աչքի էին ընկնում բալկանյան մուհաջիրներից բաղկացած ջոկատները, առաջնորդվելով վրեժի զգացումներով հայերի հանդեպ, ովքեր բողոքովին կապ չունեին նախկինում իրենց կրած տառապանքների հետ⁸²: Ջոկատներ էին կազմվում նաև ավելի վաղ Կովկասից տեղափոխված տարբեր ազգությունների մուսուլմաններից, որոնք միավորված էին ընդհանուր չերքեզ անվան տակ: Այսպես, նման ջոկատներից մեկը գլխավորում էր Չերքեզ Ահմեդը, ով Դիարբեքիրի մոտ սպանեց օսմանյան Խորհրդարանի երկու հայ պատգամավորների՝ Գրիգոր Ջոհրապին և Վարդգես Սերինգույանին⁸³: 1916 թ. Դեր-Ջորի անապատում ապստանած հայերի կոտորածը նույնպես իրականացվեց Դեր-Ջորի գավառապետ Սալիհ Ջեքիի կողմից չեչեններից և տեղի արաբներից կազմված չեթենների ձեռքով:

Թուրք պատմաբան Սուաթ Փարլարը նշում է, որ մինչև տեղահանության մասին որոշման հրապարակումը «Թեշքիլաթ-ի Մահսուսեն» արդեն իսկ սկսել էր կազմակերպել կամավորների խմբեր Բալկաններից և Կովկասից, ինչպես նաև ծանր հանցագործությունների համար դատապարտված բանտարկյալներից: Այս խմբերի կողմից գյուղերի վրա կատարված հարձակումները նույնիսկ դարձան Կ.Պոլիս

⁷⁵ Takvimi Vekâyi 3554, 5th session, 14 May 1335 ըստ Akçam Taner, *From Empire to Republic...*, էջ 171:

⁷⁶ Մեկ այլ՝ 1914 թ. նոյեմբերի 13-ով թվագրված հեռագրում Հատուկ կազմակերպությունը պահանջում է, որ «Իզմիթում, Բուրսայում, Բանդիրմայում, Բալիքեշիրում և այլ հարմար շրջաններում կուսակցության քարտուղարների կողմից գաղտնի հավաքագրվածներն ուղարկվեն [Ստամբուլ] մեկ շաբաթվա ընթացքում (Takvimi Vekâyi 3554, 5th session, 14 May 1335 ըստ Akçam Taner, *From Empire to Republic...*, էջ 163):

⁷⁷ Akçam Taner, *From Empire to Republic...*, p. 161.

⁷⁸ A. Mil, 'Umumi Harpte Tejkilâti Mahsusa', in: Vakit, 2 October 1933 up to 18 April 1934, republished as: Arif Cemil (Denker), / . Dünya Savaşı'nda Tejkilât-i Mahsusa (Istanbul: Arba, 1997), p. 196 ըստ Ungor Ugur Umit - *The Making of Modern Turkey: Nation and State in Eastern Anatolia, 1913-1950*, էջ 58:

⁷⁹ Անտոնյան Արամ, *Մեծ ռճիրը*, Երևան, 1990, էջ 53-54:

⁸⁰ Ռեֆիկ Ահմեդ, *Երկու կոմիսիոն, երկու ռճիր*, Երևան, 1997, էջ 46-50:

⁷⁵ Авакян А., *Նշվ. աշխ.*, էջ 109:

⁷⁶ Ertürk Hüsameddin, *Նշվ. աշխ.*, էջ 111: նաև Авакян А., *Նշվ. աշխ.*, էջ 107-108:

⁷⁷ Cemil Arif, *Նշվ. աշխ.*, էջ 198, Авакян А., *Նշվ. աշխ.*, էջ 119:

հղված մի քանի բողոքի պատճառ⁸⁴:

Հետաքրքիր է Ջեմալ փաշայի անձնական օգնական Ֆալիխ Ռիֆքի Աթայի հիշատակումն այն մասին, որ լսելով «հայրենիքի պաշտպանության ջոկատների» կազմավորման մասին՝ նա դիմում է Նազըմին՝ ցանկանալով հավաքագրվել դրանց մեջ, սակայն վերջինս, ժպիտը դեմքին, մերժում է, քանի որ այդ ջոկատները կազմավորվում էին «հանցագործներից և մարդասպաններից, և ձեր նման երիտասարդը գործ չունի այնտեղ»: «Ես այդպես էլ բան չհասկացա այդ մարդասպանների բանակի մասին», - գրում է Ֆալիխ Ռիֆքի Աթայը⁸⁵:

Էրզրումում չեթենները ստեղծվում էին «խալամական միլիցիայի» տեսքով Բեհաեդդին Շաքիրի ղեկավարությամբ 1914 թ. օգոստոսին: Երզնկայի մութասերիֆին, Բայբուրդի, Դերջանի և Կիդի կայմականներին հղված հեռագրում թվարկվում էին նրանց անունները, ովքեր պատասխանատու էին չեթենների ստեղծման համար, և նշվում էր. «...անցե՛ք գործի գաղտնի և առանց աղմուկի և մշտապես հայտնե՛ք արդյունքի մասին»: Ռիզեում լեռներում գործող ավագակներին ուղղակի առաջարկվեց ամբողջ կազմով դառնալ Հատուկ կազմակերպության անդամներ, ինչն ընդունվեց մեծ պատրաստակամությամբ⁸⁶:

Գործընթաց ներգրավվում էին նաև քրդական աշիրեթները: Այսպես, Էրզրումում կուսակցության տեսուչ Հիլմին գրում է քրդական աշիրաթապետներից մեկին. «...քանի որ եկել է ժամանակը լուծելու այն խնդիրը, որի մասին մենք խոսում էինք Էրզնկայում... ինձ անհրաժեշտ է 50 տղաներ... ես այստեղ նրանց համար կնախապատրաստեմ բոլոր պայմանները: Պետք է ընտրել այն սկզբունքով, որ ընտրվածները լինեն երիտասարդ կամ միջին տարիքի, հաստատական և վճռական, պատրաստ իրենց կյանքը տալու հանուն երկրի և ժողովրդի: Առաջին իսկ պահանջի դեպքում ուղարկե՛ք նրանց այստեղ... Պատրա՛ստ եղե՛ք և տեղեկություն՝ն հաղորդե՛ք Բեհաեդդին Շաքիր բեյ էֆենդիին...»⁸⁷:

Քրդերից ստեղծված ջոկատները հսկայական դերակատարում ունեցան արևելյան վիլայեթներում հայերի ոչնչացումն իրականացնելու գործում: Դրա նախապայմաններից մեկը քրդերի գրեթե համատարած զինված լինելն էր: Բացի այդ, քրդերը հայերի ոչնչացումով ազատում էին մի տարածք, որի նկատմամբ երկար տարիներ հավակնություն ունեին⁸⁸: Ընդ որում, քրդերը հիմնականում հարձակվում էին գյուղերի վրա, կոտորում բնակչությանը և ոչ թե տեղահանում նրան: Գեղեցիկ կանայք և աղջիկները քշվում էին հարեմներ: Գյուղերը հաճախ հրի էին մատնվում⁸⁹:

⁸⁴ Parlar Suat, Osmanlı'dan Günümüze Gizli devlet, İstanbul, 1997, s. 75, մեջբերումն ըստ Авакян А., Черкесский фактор в Османской империи и Турции, Ереван, 2001, էջ 231:

⁸⁵ Տե՛ս Акчам Танер «Турецкое национальное “Я” и Армянский Вопрос» (հասանելի է անցանց <http://armenianhouse.org/akcam/genocide/application.html>):

⁸⁶ Авакян А., նշվ. աշխ., էջ 106-107:

⁸⁷ Акчам Танер, From Empire to Republic..., p. 162.

⁸⁸ Ungor Ugur Umit, The Making of Modern Turkey: Nation and State in Eastern Anatolia, 1913-1950..., p. 108.

⁸⁹ Авакян А., նշվ. աշխ., էջ 121:

դ. «Շարքային» մարդասպանները

Հայ բնակչության ոչնչացման համակարգի ստորին հատվածում «շարքային» մարդասպաններն էին, ովքեր, օգտվելով անպատժելիության մթնոլորտից և վայելելով հասարակության ընդհանուր հավանությունը, ուղղակիորեն մասնակցում էին սպանություններին կամ գործընթացի իրականացմանը:

Ցանկացած ցեղասպանության իրագործում անհնար է առանց լայն զանգվածների մասնակցության: Ամբիջական սպանությունների իրականացման մասնակիցների թիվը կախված է սպանության տեխնոլոգիայից, զոհ խմբի չափերից և տեղաբաշխման բնույթից, ինչպես նաև դիմադրության աստիճանից: Ցեղասպանության իրականացման գործընթաց մեծ թվով մարդկանց ներգրավելու որոշումը նույնպես կախված է քաղաքական նպատակներից: Ցեղասպանության նախաձեռնողներն իրենց գործողություններում ունեն աջակցության կարիք և հասնում են դրան հնարավորություն տալով հասարակության տարբեր խմբերին բավարարելու իրենց պահանջներն ու ցանկությունները: Բնակչության մեծ խմբեր ներգրավելով սպանությունների համակարգ՝ նախաձեռնող ուժերն ավելի ամուր են կապում ոճրագործ հասարակությանը վարչակարգի հետ⁹⁰:

Ըստ Փոլ Բրասսի՝ ցեղասպանական գործողություններում բնակչության մասնակցության համար անհրաժեշտ է երկու բաղադրիչի առկայություն՝ «պլանավորում» և «խանդավառություն»: Իշխանությունները ծրագրում են սպանությունների գործընթացը և ապահովում դրա կարգապահ իրականացումը, և միաժամանակ խրախուսվում է բնակչության զանգվածային մասնակցության համար անհրաժեշտ միջավայրի ձևավորումը: Դրա համար օգտագործվում են ասեկոսների, մոտալուտ վտանգի մասին լուրերի տարածումը, խորը, ենթագիտակցական մակարդակում գոյություն ունեցող նախապաշարումների վերաակտիվացումը և նման այլ միջոցներ, որոնք օգնում են որոշակիորեն արդարացնել ոճիրը և մեղքը տեղափոխել իրական ոճրագործից դեպի «անորոշ, վրդովմունքով լցված մարդկանց բազմություն»⁹¹:

Այս իրավիճակը, երբ մարդն ընդամենը ամբոխի մի մասնիկ է վերածվում, մանրակրկիտ նկարագրված է ֆրանսիացի սոցիոլոգ Գուստավ Լը Բոնի «Ամբոխը, հանրության գիտակցության ուսումնասիրություն» աշխատության մեջ: Ցեղասպանությունը խմբային գործողություն է: Ոճրագործները հանդես են գալիս իբրև մեծ և փոքր խմբերի/ամբոխի անդամներ: Ըստ Լը Բոնի՝ ամբոխը բնորոշվում է իբրև «ինպուլսիվ, դյուրագրգիռ, չպատճառաբանված, դատողություններից և քննադատական ոգուց զուրկ, գերզգացմունքային... այն, ինչ նկատվում է էվոյուցիոն ավելի ցածր ձևերին պատկանող էակների մոտ»⁹²: Ամբոխում մարդկանց անհատականությունը լուծվում է հանրային գիտակցության մեջ, «...ինչը ստիպում է մարդուն զգալ, մտածել և գործել

⁹⁰ Encyclopedia of Genocide and Crimes against Humanity, նշվ. աշխ., էջ 792:

⁹¹ R. Brass Paul, The partition of India and retributive genocide in the Punjab, 1946-47: Means, methods, and purposes 1, Journal of Genocide Research, 5, (1), (2003), p. 92.

⁹² Le Bon Gustave, The Crowd: A Study of the Popular Mind, Dover Publications; Reprint edition, 2002, p. 10.

տարբեր, քան այն կզգար, կմտածեր կամ կգործեր մեկուսացման մեջ»⁹³: Լը Բոնը նաև պնդում է, որ «...միայն կազմակերպված խմբի մաս դառնալու փաստով մարդը քաղաքակրթությունից իջնում է մի քանի աստիճան ներքև: Մեկուսացված նա անձնավորություն էր, ամբոխում նա բարբարոս է, մի էակ, որ գործում է բնագոյաբար»⁹⁴: Եվ հետևաբար խմբի անդամների գործողությունները դառնում են ավելի պարզուսակ, ավելի զգացմունքային և ի վերջո ավելի հակասոցիալ:

Հայոց ցեղասպանությունն իրականացնողները երբեմն ներկայացվում են իբրև մոլագար բարբարոսներ, յուրահատուկ չարիք մարդկային կերպարանքով: Սա իրականացված ոճրին որոշակի մետաֆիզիկական բնույթ է տալիս: Նույն մտայնությունը կար նաև Հոլոքոստի մեկնաբանման և ներկայացման դեպքում⁹⁵, սակայն այն որոշակիորեն փոխվեց փիլիսոփա և քաղաքագետ Հանս Արենդթի «Այխմանը Երուսաղեմում» (“Eichmann in Jerusalem”) գրքի լույս ընծայումից հետո: Արենդթը, լուսաբանելով Հոլոքոստի հիմնական պատասխանատուներից մեկի՝ Ադոլֆ Այխմանի դատավարությունը, պնդեց, որ վերջինս «չարի առօրեականության» մարմնավորում է: Արենդթը շեշտում էր, որ Այխմանի ամենասարսափեցնող հատկանիշը ոչ թե նրա առանձնահատուկ կամ չար լինելն է, այլ նրա ծայրահեղ «հասարակությունը»⁹⁶:

Այսպիսով, պետք է արձանագրել, որ մեծ հաշվով թե՛ Հոլոքոստի, թե՛ Հայոց ցեղասպանության և թե՛ այլ ցեղասպանությունների պարագայում ոճրագործները հարյուր հազարավոր հասարակ մարդիկ էին, ովքեր իրականացրին միլիոնավոր սպանություններ: Իհարկե, վստահաբար նրանց մեջ կային հոգեկան խանգարումներ ունեցողներ, սակայն մասնակիցների նման մեծ թիվը թույլ չի տալիս կապել ցեղասպանության իրականացումը մարդասպանների անձնական հատկանիշների, կամ կրթական մակարդակի ու սոցիալական ծագման հետ:

Շարքային զինվորներ, «Թեշքիլաթ-ի մահտուսե»-ի կիսառազմականացված ջոկատներ ներգրավված կամավորներ, ժանդարմներ, բանտերից ազատ արձակված հանցագործներ, բժիշկներ, գյուղացիներ, ուսանողներ, քրդեր, Բալկաններից եկած փախստականներ, այսինքն՝ բնակչության գրեթե բոլոր հատվածները մասնակցություն ունեցան հայերի ոչնչացման գործընթացին:

Մասնակցության զանգվածային բնույթը պարզ էր դեռ ժամանակակիցներին: Այսպես, բրիտանացի ծովակալ Ռիչարդ Ուեբը, ով Կ.Պոլսի օկուպացիայի ժամանակ քաղաքի գլխավոր հանձնակատարի տեղակալն էր, 1919 թ. ապրիլի 13-ին հաղորդում էր բրիտանական արտաքին գերատեսչություն. «Հայերի կոտորածների բոլոր մեղավորներին պատժելու համար անհրաժեշտ կլինեն ողջ թուրք ազգին պատժի ենթարկել: Ուստի առաջարկում եմ որպես արժանի պատիժ այն էլ համազգային

մասշտաբով՝ մասնատել փլուզվող թուրքական կայսրությունը, և անհատապես՝ դատելով այն բարձրաստիճան պաշտոնյաներին, ովքեր նշված են իմ ցուցակում: Նրանց ճակատագիրն օրինակ կծառայի»⁹⁷:

Այս կարծիքը կհաղթում էին թուրք պաշտոնյաները: Այսպես, 1919 թ. հունվարի 28-ին Ալի Բեմալը՝ հետագայում Օսմանյան կայսրության կրթության նախարարը, «Սաբահ» օրաթերթում նշում էր. «...չորս կամ հինգ տարի առաջ կատարվեց պատմության մեջ նախադեպը չունեցող ոճիր, մի հանցագործություն, որը սարսափ հարուցեց համայն աշխարհում: Եթե ուզում ենք պատկերացում տալ այդ ոճրագործության մասշտաբի և պայմանների մասին, ապա պետք է խոսենք ոչ թե հինգից տաս, այլ 100 հազարավոր հանցագործների մասին»⁹⁸: Իր հուշերում Առաջին աշխարհամարտի ժամանակ օսմանյան խորհրդարանի նախագահի և արտաքին գործերի ու արդարադատության նախարարների պոռոտները զբաղեցրած Հալիլ Մենթեշեն խոստովանում էր. «Անատոլիայում շատ քիչ թուրքեր կային, որ առնչություն ունեցած չլինեին այդ տեղահանության հետ»⁹⁹:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության առանձնահատկություններից մեկը թուրք, քուրդ և չերքեզ բնակչության համատարած, գրեթե ամբողջական մասնակցությունն էր կոտորածներին: Հայոց ցեղասպանությունն իրականացվեց հարյուր հազարավոր հասարակ մարդկանց ձեռքերով, ովքեր անձնապես իրականացրել են միլիոնավոր սպանություն:

Ընդ որում, այդ զանգվածային մասնակցությունը չունեք սեռային և տարիքային տարբերակում: Այսպես, վերապրող Մկրտիչ Քեչյանը հիշում է, թե ինչպես հայ կանայք և երեխաները շրջապատվել էին Կարահաճիլիից հարավ թուրք և չերքեզ տարբեր սեռերի գյուղացիներով, ովքեր շարունակեցին սպանողի գործընթացը¹⁰⁰:

Կանանց և երեխաների մասնակցությունը ոճրագործությանն առանձին ֆենոմեն է ցեղասպանագիտության մեջ: Բազմաթիվ կին ՄՍ-ականներ աշխատում էին նացիստական համակենտրոնացման և ոչնչացման ճամբարներում: Կամբոջայում ցեղասպանության իրականացման մեջ կանանց ներգրավվածությունն ավելի մեծ էր, քանի որ ամբողջ երկիրը վերածվել էր փաստացի հսկայական համակենտրոնացման ճամբարի, և տասնյակ հազարավոր կանայք ծառայում էին իբրև կարգադրիչներ և պահակախմբի անդամներ, նույնիսկ մասնակցում ուղղակի սպանության գործընթացներին: Ռուսադայի ցեղասպանության հիմնական կազմակերպիչներից առնվազն երեքը կին էին՝ սպանված նախագահի կինը և կառավարության երկու անդամները, իսկ հազարավոր այլ հույժու կանայք միացան ուղղակի սպանությունների,

⁹³ Նույն տեղում, էջ 4:

⁹⁴ Նույն տեղում, էջ 8:

⁹⁵ Waller James E., “Becoming Evil: How Ordinary People Commit Genocide and Mass Killing”, Oxford University Press, 2007, p. 61.

⁹⁶ Arendt Hannah, *Eichmann in Jerusalem: a Report on the Banality of Evil*, Penguin Group, USA, 1994, p. 76.

⁹⁷ British Foreign Office Archives 371/4173/53351 (folio 192-93), մեջբերվում է ըստ Dadrian V.N. *The History of the Armenian Genocide...*, էջ 306.

⁹⁸ Günel G., “İttihat Terakki’den Günümüze Yek Tarz-i Siyaset: Türkleştirme, Belge Yayinlari”, (İstanbul, 2006), s. 127 մեջբերվում է ըստ Անույան Մ., սղվ.աշխ. էջ. 52-53:

⁹⁹ “Osmanli Mebusan Meclisi Reisi Halil Menteşe’nin Anilari, Hürriyet Vakfi Yayinlari”, (İstanbul, 1986), s. 239 մեջբերվում է ըստ Անույան Մ., սղվ.աշխ. էջ. 28-29:

¹⁰⁰ Kévorkian Raymond, p. 510.

թալանի կամ թուփախ կանանց բռնաբարելու հրահրման գործընթացին¹⁰¹: Կամբոջայում և Ռուանդայում երեխաները հեշտությամբ ներգրավվում էին ցեղասպանական գործողություններ: Նրանց հավաքագրման ձևերը տարբեր էին: Մի մասին քաջալերում էին, մյուսներին բռնությամբ դարձնում մարդասպաններ: Երեխաները սովորում էին՝ դիտելով սպանության տեսարանները, իսկ ընթացքում սպանությունները դառնում էին առօրեական մի գործողություն, որի միջոցով դրսևորվում էր հավատարմությունը սեփական խմբի նկատմամբ¹⁰²: Ռուանդայում աշխատող ֆրանսիացի լրագրող Ջին Հացֆիլդը հիշում է, ինչպես մոտ 50,000 թուփախ սպանած Կիբունգո կոչվող ավագակախմբի երիտասարդ անդամներից մեկը պարզորոշ բացատրել է «Սպանելը ավելի հեշտ է, քան հող մշակելը»¹⁰³:

Հայոց ցեղասպանության պարագայում դա նույնպես նկատելի է: Օրինակ, Թուրքիայում 1919-1927 թթ. Միացյալ Նահանգների գերագույն հանձնակատար ծովակալ Մարկ Բրիստոլը 1922 թ. սեպտեմբերի 14-ին ԱՄՆ պետքարտուղարին հղած հեռագրում, նկարագրելով Զմյուռնիայի քրիստոնյա բնակչության ոչնչացումը, նշում է. «...Նպաստամատույց կազմակերպությունների աշխատակիցները, ինչպես նաև փոխհյուպատոս Բարնետը գեկուցեցին, որ նկատելի փոփոխություն է տեղի ունեցել ծովափին հայերի նկատմամբ թուրքական բանակի և քաղաքացիների տրամադրության հետ կապված: Տպավորությունը, որ նրանք ստացել էին, այն էր, որ յուրաքանչյուր ամրակազմ հայ տղամարդ հալածվում և սպանվում է, նույնիսկ մահակներով զինված 12-15 տարեկան տղաներն էին մասնակցում հալածանքներին»¹⁰⁴:

Երեխաների մասնակցությունը երբեմն նաև ոչ տարերային բնույթ էր ընդունում: Այսպես, 1912 թ. Բալկանյան պատերազմի ժամանակ Թուրքիայի ռազմական անհաջողություններից հետո մեկնարկեց թուրք երիտասարդների շրջանում ազգայնամոլական քարոզչության և կիսառազմական վերապատրաստման համապարփակ ծրագրի իրագործումը: 1913 թ. ստեղծված «Թուրքական ուժի զարգացման ընկերակցությունը» (Turk Giic Cemiyesi) իր կանոնադրության մեջ խոսում է «[երիտասարդների] նախապատրաստման» մասին, ինչն «անհրաժեշտ է, որպեսզի ազգը կրկին դառնա զինվոր ազգ» կանխելու համար «թուրքական ցեղի քայքայումը» (Turk irki inhitata): Կային նաև այլ երիտասարդական խմբեր, որոնք գործում էին Ռազմական նախարարության ենթակայության տակ և նախապատրաստվում էին «պաշտպանել հայրենիքը»¹⁰⁵: Այդ նպատակով նախարարությունն անվճար տրամադրում էր նրանց հրացաններ, փամփուշտներ և հանդերձանք: Գործընթացը ղեկավարվում էր

ռազմական նախարար Էնվերի և Իթթիհաթի գաղափարախոս Զիյա Գյոքալփի կողմից: «Ազգային պաշտպանության լիգան» (*Mudafaa-i Milliye Cemiyeti*), որը ստեղծվել էր Բալկանյան պատերազմի ընթացքում, նույնպես նպատակ ուներ ռազմական դաստիարակություն իրականացնելու: Լիգայի հիմնադիրների մեջ էին կուսակցության և կառավարության ղեկավարները՝ Թալեթը, Էնվերը, Մայիդ Հալիմը, Ջեմալը և արդարադատության նախարար Իբրահիմը¹⁰⁶:

Ջանգվածային մասնակցությունն ապահովելու համար կարևորագույն նախապայման էր **բռնության միջավայրի ստեղծումը**: Այս իրավիճակում մարդիկ սկսում են աջակցել արմատական տրամադրված առաջնորդներին: Ընդգծվում է «մենք-նրանք» հակադրությունը: Պատերազմն իր հերթին օգնում է հստակ սահմանազատել «թշամական խումբը»՝ ընկալելով նրան իբրև վտանգ և սպառնալիք:

Հայոց ցեղասպանության ընթացքում զանգվածների ներգրավումը սպանության գործընթաց տեղի էր ունենում զուգահեռ ընթացող և հատվող մի քանի գործընթացների միջոցով: Պետական քարոզչությունը հայերին ներկայացնում էր որպես թշամիների հետ համագործակցող «հինգերորդ շարայուն», դավաճաններ, ովքեր մեղավոր էին Թուրքիայի բոլոր պարտությունների և անհաջողությունների մեջ: Բացահայտ այս քարոզչությունը տարածվում էր երիտթուրքական ակումբների և մզկիթների միջոցով: Անգրագիտության բարձր աստիճանի և հայերի նկատմամբ մարդկանց հանրային գիտակցության մեջ ավանդաբար գոյություն ունեցող զգացումների և կարծրատիպերի պատճառով այս քարոզչությունը բավականին արդյունավետ էր: Հին կարծրատիպերի այն մասին, որ հայերը ստորադաս՝ ոռայներ¹⁰⁷, և անհավատներ՝ գյավուրներ են, գումարվում էր զայրույթը, որ 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո, սահմանադրությունը նրանց մուսուլմանների հետ հավասար իրավունքներ էր տվել: Այս ամենը հիմք էր ստեղծում սպանության գործընթաց ներգրավելու պատճառների ռացիոնալացման¹⁰⁸ համար: Շարքային բնակչին փոխանցվում էր մեծ և կարևոր գործողության մաս կազմելու, պատմական իրադարձություն ներգրավված լինելու զգացումը (Մեծ Թուրանի կառուցում, Հայրենիքի փրկություն), ինչպես նաև ընձեռվում էր գոհերի ունեցվածքին տիրանալու հնարավորություն¹⁰⁹:

Բնակչության շրջանում արժեքային համակարգի բացարձակ կոնսենսուս էր ձևավորվել, որը թույլ է տալիս հասարակության տարբեր խավերից հավաքագրել

¹⁰¹ *Encyclopedia of Genocide and Crimes against Humanity*, նշվ. աշխ., p. 793:

¹⁰² Նույն տեղում:

¹⁰³ Baum Steven K., *The Psychology of Genocide: Perpetrators, Bystanders, and Rescuers*, Cambridge University Press, 2008, p. 123.

¹⁰⁴ Papoutsy Ch., *Ships of Mercy, The True Story of the Rescue of the Greeks, Smyrna, September 1922*, Portsmouth, New Hampshire, 2008. p. 38.

¹⁰⁵ Դրանց թվին կարելի է դասել նաև սպորտային և սկաութական խմբերը (տես. Հ. Դեմոյան, էջ 135-136):

¹⁰⁶ Dadrian Vahakn N., *The History of the Armenian Genocide...*, p. 196-197.

¹⁰⁷ Bosworth C. E., “The Concept of Dhimma in Early Islam”, in *Christians and Jews in the Ottoman Empire*, ed. by B. Braude and B. Lewis, London, 1982.

¹⁰⁸ Ռացիոնալացումը հոգեբանական պաշտպանության մեխանիզմ է, երբ փնտրվում է ռացիոնալ և վայելուչ բացատրություն վարքագծի կան որոշումների համար, որոնք ունեն այլ, դատապարտելի պատճառներ: Տերմինը առաջարկել է Ջ. Ֆրոյդի կողմից, հասկացությունը հետագայում զարգացվել է Անսա Ֆրոյդի կողմից: Steu օրինակ՝ D’Cruz, Jason. 2015. “Rationalization as performative pretense.” *Philosophical Psychology* 28, no. 7, էջ 980-1000. Zepf, Siegfried. 2011. “About rationalization and intellectualization.” *International Forum of Psychoanalysis* 20, no. 3, էջ 148-158:

¹⁰⁹ Մանրամասն տե՛ս Մանուկյան Ս., Դաժանության ռացիոնալացումը Հայոց ցեղասպանության տարիներին, *Ցեղասպանագիտական հանդես*, 2(1), 2014:

ապագա մարդասպանների ջոկատներ¹¹⁰: Նմանատիպ երևույթին իր վիճահարույց գրքում անդրադարձել է Յոհան Գոլդհագենը: Նա գրում է, որ նացիստների հաջողվեց կազմակերպել Հոլոքոստն առանց մեծ ջանքերի, քանի որ գերմանացիները պատրաստ էին և շատ մեծ ցանկությամբ իրականացրին այն: Համաձայն Գոլդհագենի՝ Հոլոքոստի ժամանակ վարչակարգը հարկադրված չէր հաղթահարել ոճրագործների բարոյական տատանումները կամ դժկամությունը, քանի որ միջին գերմանացին ներծծված էր ծայրահեղ հակասեմիտիզմով¹¹¹: Իհարկե, պատկերը չափազանցված է, սակայն որոշ չափով այն ներկայացնում է ցեղասպանական գործողությունների մեջ հավաքագրվողների բնութագիրը: Օսմանյան կայսրության թուրքերի շրջանում կար գրեթե նույն վերաբերմունքը հայերի նկատմամբ. հնարավորության դեպքում մուսուլման բնակչության մեծ մասն ի կատար էր ածելու իր մշտական ցանկությունը. կկազմակերպվեր հայերի նմատմամբ բռնություններ և կոտորած: Առավել ևս, երբ այն «օրհնվել էր» կրոնական առաջնորդի պատգամով՝ անհավատ քրիստոնյաների նկատմամբ սրբազան ջիհադի հայտարարությամբ:

Թեև երիտթուրքական առաջնորդները հավատացյալ մուսուլմաններ չէին, սակայն նրանք օգտագործեցին ջիհադի հայտարարումը կայսրության կրոնական մոլեռանդությամբ տոգորված ուժերին քրիստոնյաների դեմ հանելու համար¹¹²:

Այն, որ թուրք բնակչությունը բավականին հեշտությամբ որդեգրեց այս դերը, վկայում են մի քանի դրվագ: Այսպես, նույնիսկ թուրքամետությամբ աչքի ընկնող ծովակալ Բրիստոլն անհրաժեշտ համարեց խորհուրդ ուղարկել Վաշինգտոն. «Հայտնի է, որ թուրքերը կողոպտեն, կգողանան, կտեղահանեն և կսպանեն քրիստոնյաներին, ամեն անգամ, երբ ստեղծվի իրենց կարծիքով բարենպաստ հնարավորություն... իմանալով մուսուլման թուրքերի բնավորությունը, ես կարծում եմ, որ թուրքերի բիրտ բնագոյներն արթնացնելու դեպքում կգումարվեն նաև նրանց մոլեռանդ միտումները և դա կբերի քրիստոնեական ազգերի վրա հարձակումների, մինչև դա չկանգնեցվի ազդեցիկ ուժի միջոցով»¹¹³:

Հայոց ցեղասպանության ոճրագործների հիերարխիայի հարցի շուրջ

Մուրեն Մանուկյան

Ամփոփում

Հայոց ցեղասպանության իրականացման մեջ ներգրավված անձանց շրջանակը և աստիճանակարգը կարելի է պայմանականորեն բաժանել մի քանի մակարդակի:

Հիերարխիայի վերին օղակը՝ հիմնական որոշում կայացնողներն էին՝ պետության բարձրագույն իշխանության ներկայացուցիչները, Միություն և Առաջադիմություն կուսակցության վերնախավը և մի քանի ազդեցիկ անհատներ, որոնք հաճախ միաժամանակ և՛ կուսակցապետեր, և՛ պետության ղեկավարներ, և՛ ազդեցիկ գործիչներ էին:

Միջին մակարդակում էին տեղական կազմակերպիչները՝ վալիները, մութասարիֆները, տեղական ոստիկանապետերը, ժանդարմերիայի ղեկավարությունը, կրոնական առաջնորդները, ինչպես նաև հսկայական ազդեցություն ունեցող Իթթիհաթի պատասխանատու քարտուղարները: Գործընթացի մեջ ներգրավված էին նաև Օսմանյան բանակը և ոստիկանությունը: Հատկապես մեծ դերակատարում ունեցավ «Թեշքիլաթ-ի Մահսուսե» («Հատուկ կազմակերպություն») կիսառազմականացված կառույցը, որը հավաքագրվում էր բանտերից ազատ արձակված հանցագործներից, չերթեզական ավազակախմբերից և քրդական ցեղախմբերից:

Համակարգի ստորին հատվածում «շարքային» մարդասպաններն էին՝ հազարավոր հասարակ մուսուլմաններ, ովքեր, օգտվելով անպատժելիության մթնոլորտից, ուղղակիորեն մասնակցում էին հայ բնակչության կոլոպուտին և սպանություններին:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանության պատասխանատուներ, ոճրագործներ, զանգվածային մասնակցություն:

On the Hierarchy of Perpetrators during the Armenian Genocide

Suren Manukyan

Summary

The hierarchy of Armenian genocide perpetrators can be divided into three levels.

The main decisionmakers to mass murders: top-members of government, party elite and several influential persons, who often were at the same time members of authority and leaders of Union and Progress party.

“Desk murderers” at the middle-level, where regional officials (valis, mutasarifs, local police and gendarmerie chiefs, religion leaders) implemented orders of the political leadership. To accomplish Armenian deportations and massacres in the provinces, the CUP reverted to the institute of executive secretaries, who carried out orders coming from

¹¹⁰ Dabag Mihran P., “The Decisive Generation: Self-Authorization and Delegations in Deciding a Genocide”, in *Genocide: Approaches, Case Studies, and Responses*, ed. Graham C. Kinloch, Algora Publishing, 2005, p. 134:

¹¹¹ Waller James E., “*Becoming Evil: How Ordinary People Commit Genocide and Mass Killing*”, Oxford University Press, 2007, pp. 42-43.

¹¹² Kuper Leo, Theological Warrants for Genocide: Judaism, Islam, and Christianity, “*Confronting Genocide: Judaism, Christianity, Islam*”, ed by Steven Leonard Jacobs, Lexington Books, 2009, էջ 25.

¹¹³ U.S. National Archives. Record Group (RG) 59. 867.00/1361. Bristol’s October 23, 1920 report to Washington, pp. 1- 2.

the center. The Turkish army and police also participated in the Armenian Genocide. A quasi-military structure, Teşkilât-i Mahsusa (Special Organization) had a pivotal role in the Armenian Genocide. Manpower to commit the atrocities was replenished with criminals set free from prisons, Circassian gangs and Kurdish tribes.

Direct perpetrators were at the most basic local level of society. A substantial number of ordinary Muslim Ottoman citizens were also involved in mass killings, marauding and plunder of Armenian property, taking advantage of atmosphere of impunity.

Key words: Responsibles for Armenian Genocide, perpetrators, mass participation.

К вопросу об иерархии исполнителей Геноцида армян

Сурен Манукян

Резюме

Виновных за осуществление Геноцида армян можно условно разделить на несколько уровней.

Верхняя ступень иерархии это принимающие решения – представители высшей власти, партийная элита и несколько влиятельных персон, которые одновременно часто являлись также и лидерами партии «Единение и прогресс» и руководителями государства.

На среднем уровне действовали региональные организаторы – вали, мутасарифы, местные полицмейстеры и руководители жандармерии, религиозные лидеры, а также наделенные огромной властью ответственные секретари Игтихада. В процесс были вовлечены также армия и полиция. Особенно большой была роль полувоенной организации «Тешкилат-и махсусе» («Особая организация»), которая набиралась из выпущенных из тюрем преступников, черкесских банд и курдских племен.

На нижней ступени иерархии «рядовые» убийцы – тысячи простых мусульман, которые воспользовавшись атмосферой безнаказанности, непосредственно участвовали в ограблении и уничтожении армянского населения Османской империи.

Ключевые слова: Виновные за Геноцид армян, преступники, массовое участие.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Քրիստինե Նաջարյան

1948 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիան¹: Կոնվենցիայի կարևորագույն առաքելությունը հետագա ցեղասպանությունները կանխարգելելն էր, սակայն ժամանակի ընթացքում ակնհայտ դարձավ, որ կոնվենցիան բավարար չէ այդ խնդիրը լուծելու համար, քանի որ XX երկրորդ կեսին և XXI սկզբին ևս մի շարք ցեղասպանություններ տեղի ունեցան (Կամբոջա՝ 1975-1979, Ռուանդա՝ 1994, Բալկաններ՝ 1992-1995 և այլն):

Այս հարցում ձախողումների մի մասը ցեղասպանության թեմայի կրթության թերացման, իրազեկության ցածր մակարդակի, այլ խոսքով՝ նախկինում տեղի ունեցած ցեղասպանություններն ու կոտորածները լավ չուսումնասիրելու, դրանց սարսափների մասին չդասավանդելու, ժխտողականության դեմ չպայքարելու հետևանք էր:

Հայոց ցեղասպանությունից դասեր չքաղելը, Եվրոպայի կողմից այն մոռացության մատնվելը կարելի է համարել Հոլոքոստի իրականացման պատճառներից մեկը:

Այս առումով բնութագրական են Հոլոքոստի «ճարտարապետ» Ադոլֆ Հիտլերի խոսքերը, որոնք հնչեցին 1939 թ. օգոստոսի 22-ին՝ Լեհաստան ներխուժելու նախօրեին. «Մեր ուժը մեր արագության և դաժանության մեջ է: Չինգիզ խանը կանխամտածված և ուրախ սրտով միլիոնավոր կանանց և երեխաների սպանեց: Պատմության մեջ բացառապես նրան են համարում պետության հիմնադիր: Ինձ համար կարևոր չէ, թե արևմտաեվրոպական թույլ քաղաքակրթությունն ինչ է մտածում իմ մասին: Ես հրամայել եմ, և եթե որևէ մեկը համարձակվի քննադատության մեկ բառ անգամ արտասանել, կգնդակահարվի: Այս ամենից հետո ո՛վ է այսօր խոսում հայերի բնաջնջման մասին»²:

Հայոց ցեղասպանության թեմայի ուսուցման համար գոյություն ունի երկու հիմնական նպատակ:

1. Այսօր ցեղասպանության թեմայի ուսուցումը կարևորվում է ցեղասպանության ենթարկված ժողովուրդների, ապա նաև ամբողջ մարդկության հավաքական հիշողության պահպանման և փոխանցման ու դրանից բխող՝ նոր ցեղասպանությունների կանխարգելիչ գործառնությունների տեսանկյունից:

Հայոց ցեղասպանության համատեքստում կրթությունը դիտարկելիս պետք է հաշվի առնել, որ թեմային առնչվելու նախնական և առավել տարածված ձևը տասնամյակներ շարունակ եղել են բանավոր պատմությունները, որոնց ուղեկցել են նաև գեղարվեստական գրականությունը, ֆիլմերը, ապա նաև դասագրքային

¹ Կոնվենցիայի ամբողջական տեքստը տե՛ս http://www.un.org/res/un%20Treaties/III_1.pdf
² Bardakjian Kevork, *Hitler and the Armenian Genocide*, Cambridge -Mass.: The Zoryan Institute, 1985, pp. 5-6.

հիշատակումները: Յեղասպանության մասին իրագեկումը հայ իրականության մեջ ունեցել է հիշողությունը պահպանելու և հաջորդ սերունդներին փոխանցելու գործառույթ:

Պատմական հանգամանքների բերումով հենց ցեղասպանության հիշողությունն է դարձել հայ ժողովրդի ազգային ինքնության կարևորագույն բաղադրիչներից մեկը³: Ահա այդ ցավի և կորստի հիշողությանը՝ որպես արդիական հիմնախնդրի նպաստող գլխավոր գործոնն է դարձել Հայոց ցեղասպանության ժխտումն այն իրագործող պետության (Օսմանյան կայսրություն) և դրա իրավահաջորդի (Թուրքիայի Հանրապետություն) կողմից: Այս առումով է՛լ ավելի վտանգավոր են դարձել վերջին մի քանի տարիներին նկատվող և 2014 թ. ապրիլին ավելի հստակ ձևակերպումներ ստացած Հայոց ցեղասպանության ժխտման փոխակերպումներն ու նոր արտահայտչաձևերը⁴:

Յեղասպանության ժխտման նոր ձևերն ունեն ավելի վտանգավոր հեռանկարներ այն առումով, որ, բացի պարզ ժխտումից, ունեն այլ թիրախ ևս՝ ցեղասպանության հիշողության խեղաթյուրում և աղճատում: Ահա ցեղասպանության թեմայի ուսուցումը կոչված է երիտասարդ սերնդի մեջ հայոց ողբերգության մասին ճիշտ գիտելիք ձևավորելու, դրա ժխտման ինչպես պարզ, այնպես էլ առավել բաղադրյալ ձևերի դեմ պայքարելու հնարավորություններ հաղորդելու:

2. Յեղասպանության թեմայի ուսուցման մյուս կարևոր առաքելությունը կանխարգելումն է: Յեղասպանության կանխարգելմանն ուղղված միջոցառումներն իրականում շատ ավելի լայն են և ունեն դրսևորման ավելի մեծ դաշտ: Թեև ոչ միշտ հաջողությամբ, այնուամենայնիվ, հարցը կարգավորվում է միջազգային օրենքների և համապատասխան մարմինների կողմից: Մասնավորապես, 2013 թ. ՄԱԿ-ի կողմից մարտի 22-ին ընդունված «Յեղասպանության կանխարգելում» (“Prevention of genocide”)⁵ բանաձևում մեծ ուշադրություն է դարձվում ցեղասպանության կանխարգելման գործում կրթությանը և հատկապես մարդու իրավունքների կրթության խնդիրներին, մասնավորապես կանխարգելիչ նշանակություն ունեցող կրթական ծրագրերին և նախագծերին⁶:

Կանխարգելման հարցին մեծ ուշադրություն է դարձվում նաև դրա ակադեմիական մակարդակում: Պատահական չէ, որ աշխարհի ցեղասպանագետներին միավորող գլխավոր կազմակերպության՝ Յեղասպանագետների միջազգային ընկերակցության (International Association of Genocide Scholars) կողմից արդեն բավական երկար ժամանակ հրատարակվող (2006-2014 թթ.) գլխավոր գիտական հանդեսի անվանման մեջ

տեղ է գտել «կանխարգելում» (prevention) բառը («Յեղասպանության ուսումնասիրություն և կանխարգելում» «Genocide Studies and Prevention»)⁷, իսկ դրանում տպագրվող հոդվածների զգալի մասը նվիրված է հենց կանխարգելմանը:

Այս իրողության պայմաններում ցեղասպանության կանխարգելման գործում առաջին օղակը ցեղասպանություն թեմայի ուսուցումն է: Հայ իրականության մեջ Մեծ եղեռնի թեմայի՝ տասնամյակներ շարունակ իրագեկումը բանավոր պատմությունների, գեղարվեստական գրականության և այլ միջոցներով դարավերջին իսկապես ունեցավ կանխարգելիչ գործառույթ: Խոսքը վերաբերում է Ղարաբաղյան հակամարտության ժամանակ Մեծ եղեռնի հիշողության ունեցած դերակատարության մասին: Այդ ժամանակ հենց հիշողությունն էր հանդես գալիս իբրև շարժման առաջ մղող ուժ⁸: Հենց այս պատճառով Բաքվի և Մումգայիթի ջարդերը սույնացվեցին Հայոց ցեղասպանության դրվագների հետ, և Ղարաբաղում կազմակերպվեցին ինքնապաշտպանական խմբեր: Յեղասպանության հիշողությունը հայ ժողովրդի համար շարունակում էր մնալ կուլեկտիվ և անձնական հիշողությունների ոլորտում, շատ-շատերի համար այդ հիշողությունն ինքնակենսագրական մակարդակի վրա էր. դեռևս թարմ էին տատիկ-պապիկներից կամ էլ նրանց փոխանցմամբ ծնողներից լսված՝ ցեղասպանությանը կամ գաղթին վերաբերող պատմությունները⁹:

Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում ցեղասպանության իրագեկման և կրթության գործում աստիճանաբար ավելի ու ավելի է կարևորվում ցեղասպանություն թեմայի ուսուցումը հանրակրթական դպրոցներում: Դա նախ և առաջ պայմանավորված է այն օբյեկտիվ գործոնով, որ ժամանակի ընթացքում կյանքից հեռացել են ցեղասպանությունը վերապրողների առաջին սերնդի ներկայացուցիչները. աստիճանաբար նոսրանում են նաև նրանց հաջորդած սերնդի շարքերը: Մեկ-երկու տասնամյակ անց արդեն բանավոր պատմությունների գործառույթային նշանակությունն է՛լ ավելի է թուլանալու: Արդյունքում ստացվում է, որ ցեղասպանության մասին գիտելիքի փոխանցման «ծանրության» մեծ մասն ընկնելու է գեղարվեստական գրականության, ֆիլմերի և հատկապես դպրոցներում թեմայի դասավանդման վրա: Սակայն, եթե գեղարվեստական գրականությունն ու ֆիլմերն ամենին էլ պարտադիր չեն յուրաքանչյուր մարդու համար (հնարավոր է, օրինակ, որ տվյալ անձը չտեսնի այս կամ այն ֆիլմը, կամ չկարդա այս կամ այն գիրքը), այնինչ հանրակրթական դպրոցներում ցեղասպանություն թեմայի պարտադիր դասավանդման դեպքում նոր սերունդը պարզապես չի կարող հաղորդակից չլինել իր պատմական անցյալին:

Խոսելով հայաստանյան իրականության մեջ թեմայի ուսուցման մասին՝ պետք է ընդգծել այն փաստը, որ տասնամյակներ շարունակ թեման ուսուցանվել է հասարակագիտական և հայագիտական առարկաների շրջանակում: Յեղասպանություն

³ Մարության Հ., *Յեղասպանության հիշողությունն իբրև գործոն*, տե՛ս http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2268:
⁴ Խոսքը վերաբերում է Թուրքիայի Հանրապետության վարչապետ Ռ. Էրդոգանի ապրիլյան ելույթի ընթացքում արված հայտերին: Տե՛ս <http://civilnet.am/erdogan-message-1915-events-armenian/>:
⁵ Prevention of Genocide, ամբողջական տեքստը տե՛ս http://www.un.org/ga/search/view_doc.asp?symbol=A/HRC/28/L.25.
⁶ Այդ մասին տե՛ս Մանուկյան Ս., Հայաստանի համար ամենակարևոր կոնվենցիան, <http://www.tert.am/blog/?p=8951#more-8951> .

⁷ <http://www.genocidescholars.org/publications> .
⁸ Այդ մասին տե՛ս Marutyan H., Iconography of Gharabagh Movement: An Index of the Transformation of Armenian Identity.- *Armenian Forum*, “A Journal of Contemporary Affairs”, 2, (4), (2000), p. 39-55:
⁹ Տե՛ս Մարության Հ.Տ., *Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում. տեսական հարցադրումներ*, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2006, էջ 30:

թեմային դպրոցականներն ուղղակիորեն ծանոթանում են հայոց պատմության, իսկ անուղղակիորեն նաև հայ գրականության դասաժամերին:

Այսպես, հանրակրթական հիմնական դպրոցի 8-րդ դասարանի համար նախատեսված «Հայոց պատմություն» դասագրքի¹⁰ 6-րդ գլուխը (էջ 112-152) վերնագրված է «Հայաստանը և հայ ժողովուրդը Առաջին աշխարհամարտի տարիներին» և նվիրված է հիշյալ ժամանակահատվածում հայ ժողովրդի ողբերգությանը: Մասնավորապես երրորդ պարագրաֆը սկսվում է «ցեղասպանություն» հասկացության բացատրությունից, ապա ամփոփ ներկայացվում են հայերի կոտորածները: Ուշագրավ է դասանյութի վերջում «Քննարկման հարց» վերտառությամբ աշակերտներին ներկայացվող հետևյալ հարցադրումը. «Ի՞նչ նշանակություն կունենա Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը»¹¹:

Թեման առավել խորությամբ ուսումնասիրվում է հատկապես «Հայոց պատմություն» առարկայի 11-րդ դասարանի հումանիտար հոսքի համար նախատեսված դասագրքում: 6-րդ գլխում բավական հանգամանակի ներկայացվում է Հայոց մեծ եղեռնը, իսկ դրան նախորդող գլուխներում նաև՝ Հայկական հարցի միջազգայնացումը, հայ ազգային-ազատագրական պայքարը և այլն¹²: Խոսվում է նաև հայ ժողովրդի դիմադրության, ինքնապաշտպանական մարտերի մասին:

Այսուհանդերձ, Հայոց ցեղասպանության թեման դպրոցներում չի դասավանդվում որպես առանձին առարկա: Անշուշտ, վերջին տարիներին այդ ուղղությամբ որոշակի քայլեր արվել են, մասնավորապես Կալիֆոռնիայի համալսարանի դասախոս Ռ. Փիրումյանը ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ կազմել է «Հայկական հարցի պատմություն» փորձնական դասագիրքը¹³, որը նախատեսում է Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության թեմայի՝ որպես առանձին առարկայի ուսուցումը դպրոցներում, սակայն առայժմ այն չի ներառվել հանրակրթական ծրագիր և ունի ֆակուլտատիվ բնույթ:

Մանկավարժների, հոգեբանների և կրթության ոլորտում աշխատող մասնագետների կատարած քննարկումները և ընդհանրապես ցեղասպանության ուսուցման այլ օրինակների շուրջ կատարած ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մարդկային իրավունքների բռնազանցման ու նույնիսկ դրանց ծայրահեղ երևույթի՝ ցեղասպանության մասին կարելի է խոսել երեխաների հետ բոլոր տարիքներում, եթե իհարկե մոտեցումը ճիշտ լինի, նյութը և դրա մատուցումը երեխայի տարիքին և մտավոր մակարդակին համապատասխան լինեն¹⁴:

¹⁰ Տե՛ս «Հայոց պատմություն», դասագիրք 8-րդ դասարանի համար, Մելքոնյան Ա., Սիմոնյան Ա., Նազարյան Ա., Մուրադյան Հ., Երևան, «Զանգակ», 2013:

¹¹ Նույն տեղում, էջ 128:

¹² Տե՛ս «Հայոց պատմություն», 11-րդ դասարան, հումանիտար հոսքի դասագիրք, Ա. Մելքոնյան, Վ. Բարխուդարյան, Գ. Հարությունյան, Պ. Չոբանյան, Ա. Սիմոնյան, Ա. Նազարյան, Երևան, «Զանգակ», 2010, էջ 242-291:

¹³ Տե՛ս Փիրումյան Ռ., *Հայկական հարցի պատմություն, հանրակրթական դպրոցի 9-10-րդ դասարանների դասագիրք*, Երևան, 2000:

¹⁴ Տե՛ս Փիրումյան Ռ., Հայոց ցեղասպանության դասավանդումը, «*Ինչպես դասավանդել Հայոց ցեղասպանության թեման, ձեռնարկ ուսուցիչների համար*», Երևան, Հայոց ցեղասպանության

Մեր համոզմամբ Հայոց ցեղասպանություն թեման պետք է դասավանդվի դպրոցներում՝ որպես առանձին առարկա: Ցանկացած այլ առարկայի շրջանակում թեմայի դասավանդումը չի կարող աշակերտի մեջ գիտելիքների բավարար պաշար կուտակել: Հայոց ցեղասպանություն թեման ընդամենը որոշ ժամանակահատվածի պատմություն չէ, այլ գիտելիքների ավելի բարդ մի համակարգ, որը ներառում է նաև սոցիոլոգիային, հոգեբանությանը, իրավագիտությանը վերաբերող տեղեկություններ: Այս հարցում օրինակ հրեաները շատ ավելի շոշափելի ձեռքբերումներ ունեն, իսկ ամենաուշագրավն այն է, որ 2013 թ. Իսրայելի կրթության և գիտության նախարար Շայ Պիրոնը հայտարարեց, որ շուտով Հոլոքոստը դասավանդվելու է առաջին դասարանից սկսած¹⁵: Ներկայումս Իսրայելի դպրոցներում Հոլոքոստին նվիրված դասաժամերի թիվը բավական շատ է: Այսպես, սկսած 1982 թ., Իսրայելում համապատասխան պետական կարգավորման միջոցով սահմանվել է նվազագույնը 30 դասաժամ Հոլոքոստի դասավանդման համար¹⁶: Մյուս կողմից՝ հետազոտությունները ցույց են տալիս, որ Հոլոքոստի դասավանդումը տասնամյակների ընթացքում մեծ զարգացում է ապրել և իր առջև դրված խնդիրների առումով բավական ընդլայնվել՝ չսահմանափակվելով միայն հիշողության փոխանցմամբ¹⁷:

Այսպիսով, դիտարկելով ցեղասպանություն թեմայի ուսուցման հետ կապված մի շարք հիմնախնդիրներ, հանգում ենք այն եզրակացության, որ ցեղասպանություն թեմայի իրագրելման գործում աստիճանաբար մեծ նշանակություն է ստանում հանրակրթական դպրոցներում Հայոց ցեղասպանություն թեման՝ որպես առանձին առարկա դասավանդելը, սակայն դրա ուսուցումը չպետք է սահմանափակվի հայագիտական կամ հասարակագիտական առարկաների շրջանակում, այլ պետք է ուսուցանվի որպես առանձին առարկա՝ հաշվի առնելով ցեղասպանագիտական կրթության գործառնությանն նշանակությունը:

Հայոց ցեղասպանության թեմայի դասավանդման հարցի շուրջ

Քրիստիան Նազարյան

Ամփոփում

Հոդվածում քննության է առնվում հանրակրթական դպրոցներում Հայոց ցեղասպանություն թեմայի ուսուցման հիմնախնդիրը: Ցույց են տրվում հայ իրականության մեջ Մեծ եղեռնի թեմայի ներկայացման հիմնական մեխանիզմները, որոնք

թանգարան-ինստիտուտ, 2014, էջ 30:

¹⁵ Israeli schools to teach Holocaust in first grade <http://www.timesofisrael.com/israeli-schools-to-teach-holocaust-in-first-grade/>.

¹⁶ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Israel-Holocaust Education Report, Country Report on Holocaust Education in Task Force Member Countries, <http://www.holocausttaskforce.org/education/holocaust-education-reports/israel-holocaust-education-report.html>.

¹⁷ Տե՛ս Gross Zehavit, “Holocaust education in Jewish schools in Israel: Goals, dilemmas, challenges.” *Prospects* 40 (2010), pp. 93–113:

կիրառվել են վերջին տասնամյակների ընթացքում: Հիմնական եզրահանգումն այն է, որ Հայոց ցեղասպանությունը պետք է դասավանդվի դպրոցներում՝ որպես առանձին առարկա: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ցեղասպանության մասին կրթությունը կարևորվում է ցեղասպանության ենթարկված ժողովրդի, ապա նաև ամբողջ մարդկության հավաքական հիշողության պահպանման և փոխանցման ու դրանից բխող՝ սոր ցեղասպանությունների կանխարգելիչ գործառնությունների տեսանկյունից:

Բանալի բառեր՝ ցեղասպանություն թեմայի ուսուցում, Հայոց ցեղասպանություն, կանխարգելում, հիշողություն:

On the Issue of the Armenian Genocide Education

Kristine Najaryan

Summary

This article considers the issue of teaching the Armenian Genocide in the public schools. The main mechanisms of the representation of the Armenian Genocide applied during the last decades are shown. The main conclusion is that the Armenian Genocide should be taught in the schools as a separate subject, because the education is important in the context of saving and passing the collective memory of the Armenian Genocide, as well as preventing future genocides.

Keywords: genocide education, Armenian genocide, prevention, memory.

К вопросу о преподавании темы Геноцида армян

Кристине Наджарян

Резюме

В статье рассматривается вопрос преподавания истории Геноцида армян в общеобразовательных школах. Показываются основные методы представления темы Геноцида армян в армянской действительности, которые применялись на протяжении последних десятилетий. Основной вывод заключается в том, что Геноцид армян следует преподавать в школах в качестве отдельного предмета, так как преподавание истории Геноцида армян связано с сохранением коллективной памяти как подвергнутого геноциду народа, так и всего человечества, а также с предотвращением последующих геноцидов.

Ключевые слова: преподавание геноцида, Геноцид армян, предупреждение, память.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՈՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Շուշան Խաչատրյան

Ցեղասպանությունն աղետ է, որը ժամանակակից մարդկության ամենաքննարկվող ֆենոմենների շարքում է դասվում: Բացի պատմագիտական ուսումնասիրություններից, Հայոց ցեղասպանությանն անդրադարձ է կատարվում հոգեբանական գիտության կողմից, դիտարկվում է հայոց պատմության փիլիսոփայության համատեքստում, գրականագիտությունն ուսումնասիրում է Մեծ եղեռնի գրական արտացոլումը հայ և արտասահմանյան գրողների երկերում: Նշված տեսանկյուններից կատարված ուսումնասիրությունները շատ կարևոր են ու անհրաժեշտ: Սակայն այդ կարգի հետազոտությունների կողքին նաև հատուկ ուշադրություն պետք է դարձնել Մեծ եղեռնի աստվածաբանական ուսումնասիրության հարցին, որի կարիքն զգացվում է շատ վաղուց: Եղեռնը կատարվել է քրիստոնեություն դավանող ժողովրդի հետ ու պահանջում է թե՛ աստվածաբանական, թե՛ կրոնագիտական քննարկում:

Այս հոդվածում հակիրճ կներկայացվեն մի կողմից կրոնապատմագիտական ուսումնասիրությունների, մյուս կողմից՝ աստվածաբանական տեսական վերլուծությունների նյութ հանդիսացող և ցեղասպանություն երևույթին առնչվող որոշ օրակարգային թեմաներ: Ստորև պայմանականորեն առանձնացված են 2 խմբեր՝ կրոնապատմագիտական և աստվածաբանական՝ իրենց ենթակետերով: Պետք է ընդգծենք, որ հոգեբանությունը, փիլիսոփայությունը, քաղաքագիտությունը, մշակութաբանությունը և մարդաբանությունն աստվածաբանությանը և կրոնագիտությանն օժանդակող գիտակարգեր են, որոնց սահմաններում կատարված հետազոտությունները հնարավորինս համակողմանիորեն նպաստում են ցեղասպանության՝ որպես երևույթի ուսումնասիրմանը:

1. ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԿՐՈՆԱՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ

Կրոնապատմագիտական ուսումնասիրությունները վերաբերում են հետևյալ՝ առաջին հայացքից իրարից անջատ, սակայն միևնույն ֆենոմենի կրոնագիտական կողմին առնչվող ոլորտներին:

ա) Ոչնչացումը, սպանությունները կրոններում. դիցաբանական համակարգերից մինչև համաշխարհային կրոններ

Դիցաբանական մտածելակերպը բարդ, կոմպլեքս երևույթ է: Բացի հեքիաթների, լեգենդների, մետաֆորիկ կերպարների և հերոսների աշխարհ լինելուց, դիցաբանական մտածողությունը կրոնագետները, մարդաբանները, հոգեբանները և այլք արժևորել ու արժևորում են որպես տվյալ ժողովրդի հոգեբանության արքետիպային, որպես ազգի ինքնության հենակետային փուլ¹: Այնպես որ, եթե ցանկանում ենք

¹ St'u Jung Carl G., The Archetypes and the Collective Unconscious, Princeton University Press, 1990, pp. 156, 172; Ellwood Robert, *The Politics of Myth. A Study of C. G. Jung, Mircea Eliade and Joseph*

պարզել ցեղասպան գաղափարների հիմքը, անհրաժեշտ է նաև հետադարձ հայացք նետել տվյալ ազգի կրոնական, սկզբնական, դիցաբանական համակարգին, թուրքերի դեպքում՝ մինչմիաստվածային կրոնի առանձնահատկություններին. ինչպիսի՞ հերոսներ է ունեցել այդ ժամանակ, արդյոք ազգի իդեալ համարվող հերոսները եղել են արդարության մարտիկներ՞, թե՛ ազրեսիվ ուժի մարմնավորումներ:

Հանրահայտ է, որ և՛ բազմաստվածային, և՛ միաստվածային կրոններն անխտիր ունեն հատուկ բարոյական նորմեր: Յուրաքանչյուր կրոնի մեջ աշխարհայացքային վերաբերմունքն այլ կրոնների ներկայացուցիչների հանդեպ կարող է լինել և՛ բացասական, ընդհուպ նրանց ոչնչացնելու կոչերը, և՛ դրական, ինչպես, օրինակ, գթասիրտ լինելը մարդկանց հանդեպ: Բարոյականության դերի ուսումնասիրությունը տվյալ կրոնում կարող է լույս սփռել ցեղասպանագիտական ուսումնասիրությունների վրա:

բ) Քանանի ազգերի ցեղասպանությունը

Այժմ աստվածաբանական լայն քննարկումների առարկա է դարձել Քանանի յոթ ազգերի ոչնչացման խնդիրը հրեաների կողմից: Բուն աստվածաբանական հարցն այստեղ այն է, թե ինչպես կարող է համատեղվել հինկտակարանյան 10 պատվիրանների կրոնը, որտեղ սահմանվում է «Մի՛ սպանիր»-ը, այժմյան Իսրայելի և Պաղեստինի տարածքում Ք. ա. ապրող տեղաբնիկների՝ պարբերաբար իրականացվող ոչնչացման հետ: Խնդրի մասին խոսվում է հենց Հին Կտակարանում, Քանանի ազգերի կոտորածները պատմականորեն ապացուցվում են հնագիտական պեղումներով (պահպանված սեպագրերով, հնագույն տաճարների ու կոթողների շնորհիվ և այլ փաստերով)²:

գ) Թուրքական իսլամը և Հայոց ցեղասպանությունը: Կրոնների բախումը

Կրոնագիտական վերլուծությունները քննարկում են իսլամ-քրիստոնեություն առճակատումը Հայոց ցեղասպանության ընթացքում: Կրոնների բախումը ցեղասպանության մեջ ակնհայտ է և խթանող կարևորագույն գործոններից մեկն է: Պետք է ընդգծել, որ Հայոց ցեղասպանությունը կրոնական հողի վրա կատարված ցեղասպանություն չէ, սակայն կրոնական առճակատումը և կրոնական այլադավանությունն այն կարևորագույն գործոններից էին, որ հանգեցրին ցեղասպանության իրագործմանը:

Այս համատեքստում պետք է ուսումնասիրել՝ ինչպես կրոնը քաղաքական խավի կողմից օգտագործվեց որպես բախում առաջացնող միջոց: Իսլամի գաղափարախոսությունն իր բնույթով չի կարող անջատ լինել պետությունից ու քաղաքականությունից, հետևաբար նաև՝ պատերազմներից, զինված բախումներից: Օսմանյան կայսրության սուլթանը նաև *խալիֆ* էր՝ բոլոր մուսուլմանների կրոնական առաջնորդը, իսկ իսլամը կայսրության պետական կրոնն էր մինչև Թուրքիայի Հանրա-

Campbell, State University of New York Press, 1999, pp. 24, 33, 129, 176.

² Տե՛ս Կանտլևսկի Ի.Ք., *История Израиля и Иудеи до разрушения Первого Храма*, СПб., 2005, стр. 51, 80; Kiernan B., *Blood and Soil: A World History of Genocide and Extermination from Sparta to Darfur*, Yale University Press, 2007, pp. 2-3.

պետության՝ աշխարհիկ պետության հռչակումը (1923-ին): Ազգային պատկանելությունը որոշվում էր դավանանքով:

Այս նյութի լուսաբանումը կարող է ընթանալ հետևյալ հարցերի ուսումնասիրության միջոցով.

1. իսլամի յուրահատկությունը թյուրքական մշակութային տարածքում,
2. իսլամական մարդաբանությունը, բարոյագիտությունը, *ջիհադը* և Հայոց ցեղասպանությունը,
3. իսլամի ի՛նչ կրոնական ուղղություններ կային Օսմանյան Թուրքիայում Հայոց ցեղասպանության տարիներին. սուֆիական-միստիկ ուղղությունները և նրանց դերակատարությունն Օսմանյան կայսրության քաղաքականության և հասարակական կյանքի մեջ (*սակշիբանդի, մուկի, բեկթաշի* միաբանությունները):

դ) Կրոնական փոքրամասնությունների հանդեպ երիտթուրքերի վարած քաղաքականությունը և Մեծ եղեռնը, նրանց կրոնական պատկանելության հարցերը, որդեգրած գաղափարախոսությունը

Մերօրյա ցեղասպանագետ Բեն Կիերնանը գրում է. «Չնայած բոլոր երեք ռեժիմները (երիտթուրքականը, նացիստականը և խմերը- Շ. Խ.) այթեխտական էին, բոլորն էլ թիրախավորեցին հատկապես կրոնական փոքրամասնություն հանդիսացող ազգերին...»³: 1914 թվականի նոյեմբերի 14-ին Օսմանյան կայսրության հոգևոր առաջնորդը՝ *շեյխ-ուլ-իսլամը*, արձակեց *ֆեթվա*⁴ հրովարտակ, որով կոչ էր արվում աշխարհի բոլոր մուսուլմաններին *ջիհադի* դուրս գալ ընդդեմ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի: Հրովարտակը միանշանակ չընկալվեց ամբողջ իսլամական աշխարհում, քանի որ շատերն այն ընդունեցին որպես երիտթուրքերի քաղաքական ուսույթիաների արդյունք: Զիհադի այս հայտարարությունն այն խթանն էր, որը երիտթուրքերի հաշվարկով պետք է մոլեգնեցներ իսլամադավան արմատականներին այն կայսրության տարածքում, որտեղ դարերով դժվարին փոխհարաբերություններ էին հաստատվել քրիստոնյա տեղաբնիկ ազգերի և իսլամ ընդունած թյուրքական քոչվորների սերունդների միջև:

Երիտթուրքերի գաղափարախոսական կորիզը կարելի է համարել այթեիզմը՝ չմոռանալով նրանց կողմից որդեգրված օժանդակ գաղափարախոսությունները, ինչպիսիք էին՝ պոզիտիվիզմը, կենսաբանական մատերիալիզմը, սոցիալական դարվինիզմը և այլն: Երիտթուրքերը սեփական գաղափարները ձևավորելիս, ի

³ Kiernan Ben, “Twentieth-Century Genocides: Underlying Ideological Themes from Armenia to East Timor”, in *The Specter of Genocide: Mass Murder in Historical Perspective*, ed. by Robert Gellately & Ben Kiernan, Cambridge University Press, 2003, p. 29.

⁴ *Տեթվա* - (արաբ. թարգմ.՝ «որոշում») – իսլամական կրոնաիրավական որոշում՝ կայացված բարձրագույն հոգևոր հեղինակություն ունեցող անձի (*սուֆթիի, դադիի, շեյխ ուլ-իսլամի*) կողմից: Յուրաքանչյուր կարևոր պետական կամ հասարակական կյանքին վերաբերող որոշում կայացնելուց առաջ *ֆեթվա* ստանալը միշտ պարտադիր պայման է եղել: 1914-ի նոյեմբերի 14-ին թողարկված *ֆեթվան* գրվել էր հակիրճ՝ թվով 5 հարց ու պատասխանի տեսքով, այն *ջիհադի* էր կոչում բոլոր մուսուլմաններին՝ ընդդեմ Աստանտի երկրների ու նրանց համակիրների՝ սեփական հավատը և իսլամական «խալիֆայությունը» պաշտպանելու պատրվակով:

թիվս այլոց, օգտվել էին հատկապես պոզիտիվիզմի հիմնադիր փիլիսոփա Օգյուստ Կոնտի⁵ և սոցիալական հոգեբան Գյուստավ Լը Բոնի⁶ տեսություններից:

ե) Հայերի կրոնափոխության հարցը ցեղասպանության տարիներին

Նախորդ երկու ենթակետերի հետ անմիջական առնչություն ունի ցեղասպանության տարիներին հայերի բռնի կրոնափոխության երևույթը: Բռնի կրոնափոխությունը՝ որպես ցեղասպանության գործիք, գատում է Հայոց ցեղասպանությունը մյուս՝ մի շարք ցեղասպանություններից:

Այս խնդիրը մշակութային ցեղասպանության մաս է: Այս ենթակետի շրջանակներում կրոնափոխությունը պետք է ուսումնասիրվի ամենայն մանրամասնությամբ՝ ծեսը, կրոնափոխ եղածների սոցիալական ինտեգրման փուլերը, կրոնասոցիալական նշանակությունն ու հետևանքները Հայոց ցեղասպանության ընթացքում և հետագայում:

2. ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Ցեղասպանությունը ներառում է և՛ մարդկային էթիկական չարը, և՛ կրոնական չարը: Այս առումով Հոլոքոստի աստվածաբանական մեկնաբանությունները շատ են. աստվածաբանական աշխատանքներ են սկսվել տպագրվել անմիջապես Հոլոքոստից և Իսրայելի պետության վերականգնումից (1948 թ.) հետո: Հոլոքոստի աստվածաբանությունն առանձին մտածողների տեսակետների համախումբն է, իսկ այդ տեսակետները տարբեր հեղինակների մոտ հաճախ իրարամերժ են լինում, հետևաբար աստվածաբանական միահամուռ տեսակետ գոյություն չունի⁷: Հարցերը, որոնք արծարծվում են Հոլոքոստի մասին աստվածաբանելիս, բազմաթիվ են ու առնչվում են հրեական աշխարհայացքի հիմքերին, որտեղ կրոնը՝ հուղայականությունը, առանցքային տեղ է զբաղեցնում:

Նախորդ դարի հիսունական թվականներից սկսած՝ մեծ աղմուկ բարձրացրեց «Աստվածի մահվան» մասին աստվածաբանությունն ու համապատասխան արձագանքներ ունեցավ փիլիսոփայության մեջ⁸: Այս տեսությունն առաջադրողներից

էր հայազգի բողոքական, ռադիկալ աստվածաբանության ներկայացուցիչ Գարրիել Վահանյանը (1927-2012), ով ցեղասպանությունը վերապրած ծնողների զավակ էր և ծանոթ էր Եղեռնի գործած դեստրուկտիվ ազդեցությանը ոչ միայն ֆիզիկական, այլև հոգեբանական ու հոգևոր մակարդակներում: Նա առաջադրեց այն գաղափարը, որ ժամանակակից աշխարհը «հետքրիստոնեական» (անգլ. post-Christian) դարաշրջան է ապրում: Անդրադառնալով մարդու աշխարհընկալման և բարոյական փոփոխություններին և այդ ամենի մեջ Աստծու ներկայության գաղափարին՝⁹ Վահանյանը կարծում է, որ մշակույթը կորցրել է ամեն տեսակ «սրբազան» տարր, իսկ ժամանակակից մարդու գիտակցության մեջ «Աստված մահացել է»: Հոլոքոստի առաջին աստվածաբաններից մեկը՝ Ռիչարդ Ռուբենշտայնը (ծն. 1924), այս ուղղությունից ազդված, իր «Օսվենցիմից հետո» գրքում կարծում է, որ հրեաների Աստվածը մահացել է, Նա այլևս հոգ չի տանում իր ազգի մասին, հետևաբար, ըստ նրա, իմաստ չունի ո՛չ աղոթելը, ո՛չ Պասեք տոնելը, քանի որ դա այն տոնն է, որը խորհրդանշում է Աստծու հոգածությունը հրեա ժողովրդի հանդեպ. Հոլոքոստի ժամանակ Աստված, իբր, չհոգաց, մոռացավ իր ազգի մասին: Ըստ նրա՝ «Աստված Սուրբ Չգոյ է»՝ անտարբեր արարածի ճակատագրի հանդեպ. դա, ըստ Ռուբենշտայնի, հատկապես երևաց Հոլոքոստի ժամանակ¹⁰:

Հոլոքոստի առավել հայտնի աստվածաբաններից է Էլիզեթ Բերկովիցը (1908-1992): Բերկովիցի աստվածաբանությունը կարելի է կոչել պատմամասնաբանական, քանի որ իր «Հավատքը Հոլոքոստից հետո» գրքով նա փորձում է ուրվագծել Աստծո միջամտելը մարդկության պատմությանը, իսկ տեղի ունեցող մարդածին աղետները պարզապես մարդու ազատկամային բացասական դրսևորումներն են: Հրեաների կոտորածը ամենևին էլ հակասեմական պոռթկում չէր, այլ, ինչպես նա է համոզված, նացիստների մետաֆիզիկական վախն էր «իշխանություն չունեցող» Աստծուց, որը միաժամանակ ներկա է պատմության ընթացքում¹¹: Նացիստները, այդպիսով, վախենում էին հրեաների պարադոքսալ Աստծուց և ցանկանում էին վերացնել այդ Աստծու «վկաներին»՝ հրեաներին:

Աստվածաբանական հարցերը, որոնց ծրագրվում է հատուկ ուշադրություն դարձնել, վերաբերում են և՛ հուղայական աստվածաբանությանը, և՛ հրեա-քրիստոնեական երկխոսությանը, և՛ Մեծ եղեռնի թեոլոգիային: Աստվածաբանական հարցերը, որ առաջադրում է ցեղասպանությունը, հետևյալն են.

Կապուտոն, ռաբբի Ռիչարդ Ռուբենշտայնը և Պիտեր Ռոլինզը : Այս ուղղությունը գաղափարական հիմքեր է քաղել Դիոնիսիոս Արիոպագացու, Նիկողայոս Կուզանացու, Մայստեր Էկհարտի, Հովհան Խաչի աստվածաբանական գործերից, ինչպես նաև Ֆրիդրիխ Հեգելի և Ֆրիդրիխ Նիցշեի փիլիսոփայությունից:

⁹ St' u Vahanian Gabriel, *The Death of God: The Culture of Our Post-Christian Era*, Wipf & Stock Publishers, 2009.

¹⁰ St' u Rubenstein Richard L., *After Auschwitz. History, Theology, and Contemporary Judaism*, Johns Hopkins University Press, 1992.

¹¹ Berkovits, Eliezer in http://www.jewishvirtuallibrary.org/jsource/judaica/ejud_0002_0003_0_02688.html: Lpawgnigիչ տե՛ս Morgan Michael L., *Beyond Auschwitz, Post-Holocaust Jewish Thought in America*, Oxford University Press, 2001, pp. 109-118:

⁵ **Օգյուստ Կոնտ** (1798-1857), ֆրանսիացի փիլիսոփա, պոզիտիվիզմի և սոցիոլոգիայի՝ որպես ինքնուրույն գիտության, հիմնադիրն է: Պոզիտիվիստական համակարգն անջատում է գիտությունը մետաֆիզիկայից և աստվածաբանությունից, հասարակությունը խիստ դասակարգված է ներկայացվում, որի գաղափարական հիմքը «պոզիտիվիստական եկեղեցու հոգևոր այրերի» կողմից մշակված պոզիտիվիստական բարոյագիտությունն է:

⁶ **Գյուստավ Լը Բոն** (1841-1931), ֆրանսիացի հոգեբան, սոցիոլոգ, մարդաբան և պատմաբան: Հանրաճանաչություն ձեռք բերեց մարդկային բազմության, ամբոխի հոգեբանության ուսումնասիրություններով: Հիմնական մտքերը վերաբերում են ամբոխի հոգեբանությանը՝ որպես կարևոր քաղաքական ու սոցիալական միավորի, արական սեռի դոմինանտությանը, ինչպես նաև նկարագրել է ամբոխի վրա ազդելու մեթոդները:

⁷ Հոլոքոստի «աստվածաբանության» մասին ավելի մանրամասն տե՛ս մեր ավելի վաղ տպագրված հոդվածում. Խաչատրյան Շ., Ինչպե՛ս դիտարկել ցեղասպանությունն աստվածաբանության տեսանկյունից, «Էջմիածին», ԺԲ, 2012, էջ 15-18:

⁸ «Աստծո մահվան աստվածաբանությունը» ռադիկալ աստվածաբանություն է, որի ներկայացուցիչներն էին նաև Պոլ վան Բուրենը, Ուիլյամ Համֆրիսոնը, Ջոն Ռոբինսոնը, Թոմաս Ալտիցերը, Ջոն

ա) Յեղասպանության թեոլոգիան

Յեղասպանության ուսումնասիրությունը կատարվում է **թեոլոգիայի**¹² և՛ աստվածաբանական, և՛ փիլիսոփայական հայեցակարգերի հետ համատեղ: Այն հարցերից, որոնք քննվում են այս ուսմունքի շրջանակներում, մի քանիսը հետևյալն են. «ինչպե՞ս կարող է մարդու աշխարհայացքը նույնը մնալ ցեղասպանությունից հետո», «արդյո՞ք նույնը պետք է մնա մարդու մասին ընկալումը», «ի՞նչ կատարվեց Աստծո Արդարադատության ուսմունքի հետ», «ինչո՞վ կարող է օգնել թեոլոգիայի ցանկացած փորձ այն բանից հետո, երբ չարը իրեն դրսևորեց որպես ամենաբարեկամը և անկախ ուժ», «ինչպե՞ս հասկանալ չարի դիալեկտիկ դերակատարումը աշխարհում», «ինչպե՞ս բացատրել Աստծու սարսափեցնող լռությունը կոտորածի ժամանակ» և այլն: Այս հարցերն իրենց թե՛ փիլիսոփայական, թե՛ աստվածաբանական ուղղվածությամբ ստանում են պատասխաններ ամենատարբեր տեսանկյուններից¹³:

բ) Զոհի կամ զոհաբերության աստվածաբանություն¹⁴. զոհաբերության իմաստը ցեղասպանության մեջ

Պատմագիտության, հոգեբանության, իրավագիտության բնագավառներում «զոհ» բառը, եզրը, ունի տվյալ ոլորտներին բնորոշ բացատրություն: Օրինակ՝ հոգեբանության մեջ առանձին բնագավառ՝ *վիկտիմալոգիան* զբաղվում է զոհի վարքի, նրա կրած հոգեբանական ձևափոխությունների ուսումնասիրություններով, իրավաբանության մեջ քրեագիտության առանձին կատեգորիա է զոհը: Սակայն բառի ծագումը հուշում է, որ ոլորտը, որին պատկանում է բառը, կրոնականն է: Նույնը կարող ենք ասել նաև «հոլոքոստ» եզրի մասին, որի ոլորտը ևս կրոնականն է՝ ամբողջովին այրվող՝ ողջակիզման ենթարկվող զոհը, որը կատարվում էր Սողոմոնի տաճարում¹⁵: Սակայն «զոհ» բառն օգտագործելիս պետք է լինել առավելա-

գույնս զգույշ, որպեսզի «զոհ» ասելիս պիտակավորման կամ արժևորման երևույթ չնկատվի: Այս դիտանկյունից խնդիրն ուսումնասիրելն իր բնույթով ֆենոմենոլոգիական է և չի ենթադրում տուժող կողմին որպես հավերժական զոհ ներկայացնելը:

գ) Կաթոլիկ և բողոքական միսիոներների աստվածաբանական խորհրդածությունները հայերի կոտորածների մասին

Միսիոներները, որոնք Եղեռնի ակնատեսն են եղել, աչքի են ընկնում համամարդկային ճգնաժամի հատուկ ընկալմամբ՝ այդ երևույթը կապելով առաջին հերթին կրոնական և բարոյական ճգնաժամի հետ: Նրանց օրագրերում կարելի է գտնել բազմաթիվ խորհրդածություններ՝ համեմված յուրօրինակ պատմափիլիսոփայությամբ, դեպքերը կապելով քրիստոնեական ընդհանուր վախճանաբանությամբ հատուկ ուսմունքների հետ: Հաճախ, եթե անգամ միսիոները կամ միսիոներուհին իր դավանաբանական պատկանելության մասին ոչինչ չի հաղորդում, կարելի է դրա մասին պատկերացում կազմել նրա յուրահատուկ աստվածաբանական դիրքորոշումից, որն արտացոլվում է օրագրի էջերում: Ակնատես լինելով Հայոց ցեղասպանության վայրագություններին՝ նրանցից շատերը համոզված են, որ հայերը նահատակվում են քրիստոնյա լինելու պատճառով, իսկ դեպքերը հաճախ ընկալվում են որպես աշխարհի վախճանի նշաններից մեկը: Նրանց հուշերում մեջբերվում են Աստվածաշնչից համարներ՝ անելով համեմատություններ հայերի կրած տառապանքների հետ (Հայտն. 12:11, Հուդիթ 8:15, Առակ. 3:12, Սաղմ. 125:5)¹⁶, ուշադրություն են դարձնում ցեղասպանությունն իրականացնողների կողմից սպանություններին ծիսական երանգավորում հաղորդելու դեպքերին, ընդգծում կրոնափոխ չլինելու հայերի հաստատականությունը: Այս իմաստով աբբա Ժյուլ Շապեռոնի, Մարիա Յակոբսենի, Ալմա Յոհանսոնի, Բողի Բյոռնի, Ռուֆ Փարմիլի, Հենրի Ռիզզի և բազում այլ միսիոներների վկայություններն անգերազնահատելի են:

դ) Զանգվածային սպանությունների իմաստաբանությունը (սեմանտիկան), կապը կրոնական նշանաբանության հետ

Այս ենթակետի նյութը կարող են դառնալ հետևյալ ասպեկտները՝ իրենց սիմվոլիկ կրոնահոգեբանական և սեմանտիկ վերլուծություններով.

- 1. վայրերը (անապատ, գետ, դաշտ, բնակավայրից դուրս հանվելը և այլն),
- 2. ձևերը (կտտանքներ, խաչելություն, ծիսական սպանություններ, մահվան շարժակազմ, բռնաբարություն և այլն):

ե) Եղեռնի զոհերի սրբադասման հարցեր

Հոլոքոստի ժամանակ սպանված հրեաներն ուղղադավան հուդայական հեղինակների կողմից *«կեղոշիմ»*-ի (եբր. «սրբեր»)՝ հանուն հավատի մահացածների,

¹² Նախընտրում ենք օգտագործել «թեոլոգիա» հունարեն եզրը (կազմված է հուն. θεός՝ «Աստված», և δίκη՝ «արդարություն», «իրավունք», բառերից) հայերեն «աստվածաբարարացում» մոտավոր թարգմանության փոխարեն:

¹³ Թեոլոգիայի մասին խոսվում է Հայոց ցեղասպանությունը վերապրածների վկայությունների վերաբերող հետևյալ գրքում՝ Miller D., Miller L.; *Survivors: Oral History of the Armenian Genocide*, University of California Press, 1993, pp. 177-186.

¹⁴ Զոհի կամ զոհաբերման աստվածաբանությանը (անգլ. “theology of sacrifice”) կարելի է ծանոթանալ հետևյալ հոդվածում. Daly Robert J., *New Developments in the Theology of Sacrifice*, in *Liturgical Ministry 18* (Spring 2009), Ohio, Institute for Liturgical Ministry at Maria Stein Center, pp. 49-58: Լրացուցիչ տե՛ս Eberhart Christian A., *The Sacrifice of Jesus: Understanding Atonement Biblically*. Minneapolis: Augsburg Fortress, 2011:

¹⁵ «Հոլոքոստ»-ը ծագում է Ὀλοκαύτωμα հունարեն բառից, որը նշանակում է «ողջակիզում»: Խոսքը վերաբերում է Ղևտ. Ա. 3-17, Զ. 1-6, 8-13 համարներում նկարագրված զոհաբերության կարգին, երբ զոհաբերվող կենդանին այրվում էր ամբողջությամբ: Անվանումը ծագում է յ՞ «օլա» եբրայերեն բառից, որը նշանակում է «բարձրապատիվ», «վեր հաննել»: Հին Կտակարանի Ղևտացվոց գրքում չեն նշվում այն հանցանքները, որոնց պատճառով պետք է մատուցվեր այս տեսակի զոհը, սակայն այն պետք է մատուցելին մարդիկ, ովքեր չէին կատարել դիտավորյալ հանցանք, այլ անզգուշորեն էին մեղք գործել: Արու զոհն ամբողջությամբ այրվում էր՝ բացի մորթուց և արյունից: Կարևոր պայման էր, որ զոհաբերողը ձեռքը դնել կենդանու վրա՝ որպես խորհրդանիշ այն բանի, որ իր մեղքերը փոխանցում է կենդանուն:

¹⁶ Զոմմեր Էռնստ, *Ճշմարտությունը աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի կրած ցեղասպանության մասին*, Ե., 2002, էջ 9, 75: Տե՛ս օրինակ Մարիա Յակոբսենի օրագրության դանիերեն բնագիրը. Ճեյքըպարն Մարիա, Օրագրություն 1907-1919 Խարբերդ, Անթիլիաս, 1979, էջ 747-748:

հասկացության մեջ չեն դասվում¹⁷. Հուրոքստի ընթացքում մահացան հրեաներ՝ լինելով թե՛ աթեիստներ, թե՛ հուդայականներ, թե՛ քրիստոնյաներ: Սակայն Մեծ եղեռնի ընթացքում շատ հայեր որպես քրիստոնյա նահատակվեցին՝ մերժելով կրոնափոխությունը, որն առաջարկվում էր հայերին՝ որպես մահվանն այլընտրանք: Հայ առաքելական եկեղեցու վերջին սուրբը Գրիգոր Տաթևացին (1346-1409) է, որին Հայ եկեղեցին արքայապետ է Կիրակոս Ա Վիրապեցի (1441-1443) կաթողիկոսի գահակալության ժամանակ: Հայ նահատակների քրիստոնեական սխրանքի շուրջ պետք է կատարվեն աստվածաբանական մեկնաբանություններ՝ մանրակրկիտ աղբյուրագիտական վերլուծություններով:

զ) Մեծ եղեռնի աստվածաբանական վերլուծությունները

Եթե «ցեղասպանությունը» իրավական լեզվով հանցանքների հանցանք է կոչվում, ապա աստվածաբանության լեզվով այն «մեղքերի մեղք» կարելի է կոչել, քանի որ ներառում է բոլոր մեղքերը և դրանց հետևանքները: Հայոց ցեղասպանությունը աստվածաբանության դիտանկյունից փորձել են նայել հետևյալ աստվածաբանները: Հայր Համազասպ Գլընճյանն իր աստվածաբանական կարծիքն է արտահայտել Գարբիել Վահանյանի «Աստծո մահվան» տեսության շուրջ¹⁸: Հայր Լևոն Զեքիյանն ունի մենագրություն՝ նվիրված հայ ինքնությանը,¹⁹ և Հայոց ցեղասպանության բարոյագիտական և աստվածաբանական հարցերին առնչվող հոդվածներ²⁰: Վիգեն Գուրոյանը Վիրջինիայի համալսարանի աստվածաբանության դասախոս է. նա դիտարկում է Եղեռն - Եկեղեցի - ժողովուրդ գուգահեռները²¹, «Ինչպե՞ս մենք պետք է հիշենք» հոդվածների ժողովածուի մեջ խոսում է ազգի կրած հոգեբանական ու հոգևոր ճգնաժամերի շուրջ, անցում կատարում

հայոց պատմության փիլիսոփայությանը, ինչպես և Սփյուռքում ցեղասպանությունը հիշելու և վկայակոչելու երևույթին²²: Գրական և փիլիսոփայական գուգահեռներով հոդված է տպագրել Վենետիկի Մխիթարյան միաբան Հայր Գրիգորի Սիրանյանը²³: Եղեռնի մասին խոսել է նաև անգլիկան աստվածաբան Ֆլորա Քեշգեցյանը²⁴:

է) Հայոց ցեղասպանությունը, Հայ եկեղեցին և ազգային ինքնության պահպանման խնդիրները XXI դարում

XXI դարն իր մարտահրավերներով հայ ազգային ինքնությանն առնչվող բազմաթիվ հարցեր է առաջադրում: Էթնիկ ինքնության հարցը հայերիս համար արդեն մեկ դար է, ինչ ուղիղ կապ ունի Եղեռնի հետ: Յեղասպանության հետևանքով մեծ ավերածություն եղավ ոչ միայն ֆիզիկական մակարդակում, այլև հոգեկան և հոգևոր մակարդակներում: Հայերի ինքնագիտակցականը փոփոխություններ կրեց, որոնք իրենց ազդեցությունն ունեցան նաև հոգևոր կերտվածքի վրա²⁵: Յեղասպանության հետևանքով վնասվեց նաև քրիստոնեական հավատքը. թե՛ Սփյուռքում, թե՛ Հայաստանում պատկերը գրեթե չի տարբերվում: Խիստ տառապանքն ազդեցություն է գործում կրոնական հավատքի վրա: Ոմանք ծայրահեղ աթեիստ են, մյուսները փորձում են տրամաբանական պատճառներ գտնել, թե ինչո՞ւ Աստված չմիջամտեց՝ կանխելու վերահաս աղետը «քրիստոնյա ազգի»²⁶ նկատմամբ: Մեկ այլ դեպքում էլ տեսնում ենք հավատի ձևափոխում, որի մոտիվացիան հետևյալն է. Աստված չուզեց դադարեցնել աղետը, հետևաբար հայ ժողովուրդն արժանի էր դրան, ինչպես և ամենատարբեր բացատրություններ ու կարծիքներ: Այս բոլոր հարցադրումներն ու պատասխաններն այն խոր վիշտն են արտահայտում, որը չի հաղթահարվել, որն ուղեկցվում է վիրավորանքով, փնտրում է պատասխաններ թե՛ բանականի, թե՛ գերբնականի սահմաններում: Հետաքրքիր է, որ հայերը, գիտակցելով հանդերձ երիտթյուրքերի ոճրագործ լինելը, չեն բավարարվում դրանով, ու երբեմն էլ կարելի է կարծել, որ թյուրքերը հայերիս այս հոգեվերլուծական մտահայեցումների հետ ընդհանրապես կապ չունեն,

¹⁷ Այս տեսակետը կիսում են նաև սիոնիզմը՝ որպես հրեա ազգի վրա «ծանրացած մեղք» ընկալող ուղարարությունը քարոզիչները: Մանրամասն տե՛ս Пилкингтон С. М., Иудаизм, Москва, Фаир-пресс, 2001, стр. 346:

¹⁸ Տե՛ս Գլընճյան Հ. Համազասպ, *Աստվածի եզակի յուրաքանչյուրը*, «Բազմավեպ», հայագիտական-բանասիրական-գրական հանդես, թիվ 1-2, Վենետիկ – Ս. Ղազար, 1975, էջ 202-223:

¹⁹ Տե՛ս Զեքիյան Հ. Պողոս-Լեւոն, *Հոգիի և ինքնության հետքերով*, Երևան, 2000:

²⁰ Տե՛ս հետևյալ հոդվածները՝ Zekiyan Boghos Levon, “Quale rapporto tra la definizione giuridica e la realtà storica dei genocidi?” in *La memoria del Male. Percorsi tra gli stermini del Novecento e il loro ricordo*, a cura di Paolo Bernardini, Diego Lucci, Gadi Luzzato Voghera, CLEUP, Padova 2006, pp. 182-206; Zekiyan Boghos Levon, “Metz yeghern, il genocidio armeno, Paradigma di sradicamento e di esilio irreversibile” in *Nel Suo Nome. Conflitti, riconoscimento, convivenza delle religioni*, EDB, Bologna 2005, pp. 213-224; Zekiyan Boghos Levon, “Dal «tehcir» al genocidio. Riflessioni sul «Metz Yeghern» armeno a partire dal negazionismo del governo turco” in *La violenza contro la popolazione civile nella grande guerra. Deportati, profughi, internati*, a cura di Bruna Bianchi, Ed. UNICOPLI, Milano 2006, pp. 349-364; Zekiyan Boghos Levon, “Riflessioni sulla trasposizione semantica del concetto di “giusto” nel contesto del “Metz Yeghern” armeno, in *Si può sempre dire un sì o un no: I Giusti contro i Genocidi degli Armeni e degli Ebrei*, Convegno Internazionale, Padova, 30 novembre-2 dicembre 2000, pp. 216-243; Boghos Levon Zekiyan, “Reflections on Genocide: The Armenian Case: A Radical Negativity and Polyvalent Dynamics”, published in *Annali di Ca’ Foscari*, XXXVII, 3, 1998 (Serie orientale 29), pp. 223-241.

²¹ Տե՛ս Guroian Vigen, *Armenian Genocide And Christian Existence* file://localhost/E:/Cross%20Currents/Armenian%20genocide%20and%20Christian%20existence.htm:

²² Տե՛ս Guroian Vigen, *How Shall We Remember? Reflections on the Armenian Genocide and Church Faith*, (ԲԱՆ ԵՒ ԳԻՐ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ, ԹԻՒ 3), Montreal, 2005, տե՛ս նույնը նաև՝ Guroian Vigen, *How shall we remember?* <http://web.archive.org/web/20050220164111/http://sain.org/WINDOW/Genoci3.txt> կայքում:

²³ Տե՛ս Siranian R., *Dov’era Dio? Una lettura spirituale del genocidio armeno*, Il Regno, n. 4, 2007, http://www.ilregno.it/it/rivista_articolo.php?RID=0&CODICE=48051 :

²⁴ Տե՛ս Keshgegian Flora A., *Redeeming Memories: A Theology Of Healing And Transformation*, Nashville, Abingdon Press, 2000 մենագրությունը:

²⁵ Սփյուռքահայ հոգեբան Մելինե Գարագաշյանը հետևյալ դիտարկումն է կատարում. «Անհատի հոգեցնցումը անհատով չի սահմանափակվում, փոխանցվում է ընտանիքի անդամներին, շրջապատին: Իսկ եթե մի ամբողջ ժողովուրդ է հոգեցնցման ենթարկվում, հատկանիշներն անցնում են սերնդից սերունդ, հաճախ արտահայտվում վրեժի պոթելումով: Այդ պատճառով են ցեղասպանության երկրորդ սերնդի շատ նորածիններ Վրեժ, Վրեժուհի անուններով մկրտվել» (Գարագաշյան Մ., *Յեղասպանության հոգեցնցումն ու ազգային ինքնությունը*, Երևան, 2006, էջ 71):

²⁶ Այս արտահայտությունը կարելի է չակերտների մեջ վերցնել, քանի որ ազգն ամբողջությամբ չի կարող լինել քրիստոնյա: Հետևաբար այս արտահայտությունը մեզ թույլ ենք տալիս օգտագործել՝ դիտարկելով ազգը որպես իր մեծամասնությամբ քրիստոնյա, որը քրիստոնեական քաղաքակրթության մի մասն է և քրիստոնեական մշակույթի կրողը:

քանի որ հայերը նրանց գիտակցաբար դուրս են թողնում այդ շրջանակից: Միում կա՝ պարզելու քրիստոնյա հայի ու Աստծու հարաբերությունները, գտնելու պատասխաններ բազմաթիվ «ինչո՞ւ»-ների, որոնք շատ հաճախ վերաբերում են:

Հոդվածում համառոտ ներկայացվեցին այն հիմնական կետերը, որոնք պահանջում են կրոնագիտական և աստվածաբանական ուսումնասիրություն: Ցեղասպանությունները կանգնած են ներկայիս մշակութային ու կրոնական ճգնաժամերի հիմքերի մոտ՝ մարտահրավեր նետելով մարդու գործունեության ցանկացած ոլորտի: Ցեղասպանությունը կապված է ուտոպիստական առաջընթացի տեսիլքների ու հեղափոխականության, բարոյական անկման և կրոնական-աշխարհայացքային տարբերությունների հետ: Մարդկության ճգնաժամի հետ կապված այս երևույթը պետք է լինի աստվածաբանության և կրոնագիտության ուսումնասիրության նյութ հանդիսացող առաջնային հարցերից:

Հայոց ցեղասպանությունը կրոնագիտության և աստվածաբանության համատեքստում

Շուշան Խաչատրյան

Անփոփում

Հոդվածի մեջ անդրադարձ է կատարվում Հայոց ցեղասպանության աստվածաբանական և կրոնագիտական ուսումնասիրություններին: Առանձնացված են երկու գլխավոր թեմաներ՝ պատմակրոնագիտական և աստվածաբանական՝ իրենց ենթակետերով ու դրանց համապատասխան համառոտ նկարագրությամբ: Պատմա-կրոնագիտական ուսումնասիրությունների նյութ են Քանանի ազգերի կոտորածը (որի մասին խոսվում է Հին Կտակարանում), ցեղասպանությունների ընթացքում կրոնների բախումը. կա՞ր արդյոք կրոնների քաղաքակրթական բախում, որի հետևանքով տեղի ունեցավ ցեղասպանությունը (իսլամի և քրիստոնեության օրինակով): Երկրորդ խումբը վերաբերում է աստվածաբանական ուսումնասիրություններին՝ ներառելով զոհաբերության և զոհի աստվածաբանության որոշ հարցեր, չարի հիմնախնդրի և թեոդիցեայի աստվածաբանական վերլուծություն ցեղասպանության թեմայի շուրջ, ցեղասպանության զոհերի սրբադասման հարցերը և ցեղասպանությունից հետո ազգային ինքնությանն առնչվող որոշ թեմաներ:

Բանալի բառեր՝ ցեղասպանության աստվածաբանություն, կրոնափոխություն, մեղքերի մեղք, չարի հիմնախնդիրը, թեոդիցեա, սրբադասում:

The Armenian Genocide in the Context of Religious Studies and Theology

Shushan Khachatryan

Summary

The article deals with some interpretations of the phenomenon of genocide in terms of theology and religious studies. The article is an introductory description of the religious studies and theological research of genocides. The issues are classified under two main groups with its points: historical-religious and theological. The first group touches some questions of human massacres in the pagan religions, the stories about the slaughter of indigenous nations of Canaan reflected in the Old Testament, some issues on religious conversions and clashes of the religions that might lead to genocides (the principal pattern is Islam and Christianity). The second group includes some aspects of theology of sacrifices, problem of evil and theodicy, a discussion of canonization of the victims of the Armenian Genocide and some questions of the Armenian national identity after the Genocide.

Keywords: genocide theology, conversion, sin of all sins, problem of evil, theodicy, canonization.

Геноцид армян в контексте религиозоведческих и теологических исследований

Шушан Хачатрян

Резюме

Изложены некоторые положения исследования феномена геноцида в рамках теологии и религиоведения. В первой группе представлены некоторые ключевые стороны исследования историко-религиозных аспектов геноцида армян. В религиоведческой части речь идет о проблеме истребления языческих народов ближневосточного исторического Ханаана, о котором упоминается в Ветхом Завете, проблема религиозной конверсии, столкновения религий (в частности - ислама и христианства) во время геноцида армян из-за цивилизационного различия. Теологические истолкования геноцида армян вмещают аспекты теологии жертвы, проблемы зла и теодицеи, вопросы канонизации жертв геноцида и национальной идентичности армянского народа после геноцида.

Ключевые слова: теология геноцида, религиозная конверсия, грех грехов, проблема зла, теодицея, канонизация.

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԵՏՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԵՐԻ ՀԱՆԴԵՊ
ՌԱՍԻՋՄԻ ԴԻՄԵՎՈՐՈՒՄ. ԹՈՒՐԿԻԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ՝**

Էդիտա Գոյսան

Հայերի դեմ 1915-1923 թթ. իրագործված հանցագործության ժխտումը թուրքական իշխանությունների կողմից հստակորեն պայմանավորված է նախ և առաջ պատասխանատվությունից խուսափելու, ինչպես նաև ռասիզմի և հայատյացության շարժառիթներով: Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտումը վերածվել է հսկայական «արդյունաբերության», որը հիմնված է գիտական անազնվության, կեղծ տեղեկատվության, քաղաքական ճշումների ու սպառնալիքների վրա և ֆինանսավորվում է թուրքական իշխանությունների կողմից¹: Այս ամենը, համաձայն թուրք իրավապաշտպան Այշե Գունայսուի, բերում է Թուրքիայում ստի իշխանության՝ կոռուպացնելով ողջ համակարգը²:

Թուրքական կառավարության կողմից տարվող այս ժխտողական քաղաքականությունը մեծացնում է նաև թուրք հասարակության դժգոհությունը հայերի հանդեպ: Արդյունքում «հայ» անունը շարունակում է մնալ որպես վիրավորանք, և հետագոտությունները ցույց են տալիս, որ հայերը Թուրքիայում ամենատեղի ազգն են, և թուրք երեխաների 73%-ը կարծում է, որ հայերը վատ մարդիկ են⁴:

Մինչդեռ այսօր Թուրքիայի Հանրապետությունը միջազգային հարաբերությունների ակտիվ մասնակից է, ինչպես նաև բազմաթիվ միջազգային պայմանագրերի կողմ: 1954 թ. Թուրքիան վավերացրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան⁵: 2003 թ. Թուրքիան հայտարարեց Քաղաքացիական և քաղաքական իրավունքների կոնվենցիայի դրույթների իրականացման հանդեպ իր պարտավորության մասին: Միաժամանակ 2006 թ. ստորագրելով նույն կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը՝ Թուրքիան լիազորեց կոնվենցիային կից ստեղծված Մարդու իրավունքների կոմիտեն ընդունել և ուսումնասիրել Թուրքիայի իրավասության տակ գտնվող անձանց դիմումները՝ կապված Կոնվենցիայով ամրագրված իրենց իրավունքների խախտման հետ⁶:

Չնայած թուրքական օրենսդրության մեջ միջազգային պայմանագրերի առաջնայնության և դրանց դրույթների իրականացման վերաբերյալ թուրքական կողմի

հավաստիացումներին՝ Թուրքիայի Հանրապետությունը շարունակում է խախտել իր միջազգային պարտավորությունները՝ ժխտելով Հայոց ցեղասպանությունը:

1. Յեղասպանության ժխտման վերաբերյալ տեսական հիմնավորումներ

Յեղասպանությունը մեկանգամյա գործողություն չէ, այլ շարունակական գործընթաց: Յեղասպանագետների միջազգային ընկերակցության նախկին նախագահ Գ. Սթենթոնն առանձնացնում է Յեղասպանության գործողության 10 փուլ: Ժխտումը ցեղասպանության 10-րդ փուլն է, որը մշտապես հաջորդում է յուրաքանչյուր ցեղասպանության⁷: Բազմաթիվ գիտնականներ կարծում են, որ հայտնի ցեղասպանությունների ծրագրված ժխտումը վտանգավոր գործողություն է և պետք է հավասարեցվի իրական ցեղասպանության անմիջական կամ ոչ անմիջական աջակցության հետ⁸ (ինչը միջազգային իրավունքում պատժելի արարք է): Կազմակերպված, կանխամտածված ժխտումն ագրեսիայի ձև է, որը պետք է դիտվի որպես աջակցություն իրականացված ցեղասպանությանը⁹: Թե ինչպես է ցեղասպանության ժխտումը հանդիսանում ուրիշների հանդեպ բռնություն, մատնանշվել է հայտնի ցեղասպանագետ Իսրայել Չարնիի կողմից, ով նշում է, որ ցեղասպանության ժխտումը թաքցնում է հանցագործության սահմակցուցիչ բնույթը և արդարացնում դրա մեղավորներին¹⁰: Այս գաղափարն այնուհետև արծարծվել է Հոլոքոստը վերաբերած Դեբորա Լիվիշտադի կողմից, ըստ որի՝ ցեղասպանության ժխտման նպատակն է վերանշել պատմությունը՝ հանցագործներին արդարացնելու և զոհերին մեղադրելու համար¹¹:

Յեղասպանության ժխտումը հետապնդում է մի քանի նպատակ¹²:

Առաջին նպատակն առնչվում է զոհերի խմբի հետ: Ինչպես զոհերի թվի նվազեցումը, այնպես էլ հենց բուն ցեղասպանության ժխտումը հանգեցնում են զոհերի խմբի շարունակական բնաջնջման¹³ կամ կրկնակի սպանության¹⁴, ինչպես նաև զոհի և հանցագործի դերերի վտանգավոր շփոթեցման¹⁵:

⁷ <http://www.genocidewatch.org/genocide/8stagesofgenocide.html> .

⁸ Չարնի Ի., Կուկա, Սմիթ Ռ., Մարկուսեն Է., Լիֆտոն Ռ. Յեղասպանության ժխտումը «ցեղասպանության գործընթացի վերջին փուլն է, որը հավերժացնում է հանցագործությունը»: Հոլոքոստի ժխտումը հրեաների դեմ իրագործված ցեղասպանության բաղկացուցիչ մասն է (Ուոշման): Յեղասպանության ժխտումը նպատակ է հետապնդում զոհերին սպանելու երկրորդ անգամ՝ վերացնելով աշխարհի հիշողությունը նրանց մասին (Լեմկին): Ժխտումը փորձ է բնաջնջել թղթի վրա, որը հաջորդում է ֆիզիկական բնաջնջմանը (Վիդալ-Նագետ):

⁹ Տե՛ս Smith R., Markusen E., Lifton R., *Professional Ethics and the Denial of Armenian Genocide*, էջ 13:

¹⁰ Տե՛ս Charny I., *“The Psychology of Denial of Known Genocides”*, A Genocide, A Critical Bibliographic Review, Vol. 2, London: Mansell Publishing, էջ 23:

¹¹ Տե՛ս Lipstadt D., *Denying the Holocaust The Growing Assault on Truth and Memory*, New York: The Free Press, 1993, էջ 217:

¹² Տե՛ս Troper M., *“La loi Gayssot et la constitution”*, Annales, Histoire, Sciences Sociales, 54(6), (1999), p. 1253.

¹³ Տե՛ս Caroline F., *Crime of Destruction and the Law of Genocide: Their Impact on Collective Memory*, Oxon: Ashgate Publishing Group, 2007, էջ 17:

¹⁴ Տե՛ս Confronting Genocide denial, from www.facinghistory.org .

¹⁵ Տե՛ս Garibian S., էջ 487.

¹ Աշխատանքն իրականացվել է Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի (Նյու Յորք, ԱՄՆ) հետազոտական դրամաշնորհի շրջանակներում:

² <http://www.splcenter.org/get-informed/intelligence-report/browse-all-issues/2008/summer/state-of-denial>.

³ Տե՛ս Gunaysu Ayse, *The Reign of Lies in Turkey*, <http://www.armenianweekly.com/2012/05/11/gunaysu-the-reign-of-lies-in-turkey/>.

⁴ Տե՛ս Hofmann T., *Armenians in Turkey Today: A Critical Assessment of the Situation of the Armenian Minority in the Turkish Republic*, Belgium, 2002, էջ 6:

⁵ www.echr.coe.int/NR/rdonlyres/53726604.../PCP_Turkey_en.pdf.

⁶ www2.ohchr.org/english/issues/minorities/docs/CLA3a.doc.

Ցեղասպանության ժխտման երկրորդ նպատակն անհատի գործունն է, քանի որ ցեղասպանության ժխտումը՝ որպես բնաջնջման շարունակական դրսևորում, վիրավորում և նսեմացնում է ցեղասպանությունը վերապրածներին, մահացածների հարազատներին և ժողովրդին¹⁶: Կենդանի մահացածներն ու նրանց հարազատները ստիպված են շարունակել ապրել մի հասարակությունում, որը նպատակ է ունեցել ոչնչացնել իրենց, սպանել է իրենց հարազատներին: Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության նախկին նախագահի խոսքերով ցեղասպանության ժխտումը շարունակական փորձ է հոգեբանորեն և մշակութային առումով վերացնելու գոհերի խմբին՝ մերժելով անգամ նրանց հիշողությունն իրենց հարազատների մասին¹⁷:

Ցեղասպանության ժխտումը նաև հնարավոր հետագա բնաջնջումների հստակ ցուցիչ է (ցեղասպանությունը ծնում է ցեղասպանություն): Քաղաքական նպատակների համար պատմական փաստերի խեղաթյուրումը մեծ ազդեցություն ունի ժողովրդավարության և մարդու իրավունքների վրա: Յուրաքանչյուր փորձ աղճատելու որևէ էթնիկական խմբի հանդեպ իրագործված բնաջնջման պատմությունը մեծացնում է մեկ ուրիշ անգամ և այլ վայրում դրա կրկնվելու հնարավորությունը¹⁸: Դրա վառ օրինակներից է Հայոց ցեղասպանության անպատժելիությունը. երբ հայկական կոտորածների պատասխանատուները չպատժվեցին, հնարավոր դարձավ իրականացնել հրեական Հոլոքոստը¹⁹:

2. Ցեղասպանության ժխտումը որպես ռասիզմի դրսևորում

Ռասիզմի վերաբերյալ առկա սահմանումները մեկ միասնական գաղափար են պարունակում, այն է՝ ստեղծությունը և անտագոնիզմը որոշակի խմբի նկատմամբ: Ցեղասպանություն հանցագործությունը պարունակում է ռասիզմի տարր, քանի որ ուղղված է որոշակի ազգային, ռասայական, էթնիկական, կրոնական խմբի դեմ²⁰: Իսկ ցեղասպանության ժխտումը կրկին հանգեցնում է այն բանին, որ գոհերի խումբը առանձնացվում է, և արդյունքում տվյալ խմբի հանդեպ նախկին ստեղծությունն ու անցյալի ժխտման անհրաժեշտությունը կրկնապատկում են նրանց հանդեպ թշնամանքը՝ որակվելով որպես ռասիզմ:

Այսօրինչպես ակադեմիական գրականության մեջ, այնպես էլ դատական որոշումներում Հոլոքոստի ժխտումը, կատարված իրողության ծավալների նվազեցումը կամ Հոլոքոստի վերաբերյալ փաստերի աղավաղումը որակվում են որպես ռասիզմի (հակասե-

միֆիզմի) դրսևորում²¹: Դրանց համաձայն՝ Հոլոքոստի ժխտումը հակասեմականության ամենաձածուկ ձևերից է²², իսկ ժխտողները ռասիստներ են²³ և մոլեռանդներ²⁴: Այս պնդումների անկյունաքարն այն է, որ Հոլոքոստը ժխտողներն առաջնորդվում են հրեատյացության (հակասեմականության) զգացումով և դրանով նսեմացնում են հրեաների՝ որպես ժողովրդի համբավն ու արժանապատվությունը²⁵: Իսկ ժխտումը և մերժողականությունը ռասիզմի հիմքում են²⁶: Ցեղասպանության ժխտումը ռասիստական հայտարարությունների հատուկ կատեգորիա է, քանի որ միաժամանակ ժխտում է մարդկության դեմ կատարված հանցագործությունը և ատելություն է սերմանում տվյալ համայնքի հանդեպ²⁷:

Գերմանական նախադեպային իրավունքը Հոլոքոստի ժխտումը որակում է որպես գոհերի խմբին պատկանող անհատների հանդեպ անձնական վիրավորանք²⁸:

Փարիզի Առաջին ատյանի դատարանի որոշմամբ Հոլոքոստի ժխտումն իրական վտանգ է ստեղծում հրեաների համար՝ նրանց հանդեպ առաջացնելով արհամարհանք, ատելություն և բռնություն²⁹:

Մեծ Բրիտանիայում Հոլոքոստը ժխտող գրող Դավիթ Իրվինգի գործով դատարանը որոշեց, որ հեղինակն ակտիվ ժխտող է, հակասեմիտ և ռասիստ³⁰:

2002 թ. Ավստրալիայի ֆեդերալ դատարանի վճռով Հոլոքոստի ժխտումը և հրեաներին անարգելը որակվեցին որպես ռասայական խտրականության ձևեր³¹:

Միջազգային իրավունքը ևս Հոլոքոստի ժխտումը որակում է որպես ռասիզմ և ռասայական խտրականություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) որոշմամբ Հոլոքոստի ժխտումը ռասայական խտրականության ամենալուրջ ձևն է³², այն «վիրավորանք է հրեա ժողովրդի հանդեպ՝ միաժամանակ հանդիսանալով հրեաների հանդեպ նախկին խտրական քաղաքականության շարունա-

¹⁶ St' u Charny I., *The denial of Holocaust and Genocide*. Proceedings of the 1992 World Conference against A & H Bombs, Hiroshima and Nagasaki, August 2-9, էջ 44-45:
¹⁷ St' u Smith R., Markusen E., Lifton, *Professional Ethics and the Denial of Armenian Genocide...*, էջ 13:
¹⁸ St' u Garibian, էջ 488:
¹⁹ St' u Kalayjian A., *Exploring Long-Term Impact of Mass Trauma on Physical Health, Coping, and Meaning: An Examination of the Ottoman Turkish Genocide of the Armenians*, http://works.bepress.com/cgi/viewcontent.cgi?article=1000&context=ani_kalayjian&sei-redir=1&referer=http%3A%2F%2F :
²⁰ St' u Cassese A., *International Criminal Law*, 2nd ed., New York: Oxford University Press, 2008, էջ 138-140:

²¹ Հոլոքոստի թանգարան, ԱՄՆ. “The Holocaust” *Holocaust Encyclopedia*. (<http://www.ushmm.org/wlc/en/?ModuleId=10005143>, դիտվել է 18.04.2012)
²² St' u Roth S.J., “Denial of the Holocaust as an Issue of Law”, *Israel Yearbook of Human Rights* 23(1993), էջ 215:
²³ St' u Kahn R., *Holocaust Denial and the Law: A Comparative Study*, Gordonsville: Palgrave Macmillan Location, 2004, էջ 4:
²⁴ St' u Smith R., Markusen E., Lifton R., *Professional Ethics and the Denial of Armenian Genocide...*, էջ 15.
²⁵ St' u Weiler J.H.H., *European Union Jean Monnet Char.*, Jean Monnet Working Paper 10/09 Laurent Pech, *The Law of Holocaust Denial in Europe: Towards a (qualified) EU-wide Criminal Prohibition*, <http://centers.law.nyu.edu/jeanmonnet/papers/09/091001.html>.
²⁶ St' u Dijk Teun A., *Racism and Discourse in Spain and Latin America*, Philadelphia: John Benjamins Publishing Company, 2005, էջ 3:
²⁷ St' u Weber A., *Manual on hate speech...*, էջ 24:
²⁸ St' u Roth S.J., *Denial of the Holocaust as an Issue of Law...*, էջ 233:
²⁹ St' u Verdicts on Prof. Faurisson, 15 *Patterns of Prejudice*, N. 4, 51-55, (1981):
³⁰ St' u The Gardian, April 12, 2000:
³¹ St' u Fournet C., *Աշխ.*, էջ 127:
³² St' u ECtHR, *Garaudy v. France*, application no.65831/01, para. 53:

կություն»³³: Հրեաների ցեղասպանության հետ կապված տարբեր իրողությունների ժխտումը (օրինակ՝ գազախցիկների եղելության), ըստ դատարանի մեկնաբանության, խթանում է հրեաների նկատմամբ ատելություն և խտրականություն³⁴:

ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների կոնվենցիային կից Մարդու իրավունքների հանձնաժողովի պնդմամբ Հոլոքոստի ժխտումը հակասեմականության տարածման կարևորագույն լծակ է³⁵:

Դժբախտաբար, այլ է վերաբերմունքը Հայոց ցեղասպանության ժխտման հանդեպ: Իրավացի է Սան Ֆրանցիսկոյի համալսարանի պրոֆեսոր Ստեֆան Զյունսը, ում կարծիքով հակասեմականության մասին տեղեկացվածության մակարդակը բավական բարձր է, իսկ հայատյացության հանդեպ հանդուրժողականությունը տարածված երևույթ է, քանի որ մինչև այժմ քաղաքական առումով ընդունելի է Հայոց ցեղասպանության ժխտումը³⁶:

Մինչդեռ Հայոց ցեղասպանության ժխտումը վիրավորանք է հայերի անձնական համբավին, պատվին ու արժանապատվությանը: Այն միաժամանակ ծառայում է որպես գործիք նախկին խտրական պրակտիկան, բռնությունն ու անարգանքը հայերի դեմ կիրառելու համար: Ժխտելով Հայոց ցեղասպանությունը՝ Թուրքիան ոչ միայն աղավաղում է պատմությունը, այլև, ի դեմս հայերի, ստեղծում է ստախոսների, պատմությունը կեղծողների կերպար, որոնք փորձում են համոզել ողջ միջազգային հանրությանը թուրքերի վատ վարկանիշի մասին: Ժխտողականության քաղաքականությունն իրական վտանգ է ստեղծում հայերի համար և հավասարագոր է նրանց հանդեպ ատելության սադրանքի³⁷:

Հատկանշական է, որ Հայոց ցեղասպանությունը քրեականացնող ֆրանսիական օրինագիծը ևս հիմնված էր Թուրքիայում առկա հայատյացության գաղափարի վրա³⁸:

Նշենք նաև, որ Հայոց ցեղասպանության ժխտումը ռասիզմի և խտրականության դրսևորում է որակվել նաև իրավական ոլորտում: 2007 թ. դեկտեմբերի 12-ին Շվեյցարիայի դաշնային տրիբունալը (Tribunal Federal Swiss) Թուրքիայում հայերի դեմ 1915 թ. իրականացրած ցեղասպանությունը ժխտելու մեղադրանքով ամբաստանյալին մեղավոր ճանաչեց ռասայական խտրականության մեջ³⁹: 2005 թ. Փարիզի առաջին ատյանի դատարանը (Tribunal de Grande Instance de Paris) Քուիդ հան-

³³ Տե՛ս ECmHR *Udo Walendy v. Germany*, No. 21128/92, decision of 11 January 1995:
³⁴ Տե՛ս *Otto E.F.A. Remer v Germany*, (1995). No. 25096/94; *Honsik v Austria* (1995), No. 25062/94:
³⁵ Տե՛ս *Robert Faurisson v. France*, Communication No. 550/1993, U.N. Doc. CCPR/C/58/D/550/1993(1996), § 9.7:
³⁶ Տե՛ս Zunes Stephen, *Obama and the Denial of Genocide*, March 11, 2010, http://www.fpip.org/articles/obama_and_the_denial_of_genocide:
³⁷ Տե՛ս Charny, *նշվ. աշխ.*, էջ 22-23:
³⁸ http://www.senat.fr/basile/visio.do?id=d45186620120123_8&idtable=d136282-72330_3|d45186620120123_8&c=Genocide+bill&rch=ds&de=20110527&au=20120527&dp=1+an&radio=dp&aff=36-282&tri=p&off=0&afd=ppr&afd=ppl&afd=pjl&afd=cvn#eltSign7:
³⁹ Tribunal Fédéral Suisse, ruling of 12 December 2007, *X. v. Y.*, 6B.398/2007.

րագիտարանի դեմ գործում, որն իր վերջին հրատարակության մեջ ժխտել էր Հայոց ցեղասպանության իրողությունը, ամբաստանյալին մեղավոր էր ճանաչել՝ հայկական համայնքին բարոյական տառապանք հասցնելու համար⁴⁰: Այսպիսով, հաշվի առնելով Հայոց ցեղասպանության անժխտելի իրողությունը՝ նրանք, ովքեր չեն ճանաչում Հայոց ցեղասպանությունը, Հոլոքոստը ժխտողների պես առաջնորդվում են ռասիզմի և ֆանատիզմի սկզբունքներով⁴¹:

3. Ցեղասպանության ժխտման խնդիրն իրավական ոլորտում

Որոշ պնդումների համաձայն՝ ցեղասպանությունը կապված է պատմության հետ, իսկ քանի որ պատմությունը չի ենթարկվում իրավական կարգավորման, հետևաբար ցեղասպանության ժխտումը չի կարող դիտարկվել իրավական դաշտում: Սակայն ցեղասպանության ժխտման դեպքում դատարանի դերը պատմական ճշմարտությունը քաղաքական քարոզչությունից տարանջատելն է: Հենվելով այս տրամաբանության վրա՝ ինչպես միջազգային իրավունքը, այնպես էլ որոշ երկրների ներպետական օրենսդրությունները քրեորեն պատժելի են համարում ցեղասպանության, ինչպես նաև մարդկության դեմ իրականացված և պատերազմական այլ հանցագործությունների ժխտումը:

Թեև Ցեղասպանության կանխարգելման և նրա համար պատժի մասին 1948 թ. կոնվենցիան բացահայտորեն չի անդրադառնում ցեղասպանության ժխտմանը, սակայն Ցեղասպանության կոնվենցիայի վերանայման և փոխլրացման նպատակով նշանակված ՄԱԿ-ի հատուկ խորհրդական Ուիտակերն առաջարկել էր ցեղասպանության ժխտումն ընդգրկել Ցեղասպանության կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության մեջ՝ այն որակելով որպես ցեղասպանության հրահրում⁴²:

Ատելության սերմանումն արգելված է նաև մարդու իրավունքների մասին տարբեր միջազգային կոնվենցիաներով:

4. Թուրքիայի միջազգային-իրավական պատասխանատվության հարցը. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 17-րդ հոդվածը մատնանշում է, որ կոնվենցիայի և ոչ մի դրույթ չի կարող դիտարկվել որպես իրավունք՝ ներգրավվելու որևէ գործողության մեջ կամ իրականացնելու որևէ գործողություն՝ միտված Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված այլ իրավունքների ու ազատությունների խախտմանը⁴³:

Հոդվածը վերաբերում է իրավունքի չարաշահման դրույթին և ՄԻԵԴ-ի որոշումների համաձայն՝ արգելում է օգտվել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (այսուհետև՝ Կոնվենցիա) սահմանված որևէ իրավունքից՝ խախտելու

⁴⁰ Տե՛ս Fournet C., *նշվ. աշխ.*, էջ 89:
⁴¹ Տե՛ս Zunes Stephen, *Obama and the Denial of Genocide...*
⁴² Տե՛ս Whitaker Report, *Revised and updated report on the question of the prevention and punishment of the crime of genocide*, para. 49, from <http://www.preventgenocide.org/prevent/UNdocs/whitaker/> :
⁴³ European Convention on Human Rights, Article 17:

համար Կոնվենցիայում ամրագրված այլ իրավունքները»⁴⁴:

Իրավունքի չարաշահման գաղափարը մարդու իրավունքների միջազգային բնագավառում ծագել էր Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ որպես գործիք նացիզմի, ֆաշիզմի և կոմունիզմի⁴⁵ դեմ պայքարում և միաժամանակ պարունակում էր ժողովրդավարական հասարակության և նրա ինստիտուտների ապահովման երաշխիքներ⁴⁶: Այսպիսով, երբ որևէ գործողություն չարաշահում է Կոնվենցիայի բուն էությունը, ՄԻԵԴ-ը կիրառում է 17-րդ հոդվածը:

Ինչպես յուրաքանչյուր արտահայտություն, որն ուղղված է Կոնվենցիայով ապահովվող արժեքների դեմ, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների ժխտումը հակառակ է Կոնվենցիայի և ժողովրդավարության ընդհանուր սկզբունքներին, մասնավորապես արդարության և խաղաղության գաղափարներին⁴⁷: Արդյունքում դատարանը որդեգրել է այն սկզբունքը, որ պատմական փաստերով հաստատված մարդկության դեմ կատարված հանցագործությունների, ցեղասպանությունների, պատերազմական հանցագործությունների ժխտումը կամ վերանայումը իրավունքի չարաշահում է՝ խախտելով Կոնվենցիայի 17-րդ հոդվածը⁴⁸:

Դատարանի մեկնաբանմամբ հաստատված պատմական փաստերի ժխտումը հետազոտություն չէ՝ ուղղված ճշմարտության բացահայտմանը: Ժխտման նպատակն ու արդյունքը լիովին այլ են՝ մեղադրել զոհերին պատմության նենգափոխման մեջ⁴⁹, ինչը ոչ միայն վիրավորական է, այլև մարդասիրությանից զուրկ⁵⁰: Ըստ դատարանի՝ ոչ ոք իրավունք չունի հենվելու խոսքի ազատության իրավունքի վրա, ժխտելու պատմականորեն հաստատված մարդկության դեմ կատարված հանցագործությունները⁵¹:

Դատարանն այս մոտեցումը որդեգրեց Հոլոքոստի ժխտման հանդեպ: Գարաուդին ընդդեմ Ֆրանսիայի գործում⁵² դատարանն ընդգծեց, որ Հոլոքոստի՝ որպես հաստատված պատմական փաստի ժխտումը կամ վերանայումը չի ենթարկվում խոսքի ազատության իրավունքի պաշտպանությանը:

Սակայն միաժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ դատարանը դեռևս հստակ-

րեն չի բացատրել, թե ինչ է նշանակում հաստատված պատմական փաստ, և որն է այն կրիտիկական պահը, երբ պարզապես պատմական փաստը դառնում է հաստատված: Գարաուդին ընդդեմ Ֆրանսիայի գործում դատարանը հետևյալ ձևակերպումը տվեց. պատմական փաստեր, որոնք չեն վիճարկվում/քննարկվում պատմաբանների կողմից: Սակայն դատարանի այս բացատրությունը ևս միանշանակ համարվել չի կարող և հանգեցնում է հետևյալ հարցադրմանը. հատկապես ինչպե՞ս է դատարանը որոշում, որ պատմաբանների միջև խնդիրն այլևս քննարկման ենթակա չէ: Եթե դատարանի այս վճիռը կիրառենք Հոլոքոստի դեպքում, ապա պետք է նշել, որ հրեաների սպանություններն ու գազախցիկների գոյությունը դեռևս շարունակում են վիճահարույց մնալ որոշ պատմաբանների համար⁵³: Այսպիսով, խնդիրը ոչ այնքան պատմական քննարկման, որքան փաստացի պատմության օբյեկտիվ հիմքերի բացահայտման մեջ է:

Իվանովիչն ու ուրիշներն ընդդեմ Ռուսաստանի գործում, որը վերաբերում էր խորհրդային կառավարության կողմից լեհ սպաների՝ Կատինում զանգվածային սպանության քննչական գործի հետ կապված ռուսական իշխանությունների անգործությանը, դատարանը վերահաստատեց իր դիրքորոշումը մարդկության դեմ կատարված հանցագործությունների հարցում, որը տարածվեց նաև այն հայտարարությունների վրա, որոնք նպատակ ունեն արդարացնելու պատերազմական հանցագործություններն ու առանց պատշաճ դատավարության մահապատժի ենթարկելը (summary execution)⁵⁴: Այսպիսով, Կատինի ողբերգությունը ևս դասվեց հաստատված պատմական իրողությունների շարքում⁵⁵:

Կատինի դատավճռի կարևորությունն այն է, որ, ըստ էության, վերացրեց Հոլոքոստի՝ մինչ այդ բացառիկ կարգավիճակը՝ 17-րդ հոդվածը կիրառելի դարձնելով պատմական փաստերով հաստատված մարդկության դեմ ուղղված բոլոր տեսակի հանցագործությունների ժխտման կամ վերանայման վրա:

Հայոց ցեղասպանությունը հաստատված պատմական փաստ է: Կասկած չկա, որ Հայոց ցեղասպանության իրողության ժխտումը պատմական հետազոտություն չէ, որն ուղղված է ճշմարտությունը բացահայտելուն: Թուրքական պետության նպատակը սեփական վարկանիշի պահպանումն է, ինչպես նաև փոխհատուցում տալու անհրաժեշտությունից խուսափելը: Արդյունքում հայերը որպես զոհ իրենք են մեղադրվում պատմության նենգափոխման մեջ:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության՝ որպես մարդկության դեմ կատարված հանցագործության ամենաձանր ձևի ժխտում, Թուրքիայի՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 17-րդ հոդվածով սահմանված պարտավորությունների խախտում է:

⁴⁴ Տե՛ս *Lawless v. Ireland*, ECHR (1961) Series A, No 3, 7:

⁴⁵ Տե՛ս *Cannie H., Voorhoof D.*, ‘The Abuse Clause and Freedom of Expression in the European Human Rights Convention: An Added Value for Democracy and Human Rights Protection?’, *Netherlands Quarterly of Human Rights* (2011) 29/1, էջ 56:

⁴⁶ Տե՛ս *Lehideux and Isorni v. France*, (1998) No. 55/1997/839/1045. Concurring opinion of judge Jambrek, § 3:

⁴⁷ Տե՛ս ECHR annual report, 2003, Registry of the European Court of Human Rights Strasbourg, (2004), p. 5:

⁴⁸ Տե՛ս *Lehideux and Isorni v. France*, § 47, 53:

⁴⁹ Տե՛ս *Garaudy v. France*, էջ 29:

⁵⁰ Տե՛ս *Janowiec and others v. Russia*, (2012) No. 55508/07, 29520/09, § 160:

⁵¹ Նույն տեղում:

⁵² Գարաուդին մեղադրվում էր իր՝ «Ժամանակակից Իսրայելի հիմնական առասպելները» գրքում Հոլոքոստի մասին հայտնի իրողությունների ժխտման մեջ:

⁵³ Տե՛ս *Josephs J. D.*, ‘Holocaust Denial Legislation: a Justifiable infringement with of freedom of expression?’ *Working Papers du Centre Perelman de philosophie du droit*, (2008) 3, էջ 9:

⁵⁴ Տե՛ս *Janowiec and others v. Russia*, § 160, 165:

⁵⁵ Տե՛ս նույն տեղում:

5. Թուրքիայի միջազգային-իրավական պատասխանատվության հարցը. Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային կոնվենցիա, հոդված 20(2)

Կոնվենցիայի 20 (2)⁵⁶ հոդվածը սահմանում է, որ ռասայական, ազգային կամ կրոնական ատելության սերմանումը, որը խտրականության, թշնամանքի և բռնության հիմք է, պետք է պատժվի օրենքով: Համաձայն մարդու իրավունքների հանձնաժողովի⁵⁷ հոդվածն ուղղված է խտրականության, թշնամանքի և բռնության հիմք հանդիսացող յուրաքանչյուր ռասայական, ազգային կամ կրոնական ատելության սերմանման դեմ, անկախ այն հանգամանքից, թե տվյալ պետության համար այդ քարոզչությունը կրում է ներքին, թե՛ արտաքին նպատակներ: Հոդվածն իրականացնելու նպատակով անդամ-պետությունները պարտավորված են⁵⁸ ընդունել օրենսդրություն՝ նշված բովանդակությամբ, և համապատասխան պատժամիջոցներ կիրառել իրավունքի խախտման դեպքում: Միաժամանակ Մարդու իրավունքների հանձնաժողովի համաձայն՝ պետությունները ոչ միայն պետք է ազգային օրենք ունենան՝ 20.2 հոդվածն իրականացնելու համար, այլև իրենք պետք է ձեռնպահ մնան խտրականության, թշնամանքի և բռնության հիմք հանդիսացող յուրաքանչյուր ռասայական, ազգային կամ կրոնական ատելության քարոզչությունից⁵⁹:

Ֆուրիսոն ընդդեմ Ֆրանսիայի գործում ՄԻՀ-ը գտավ, որ Հոլոքոստը քրեականացնող օրինագիծը (Gayssot Law of France) լիովին համապատասխանում է խոսքի իրավունքի սահմանափակման վերաբերյալ գոյություն ունեցող դրույթներին, քանի որ օրենքի ընդունումն անհրաժեշտ էր ոչ միայն մյուսների իրավունքներն ու համբավը պաշտպանելու համար, այլև ապահովելու համար հասարակական կարգն ու բարոյականությունը⁶⁰: ՄԻՀ-ը համաձայնեց, որ Հոլոքոստի ժխտումը հիմնական գեներ է հակասեմիտիզմի դեմ ⁶¹ և իր բովանդակությամբ կարող է սրել, ուժեղացնել հակասեմիտական կրքերը և մերժել հրեական համայնքի իրավունքը ապրելու հակասեմիտիզմի մթնոլորտից գերծ հասարակությունում⁶²: Հանձնաժողովը հստակ ցույց տվեց, որ Հոլոքոստի ժխտումը խտրականության դրսևորում է և ճանաչեց Գայսոտ օրենքի դերը որպես խտրականության դեմ պայքարի միջոց⁶³:

⁵⁶ Հոդված 20 (1) - Պատերազմի յուրաքանչյուր քարոզչություն պետք է պատժվի օրենքով:

⁵⁷ Մարդու իրավունքների հանձնաժողովն անկախ փորձագետներից կազմված մարմին է, որը վերահսկում է անդամ-պետությունների կողմից Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային կոնվենցիայի իրականացումը:

⁵⁸ Տե՛ս Faurior S., “Moulding the matrix: the historical and theoretical foundations of international law concerning hate speech”, *14 Berkeley Journal of International Law* (1996), p. 25, 28. Նաև՝ M. J. Bossuyt, *Guide to the “travaux Préparatoires” of the International Covenant on Civil and Political Rights*, (1987).

⁵⁹ Տե՛ս Ընդհանուր մեկնաբանություն N11 պատերազմի և ազգային, ռասայական կամ կրոնական ատելության սերմանման արգելում (հոդված 20):

⁶⁰ Տե՛ս *Robert Faurisson v. France*, § 7.10:

⁶¹ Տե՛ս նույն տեղում, § 9.7:

⁶² Տե՛ս նույն տեղում, § 9.6:

⁶³ Տե՛ս նույն տեղում, § 9.7:

Եզրակացություն

Իր էությամբ ցեղասպանությունը խտրական հանցագործություն է, քանի որ պարունակում է հատուկ սուբյեկտիվ տարր (mens rea), այն է՝ որևէ հստակ ռասայական, ազգային, էթնիկ կամ կրոնական խմբի ոչնչացում⁶⁴: Ցեղասպանության ժխտումը, որը, ըստ Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի, ցեղասպանության շարունակությունն է, կրում է միևնույն խտրական բնույթը և նույն դիտավորությունը (intent):

Ցեղասպանության ժխտման՝ որպես ռասիզմի դրսևորման գաղափարը հաստատվել է նաև ազգային և միջազգային դատական ատյանների կողմից: Ազգային այն օրենսդրությունները, որոնք անմիջականորեն չեն արգելում Ցեղասպանության ժխտումը, հարցը դիտարկում են հակառասիստական կամ հակախտրական օրենսդրության ներքո⁶⁵:

Հայոց ցեղասպանության ժխտումը հայերի դեմ խտրականության և ռասիզմի դրսևորում է: Գրված թե բանավոր, թուրքական իշխանությունների թե գիտնականների կողմից հնչեցված ժխտողականությունը ենթադրում է միևնույն սուտը, փաստերի մանիպուլյացիան և հակահայկականությունը: Պետության կողմից ֆինանսավորվող ժխտողական քաղաքականությունը հանգեցնում է հայերի հանդեպ թշնամանքի սրմանը և ազգայնականության խորացմանը:

Ժխտելով Հայոց ցեղասպանությունը՝ Թուրքիան խախտում է ՄԻԵԴ հոդված 17-ը և ՔԲԻՄԿ հոդված 20-ի 2)-ը, քանի որ այս պայմանագրերը պարտավորեցնում են անդամ-պետություններին ձեռք առնել կանխարգելիչ միջոցառումներ, ինչպես նաև՝ ձեռնպահ մնալ խտրական գործողությունների մեջ ներգրավվելուց:

Հայոց ցեղասպանության ժխտումը՝ որպես հայերի հանդեպ ռասիզմի դրսևորում. Թուրքիայի պատասխանատվության հարցը միջազգային իրավունքում

Էդիկոս Գոդյան

Ամփոփում

Հոդվածն անդրադառնում է Թուրքիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության ժխտմանը: Այն ներկայացնում է հայտնի ցեղասպանագետների կարծիքները և դատարանների որոշումները, որով Ցեղասպանության ժխտումը որակվում է որպես ռասիզմ և ռասայական խտրականություն: Հոդվածի հիմնական դրույթն այն է, որ Հայոց ցեղասպանության ժխտումը հավասարազոր է հայերի հանդեպ խտրականության և ռասիզմի: Ներկայացվում են նաև ցեղասպանության ժխտման քրեականացման վերաբերյալ ազգային և միջազգային օրենսդրությունները, ինչպես նաև

⁶⁴ Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին կոնվենցիայի երկրորդ հոդված:

⁶⁵ Տե՛ս, օրինակ, Սկանդինավյան պետությունները:

քննարկվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայից և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրից բխող Թուրքիայի միջազգային-իրավական պատասխանատվության հարցը:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանության ժխտում, ոսսիզմ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, Թուրքիայի միջազգային-իրավական պատասխանատվությունը:

**The Armenian Genocide Denial as a Form of Racism towards the Armenians:
the Issue of the Turkish Responsibility under Public International Law**

Edita Gzoyan

Summary

The current article deals with an issue of the Armenian Genocide denial by the Republic of Turkey. It reveals the opinions of the renowned genocide scholars, as well as court decisions qualifying Genocide denial to racism and racial discrimination. The main point of the article is that the denial of the Armenian Genocide amounts to discrimination and racism towards the Armenians all over the world. The article also demonstrates that Genocide denial is a punishable act under the national and international legislation and discusses the international legal responsibility of Turkey under the European Convention of Human Rights and International Covenant on Civil and political Rights.

Keywords: Armenian Genocide denial, racism, European Convention of Human Rights, International Covenant on Civil and political Rights, international legal responsibility of Turkey.

**Отрицание Геноцида армян как форма расизма по отношению к армянам:
вопрос турецкой ответственности согласно международному публичному
праву**

Эдита Гзоян

В статье рассматривается вопрос отрицания Геноцида армян со стороны Турецкой Республики. Представлены мнения известных геноцидоведов, а также решения судов, относящих отрицание геноцида к расизму и расовой дискриминации. Основная идея статьи в том, что отрицание Геноцида армян приравнивается к дискриминации и расизму по отношению к армянам всего мира. В Статье показано, что отрицание геноцида является наказуемым по национальному и международному законодательствам. Также рассматривает вопрос международно-правовой ответственности Турции согласно Европейской конвенции по правам человека и Международному пакту о гражданских и политических правах.

Ключевые слова: отрицание Геноцида армян, Европейская конвенции по правам человека, Международный пакту о гражданских и политических правах, международно-правовая ответственность Турции.

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԿՋԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՄՈՒՄ**

Նարեկ Պողոսյան

Հրեա իրավաբան Ռաֆայել Լեմկինը մեծ ներդրում ունի ինչպես միջազգային քրեական իրավունքի զարգացման, այնպես էլ ցեղասպանությունների դատապարտման և կանխարգելման գործում: Հայոց ցեղասպանության թեման առանձնահատուկ դեր է ունեցել նրա գիտական գործունեության մեջ:

Հոդվածի հիմնական խնդիրն է հիմնավորել, որ Հայոց ցեղասպանության թեմայի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի գործունեության սկզբնական շրջանում և իրադարձությունների լուսաբանումն ունեն իրավական և պատմաքաղաքական կարևոր նշանակություն, քանի որ Հայոց ցեղասպանությունն առանձնակի ազդեցություն է ունեցել Ռաֆայել Լեմկին անհատի վրա՝ հանցագործության այս տեսակը օրենքի դաշտ բերելու գործում:

Հոդվածում քննվում է ընդգրկում է Ռ. Լեմկինի գործունեության 1913-1933թթ.՝ այն շրջանը, երբ ձևավորվել են Ռ. Լեմկինի գիտական հայացքները ցեղասպանությունը՝ որպես հանցագործություն սահմանելու վերաբերյալ:

Ռաֆայել Լեմկինը, ով ծնվել է 1900 թ. հունիսի 24-ին Լեհաստանում՝ Բեզվոդնե քաղաքում¹՝ հրեա ֆերմերի ընտանիքում, իր մանկության և պատանեկության տարիներն անցկացրել է Լեհաստանի արևելքում գտնվող ֆերմայում՝ Վոլկովսկ փոքր քաղաքի մոտակայքում, որն այն ժամանակ ցարական Ռուսաստանի կազմում էր: 1913 թ.՝ 12 տարեկան հասակում, Լեմկինը, կարդալով լեհ գրող Հենրիկ Սենկևիչի «Յո՞ երթաս» պատմավեպը, որը վերաբերում էր առաջին դարում Ներոն կայսեր կողմից քրիստոնեություն ընդունած մարդկանց կոտորածներին, զարհուրել է, որ Ներոն կայսրը կարող էր քրիստոնյաներին առյուծների կերակուր դարձնել, ապա իր մորը՝ Բելային, հարցրել, թե ինչպես կարող էին կայսրի գործողությունները ուրախություն պատճառել հանդիսատեսին²:

«Նրանք ծափահարում էին: Ինչո՞ւ նրանք ուստիկանություն չկանչեցին», - Ռ. Լեմկինը հարցնում էր մորը: Ռաֆայելի մայրը, որը մեծ տեղ էր տալիս որդիների կրթությանը, պատասխանում է. «Դա ամենակարևոր հարցն է, բայց դա ավելին է, քան ես կարող եմ պատասխանել: Դու պետք է սովորես ավելին ու մտածես ավելի շատ, ու պատասխանը գտնես ինքդ»:

Դրվագը մտահոգում է պատանի Ռաֆայելին: Նա ցանկանում էր, որպեսզի մարդիկ հասկանան, որ վաղ քրիստոնյաների սպանությունը «շատ վատ արարք» է: Ռաֆայելը նաև ցանկանում էր իմանալ, թե սպանություն կատարողը որքանո՞վ է ազատված պատժից. «Երբ մարդիկ այսօր մարդկանց են սպանում, նրանք բանտարկվելու են, այնպես չէ՞»: Նրա մայրն առանց վարանելու պատասխանում էր.

¹ Այժմ Բեզվոդնեն գտնվում է Բելառուսի տարածքում:

² Power Samantha, “A Problem from Hell”: America and the Age of Genocide, New York, Basic Books, 2002, p. 20.

«Այո՛, նրանք բանտ են ընկնելու»:

«Յո՞ երթասը» և դրա իմաստի վերաբերյալ քննարկումը մոր հետ տպավորվել էր Լեմկինի հիշողության մեջ, և նա այդ մասին գրի է առնում նաև իր կենսագրակա- նում: Հետագայում Լեմկինը պատմում էր. «Դա եղավ այն օրը, որ ես սկսեցի արշա- վը (ընդդեմ ցեղասպանության), որովհետև ես սկսեցի փնտրել պատասխանը»: Նա տեսնում էր իր ապագայի աշխատանքը, որի համար խթան դարձավ մոր այն պնդումը, որ Լեմկինն ինքնուրույն ձգտի հասնել պատասխանին³:

Լեմկինը սկսեց զբաղվել ընթերցանությամբ և նվիրվեց էթնիկ խմբերի ոչնչաց- ման ուսումնասիրությանը: «Ես տպավորվող պատանի էի»⁴, - գրում է նա տարի- ներ հետո: Ծանոթանալով Կարթագենի անկման, մոնղոլական արշավանքների, ֆրանսիական հուզեմոտների թիրախավորման պատմություններին՝ նա մորը միշտ տանջում էր զանգվածային կոտորածների պատմական դեպքերի մանրամասների մասին հարցերով:

Ռաֆայելին հուզող հիմնական հարցը դարձավ հետևյալը. «Սպանել անպաշտ- պան մարդկանց միայն այն պատճառով, որ նրանք տարբերվում են քեզանից՝ օրենք չկա՞»: Մոր պատասխանը բոլորովին անբավարար էր. «Կան օրենքներ սպանու- թյան դեմ»⁵:

Լեմկինը յուրաքանչյուր էթնիկ և կրոնական համայնք համարում էր հարուստ և բազմազան մարդկային ժառանգության բաղկացուցիչ տարր: Այս հարցում նա կրկնում էր Յոհան Գոտֆրիդ Հերդերի մտքերը և հայացքները⁶: Նա կիսում էր հասա- րակության և պատմության ունիվերսալիստական (համընդհանրական) մոտեցումը, որն առաջ էին քաշել 19-րդ դարի գերմանացի փիլիսոփաները⁷: Ինչպես իր ծնող- ները, Լեմկինը նույնպես անտարբեր էր ուղղափառ հուդայականության նկատմամբ և հետաքրքրված չէր սիոնիզմով⁸:

1906 թ. 70 հրեաներ սպանվել էին, 90-ը՝ մահացու վիրավորվել Լեհաստանի Բելաս- տոկի շրջանում (այն ժամանակ ցարական Ռուսաստանի կազմում էր) տեղի ունեցած տեղական ջարդերում⁹: Լեմկինը լսեց, որ ամբոխը բացել է զոհերի որովայնները՝

³ Korey William, *An Epitaph for Raphael Lemkin*, Jacob Blaustein Institute for the Advancement of Human Rights, June 2001, p. 50.

⁴ Power Samantha, *նշվ. աշխ.*, էջ 20:

⁵ Korey William, *նշվ. աշխ.*, էջ 6:

⁶ Յոհան Գոտֆրիդ Հերդերը գերմանացի փիլիսոփա է, գրող, լուսավորիչ (1744-1803թթ.): Հայտնի է նրա տեսակետը, ըստ որի՝ մշակույթը ազգի հիմքն է: Հերդերը ընդգծում էր տարբեր ժողովուրդ- ների, մասնավորապես հարավ-սլավոնական ժողովուրդների հոգևոր մշակույթի յուրահատկու- թյունը:

⁷ Ունիվերսալիզմը (լատիներեն univsum նշանակում է աշխարհ, տիեզերք) եվրոպական փիլիսո- փայության մեջ առաջ է եկել որպես հին հունական փիլիսոփաների մտածողության ձև Ք.ա. VI-V դարերում, ըստ որի՝ աշխարհը միասնական կարգավորված ամբողջություն է, որի յուրաքանչյուր մասը միկրոաշխարհ է՝ առաջացած մեծ աշխարհի (տիեզերքի) բաժանումից:

⁸ Korey William, *նշվ. աշխ.*, էջ 6-7:

⁹ Ջարդերը հայտնի են «Բելաստոկի պոգրոմ» անունով, որի հիմնական մասնակիցները զինվոր- ները և ոստիկաններն են եղել:

դրանք լցունելով բարձի փետուրներով: Նա վախենում էր, որ այն միֆը, թե հրեաները սպանում են քրիստոնյա տղաներին, կարող է հանգեցնել ավելի շատ սպանությունների:

Հաջորդ դրվագը, որը ցնցել էր Լեմկինին, Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային սպանություններն էին: Դրա հետ կապված նա իր ինքնակենսագրականում գրում է. «1915 թ. գերմանացիներն օկուպացրին Վոլկովսկ քաղաքը և շրջակա տարածքը: Ես սկսեցի ավելի շատ պատմություն ուսումնասիրել, թե ինչպես են ազգային, կրոնական կամ ռասայական խմբերը ոչնչացվել: Ճշմարտությունն ի հայտ եկավ միայն պատերազմից հետո: Թուրքիայում ավելի քան 1.2 միլիոն մարդու մահվան դատապարտեցին առանց պատճառի և միայն նրա համար, որ քրիստոնյաներ էին¹⁰: Նրանց քշեցին իրենց տներից Եփրատ գետի երկայնքով, և հետո հանկարծ ուղեկցող ժանդարմները սկսեցին կրակել տեղահանվողների վրա: Միայն մի բոտ մարդիկ գոյատևեցին՝ թաքնվելով իրենց ընկերների մարմինների տակ: Թուրքերն ավելի ուշ մեղադրում էին անզեն հայերին, թե նրանք են սկսել կրակել»¹¹:

Օսմանյան կայսրության կողմից հայերի զանգվածային սպանությունները մնացին նրա գիտակցության մեջ, և երբ նա արդեն 21 տարեկան էր և լեզվաբանություն էր ուսումնասիրում Լվովի համալսարանում (նա ուներ լեզվական ունակություններ և վարպետացել էր լեհերեն, գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն, իտալերեն, իդիշ և եբրայերեն լեզուներում, սկսել էր ուսումնասիրել նաև լեզվաբանություն¹²), պատահաբար տեղական թերթից իմանում է Սողոմոն Թեհլիրյանի կողմից Բեռլինում Օսմանյան կայսրության ներքին գործերի նախկին նախարար Թալեթ փաշայի սպանության մասին¹³: Լեմկինը սկսում է հետևել Թեհլիրյանի դատավարությանը:

Այս առիթով նա իր ինքնակենսագրականում գրում է. «Պատերազմից հետո 150 թուրք պատերազմական հանցագործներ ձերբակալվել էին և բրիտանական կառավարության կողմից ներկայվել Մալթա կղզի: Հայերը պատվիրակություն ուղարկեցին Փարիզի խաղաղության կոնֆերանս: Նրանք արդարություն էին պահանջում: Այս ես մի օր կարդացի թերթերում, որ բոլոր թուրք հանցագործներն ազատ են արձակվելու: Ես ցնցվեցի: Մի ազգ սպանվեց, իսկ մեղավոր անձինք ազատ արձակվեցին: Ինչո՞ւ են մարդուն պատժում, երբ նա սպանում է մի այլ մարդու, մինչդեռ միլիոնավոր մարդկանց սպանությունն ավելի փոքր հանցագործություն է, քան անձի սպանությունը: Մալթայից ազատված թուրք հանցագործները ցրվեցին աշխարհով մեկ: Նրանցից ամենասարսափելին Թալեթ փաշան էր՝ Թուրքիայի ներքին գործերի նախարարը, ով նույնացվում էր հայ ժողովրդի ոչնչացման հետ: Թալեթ փաշան սպաստան գտավ Բեռլինում: Մի օր նրան փողոցում կանգ-

նեցրեց Թեհլիրյան անունով մի հայ երիտասարդ: Թալեթ փաշային ճանաչելուց հետո Թեհլիրյանը սպանեց նրան: Նրա դատավարությունը դարձավ իրականում մի թուրքական ոճրագործի դատավարություն: Հայերի կողմից դատարան բերված բազմաթիվ վկաներ նկարագրեցին կոտորածների չարաղետ տեսարանները: Այս դատավարության միջոցով աշխարհը վերջապես տեսավ Թուրքիայի ողբերգական դեպքերի իրական պատկերը: Այդ նույն աշխարհը, որը լուռ էր, երբ հայերը սպանվում էին, և մտադիր էր թաքցնել թուրքական պատերազմական հանցագործների ազատ արձակման իրողությունը, այժմ պարտադրված էր լսելու սարսափելի ճշմարտությունը:

Բեռլինի դատարանն արդարացրեց Թեհլիրյանին: Այն որոշեց, որ Թեհլիրյանը գործել է «հոգեբանական հարկադրանքի» ազդեցության տակ...

Թեհլիրյանը գործել էր հանուն մարդկության խղճի: Բայց կարո՞ղ է մի մարդն իրեն արդարություն բաշխողի դերում նշանակել»¹⁴:

Հայոց ճեղասպանությունն իրագործած թուրք հանցագործների անսպառնալիք մնալու հանգամանքն անհանգստություն է առաջացնում Լեմկինի մոտ, և նա իր պրոֆեսորներից մեկի ուշադրությունը հրավիրում է այդ հարցի վրա: Նա հարցնում է, թե ինչու հայերը կոտորածների համար չձերբակալեցին Թալեթին: Պրոֆեսորը պատասխանում է, որ գոյություն չունի օրենք, ըստ որի նա կարող էր ձերբակալվել: «Նկատի ունեցիր ֆերմերի դեպքը, ում պատկանում էր հավերի մի խումբ,- ասում է պրոֆեսորը,- նա սպանում է դրանց, և դա իր գործն է: Եթե դու միջամտես, դու ոտնձգություն ես կատարում»¹⁵:

Լեմկինն արձագանքում է. «Հայերը հավեր չեն»: Պրոֆեսորն անտեսում է Լեմկինի պատասխանը. նա ձգտում էր հիմնավորել իր փաստարկը. «Երբ դու միջամտում ես մի երկրի ներքին գործերին, դու ոտնահարում ես այդ երկրի ինքնիշխանությունը»: Դա ավանդական փաստարկ էր, որը կանխում և բացառում է միջազգային հանրության գործողությունը՝ ուղղված զսպելու զանգվածային սպանությունների մեջ մեղավոր ռեժիմներին, կամ նրանց, ովքեր ներգրավված են խոշտանգումների, ինչպես նաև մարդու իրավունքների կոպիտ խախտումների մեջ¹⁶:

«Հանցագործություն է Թեհլիրյանի համար սպանել մի մարդու, բայց հանցագործություն չէ բռնակալի համար սպանել ավելի քան մեկ միլիոն մարդու,- կրկին հարցնում է Լեմկինը,- սա ամենահակասականն է»: Լեմկինը զարմացած էր, որ «ինքնիշխանության դրոշմը» կարող է պաշտպանել մարդկանց, ովքեր փորձում են ոչնչացնել մի ամբողջ փոքրամասնության: «Սուվերենությունը», - վիճում էր Լեմկինը պրոֆեսորի հետ,- «ենթադրում է անկախ արտաքին և ներքին քաղաքականության իրականացում, դպրոցների, ճանապարհների կառուցում... կարճ ասած՝ ցանկացած այնպիսի գործունեություն, որն ուղղված է ժողովրդի բարօրությանը: Սուվերենությունը չի

¹⁰ Charny Israel W., *Enciclopedia of Genocide*, Institute on the Holocaust and Genocide, Volume 1, 1999, p. 79.

¹¹ Ռ. Լեմկինի անտիպ ինքնակենսագրություն, Donna-Lee Frieze, *Totally Unofficial: The Autobiography of Raphael Lemkin*, Yale 2013, p. 19.

¹² Power Samantha, *Նշվ., աշխ.*, էջ 21:

¹³ Korey William, *Նշվ., աշխ.*, էջ 7-8:

¹⁴ Ռ. Լեմկինի անտիպ ինքնակենսագրություն, Frieze Donna-Lee *Նշվ. աշխ.*, էջ 19-20:

¹⁵ Power Samantha, *Նշվ. աշխ.*, էջ 17:

¹⁶ Korey William, *Նշվ. աշխ.*, էջ 8:

կարող ըմբռնվել որպես միլիոնավոր անմեղ մարդկանց սպանելու իրավունք»¹⁷:

Պրոֆեսորը նշում է. «Դուք երիտասարդ եք ու հուզված...Եթե Դուք ինչ-որ բան իմանայիք միջազգային իրավունքից...»: Նա նախադասությունը չի ավարտում: Պրոֆեսորի այս խոսքն էլ հանդիսացավ Լեմկինի համար հիմնական հարցի կորիզը: Չի՞ կարող միջազգային իրավունքի նոր ստեղծվել, որը կգործի զանգվածային սպանությունների համար: Այս հարցադրումը հանգեցրեց նրան, որ Լեմկինը որոշեց փոխել իր ուսումնասիրության ոլորտը, որի արդյունքում նա լեզվաբանությունից իր ուշադրությունը կենտրոնացրեց միջազգային իրավունքի ուսումնասիրության վրա¹⁸:

Հետագայում Լեմկինը գրում է. «Ես ավելի և ավելի էի նույնականացնում ինքս ինձ տանջվող զոհերի հետ, որոնց թիվն ինչքան ավելանում էր, այնքան էս շարունակում էի պատմության իմ ուսումնասիրությունը: Ես հասկացա, որ հիշողության ֆունկցիան ոչ միայն անցյալի իրադարձություններն արձանագրելու համար է, այլ նաև մարդկային խիղճը խթանելու: Շուտով հետևեցին ժամանակակից ցեղասպանությունների օրինակները, ինչպիսին 1915 թ. հայերի ջարդերն էին: Ինձ համար պարզ դարձավ, որ ազգերի, կրոնական խմբերի և ռասաների բազմազանությունն անհրաժեշտ է քաղաքակրթության համար, որովհետև այդ խմբերից յուրաքանչյուրն առաքելություն ունի իրականացնելու և մշակութային առումով իր ներդրումն ունենալու...Ես որոշեցի դառնալ իրավաբան և աշխատել ցեղասպանությունն օրենքից դուրս հայտարարելու և ազգերի համագործակցության միջոցով այն կանխարգելելու համար»¹⁹:

Փաստորեն նա իր մտքի ուղղությունը լեզվաբանությունից փոխում է դեպի այն ոլորտի ուսումնասիրություն, ինչը նրան մտահոգում էր դեռևս մանկության տարիներին: Արդյունքում Լեմկինը տեղափոխվում է Լվովի իրավունքի դպրոց, որտեղ սկսում է փնտրել հնադարյան և ժամանակակից իրավական նորմերը՝ կոտորածներն արգելելու համար²⁰: Օսմանյան կայսրությունում ապրող հայերի ողբերգական ճակատագիրը հաստատում է նրա այն տեսակետը, թե պետք է ստեղծել միջազգային օրենք, որպեսզի ազգային կամ կրոնական փոքրամասնությունների կանխամտածված ու համակարգված ոչնչացումը պետության կողմից դառնա պատժելի հանցագործություն²¹:

1949 թ. CBS հեռուստաընկերության հեռուստածրագրերից մեկին տված իր հարցազրույցում Ռաֆայել Լեմկինը նշում է. «Ես հետաքրքրվեցի ցեղասպանությամբ, որովհետև այն շատ անգամ տեղի ունեցավ, այն տեղի ունեցավ հայերի հետ, և դրանից հետո հայերը շատ դաժան վերաբերմունքի արժանացան Վերսալի կոնֆերանսում, քանի որ նրանց ցեղասպանության իրագործման մեջ մեղավոր հանցագործ-

ները չպատժվեցին»²²: Ապա անդրադառնալով հայերի կողմից վրեժխնդրությանը և Թալեթաֆ փաշայի սպանության գործին՝ Լեմկինն ասում է հետևյալը. «Որպես իրավաբան՝ ես մտածում էի, որ հանցագործությունը պետք է պատժվի ոչ թե զոհերի կողմից, այլ դատարանի կողմից, պետության օրենքով»²³:

Լեմկինը հավատում էր, որ զանգվածային սպանությունների և մարդու իրավունքների համընդհանուր չարաշահումների «բուժումը» պետք է գա միջազգային իրավունքի շնորհիվ: Սակայն նա հայտնաբերեց, որ գոյություն ունեն չնչին թվով միջազգային օրենքներ նմանատիպ հանցագործությունների վերաբերյալ: Ավելին՝ ոչ մի միջազգային դատարան չունի իրավասություն այն հանցագործությունների նկատմամբ, որոնք կատարվել են ինքնիշխան պետությունների սահմանների ներսում: Այս ամենը Լեմկինը սխալ էր համարում, և նա սկսում է մտածել, թե ինչպես կարող է դա փոխվել²⁴:

Լեմկինը հետագայում բացատրում էր, որ օրենքը կարևոր դեր կարող է կատարել էթնիկ և կրոնական խմբերի զանգվածային սպանությունների և նրանց մշակույթի ոչնչացման դեմ պայքարելու համար. «Օրենքը տալիս է հասարակության վրա ազդեցության գործիք», - ասում էր նա՝ նշելով, որ «խորհրդարանները վերահսկվում են իրավաբանների կողմից»:

Նա ընկղմվեց իրավական ուսումնասիրությունների մեջ 6 տարի, սկզբից Լվովում, ապա Հայդելբերգի համալսարանում: Նրան հիասթափեցնում էր այն փաստը, որ ոչ մի տեղ չկարողացավ գտնել իրավական նորմեր ռասայական և կրոնական խմբերի սպանությունն արգելելու համար²⁵:

Վարչավայում դատախազ աշխատելու ընթացքում 1929 թ.-ից նա սկսեց աշխատել միջազգային օրենքի նախագծի վրա, որը պարտավորեցնելու էր պետությունների կառավարություններին կանգնեցնել էթնիկական, ազգային, կրոնական խմբերի թիրախավորված ոչնչացումը: Հենց այդ օրենքն էր, որ Լեմկինը ներկայացրեց իր՝ եվրոպացի (իրավունքի մասնագետ) կոլեգաներին 1933 թ. Մադրիդում գումարված քրեական իրավունքի հիմնահարցերին նվիրված 5-րդ միջազգային կոնֆերանսի ժամանակ:

Մադրիդյան կոնֆերանսում Լեմկինն առաջին անգամ առաջարկեց ստեղծել բազմակողմ կոնվենցիա և մարդկային խմբերի ոչնչացումը որակել որպես միջազգային հանցագործություն²⁶: Կոնֆերանսի ժամանակ նա ներկայացնում է օրենքի նախագիծ, որն արգելում էր միմյանց հետ կապված երկու գործողություններ՝

²² Harut Sassounian, *Lemkin Discusses Armenian Genocide*, Dec. 8, 2005, (http://www.armeniapedia.org/index.php?title=Lemkin_Discusses_Armenian_Genocide_In_Newly-Found_1949_CBS_Interview).

²³ Նույն տեղում:

²⁴ Strom Adam & the Facing History and Ourselves Staff, “*Totally unofficial: Raphael Lemkin And the Genocide Convention*”, 2007, p. 4.

²⁵ Korey William, *Նշվ. աշխ.*, էջ 8:

²⁶ Lemkin Raphael, *Acts Constituting a General (Transnational) Danger Considered as Offences Against the Law of Nations, Madrid (14 -20 October 1933)*, (<http://www.preventgenocide.org/lemkin/madrid1933-english.htm>).

¹⁷ Power Samantha, *Նշվ. աշխ.*, էջ 18-19:

¹⁸ Korey William, *Նշվ. աշխ.*, էջ 8:

¹⁹ Charny Israel W., *Նշվ. աշխ.*, էջ 79:

²⁰ Power Samantha, *Նշվ. աշխ.*, էջ 21:

²¹ Schaller Dominik J. , *From Lemkin to Clooney: The Development and State of Genocide Studies*, “*Genocide Studies and Prevention: An International Journal*”, 6, (3), (2011), Issue 3, 6.

«բարբարոսությունը» և «վանդալիզմը»: «Բարբարոսությունը» որակվում էր որպես «ազգային, ռասայական, կրոնական և սոցիալական խմբերի կանխամտածված ոչնչացում»: «Վանդալիզմը» նա սահմանում էր որպես «առանձին խմբերի հանճարի արտահայտությունը հանդիսացող արվեստի, մշակույթի գործերի ոչնչացումը»: Այդ երկու գործողությունները՝ խմբերի և նրանց մշակութային և ինտելեկտուալ կյանքի ոչնչացումը, պատժելի դարձնելը Լեմկինին զբաղեցնելու էր նաև առաջիկա երեք տասնամյակների ընթացքում²⁷:

Լեմկինն իր մադրիդյան զեկույցում ուշադրություն էր հրավիրում նաև Հիտլերի վերելքին և Օսմանյան կայսրությունում հայերի ջարդերին, մի հանցագործություն, որը եվրոպացիների մեծամասնությունը կամ անտեսում էին, կամ ներկայացնում էին որպես «Արևելյան» երևույթ: Եթե այն մի անգամ տեղի ունեցավ, պնդում էր երիտասարդ իրավաբանը, այն կարող է տեղի ունենալ այստեղ (Եվրոպայում):

Լեմկինն առաջ էր քաշում արմատական առաջարկ: Նա պնդում էր, որ եթե միջազգային հանրությունը երբևէ հույս ունի կանխելու այնպիսի զանգվածային ջարդերը, ինչպիսին հայերի կոտորածներն էին, ապա աշխարհի պետությունները պետք է միավորվեն՝ կանխելու այդ փորձը: Այսպիսի նպատակ ունենալով մտքում՝ Լեմկինը նախապատրաստում էր օրենք, որը կարգելի ազգերի, ռասաների, կրոնական խմբերի ոչնչացումը: Ազգային, էթնիկ կամ կրոնական խմբերի ոչնչացման փորձը կդառնա միջազգային հանցագործություն, որը պետք է պատժվի ամենուրեք, ինչպես ստրկությունը և ծովահենությունը: Պատժի սպառնալիքը, պնդում էր Լեմկինը, կրեքի գործնական փոփոխությունները²⁸:

Ամփոփելով նշենք հետևյալ հիմնական եզրակացությունները

- Լեմկինը դեռ վաղ տարիքից հետաքրքրվել է տարատեսակ ջարդերի և ցեղասպանությունների պատմությամբ, սակայն միջազգային քրեական իրավունքով զբաղվելու և լեզվաբանությունը թողնելու համար նրա կյանքում խթան է հանդիսացել Հայոց ցեղասպանությունը՝ հատկապես թուրք հանցագործների անպատիժ մնալը, ինչը Լեմկինի մեջ առաջացրել է նմանատիպ հանցագործներին պատժելու մեխանիզմների ստեղծման անհրաժեշտության գիտակցում:

- Ռաֆայել Լեմկինը դեռևս իր գործունեության սկզբնական շրջանում հենց Հայոց ցեղասպանության՝ Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված հանցագործության իրագործման ժամանակ, խոսում էր ժամանակի միջազգային իրավունքի անկատար լինելու մասին:

- Միջազգային քրեական իրավունքի հարցերին նվիրված Մադրիդի կոնֆերանսում Ռ. Լեմկինը ներկայացրել է իր զեկույցը՝ ելնելով Հայոց ցեղասպանության տրամաբանությունից, այսինքն՝ նա զգուշացնում էր, որ Հայոց ցեղասպանություն հանցագործության նկատմամբ անտարբերությունը և անպատժելիությունը կարող են հանգեցնել ցեղասպանություն հանցագործության կրկնությանը:

²⁷ Power Samantha, *նշվ. աշխ.*, էջ 21-22:

²⁸ Նույն տեղում, էջ 19-20:

Հայոց ցեղասպանության թեման Ռաֆայել Լեմկինի գործունեության սկզբնական շրջանում

Պողոսյան Նարեկ

Ամփոփում

Հոդվածում քննության է առնվում այն հարցը, թե ինչ ազդեցություն է ունեցել Հայոց ցեղասպանություն թեման Ռաֆայել Լեմկինի հայացքների վրա նրա գործունեության սկզբնական շրջանում: Մասնավորապես անդրադարձ է կատարվում այն խնդրին, թե Հայոց ցեղասպանությունն իրագործողների անպատիժ մնալը որքանով է Ռաֆայել Լեմկինի մեջ առաջացրել նմանատիպ հանցագործությունները պատժելու մեխանիզմների անհրաժեշտության գիտակցում: Հոդվածում, որը հիմնված է նաև Ռաֆայել Լեմկինի կենսագրական տեղեկությունների վրա, ցույց է տրվում, որ Լեմկինի կողմից միջազգային իրավունքի ուսումնասիրության հարցում առաջնային տեղ է գրավել Հայոց ցեղասպանության թեման:

Բանալի բառեր՝ ցեղասպանություն, միջազգային իրավունք, Ռաֆայել Լեմկին:

The Armenian Genocide Theme in the Early Period of Raphael Lemkin’s Activity

Narek Poghosyan

Summary

This article examines how the Armenian genocide impacted Raphael Lemkin in his early career. Mainly the role of the Armenian genocide in conceptualizing the mechanism of punishment for such crimes is discussed. The article which presents also some biographical data on Lemkin, shows that the Armenian genocide had an important role for Rafael Lemkin in studying the international law.

Keywords: genocide, international law, Raphael Lemkin.

Тема Геноцида армян на начальном этапе деятельности Рафаэля Лемкина

Нарек Погосян

Резюме

В статье рассматривается каким образом тема Геноцида армян повлияла на ранний период деятельности Рафаэля Лемкина. В частности, отмечено, как Рафаэль Лемкин осознал необходимость создания механизма наказания преступников, которые совершили Геноцид армян. На основе биографических данных Р. Лемкина показано, что фактор Геноцида армян занимал один из приоритетных мест в процессе изучения Лемкиным международного права.

Ключевые слова: геноцид, международное право, Рафаэль Лемкин.

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ. ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ**

Մեղա Պարսամյան

**Մշակութային ցեղասպանությունն ըստ Ռաֆայել Լեմկինի սահմանած
հայեցակարգի**

Իրավագետ Ռաֆայել Լեմկինը (1900-1959), իր հիմնարար աշխատության («Առանցքի երկրների կառավարումը բռնազավթված Եվրոպայում») մեջ համադրելով հունարեն *γένος* (*genos*¹՝ ռասա, ազգ, ցեղախումբ) և լատիներեն *cidere* (*cide*²՝ սպանել) բառերը և առաջին անգամ շրջանառության մեջ դնելով *genocide* (գենոցիդ, ցեղասպանություն) բառերը, դրա բնորոշման մեջ առանձնահատուկ ուշադրություն դարձրեց նաև մշակութային արժեքների ոչնչացման խնդրին³: Ըստ Լեմկինի՝ ցեղասպանությունը. «...տարբեր գործողություններից կազմված համակարգված ծրագիր է, որը նպատակ ունի ոչնչացնելու ազգային խմբերի կենսական կարևորության կառույցները՝ խմբի ոչնչացման դիտավորությամբ: Այդ ծրագրի նպատակներն են դիտվում ազգային խմբերի քաղաքական և սոցիալական ինստիտուտների, մշակութային, լեզվական, ազգային զգացումների, կրոնական և տնտեսական կազմալուծումը, ինչպես նաև խմբի անդամների անձնական անվտանգության, ազատության, առողջության, արժանապատվության և անգամ կյանքի ոչնչացումը: Ցեղասպանությունն ուղղված է ազգային խմբի՝ որպես մեկ միավորի դեմ. իրականացված գործողություններն ուղղված են ոչ թե խմբի անդամների դեմ անհատապես, այլ խմբի դեմ»⁴: Լեմկինը նկարագրում է ցեղասպանության ութ բաղադրիչները՝ քաղաքական, սոցիալական, մշակութային, տնտեսական, կենսաբանական, ֆիզիկական, կրոնական և բարոյական⁵: Մասնավորապես մշակութային ցեղասպանության մեջ նա ներառում է խմբի ազգային ավանդույթների, լեզվի արժեքը, մշակութային արժեքների՝ հուշարձանների, արխիվների, գրադարանների ոչնչացումը, ինչպես նաև խմբի մշակույթն ու արվեստը ներկայացնող մարդկանց բնաջնջումը⁶:

¹ St' u Lemkin R., *Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation, Analysis of Government, Proposals for Redress*, Washington: Carnegie Endowment for International Peace, 1944, pp. 79-80.

² Նույն տեղում: Հատկանշական է, որ մինչ *genocide* բառերի առաջադրումն ու դրա բնորոշումը, դեռևս 1933 թ. Մադրիդի կոնֆերանսում Լեմկինը հանդես է եկել միջազգային օրենսդրական մի քանի այլ նախագծերով ևս, մասնավորապես «բարբարոսության» (*barbarity*) և «վանդալիզմի» (*vandalism*) դատապարտման համար: «Բարբարոսություն»-ը սահմանելով «ազգային, կրոնական, ռասայական և սոցիալական ընդհանրության կանխատեսված ոչնչացում», իսկ «վանդալիզմ»-ը՝ «...ընդհանրությունների ուրույն հանճարի դրսևորում հանդիսացող մշակույթի և արվեստի գործերի ոչնչացում», Լեմկինը պնդում էր, որ երկուսն էլ անհրաժեշտ է որակել որպես միջազգային հանցագործություններ: St' u Lemkin R., *Acts Constituting a General (Transnational) Danger Considered as Offences against the Law of Nations*, 1933 [http://www.preventgenocide.org/lemkin/madrid1933-english.htm, դիտվել է՝ 17.07.2015], տե՛ս նաև *Totally Unofficial: The Autobiography of Raphael Lemkin*, edited by Frieze Donna-Lee, New Haven: Yale University Press, 2013, p. 22.

³ St' u Lemkin R., *Axis Rule in Occupied Europe...*, pp. 82-90:

⁴ Նույն տեղում, էջ 84-85:

Այնուամենայնիվ, մշակութային ցեղասպանության կամ խմբի մշակույթի ոչնչացման գաղափարի ծնունդը և այն ցեղասպանության հայեցակարգ ներառելու կարևորությունն առավել մանրամասն լուսաբանված են Ռաֆայել Լեմկինի հուշերում և արխիվային գրազրույթումներում⁷: Մելրոունի Դիքինի համալսարանի դասախոս դոկտոր Դոննա-Լի Ֆրիզը, ուսումնասիրելով Լեմկինի արխիվային փաստաթղթերը, նշում է, որ վերջինիս կողմից մշակույթի ոչնչացման հիմնախնդրին հատկացված ուշադրությունը պայմանավորված է եղել Հայոց ցեղասպանությամբ՝ որպես շարունակական և պատմականորեն բյուրեղացված ցեղասպանություն, և մշակույթի ոչնչացման գաղափարը երբևէ չի լքել ցեղասպանության վերաբերյալ նրա ունեցած հայեցակարգային ընկալումները⁸: Մասնավորապես Նյու Յորքի հանրային գրադարանում պահվող իր ձեռագրերից մեկում Լեմկինը, լուսաբանելով ցեղասպանության հայեցակարգ ներառված մշակույթի կարևորությունը, նշում է, որ մարդկային խմբի գաղափարը պարփակված է «գենոս» բառերում, որն իր հերթին մշակույթի և քաղաքակրթության հիմքն է, իսկ իրական մշակույթ ստեղծողը մարդկային հանրությունն է⁷: Լեմկինի բնորոշմամբ մշակութային բազմազանությունն է քաղաքակրթություն ձևավորում, և հետևաբար ծայրահեղ ազգայնականությունն իր գաղափարական հիմքով հանգեցնում է մշակութային բազմազանության ժխտման և «բռնի միջամտության» քաղաքակրթությանը⁸: Եվ իսկապես, ազգային, կրոնական կամ էթնիկ յուրաքանչյուր խումբ խարսխված է իր մշակույթին, իսկ ոճրագործները գիտակցում են, որ խմբին չեզոքացնելու և խոցելու արդյունավետ եղանակը վերջինիս անդամներին միահյուսող, շաղկապող, ինչպես նաև իմաստ հաղորդող թելերի՝ լեզվի, ազգային, կրոնական ավանդույթների, հոգևոր և նյութական մշակույթի արժեքների կազմալուծումն է: Հետևաբար խումբը բնաջնջելու փորձն առաջին հերթին ուղղված է վերջինիս բնորոշ հատկանիշների և որակների՝ Լեմկինի առաջ քաշած հավաքական բառերի՝ «գենոսի» ոչնչացմանը: Ահա թե ինչու ցեղասպանություն հասկացության առաջին տեսաբանը՝ Ռաֆայել Լեմկինը, բնորոշելով մարդկության դեմ ուղղված ծանրագույն այս հանցագործությունը, նրանում կարևոր տեղ հատկացրեց մշակութային կողմին, և ինչպես հաջորդող էջերում կտեսնենք, հետևողականորեն պայքարեց, որպեսզի մշակութայինը ցեղասպանությունից չօտարվի և չօտարանջատվի:

Իսկ ո՞ր դեպքում հանցագործությունը պետք է որակել կամ բնորոշել որպես մշակութային ցեղասպանություն: Ըստ Լեմկինի՝ մշակութային արժեքների վերացման ոչ բոլոր դեպքերը կարող են կամ պետք է որակվեն որպես ցեղասպանություն: Ցեղասպանական գործողություն են համարվում մշակույթի ոչնչացման այն դեպքերը, որոնք

⁵ St' u *Totally Unofficial...*, ինչպես նաև՝ Frieze Donna-Lee, “Genos-the Human Group”: How the Concept of “Culture” Underscores Raphael Lemkin’s Notion of “Genocide,” *The Crime of Genocide: Prevention, Condemnation and Elimination of Consequences, Proceedings of International Conference* (Yerevan, December 14-15, 2010, MFA of Armenia, AGMI), Yerevan, 2011, 164-171 pp..

⁶ St' u Frieze Donna-Lee, *Genos-the Human Group...*, p. 165.

⁷ Նույն տեղում, էջ 169-170:

⁸ Նույն տեղում, էջ 170:

թիրախային խմբի դիտավորյալ ոչնչացման նպատակ են հետապնդում: Դա տարբերակելու համար նա առաջարկում է նախ և առաջ ուսումնասիրել և հասկանալ «մշակութային ոչնչացում» և «մշակութային ճուլում» հասկացությունների սահմանը: Ըստ Լեմկինի հայեցակարգի՝ մշակութային ճուլումը կամ միավորումը, որը ցեղասպանական բնույթ չի կրում, տեղի է ունենում աստիճանաբար, չկանխորոշված և «մշակույթի շարունակական և դանդաղ աղապտացիա» է պայմանավորված ներքին և արտաքին զանազան ազդեցություններով⁹: Մինչդեռ մշակութային ցեղասպանությունն իր տեսակի մեջ ուրույն է, քանի որ այն ոչ միայն բուն ոչնչացման գործողությունն է, որն իրագործվում է բռնությամբ, կտրուկ և ամբողջությամբ, այլ նաև դրսևորվում է խմբի ֆիզիկական կամ կենսաբանական ոչնչացման գործողություններում: Հետևաբար Լեմկինի պնդմամբ որևէ դժվարություն չի ներկայացնի մշակութային ցեղասպանությունը տարբերել մշակութային ճուլումից, քանի որ մշակութային ցեղասպանությունը ներառված է ցեղասպանությունն իրագործողի նպատակի, դիտավորության ու ծրագրի մեջ¹⁰: Իր հիմնարար աշխատության մեջ Լեմկինը որպես մշակութային ցեղասպանության վառ օրինակ բերում է 1939 թ. գերմանացիների կողմից Լյուբլինի (քաղաք Լեհաստանում) հրեական աստվածաբանական ճեմարանի գրադարանի հրկիզման դրվագը՝ հատված մեջբերելով դրան մասնակցած մի գերմանացու խոստովանությունից. «Մեզ համար Լեհաստանում իր մեծությամբ հայտնի Թալմուդի ակադեմիայի¹¹ ոչնչացումն առանձնակի հպարտության առարկա էր: Մենք դուրս նետեցինք Թալմուդի հսկայական գրադարանը և տեղափոխեցինք շուկա, ուր և հրկիզեցինք այն: Հրդեհը շարունակվեց շուրջ քսան ժամ: Լյուբլինի հրեաները հավաքվել և դառնությամբ ողբում էին: Նրանց ձայները խլացրել էին մեզ: Հետո մենք կանչեցինք զինվորական նվազախումբ և ուրախ գոռու-գոցուններով լոնցրինք հրեաների լացը»¹²:

Այսպիսով, «մշակութային ցեղասպանություն» (*Cultural Genocide*) եզրույթը, որը Լեմկինի ամփոփիչ բնորոշմամբ «ազգային ոգու սրբությունների» ոչնչացումն է¹³, ծագել և սահմանվել է *genocide* բառեզրի հետ միաժամանակ և խմբի համակարգված ու դիտավորյալ ոչնչացման՝ ցեղասպանություն հանցագործության բաղկացուցիչ մաս է կազմում:

Ավելի ուշ շրջանի ցեղասպանության տեսաբանների մեծ մասը նույնպես պնդում են, որ ցեղասպանության մշակութային կողմը լոկ ցանկացած ցեղասպանական գործողության մաս է կազմում¹⁴:

⁹ Նույն տեղում, էջ 167:
¹⁰ Նույն տեղում, էջ 168:
¹¹ Հուդայական սուրբ գիրքն ու նրա մեկնություններն ուսումնասիրող և դասավանդող բարձրագույն հաստատություն:
¹² Lemkin R., *Axis Rule in Occupied Europe...*, pp. 84-85.
¹³ St' u Totally Unofficial..., էջ 172:
¹⁴ St' u Kuper L., *Genocide: Its Political Use in the Twentieth Century*, New Haven and London: Yale University Press, 1981, էջ 15, 30-39, ինչպես նաև Schabas W. A., *Genocide in International Law: The Crimes of Crimes*, Cambridge: Cambridge University Press, 2000, էջ 179-189: Shaw M., *What is genocide?*, Cambridge: Polity Press, 2007, էջ 66-67: Sautman B., “Cultural Genocide in International Context,” in

«Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիան և «մշակութային ցեղասպանությունը»

Չնայած խնդրի հրատապությանը՝ տասնամյակներ շարունակ խնդրահարույց է եղել միջազգային իրավական փաստաթղթերում *genocide* եզրույթի ձևակերպման ընդլայնման և դրանում մշակութային ասպեկտի կիրառման հարցը:

«Մշակութային ցեղասպանություն» ձևակերպումն իր հստակ սահմանումներով առաջին անգամ տեղ է գտել 1947-1948 թթ. Միավորված ազգերի կազմակերպությունում (այսուհետ՝ ՄԱԿ) պատրաստված «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի երկու նախագծերում¹⁵: Հատկանշական է, որ ցեղասպանության հայեցակարգում Լեմկինի սահմանած ութ բաղադրիչներից կոնվենցիայի նախագծեր ընդգրկվեցին միայն երեքը՝ ֆիզիկականը, կենսաբանականն ու մշակութայինը¹⁶: Մասնավորապես մշակութային բաղադրիչի ներառումը մեծապես պայմանավորված էր այն հանգամանքով, որ հետպատերազմյան շրջանում նացիստ պարագլուխների դատավարությունների ժամանակ վերջիններս հաճախ են մեղադրվել լեհական և հրեական մշակույթները ոչնչացնելու կամ բռնությամբ «գերմանականացնելու» մեջ¹⁷: Սակայն հենց մշակութային ասպեկտի ներառման հարցը դարձավ վեճերի և հակադրությունների առիթ:

Այսպես, կոնվենցիայի մշակումն իրականացվել է երեք հիմնական փուլերով: Առաջին փուլում հիմք ընդունելով Ռաֆայել Լեմկինի ցեղասպանության հայեցակարգը՝ 1947 թ. մայիսին ՄԱԿ-ի քարտուղարությունը պատրաստել է կոնվենցիայի առաջին նախագիծը՝ հայտնի որպես Քարտուղարության նախագիծ (*Secretariat draft*)¹⁸: Երկրորդ փուլում՝ 1948 թ. ապրիլի 5-ից մայիսի 10-ի ընթացքում, Քարտուղարության նախագիծը վերամշակվել է ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի (UN ECOSOC) վերահսկողության ներքո ստեղծված Հատուկ կոմիտեի կողմից (*Ad Hoc Committee draft*)¹⁹: Եվ վերջապես երրորդ փուլում Հատուկ կոմիտեի կազմած նախագիծը ներկայացվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի վեցերորդ կոմիտեի քննարկմանը, որի արդյունքում

Cultural Genocide and Asian State Peripheries, edited by Sautman Barry, New York: Palgrave Macmillan, 2006, էջ 1-37: Abed M., “Clarifying the concept of Genocide”, *Metaphilosophy*, Vol. 37, Nos. 3-4, July 2006, էջ 308-330:

¹⁵ St' u Secretariat Draft: First Draft of the Genocide Convention, Prepared by the UN Secretariat, [May] 1947 [UN Doc. E/447], Ad Hoc Committee Draft: Second Draft Genocide Convention Prepared by the Ad Hoc Committee of the Economic and Social Council (ECOSOC), meeting between April 5, 1948 and May 10, 1948 [UN Doc. E/AC.25/SR.1 to 28], [http://www.preventgenocide.org/law/convention/drafts/, դիտվել է՝ 19.08.2015]
¹⁶ St' u նույն տեղում:
¹⁷ St' u Schabas W. A., *նշվ. աշխ.*, էջ 179:
¹⁸ Վերջինիս մշակման աշխատանքներին մասնակցել են երեք մասնագետներ՝ Ռաֆայել Լեմկինը՝ որպես ցեղասպանություն եզրույթի ստեղծող և հայեցակարգի հեղինակ, Անրի Դոնեդիո դը Վաբրը՝ Փարիզի համալսարանի իրավունքի ֆակուլտետի պրոֆեսոր և նյուրնբերգյան դատարանի նախկին դատավոր, և Վեսպասիան Պելան՝ ռումինական իրավունքի պրոֆեսոր և Քրեական իրավունքի միջազգային ասոցիացիայի նախագահ (տե՛ս նույն տեղում, էջ 52):
¹⁹ Նույն տեղում, էջ 58-68:

համաձայնեցվել է կոնվենցիայի վերջնական տեքստը և 1948 թ. վերջին ներկայացվել գլխավոր ասամբլեայի պլենար նիստին՝ պաշտոնական հաստատման²⁰:

Առաջին իսկ քննարկումների ընթացքում երեք մասնագետներից երկուսը՝ Անրի դե Վաբրը և Վեսպասիան Պելան, դեմ էին մշակութային բաղադրիչը կոնվենցիա ներառելու գաղափարին, սակայն Ռաֆայել Լեմկինը պնդում էր, որ ռասայական, ազգային կամ կրոնական խումբը չի կարող շարունակել գոյատևել, եթե նրա հոգևոր և բարոյական ամբողջությունը խախտված է²¹: Հատկանշական է, որ քննարկումների ընթացքում Լեմկինի տեսակետը ջերմորեն պաշտպանել են Խորհրդային Միության, Չինաստանի և Վենեսուելայի պատվիրակները²², մինչդեռ արևմտակարգ պետությունների, մասնավորապես Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի պատվիրակները, ինչպես նաև ԱՄՆ-ը, ամենաուժեղ հակադրվող կողմերն էին: Տարածայնությունների առիթն այն չէր, որ խումբը չպետք է պաշտպանված լինի իր մշակույթը ոչնչացնելու փորձերից, այլ այն, որ մշակույթի պաշտպանությունը պետք է ներառել ոչ թե ցեղասպանության, այլ մարդու կամ փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող կոնվենցիաներ²³: Հիմնական փաստարկն այն էր, որ կոնվենցիան ուղղված է մարդկանց զանգվածային կոտորածների կանխարգելմանն ու պատժին՝ որպես միջազգային քրեական հանցագործության առանձին տեսակ, հետևաբար մշակութային բաղադրիչի ներառումը կթուլացնէր փաստաթղթի ուժը որպես այդպիսին²⁴: Սակայն ցեղասպանություն եզրույթը ստեղծողի համար ֆիզիկական ոչնչացումը ցեղասպանության գործընթացի մեկ բաղադրիչն էր միայն, քանի որ այն շարկապված և տևական գործընթացի հետևանք էր: Լեմկինը ցեղասպանություն ասելով հասկանում էր ոչ թե «մի ժողովրդի անմիջական ոչնչացումը», այլ «խմբի ազգային տեսակի ոչնչացումը», որը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ, այդ թվում և մշակութայինը²⁵: Հատկանշական է, որ երբ 1946 թ. ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում առաջին անգամ քննարկվում էր ցեղասպանության հարցը, նշվել է, որ վերջինիս դեպքերից են «մարդկության մեծ կորուստները՝ մշակութային և այլ դրսևորումներով»²⁶: Սակայն արդեն կոնվենցիայի նախագծի շուրջ քննարկումներում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի ելույթը ենթադրում էր մշակութային ասպեկտի մերժում, ներառյալ ազգային լեզվի կիրառման արգելքը, ինչպես նաև հուշարձանների և պատմական, արվեստի կամ կրոնական այլ հաստատությունների հետև-

²⁰ Նույն տեղում, էջ 68-81:

²¹ Նույն տեղում, էջ 179-180:

²² Վերջինիս ներկայացուցիչ՝ Վիկտոր Պերեզ-Պերոզոյի հայտարարության մեջ մասնավորապես ասվում էր. «Մարդկային հանրույթը միավորող ամենակարևոր թելը մշակույթն է, և, ոչնչացնելով մշակութային ժառանգությունը, թողնում են խմբին գոյատևել: Ցեղասպանությունը չի ենթադրում միայն խմբի անդամների ֆիզիկական քնացնումը. դա դեռևս հանցանքի պարտադիր բաղադրիչ չէ...»: Մեջբերված է Sautman B., *Cultural Genocide in International Context...*, էջ 4-5:

²³ Տե՛ս Kuper L., *Նշվ. աշխ.*, էջ 31-35: Schabas W. A., *Նշվ. աշխ.*, էջ 57, 63, 66, 70, 180-181:

²⁴ Տե՛ս Fournet C., *The Crime of Destruction and the Law of Genocide*, UK, Ashgate, 2007, էջ 43-46:

²⁵ Lemkin R., *Axis Rule in Occupied Europe...*, p. 79.

²⁶ Sautman B., *Cultural Genocide in International Context...*, p. 4.

դական ոչնչացումը²⁷:

Ամերիկացի սոցիոլոգ, Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Լեո Կուպերի (1908-1994) տեսակետի համաձայն՝ այս հարցի շուրջ հակամարտությունը ոչ թե գաղափարական էր, այլ ավելի շուտ հակադրվող կողմերը, որոնք գաղութատիրական տերությունների ներկայացուցիչներ էին, խոցելի էին զգում իրենց և պաշտպանողական դիրք էին գրավել՝ փորձելով խուսափել ոչ ինքնուրույն կառավարվող տարածքներում իրենց երկրների կառավարությունների վարած քաղաքականության քննադատություններից²⁸: Այս առումով հատկանշական է Միացյալ Նահանգների պատվիրակության ղեկավար, ինչպես նաև Հատուկ կոմիտեի աշխատանքները նախագահող Ջոն Մակլոթսի հայտնած մտահոգությունն այն մասին, որ մշակութային բաղադրիչի ներառումը կարող էր մեծ ռիսկի առջև կանգնեցնել կոնվենցիայի վավերացման հարցը որոշ պետությունների կողմից²⁹:

Չնայած լուրջ տարածայնություններին՝ այնուամենայնիվ ցեղասպանություն հանցագործության մշակութային բաղադրիչները ներառվեցին կոնվենցիայի երկու՝ նախ և քարտուղարության, ապա նաև՝ Հատուկ կոմիտեի նախագծեր: Մասնավորապես քարտուղարության նախագծի I հոդվածի 3-րդ կետը՝ վերնագրված «խմբի յուրահատուկ հատկանիշների ոչնչացում», ներկայացնում էր մշակութային ցեղասպանությունը բնորոշող հետևյալ հինգ սահմանումները.

- ա) խմբի երեխաների բռնի տեղափոխումն այլ խմբեր,
- բ) Այն մարդկանց բռնի և պարբերաբար արտաքսումը, ովքեր ներկայացնում են տվյալ մշակութային խումբը,
- գ) Մայրենի լեզվի օգտագործման արգելքը նույնիսկ նեղ շրջանակներում,
- դ) Մայրենի լեզվով լույս տեսած գրքերի կամ կրոնական աշխատությունների հետևողական ոչնչացումը և դրանց վերահրատարակելու արգելքը,
- ե) Պատմական և կրոնական հուշարձանների հետևողական ոչնչացումը կամ դրանց օգտագործումն այլ նպատակներով, պատմական, գեղարվեստական, կրոնական արժեք ունեցող փաստաթղթերի կամ կրոնական ծեսերում օգտագործվող առարկաների ոչնչացումն ու տարրալուծումը³⁰:

Այս սահմանումները քիչ ավելի ուշ որոշակի փոփոխություններով ու կրճատումներով ամփոփվեցին հատուկ կոմիտեի կազմած նախագծի III հոդվածում՝ «Մշակութային ցեղասպանություն» ընդհանուր վերնագրով, որում մասնավորապես ասվում էր. «Այս կոնվենցիայով ցեղասպանություն է նաև յուրաքանչյուր կանխամտածված գործողություն, որն ունի դիտավորություն ոչնչացնելու ազգային, ռասայական կամ կրոնական խմբի լեզուն, կրոնը կամ մշակույթը՝ ազգային,

²⁷ Նույն տեղում:

²⁸ Տե՛ս Kuper L., *Նշվ. աշխ.*, էջ 31:

²⁹ Տե՛ս Schabas W. A., *Նշվ. աշխ.*, էջ 181:

³⁰ Տե՛ս Secretariat Draft: First Draft of the Genocide Convention, Prepared by the UN Secretariat, [May] 1947 [UN Doc. E/447], [<http://www.preventgenocide.org/law/convention/drafts/>], դիտվել է՝ 19.08.2015].

ուսասյական կամ կրոնական հողի վրա»³¹, ինչպես օրինակ՝

1. խմբի լեզվի օգտագործման արգելքն առօրյա շփման ընթացքում, դպրոցներում կամ տպագրության մեջ և հրապարակային շրջանակներում,

2. գրադարանների, թանգարանների, դպրոցների, պատմական հուշարձանների, պաշտամունքի վայրերի, ինչպես նաև խմբի մշակութային այլ ինստիտուտների և օբյեկտների ոչնչացումը կամ օգտագործման արգելքը³²:

Քիչ ավելի ուշ Լիբանանի պատվիրակության առաջարկով ավելացվել է մշակութային ցեղասպանության մեկ այլ դրսևորում, համաձայն որի՝

1. խմբի անդամների համար այնպիսի իրավիճակի ստեղծում, որը կատիպեր նրանց հրաժարվել իրենց լեզվից, կրոնից կամ մշակույթից³³:

Մշակութային ցեղասպանությունը բնորոշող և դատապարտող վերոնշյալ սահմանումներից միակ ձևակերպումը, սակայն, որ տեղ գտավ կոնվենցիայի վերջնական՝ 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված տարբերակում, խմբի երեխաների՝ որպես տվյալ խմբի մշակութային ժառանգության կրողի, բռնի տեղափոխումն է այլ խմբեր³⁴: Այս կետը կոնվենցիա ներառվեց հունական պատվիրակության պաշտոնական առաջարկությամբ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի վեցերորդ կոմիտեի քննարկումների ավարտին, երբ արդեն պարզ դարձավ, որ մշակութային ցեղասպանության գաղափարը վերջնականապես մերժված է³⁵: Այսպիսի ցեղասպանական փորձը հունական պատվիրակության կողմից ընտրվեց որպես ամենադժանր՝ միտված լինելով «խզելու խմբի մշակութային շարունակականությունը, երբ չնայած մարմինը ողջ է մնում, բայց ոչնչացվում է ոգին»³⁶:

Մինչև 1948 թ. հոկտեմբեր ամիսը պատվիրակներն արդեն քվեարկել ու հնչեցրել էին «մշակութային ցեղասպանություն» բաժինը կոնվենցիա չներառելու վերաբերյալ իրենց վերջնական կարծիքները, սակայն Ռ. Լեմկինը տակավին շարունակում էր պայքարել հակառակ ուղղությամբ: Նա ետանդուն կերպով փորձում էր համոզել պատվիրակներին, որ ցեղասպանության մշակութային բաղադրիչն ունի այն կան-

խարզելու հատկանիշ³⁷: 1948 թ. սեպտեմբերի 31-ին Ցեղասպանության կոմիտեի նախագահ Ջեյմս Ռոզենբերգին ուղղված իր սամակում Լեմկինը, օրինակ բերելով «միլիոնավոր հայերի բնաջնջմանը զուգընթաց հայկական քրիստոնեական եկեղեցիների», ինչպես նաև 1938 թ. Հիտլերի կողմից իրագործված սինագոգների զանգվածային ոչնչացումները, հղում է կատարում ՄԱԿ-ի Վենեսուելայի պատվիրակի այն փաստարկին, համաձայն որի՝ մշակութային ոչնչացումը կարող է կանխամտածված ֆիզիկական բնաջնջման նախանշան դառնալ³⁸: Նա գրում է. «...այրվող գրքերն ու այրվող մարմինները նույնը չեն, սակայն երբ որևէ մեկը ճիշտ ժամանակին միջամտի եկեղեցիների և գրքերի ոչնչացման դեմ, նաև ճիշտ ժամանակին կարող է կանխարգելել մարմինների այրվելը»³⁹: Բացի այդ, Լեմկինն իրավացիորեն պնդում էր, որ մշակութային ոչնչացումը կարող է բացահայտել խմբի ֆիզիկական ոչնչացման դիտավորությունը: Իր անտիպ և չթվագրված արխիվային փաստաթղթերից մեկում Լեմկինը գրում է. «Մշակութային ցեղասպանությունը կոնվենցիայի ամենակարևոր հատվածն է», քանի որ այն սերտորեն կապված է ցեղասպանության կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշված՝ խմբի անդամներին պատճառված լուրջ ֆիզիկական, մտավոր կամ կենսաբանական վնասի դիտավորության չափերի հետ⁴⁰: Մշակութային ցեղասպանությունը կոնվենցիա չներառելու մասին իր հուշերում Լեմկինը գրում է. «Ես այն հաջողությամբ պաշտպանեցի երկու նախագծերում..., սակայն հանձնաժողովում այս գաղափարը բավարար օժանդակություն չստացավ, ուստիև ծանր սրտով որոշեցի չպնդել»⁴¹: Փարիզի ասամբլեան անվանելով «ՄԱԿ-ի մարդասիրական պայմանագրերի ոսկեդարի ավարտ»՝ Լեմկինը մտավախություն ուներ, որ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի հաջորդ նախագահի օրոք ընդհանրապես կոնվենցիայի ընդունումը կարող էր հարցականի տակ դրվել⁴²: Ուստի մշակութային բաղադրիչը կոնվենցիա ներառելու իր ծանր պայքարում Լեմկինը ստիպված էր ընկրկել:

Այսպիսով, Լեմկինի սպասումները չիրականացան, և կոնվենցիան ընդունվեց միայն որպես «մարմինների սպանության» կանխարգելում: Մինչդեռ ցեղասպանություն իրագործելիս ոճրագործների խնդիրը միայն խմբի անդամների սպանությունը չէ, այլ նաև այդ խմբի ինքնության ոչնչացումը, ինչի մասին էլ պնդում էր Ռաֆայել Լեմկինը Հայոց ցեղասպանության և Հրեական հոլոքոստի օրինակով: Ցեղասպանությունը փոխկապակցված և տևական գործողությունների հետևանք է: Խմբի մշակույթի համակարգված և դիտավորյալ ոչնչացումը գալիս է վկայելու, որ տվյալ էթնիկ խումբը նման մշակութային գտնան մաս է կազմում: Այլ կերպ ասած, խմբի մշակույթի ոչնչացումը կարող է դառնալ նրա հնարավոր բնաջնջման նախանշան և այդպիսով կապվել ծանրագույն այդ հանցագործության կանխարգելման հետ: Սակայն որքան

³¹ **Ad Hoc Committee Draft:** Second Draft Genocide Convention Prepared by the Ad Hoc Committee of the Economic and Social Council (ECOSOC), meeting between April 5, 1948 and May 10, 1948 [UN Doc. E/AC.25/SR.1 to 28], [http://www.preventgenocide.org/law/convention/drafts/, դիտվել է՝ 19.08.2015]

³² Նույն տեղում:

³³ St' u Sautman B., *Cultural Genocide in International Context...*, էջ 4, տե՛ս նաև Schabas W. A., *Նշվ. աշխ.*, էջ 182:

³⁴ St' u Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide. Adopted by Resolution 260 (III) A of the U.N. General Assembly on 9 December 1948. Entry into force: 12 January 1951, [http://www.preventgenocide.org/law/convention/text.htm, դիտվել է՝ 11.08.2015]:

³⁵ St' u *Totally Unofficial...*, էջ 168, տե՛ս նաև Schabas W. A., *Նշվ. աշխ.*, էջ 175-178:

³⁶ Այս առումով հույներն ունեին նոր անհանգստություն, մոտ 30,000 երեխա առևանգվել էր 1947 թ. քաղաքացիական պատերազմի ընթացքում և տեղափոխվել արևելյան դաշինքի երկրներ (տե՛ս *Totally Unofficial...*, էջ 168):

³⁷ St' u Frieze Donna-Lee, "Genos-the Human Group"..., էջ 166:

³⁸ Նույն տեղում:

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ Նույն տեղում, էջ 165-166:

⁴¹ *Totally Unofficial...*, pp. 172-173.

⁴² Նույն տեղում, էջ 173:

ել մշակութային ցեղասպանությունն առանցքային տեղ էր զբաղեցնում Լեւինիսի սահմանած հայեցակարգում, և նրա կողմից խիստ կարևորվում էր այդ եզրույթի ներառումը կոնվենցիա, ցեղասպանագետ Թաներ Աքչամի բնորոշմամբ. «այն զոհաբերվեց, որպեսզի ցեղասպանության հայեցակարգը ընդունվեր քրեական օրենքի շրջանակներում»⁴³:

«Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» հռչակագիրը և «մշակութային ցեղասպանությունը»

Մեր օրերում ևս մեկ անհաջող փորձ է կատարվել «մշակութային ցեղասպանություն» եզրույթի կիրառման առումով, սակայն այս անգամ արդեն առանց հստակ ձևակերպման, թե ինչ է այն նշանակում: Այսպես, «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի ընդունումից ի վեր «մշակութային ցեղասպանություն»-ը՝ որպես իրավական եզրույթ, օգտագործվել է ՄԱԿ-ի կողմից 2007 թ. սեպտեմբերի 13-ին ընդունված «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» հռչակագրի նախագծում՝ մշակված դեռևս 1994-ին⁴⁴: Համաձայն նախագծի 7-րդ հոդվածի՝ «բնիկ ժողովուրդներն ունեն հավաքական և անհատական իրավունք՝ չենթարկվելու էթնոցիդի»⁴⁵ և մշակութային ցեղասպանության՝ ներառյալ կանխարգելումը և փոխհատուցումը [հետևաբար հռչակագիրը դատապարտում է Ս.Պ.] ա) Յուրաքանչյուր գործողություն, որն ազդում է կամ նպատակ ունի գրկելու նրանց իրենց ազգային անհատականությունից, մշակութային արժեքներից կամ էթնիկ ինքնությունից...»⁴⁶: Հռչակագրի վերջնական տարբերակում, սակայն, 7-րդ հոդվածը փոխարինվեց 8-ով, որտեղ «էթնոցիդ» եզրույթը փոխարինվեց «բնի ճուրում», իսկ «մշակութային ցեղասպանություն»-ը՝ «մշակույթի ոչնչացում» ձևակերպումներով⁴⁷:

Ակնհայտ է, որ չնայած «մշակութային ցեղասպանություն» եզրույթը միջազ-

⁴³ Akçam T., *The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire*, Princeton: Princeton University Press, 2012, p. XXVII.

⁴⁴ St'u Draft Declaration on the Rights of Indigenous Peoples, U.N. Doc. E/CN.4/Sub.2/1994/2/Add.1 (1994), [http://www1.umn.edu/humanrts/instree/decla.htm, դիտվել է՝ 22.08.2015]:

⁴⁵ Ժամանակակից ակադեմիական գրականության մեջ «էթնոցիդ» եզրն առավել հաճախ օգտագործվում է ավելի նեղ իմաստով՝ բնորոշելով մշակութային ցեղասպանությունը: Այսպիսի իմաստով այն բնութագրվում է Սան Խոսեում 1981 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունված հռչակագրում, որում նշվում է. «էթնոցիդը էթնիկ խմբին իր սեփական մշակույթի և լեզվի օգտագործման, զարգացման և փոխանցման խմբային և անհատական իրավունքների մերժումն է... Մենք հայտարարում ենք, որ էթնոցիդը, այսինքն՝ մշակութային ցեղասպանությունը միջազգային իրավունքի խախտում է, որը համարժեք է ցեղասպանությանը, որը դատապարտվում է Միավորված ազգերի կազմակերպության «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» 1948 թ. կոնվենցիայով»: St'u UNESCO and the struggle against ethnocide. Declaration of San Jose, December 1981 [http://unesdoc.unesco.org/images/0004/000499/049951eo.pdf, դիտվել է՝ 25.08.2015]:

⁴⁶ St'u Draft Declaration on the Rights of Indigenous Peoples, U.N. Doc. E/CN.4/Sub.2/1994/2/Add.1 (1994):

⁴⁷ St'u United Nations Declaration on the Rights of Indigenous Peoples, 13 september, 2007 [http://www.un.org/esa/socdev/unpfi/documents/DRIPS_en.pdf, դիտվել է՝ 22.08.2015]:

գային իրավունքի շրջանակներում դեռևս չի ամրագրվել որպես ցեղասպանության առանձին կատեգորիա, այնուամենայնիվ հաճախ հանցագործության հենց այդ տեսակն է օգնում բացահայտելու վերջինիս բնորոշումը՝ դիտավորությունը (intent): Այս առումով ուշագրավ է 2001 թ. նախկին Հարավսլավիայի հարցերով Միջազգային քրեական դատարանի (Criminal Tribunal for the Former Yugoslavia (ICTY)) կողմից ընդունված հայտարարությունը, համաձայն որի. «...այնտեղ, որտեղ առկա է ֆիզիկական կամ կենսաբանական ոչնչացում, հաճախ լինում են միաժամանակյա հարձակումներ մշակութային և կրոնական արժեքների, ինչպես նաև թիրախային խմբի խորհրդանշանների վրա, որոնք օրենսդրորեն պետք է ճանաչել որպես խմբի ֆիզիկական բնաջնջման դիտավորության վկայություն»⁴⁸: Հատկանշական է, որ այս օրենսդրական բացահայտումից դեռ շուրջ կես դար առաջ ցեղասպանության հայեցակարգի հեղինակը՝ Ռ. Լեւինիսը, «մշակութային ցեղասպանություն»-ը կոնվենցիա ներառելու իր պայքարում հանցագործության այս տեսակը բնորոշելիս մատնանշել և պնդել է խիստ կարևոր այս հիմնադրույթը: Նույն հիմնավորմամբ 2001 թ. նախկին Հարավսլավիայի հարցերով Միջազգային քրեական դատարանը մուսուլմանների գրադարանների, մկլիթների ոչնչացումը, նրանց կրոնական առաջնորդների վրա հարձակումները բնորոշել է սերբերի կողմից մուսուլմանների ցեղասպանության դիտավորության ակտ⁴⁹:

Բացարձակ ճշմարտություն է այն, որ մշակութային արժեքների ոչնչացումը երբեք չի կարելի համեմատել մարդկանց ֆիզիկական ոչնչացման կամ մի ամբողջ խմբի բնաջնջման հետ, սակայն պատմությունը ցույց է տալիս, որ այս երկու դրվագներն առանձին հանդես չեն գալիս և փոխկապակցված են: Խմբի մշակութային ժառանգության լիակատար ոչնչացումը կհանգեցնի տվյալ խմբի անհետացմանը մարդկության համընդհանուր հիշողությունից, ինչպես և նրա կենսագործունեության բոլոր հետքերի վերացմանը: Իսկ եթե չկա հիշողություն, ապա մշակութային ցեղասպանություն իրագործողների համար տվյալ խմբի գոյության ժխտումը կամ մերժումն առավել քան դյուրին կլինի, իսկ ցեղասպանությունը կամ բնաջնջումը՝ ամբողջական:

Մեր օրերում մշակութային ժառանգության դեմ ոտնձգությունները կրում են շարունակական բնույթ՝ ուղեկցվելով նորանոր ցեղասպանական գործողություններով կամ պատերազմների ժամանակ կիրառվող հանցագործություններով: Յուրաքանչյուր ժողովրդի մշակութային ժառանգությանն ուղղված ցանկացած ոտնձգություն մարտահրավեր է նաև համամարդկային մշակութային ժառանգությանը, քանզի ցանկացած մշակույթ համաշխարհային քաղաքակրթության բաղկացուցիչ մաս է կազմում: Վերջին տասնամյակներում Թուրքիայում շարունակվող հայկական պատմաճարտարապետական դեռևս կանգուն հուշարձանների յուրացումը, պղծումն ու ոչնչացումը,

⁴⁸ International Tribunal for the Prosecution of Persons Responsible for Serious Violations of International Humanitarian Law Committed in the Territory of Former Yugoslavia since 1991, Prosecutor v. Radislav Krstic – Judgment, Case No. IT-98-33-T, 02 August 2001, p. 203.

⁴⁹ Նույն տեղում, էջ 207:

1992-1996 թթ. Բոսնիա-Հերցեգովինայում մահմեդական և ուղղափառ քրիստոնեական հոգևոր հաստատությունների և մշակութային այլ կենտրոնների դեմ իրականացված ոսնձգությունները, 2001 թ. Աֆղանստանում Բուդդայի արձանի պայթեցումը թալիբների կողմից, 1995-2005 թթ. Նախիջևանում Հին Ջուդայի հայկական գերեզմանոցի՝ Ադրբեջանի կողմից պետական մակարդակով իրագործված բարբարոսական ոչնչացումը, ինչպես նաև ներկայումս գրոհայինների կողմից վկայում են այն մասին, որ մշակութային ցեղասպանությունները դեռ գործողության մեջ են և շատ հաճախ ուղղորդվում են որոշակի պետության իշխանությունների կողմից: Մակայն առ այսօր գոյություն չունի որևէ միջազգային իրավական գործիք կամ փաստաթուղթ, որը «մշակութային ցեղասպանությունը» կդարձնի պատժելի արարք: Գոյություն ունեցող անպատժելիությունը, թերևս, գալիս է հուշելու, որ առավել քան հրատապ է միջազգային նոր կոնվենցիայի ընդունումը, որով մշակութային արժեքների ոչնչացումը կդիտվի որպես մարդկության դեմ հանցագործություն:

Մշակութային ցեղասպանությունը միջազգային իրավունքի համատեքստում. տեսական հիմնադրույթներ

Մեղա Պարսամյան

Ամփոփում

Այս հոդվածի շրջանակներում քննարկվում են երկու հարցեր.

1. Ռաֆայել Լեմկինի սահմանած ցեղասպանության հայեցակարգում «մշակութային ցեղասպանություն» եզրույթի կամ ցեղասպանության մշակութային բաղադրիչի ունեցած առանցքային դերը:

2. Միջազգային իրավական փաստաթղթերում առ այսօր ցեղասպանություն եզրույթի ձևակերպման ընդլայնման և դրանում մշակութային ասպեկտի ներառման հարցը:

Խոսքը մասնավորապես ՄԱԿ-ի կողմից 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի և 2007 թ. սեպտեմբերի 13-ի «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» հռչակագրի մասին է, որոնց նախնական տարբերակներում թեև ընդգրկված էր «մշակութային ցեղասպանություն» եզրույթը, և դատապարտվում էր վերջինիս հետ կապված ցանկացած գործողություն, սակայն այս 2 կարևոր փաստաթղթերն էլ վերջնական տարբերակում խմբագրվեցին, և «մշակութային ցեղասպանություն» եզրույթը դուրս մնաց:

Բանալի բառեր՝ մշակութային ցեղասպանություն, ցեղասպանության մշակութային բաղադրիչ, ցեղասպանության հայեցակարգ, կոնվենցիայի նախագիծ, ցեղասպանության կոնվենցիա, միջազգային իրավունք, Ռաֆայել Լեմկին:

The Cultural Genocide in the Context of International Law: Theoretical Considerations

Seda Parsamyan

Summary

This article discusses the following issues:

1. The pivotal role of the term “cultural genocide” or the presence of cultural element in the concept of “genocide”, defined by Raphael Lemkin.

2. The issue of expanding the definition of the term Genocide in international legal documents and including the cultural aspect in it.

Particularly, the main focus is on 2 documents - the UN Convention of December 9, 1948 titled “The Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide”, and the “Declaration on the Rights of Indigenous Peoples”, issued on September 13, 2007. Although in the drafts of these documents the term “cultural genocide” was included and any action of cultural genocide was condemned, in the final versions of them the term of “cultural genocide” was omitted.

Keywords: cultural genocide, cultural aspect of genocide, genocide concept, draft convention, genocide convention, International Law, Rafael Lemkin.

Культурный геноцид в контексте международного права: теоретические вопросы

Седя Парсамян

Резюме

Обсуждаются следующие важные и актуальные вопросы:

1. Ключевая роль термина «культурный геноцид» или наличие культурного элемента в рамках концепции геноцида, предложенной Рафаэлем Лемкиным.

2. Проблема расширения термина «геноцид» в документах международного права включением в него и культурного аспекта.

Рассматриваются два документа – «Конвенция о предупреждении преступления геноцида и наказания за него» (принята Генеральной Ассамблеи ООН 9 декабря 1948 г.) и «Декларация о правах коренных народов» (принята Генеральной Ассамблеи ООН 13 сентября 2007 г.). Несмотря на то, что в первоначальных вариантах документов содержался термин «культурный геноцид» и любое действие, связанное с культурным геноцидом, осуждалось, в окончательной версии эти два документа были отредактированы и термин «культурный геноцид» был изъят.

Ключевые слова: культурный геноцид, культурный аспект геноцида, концепция геноцида, проект конвенции, конвенция о геноцида, международное право, Рафаэль Лемкин.

Հեղինակների մասին

Հայկ Դևեդյան, պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի քարտուղար: Տասներեք մենագրությունների և բազմաթիվ հոդվածների հեղինակ է: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության պատմություն, Ղարաբաղյան հիմնահարց, Թուրքիայի քաղաքականությունը հետխորհրդային տարածքում:

Նարինե Հակոբյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Անդրկովկասի հայության ցեղասպանության ուսումնասիրությունների բաժնի կրտսեր գիտական աշխատող: Զբաղվում է 1894-1896 թթ. արևմտահայության կոտորածների առանձին ասպեկտների ուսումնասիրությամբ:

Արսիկե Բարյումյան, պատմական գիտությունների թեկնածու, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն: Զբաղվում է Արևմտյան Հայաստանի հայ բնակչության ժողովրդագրության հարցերով XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին:

Վալերի Թունյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Աշխատությունները վերաբերում են Ռուսաստանի քաղաքականությանը Հայաստանում և Անդրկովկասում, Հայկական հարցին, Հայ եկեղեցու քաղաքական պատմությանը:

Նարինե Մարգարյան, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Անդրկովկասի հայության և ցեղասպանության ուսումնասիրությունների բաժնի վարիչ: Զբաղվում է Հայոց ցեղասպանության արձագանքը արաբական երկրներում թեմայի ուսումնասիրությամբ: Մեկ մենագրության հեղինակ է:

Գևորգ Վարդանյան, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի քարտուղար: Զբաղվում է Հայոց ցեղասպանության հարակից գոհերի կոտորածների պատմության, ցեղասպանության ժխտման և Թուրքիայի արտաքին քաղաքականության հարցերի ուսումնասիրությամբ: Շուրջ երկու տասնյակ գիտական հրատարակումների, այդ թվում նաև մեկ մենագրության հեղինակ է:

Ռեզինա Գալուսյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ՀՅԹԻ գրադարանի պատասխանատու: Ուսումնասիրության թեման է «Թուրքական ինքնության ձևավորումը և Հայոց ցեղասպանությունը»:

Ռոբերտ Թաթոյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Հայոց ցեղասպանության գոհերի փաստագրման և տվյալների հավաքագրման բաժնի վարիչ: Զբաղվում է արևմտահայության ժողովրդագրական հարցերի ուսումնասիրությամբ:

Մուրեն Մանուկյան, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն: 2012-2013 թթ. Ֆուլբրայթ հետազոտական ծրագրի կրթաթոշակառու: Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության սոցիալ-հոգեբանական ասպեկտը և համեմատական ցեղասպանագիտություն:

Քրիստինե Նաչարյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կրթական ծրագրերի բաժնի վարիչ: Զբաղվում է Հայոց ցեղասպանության թեմայի իրազեկման խնդիրների, ինչպես նաև արևմտահայ կրթական կյանքի ուսումնասիրությամբ:

Շուշան Խաչատրյան, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի հեռակա ասպիրանտ, ՀՅԹԻ հուշագրությունների և վավերագրերի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտական աշխատող: Պատրաստում է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայոց ցեղասպանության հետազոտման կրոնագիտական խնդիրները» թեմայով: Ուսումնասիրություններ՝ Օսմանյան կայսրության կրոնական իրավիճակի, կրոնների բախման, ցեղասպանության աստվածաբանության, թեոդիցեայի, Հոլոքոստի փիլիսոփայության ոլորտներում:

Էդիթա Գզդյան, պատմական գիտությունների թեկնածու, իրավունքի մագիստրանտ, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ավագ գիտաշխատող: Զբաղվում է Հայոց ցեղասպանության իրավական խնդիրներով: Մեկ մենագրության հեղինակ է:

Նարեկ Պողոսյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպիրանտ: Գիտական հետաքրքրությունների մեջ է մտնում Հայոց ցեղասպանության հիմնախնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի գիտական ժառանգության մեջ:

Սևդա Պարսամյան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի համեմատական ցեղասպանագիտության բաժնի վարիչ: Զբաղվում է մշակութային ցեղասպանության, Թուրքիայում հայկական մշակութային ժառանգության ոչնչացման հիմնախնդիրների ուսումնասիրությամբ: